


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

# ՇԻՐԱԿԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1



ԵՐԵՎԱՆ - ԳՅՈՒՄՐԻ 2010

---

ՆԸ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԵՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ-902/904  
ԳՄԴ-63.4 (2Հ)  
Շ 642

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի  
գիտական խորհրդի որոշմամբ:

Գլխավոր խմբագիր՝ Ս. Ա. Հայրապետյան

Շ - 642 Շիրակի հնագիտական և պատմագագագրական ուսումնասիրություններ, /Խմբա-  
գրական խորհուրդ՝ Ս. Հայրապետյան, Ս. Պետրոսյան, Կ. Բազեյան, Լ. Եզանյան,  
Կ. Սահակյան, Հ. Հարությունյան - Եր.: Գիտություն, 2010,

Հ. 1: Շիրակի անտիկ դամբարանադաշտերը / Լարիսա Եզանյան;  
Գիտ. խմբ.՝ Հ. Պ. Հակոբյան.- 2010.- 224 էջ + ներդիր

ՀՏԴ-902/904  
ԳՄԴ-63.4 (2 Հ)

ISBN 978-5-8080-0837-3

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010.  
© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2010.

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА  
ШИРАКСКИЙ ЦЕНТР АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

**АРХЕОЛОГИЧЕСКИЕ И  
ИСТОРИКО-ЭТНОГРАФИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ  
ШИРАКА**

**1**

**ARCHAEOLOGICAL AND  
HISTORICO – ETHNOGRAPHICAL STUDIES  
IN SHIRAK**

SHIRAK CENTRE OF ARMENIAN STUDIES  
NATIONAL ACADEMY OF SCIENCES RA

Ереван-Гюмри

2 0 1 0

Yerevan-Gyumri

---

Издательство “Гитутюн” НАН РА

“Gitutyun” Publishers NAS RA

## Երկու խոսք

Շիրակը, ինչպես Հայաստան աշխարհի բոլոր պատմական գավառները, հոգևոր ու նյութական մշակույթի անսպառ գանձեր ունի՝ հնագիտական ու պատմագիտական մեծարժեք հուշարձաններ և պատմական անհատակ անցյալ, դարերով ձևավորված ազգագրական գույներանգների ինքնատիպ գամնա և անկրկնելի բանահյուսություն, անգուգական կենցաղ և պատմության խորքերից եկող ավանդույթներ ու սովորություններ, զարմանահրաշ ճարտարապետություն ու նկարչություն և բազմազան արհեստներ ու զբաղմունքներ, ժողովրդական մեծարվեստ երգ ու երաժշտություն և մեր բազմադարյա մշակույթի բազմաթիվ այլ ձեռակերտ գոհարներ: Մի խոսքով՝ պատմամշակութային ծովածավալ ժառանգություն, որի կրողն ու փոխանցողն այսօր մեր ժամանակակիցն է: Նրան է բախտ վիճակվել շարունակել այդ գանձերի նորօրյա ուսումնասիրությունը: Հուրախություն մեզ՝ այդ նվիրական աշխատանքն արդեն քանի տասնամյակ կանգ չունի, և լիահույս ենք՝ երբեք էլ չի ունենա:

Առավել ուրախալի է, որ վերջին տասներեք տարիներին այդ կարևոր գործին լծվել է նաև գիտական մի երիտասարդ օջախ՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը, որի հիմնադրումը Գյումրիում 1997 թվականին ավելի սովորացրեց Շիրակը հետազոտող հայագետների բանակը՝ զգալիորեն խթանելով պատմական գավառի ժամանակակից ուսումնասիրությունը: Այդ տարիներին Կենտրոնում հրատարակվող «Գիտական աշխատություններ» ժողովածուի տասներկու հատորներում լույս են տեսել Շիրակի հին ու նոր պատմության, հնագիտության, ազգագրության, բանագիտության ու բանասիրության խնդիրներին նվիրված շուրջ երկու հարյուր հոդվածներ ու հրապարակումներ, որոնց գերակշիռ մասը վերաբերում է Կենտրոնում ՀՀ պետրոլջեից ֆինանսավորվող գիտական թեմաներին ու ծրագրերին:

Այդ թեմաներից մի քանիսն այսօր առանձին հոդվածներով կամ հաղորդումներով ոչ միայն ծանոթ են գիտական հանրությանը, ասել է թե՛ գիտական լուրջ փորձաքննություն են անցել, այլև արդեն ամբողջական տեսք են ստացել ու հաջողությամբ ավարտվել են: «Շիրակի հնագիտական և պատմագագագրական ուսումնասիրություններ» ամենամյա մատենաշարի հրատարակմամբ Կենտրոնը նպատակ ունի հաջորդաբար ընթերցողների և մասնագետների անաչառ դատին ներկայացնել այդ ուսումնասիրությունները:

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն՝  
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



ԼԱՐԻՍԱ ԵԳԱՆՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ԱՆՏԻԿ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԵՐԸ

Գիտ. խմբագիր՝ Հ. Պ. ՀԱԿՈԲՅԱՆ

Աշխատանքը նվիրված է Շիրակի մի քանի անտիկ դամբարանադաշտերի՝ Կարմրաքարի (1986թ.), Առափիի (1989թ.), Վարդբաղի (1989թ.) և Բենիամինի (1989-2001թթ.) պեղումներին: Գամբարանների կառուցվածքի, թաղման ծեսի և ուղեկցող նյութերի համալիր ուսումնասիրությամբ ներկայացվում է Շիրակի մ.թ.ա. I- մ. թ. IV-Vդդ. նյութական և հոգևոր մշակույթը:

Նախատեսված է հնագետների, պատմաբանների, ինչպես նաև հին Հայաստանի մշակույթով և հարակից հարցերով հետաքրքրվող լայն շրջանների համար:

## Գ Լ ՈՒ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

### ՇԻՐԱԿԻ ԱՆՏԻԿ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի անտիկ ժամանակաշրջանի հուշարձանների ուսումնասիրությունը գիտնականների մի քանի սերնդի տարիների տքնաջան աշխատանքով իրականացվել է առավելապես Արարատյան դաշտում:<sup>1</sup> Ի մի են բերվել ժամանակաշրջանին բնորոշ թաղման ձևերն ու արարողակարգերի բազմազանությամբ հարուստ թաղման ծեսը: Հայաստանի անտիկ ժամանակաշրջանի նյութական և հոգևոր մշակույթի համալիր ուսումնասիրության համար կարևորվում են նաև առանձին տարածաշրջանների, այդ թվում՝ նաև Շիրակի հուշարձանները:

Շիրակի անտիկ հուշարձանների ուսումնասիրությունը սկսվել է 1977 թվականին Շիրակավանի հետախուզական պեղումներով:<sup>2</sup> Այստեղ բնակավայրի պեղումների ժամանակ հուշարձանի ամենավերին մշակութային շերտում բացվել են նաև մ. թ. 2-3-րդ դարերով թվագրվող սալարկղային, հիմնահողային և կարասային թաղումներ:<sup>3</sup> Թաղման ծեսի վերլուծությունը ցույց է տալիս, որ Շիրակավանում պահպանվում են Հայաստանի համաժամանակյա հուշարձաններին բնորոշ հատկանիշները: Միաժամանակ կան դամբարանների կառուցվածքի և ծիսակարգի առանձին տարրեր, որոնք այլ հուշարձաններում կամ հազվադեպ են, կամ չեն հանդիպում, ինչպես օրինակ՝ սալարկղերի ծածկասալերի վրա միջանցիկ անցքերի ու հեղման

ակոսների առկայությունը, շան զոհաբերությունն ու թաղումը մարդու հետ, մնջեցյալի բերանում, որպես Քարոնին վարձ, դրամի փոխարեն ոսկու թիթեղ դնելը և այլն:<sup>4</sup>

Անտիկ ժամանակաշրջանի հաջորդ հուշարձանը, որ պեղվել է Շիրակում, Ջրափին է, որտեղ բնակավայրի պեղումների ժամանակ բացվել են նաև կարասային մի քանի թաղումներ:<sup>5</sup>

1987թ. Լենինականից (ներկայիս՝ Գյումրի) 10 կմ հյուսիս՝ Կարմրաքար գյուղի հարավային մասում՝ եռանկյունաձև հրվանդանի եզրին, շինարարական աշխատանքների ժամանակ դիպվածաբար բացվել էր թաղում՝ ոսկյա զարդերի ուղեկցությամբ:<sup>6</sup> Հնագիտական հետախուզության արդյունքում պարզվեց, որ Կարմրաքար գյուղը մասամբ նստած է անտիկ դամբարանադաշտի վրա: Դատարկ սարկոֆագներ և ծածկասալեր էին ընկած հրվանդանի երկու կողմից դեպի ձորակն իջնող արևելյան և արևմտյան թեքությունների վրա, ինչպես նաև՝ ձորակի մեջ:

<sup>1</sup> Գ. Կ. Կ. Կ., *Культура древней Армении*, Ер., 1988, с. 32-34, 101-108, 174-177.

<sup>2</sup> Փ. Կ. Կ., *Раскопки поселения и некрополя античного Ширакавана*, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. I, Գյումրի, 1998, էջ 18-30:

<sup>3</sup> Փ. Կ. Կ., *Раскопки античного Ширакавана*, (АО 1979г.) М., 1980, Փ. Կ. Կ., *Тер-Мартиросов, Г. Караханян*, նշվ. աշխ., էջ 27:

<sup>4</sup> Փ. Կ. Կ., *Тер-Мартиросов, Г. Караханян*, նշվ. աշխ., էջ 18-30:

<sup>5</sup> Ա. Կ. Կ. Կ., Հին Ջրափիի պեղումները, ՀԱԻ դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Եր., 1981, էջ 28-29:

<sup>6</sup> Դամբարանադաշտի գոյությունը փաստվել է շինարարական աշխատանքների ժամանակ դիպվածաբար բացված սալարկղի հայտնաբերմամբ: Նշված դամբարանը եղել է սալարկղի մեջ դրված փայտյա դազադով թաղում հարուստ ուղեկցող նյութով: «Կումայրի» արգելոց-թանգարանի ֆունդայան և դամբարանը պեղող հնագետ Մտ. Տեր-Մարգարյանի հաղորդմամբ, փայտից դազադը եղել է խիստ քայքայված: Գտածոները՝ մետաղյա թաս, ոսկյա մանյակ, ակնջջողեր, մատանի և սարդիոնից զարդեր, ի պահ են տրված Հայաստանի պատմության պետական թանգարանին: Նյութերը հրատարակված չեն:

Պեղումները սկսվեցին Հայկական ՄՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Լենինականի «Շիրակի պատմության» (ներկայիս՝ Շիրակի երկրագիտական) և «Կուրմայրի» արգելոց-թանգարանների միացյալ արշավախմբի կողմից (ղեկ.՝ Ս. Հարությունյան): Դամբարանադաշտի հարավային, արևելյան և արևմտյան հատվածներում պեղվեց մ.թ. II-IV դդ. թվագրվող սալարկղային, սարկոֆագային և հիմնահողային 29 թաղում:<sup>7</sup> Ավելի ուշ՝ 1992թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մեկ այլ արշավախմբի կողմից (ղեկ.՝ Հ. Հակոբյան) այստեղ պեղվել է թաղման նույն եղանակով և ծեսով ուղեկցվող ևս 30 դամբարան:<sup>8</sup>

*Դամբարան 5* - Սալարկղային թաղում՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործվել է 165x65x25սմ չափերով մի մեծ, կոպտատաշ քար: Սալարկղը (երկ.՝ 152 սմ, լայն.՝ 40սմ, խոր.՝ 30սմ) մեկական կողասալերով ուղղանկյուն է: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Չախ ձեռքի մատնեմատին գտնվեց կարմիր սարդիոնից կնիք-մատանի, իսկ ոտքերի տակ՝ ապակյա անոթ:<sup>\*</sup>

*Դամբարան 12* - Սալարկղային թաղում՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործված է 150x80x 20սմ չափերով, մի կողմը մշակված մի քար: Ծածկասալը դրվել է մշակված կողմը դեպի աճյունը: Սալարկղը (երկ.՝ 10սմ, լայն.՝ 35սմ, խոր.՝ 25սմ) մեկական կողասալերով, գլխի ու ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով ուղղանկյուն է: Թաղումը կատարված է սալարկղի պատերին կիպ դրված փայտե դագաղում (երկ.՝ 107սմ, լայն.՝ 30 սմ, խոր.՝ 23սմ): Դամբարանը

թալանված է դեռևս հնում. կմախքի ոսկորները ցրված են, սալարկղի հարավ-արևելյան անկյունում՝ փայտե դագաղից դուրս, գտնվեց ոսկյա կնիք-մատանի: Դագաղի մեջ՝ ոտքերի հատվածում, գտնվեցին կաթնագույն ապակյա անոթի բեկորներ:

*Դամբարան 13* - Սալարկղային թաղում՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործվել է 180x65x20սմ չափերով, մի երեսը կոպտատաշ քար: Ծածկասալը դրվել է տաշված կողմը դեպի աճյունը: Սալարկղը երկուական կողասալերով, գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով ուղղանկյուն է (երկ.՝ 170սմ, լայն.՝ 40սմ, խոր.՝ 40սմ): Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Չախ ձեռքի մոտ գտնվեց բարակ բրոնզալարից մատանի, իսկ դամբարանի հողերի մեջ՝ մետաղյա իրի քայքայված բեկոր:

*Դամբարան 17* - Սալարկղային թաղում՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործվել է միայն մի կողմը մշակված մեկ ամբողջական քար (165x55x16սմ): Ծածկասալը դրվել է մշակված կողմը դեպի աճյունը: Սալարկղը (երկ.՝ 150սմ, լայն.՝ 35սմ, խոր.՝ 25սմ) երկուական կողասալերով, գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով ուղղանկյուն է: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Ոտքերի տակ գտնվեց կաթնագույն ապակյա անոթ:

*Դամբարան 19* - Սալարկղային թաղում՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործվել է միայն մեկ կողմից հարթ մշակված, 170x100 x25սմ չափերով մի քար: Դամբարանի վրա ծածկասալը դրվել է մշակված կողմը դեպի աճյունը: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 165սմ, լայն.՝ 30սմ, խոր.՝ 25 սմ) կազմվել է մեկական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Դամբարանը փոքր է: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ կրծքին: Գանգը փշրված է: Չախ ձեռքի մոտ գտնվեց սարդիոնից մատանի (ոսկորների խառնվածության պատճառով պարզ չէ, թե որ մատին է եղել):

<sup>7</sup> Լ. Ե գ ա ն յ ա ն, Կարմրաքարի դամբարանադաշտի 1987թ. պեղումները, ԵՊՄԺ հանրապետական 1-ին գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1994, էջ 36-38:

<sup>8</sup> Հ. Հ ա կ ո բ յ ա ն, Կարմրաքարի դամբարանադաշտի 1992թ. պեղումները, ՀՀ 1991-1992թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Եր., 1994, էջ 41-43:

<sup>\*</sup> Աշխատանքում օգտագործված են միայն մեր կողմից պեղված դամբարանադաշտերի նյութերը, և աշխատանքը չծանրաբեռնելու նպատակով տրված են միայն կառույցի ձևով և ծեսով առավել հետաքրքիր թաղումների նկարագրությունները:

*Դամբարան 20* - Հիմնահողային թաղում՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Վերաթաղում է կատարվել նախապես սալարկղային մեկ այլ թաղման տեղում: Նախկին թաղումից պահպանվել են հյուսիսային երկու կողասալը և գլխի հատվածը լրացնող քարերից մեկը, որտեղ էլ կուտակվել են առաջին կմախքի ոսկորները, ապա կատարվել նոր՝ հիմնահողային թաղում՝ կմախքի ուղիղ, մեջքի վրա դիրքով: Ձեռքերը կրծքին են: Առանց ուղեկցող նյութի:

1989թ. Կամո գյուղից 2կմ դեպի հյուսիս-արևմուտք՝ «Խաչքար» կոչվող ձորակում, հայտնաբերվեցին հելլենիստական բնակավայրի հետքեր և կրոնիկներ: Հնավայրում հստակ գծագրվում են բնակավայրի պատերի ուրվագծերը: Վերգետնյա նյութի մեջ գերակշռողը անտիկ ժամանակաշրջանին բնորոշ տարատեսակ խեցեղենն է:

1989թ. Սարատակ գյուղի տարածքի գնումը ցույց տվեց, որ գյուղը նստած է անտիկ բնակավայրի և դամբարանադաշտի վրա: Այստեղ՝ բնակելի տան կառուցման համար հատկացված հողատարածքում, շինարարական աշխատանքների ժամանակ բացվել և ավերվել է մի քանի դամբարան: Թաղումները սալարկղային են, ունեն արևելք-արևմուտք կողմնորոշում, երկուսից երեք կողասալեր, մեկ ամբողջական քարից ծածկասալ: Կիսավեր դամբարանից գտնված արծաթյա ականջօղերն իրենց ձևաձևական ընդհանրություններն ունեն անտիկ ժամանակաշրջանին բնորոշ նմանօրինակ զարդերի հետ: Ավելի ուշ՝ 2001թ., գյուղի հարավային հատվածում՝ առվի մեջ, գտնվել է կապույտ ապակուց բազմանիստ կնիք:<sup>\*</sup> Առուն, որտեղից գտնվել էր կնիքը, լվացել և բացել էր քարարկղային դամբարանի պատի և ծածկասալի մի հատվածը: Դամբարանը պեղվեց, բացվեց մ. թ. ա. VIII դարով թվագրվող թաղում:<sup>9</sup> Թե ինչպես է մ.թ.ա. 2-1-ին դարով թվագրվող կնիքը հայտ-

նվել այստեղ, կարելի է միայն ենթադրել: Հնարավոր է՝ հելլենիստական դամբարանադաշտը գտնվում է ոչ հեռու, և կնիքը ջրաբերուկ է:

Գյուլիբուլաղ (ներկայիս՝ Արեգմադեն) գյուղի դիմաց տարածվող հնավայրը գտնվում է Ախուրյան գետի աջ ափի բարձրադիր հարթության վրա, ձգվում է հյուսիսից հարավ և զբաղեցնում է մի քանի հեկտար տարածք: Այստեղ հստակ ուրվագծվում են բնակավայրի պատերը, ինչպես նաև դամբարանների ծածկասալերը, որ գյուղատնտեսական աշխատանքների հետևանքով հայտնվել են հողի մակերեսին: Հնավայրի հարավային մասում, որտեղ դամբարանների ծածկասալերը հենց մակերեսին էին, պեղվեց երեք սալարկղ: Սալարկղերը երկուսական կողասալերով, գլխի և ոտքերի հատվածում մեկական քարով ուղղանկյուններ են: Թաղումներն ունեն արևելք-արևմուտք կողմնորոշում: Կմախքների դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա: Թաղումներն առանց ուղեկցող նյութի են: Սալարկղերից մեկի կողքին բացվեց առանձին շարվածքով փոքր, քառակուսի սալարկղ՝ երեք շների զանգերով:<sup>10</sup>

1989թ. նորահայտ հուշարձանների թվում է նաև Առափիի հնավայրը, որը գտնվում է Ախուրյան գետի վրա կառուցված կամրջից 600մ հարավ և տարածվում է Առափի-Ոսկեհասկ ավտոմայրուղու աջ և ձախ կողմերում: Ախուրյան գետի երկայնքով և շրջակա բլուրների վրա իրականացված հետախուզությունը ցույց տվեց, որ հնավայրը բավականին մեծ է: Այն ընդգրկում է Ախուրյան գետի աջ ափամերձ հատվածը և, հասնելով ավտոմայրուղուն, տարածվում է դեպի արևմուտք ձգվող ավազաբլուրների լանջերին ու գագաթների հարթության վրա և ավարտվում է ձորակից այն կողմ՝ հարթության երկայնքով ձգվող քարածալների մոտ: Տեղանքը բլրաշատ է: Բլուրները, ձգվելով հյուսիսից հարավ, իջվածքներով հասնում են մինչև գետի ափը: Հողն այստեղ կավավազային է, և տարիներ շարունակ հողմնահարումից, ինչպես նաև ավազների սահքից ու անձրևաջրերի հոսքից բլուրները մասամբ մերկացել են՝ բացելով

<sup>\*</sup> Կնիքը ( ՇԵԹ Գ.Գ. 3937/ 128 ) 2001թ. գտել և Շիրակի երկրագիտական թանգարան է հանձնել Մարատակ գյուղի բնակիչ Լևոն Հովհաննիսյանը:

<sup>9</sup> Լ. Ե զ ա ն յ ա ն, Մարատակի դամբարանը, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը հանրապետական հինգերորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2002, էջ 4-5:

<sup>10</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Լ. Ե զ ա ն յ ա ն, 1991, էջ 84-86:

վերին շերտի ոչ մեծ խորության վրա կատարված քաղումները: Իսկ ավտոմայրուղու թեք լանջով դեպի Ախուրյանի ափն իջնող հատվածում բնակավայրի հետքերն են նշմարվում՝ պահպանված պատերի շարվածքով և վերգետնյա տարատեսակ խեցեղենով (քրեղանների, օյնոխոյանների, պնակների բեկորներ, իլիկի գլուխներ՝ տափակ և ուռուցիկ, խեցու բեկորից կոճակներ և այլն): Խեցեղենի մեջ կան նաև բաց դեղնավուն մանրահատիկ կավից, լավ թրծված, արտաքուստ կարմիր լայն երիզով կավանոթ և ճամփեզրին բացված, համարյա անվնաս մնացած թոնիր: Վերգետնյա նյութերի մեջ կան նաև միջանցիկ անցքերով ֆալանգներ և ճան: Ճանի վրա արվել է փորվածք, ապա՝ լցվել երկաթով:

Հայաստանի այլ հնավայրերից հայտնի նյութերի համադրմամբ այս գտածոները կարող են թվագրվել մ.թ. ա. 1-մ. թ.1-ին դարերով: Բնակավայրի վրա՝ հնավայրի տարածքի հյուսիսարևմտյան մասում՝ բլրաշարի թեք լանջին, դամբարանադաշտի կիսավեր հատվածն է: Անցյալ դարի 70-ական թվականներին այստեղ բարձրավոլտ էլեկտրասյուների տեղադրման ժամանակ ավերվել է հնավայրի արևմտյան հատվածը, որն էլ հետագայում վերածվել է աղբանոցի: Բլուրների կտրտված հատվածներում ցցված մարդկային ոսկորներ էին, ընկած կողասալեր, կիսականգուն և դատարկ սալարկղեր: Ավելի հյուսիս տարածքը հարթեցվել է՝ հեռացնելով դամբարանադաշտի վրա նստած հողի վերին շերտը: Ինչպես ցույց տվեց տարածքի նախնական զննումը, դամբարանադաշտը շարունակվում է նաև դեպի գետը: Հյուսիսային հատվածում այն ափից հեռու է մոտ 2-3մ (քաղումները կատարելիս գետի հունն ավելի հեռու է եղել): 1988թ. երկրաշարժից հետո աղբանոցի տարածքն ավելի է ընդարձակվել: Այստեղ էր տեղափոխվում մաքրվող փլատակներից բերված շինարարական աղբը: Իսկ աղբանոցի հարևանությամբ տեղավորվել էր աղետի գոտում վերականգնման աշխատանքներ իրականացնող շինարարական կազմակերպություններից մեկը:

Առաջնահերթ համարելով արդեն մասամբ կիսավեր հուշարձանը զոնե փրկելը՝ նախ կան-

խվեց այստեղ շինարարական աղբի տեղափոխումը, այնուհետև սկսվեցին պեղումները: Նախ պեղվեցին կիսավեր դամբարանները: Առափինում պեղվեց 18 հիմնահողային և սալարկղային քաղում, որոնք վերաբերում են մ. թ. 2-4-րդ դարերին:<sup>11</sup>

*Դամբարան 9* - Սալարկղ՝ արևելք – հյուսիս արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են 180x100x25սմ չափերի մի քար: Սալարկղը արևելյան կողմում մեկ, արևմտյանում՝ երկու կողասալերով, գլխի և ոտքերի հատվածում մեկական քարով ուղղանկյուն է: Դամբարանի գլխի կողմն ավելի լայն է (երկ.՝ 180սմ, լայն.՝ գլխի հատվածում 47սմ, ոտքերի հատվածում՝ 34սմ, խոր.՝ 35սմ): Կոնստրուկցիոն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Չախ ձեռքի ճկույթին գտնվեց բրոնզե տափակ թիթեղից օղակաձև մատանի, զանգի աջ կողմում՝ սև, կարճ մազափնջի մեջ ուլունքաշար կախիկով բրոնզե ականջօղ, կրծքին՝ կաշվե ինչ-որ իրի փոքրիկ մնացորդ:

*Դամբարան 10* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Դամբարանն առանց ծածկասալի է: Սալարկղը մեկական կողասալերով, գլխի և ոտքերի հատվածում մեկական քարով ուղղանկյուն է (երկ.՝ 130սմ, լայն.՝ 35սմ գլխի և 31սմ՝ ոտքերի մոտ, խոր.՝ 35սմ): Կոնստրուկցիոն քայքայված է և վերածվել է այլուրանման զանգվածի: Գանգի աջ կողմում գտնվեց բրոնզե օղակաձև մի ականջօղ:

*Դամբարան 11* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործվել է հարթ մշակումով, կլորացված եզրերով ուղղանկյուն (165x88x19սմ) մի քար, որը ծանր տեխնիկայի վրաներից կիսվել է: Ծածկասալի արևմտյան մասում արված է արտաքուստ քիչ պայտածև, ներսից՝ շրջանաձև (տրամ. 10սմ) միջանցիկ անցք, որից սկսվող նույն լայնությամբ, 6սմ խորությամբ և 35սմ երկարությամբ ակոսն ավարտվում է ծածկասալի եզրին: Դամբարանը միջին չափերի, մեկական կողասալերով ուղղանկյուն է (երկ.՝ 160սմ, լայն.՝ 50սմ, խոր.՝ 46սմ): Կողասալերն ունեն 100սմ եր-

<sup>11</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Լ. Ե զ ա ն յ ա ն, 1991, էջ 84-86:

կարություն, 10-15ամ հաստություն և նույնպես մշակված են: Հյուսիսային կողասալը 13ամ տրամագծով և 24ամ խորությամբ շրջանաձև փորվածք ունի, որն արված է գանգի դիմաց: Ե՛վ կողասալի, և՛ ծածկասալի անցքերն ընկնում են գանգի դիմաց: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ ձգված իրանի երկարությամբ:

*Դամբարան 18* - Մալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Մեկ մեծ քար (100x70x 20սմ) ծառայել է որպես ծածկասալ: Մալարկղի ուղղանկյունը կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Այս և նախորդ դամբարանի համար կողասալն ընդհանուր է: Դամբարանը մեծ է (երկ.՝ 187սմ, լայն.՝ 49սմ գլխի մոտ և 38սմ՝ ոտքերի հատվածում, խոր.՝ 30սմ): Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ կզակի տակ:

Անտիկ ժամանակաշրջանի մյուս հուշարձանը՝ Վարդքաղը, հայտնաբերվեց Լենինականի (ներկայիս՝ Գյումրի) հյուսիս-արևմտյան մասում: Հնավայրը տարածված է տեղանքի քարքարոտ լանջերին և բլուրների գագաթներին: Նախնական զննումը ցույց տվեց, որ պահպանվել են բնակավայրի հետքեր՝ պատերի շարվածքով և խեցեղենի բեկորներով, ինչպես նաև դամբարաններ՝ տարբեր ձևի թաղումներով (տախտակ 1):

1988թ. երկրաշարժից հետո իրականացվող վերականգնողական-շինարարական աշխատանքների ժամանակ ավերվել է թաղումների մեծ մասը, քանի որ դամբարանադաշտի տարածքում՝ մոտ 20սմ հողաշերտ հանելով, պատրաստվել է 50x25մ մակերեսով շինհրապարակ, ապա շենքի հիմքերի համար փորվել են խրամատներ: Նշված աշխատանքների արդյունքում դամբարանադաշտի հարավային մասում ևս թաղումների մի մասն ավերվել է: Հյուսիսային կողմում դամբարանադաշտի հատվածն ամբողջությամբ քշել տարել է տեխնիկան: Մի քանի դամբարաններ պահպանվել էին փորված խրամատում: Առաջնահերթ խնդիրը շինարարական աշխատանքների դադարեցումն էր: Այնուհետև սկսվեցին պեղումները: 1989թ. պեղվեց մ.թ. II-

IV դարերով թվագրվող սարկոֆագային, սալարկղային և հիմնահողային 19 թաղում:<sup>12</sup> 1990թ. Վարդքաղի պեղումները հաջորդ տարի շարունակվեցին «Կումայրի» արգելոց-թանգարանի կողմից, և պեղվել է ևս 73 դամբարան:<sup>13</sup>

*Դամբարան 2*- Մալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործվել է 160 x 87x 30սմ չափերի սև տուֆից մշակված սալ, որի արևելյան կողմում ճանաչված, 25սմ երկարությամբ և 20սմ խորությամբ փորվածք է արված: Մալարկղը (երկ.՝ 170սմ, լայն.՝ 40սմ, խոր.՝ 35սմ) երկուական կողասալերով է, արևմտյան կողասալն ընկել է խրամատը փորելիս: Չախ կողքին կծկված դիրքով կմախքը խիստ քայքայված էր: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի:

*Դամբարան 3*- Մարկոֆագ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործվել է կարմիր տուֆից, 250x110x25սմ չափերի մշակված մի սալ, որը ծանր տեխնիկայի վրաերթից փշրվել է: Ծածկասալի վրա՝ կմախքի դիմային մասի հատվածում, միջանցիկ անցք է արված (արտաքին կողմում տրամ.՝ 6սմ, տակից՝ 10սմ): Մարկոֆագը մեծ է. երկ.՝ 200սմ, լայն.՝ 57սմ գլխի հատվածում, 70սմ՝ կոնքի: Պատերի հաստությունը 17-20սմ է, խորությունը՝ 50սմ: Ծածկասալի տակ՝ ծնկների հատվածում, 2-2,5սմ հաստությամբ, 32x32սմ մակերեսով մի քար էր դրված, իսկ քիչ ավելի փոքր մի քար դրված էր կրծքին: Դամբարանի հողը նախապես մաղվել է, հետո նոր լցվել աճյունի վրա: Եթե չլինեին ծածկասալի տակ գտնված երկու քարերը, կարելի էր ենթադրել, թե միայն դարերի փոշին է նստած: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ բռունցքված կզակի տակ: Չախ ձեռքի մատների մեջ գտնվեց բրոնզե ասեղ, կրծքավանդակի մեջ՝ կարմիր ապակուց մատանի:

<sup>12</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Լ. Ե զ ա ն յ ա ն, 1991, էջ 84-86:  
<sup>13</sup> Մտ. Տ ե ր - Մ ա ր զ ա ր յ ա ն, Կումայրիի «Վարդքաղ» տարածքի անտիկ դամբարանադաշտի պեղումները, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ 1989-90թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Եր., 1991, էջ 94-96: M. Zardarian, H. Akopian, *Archaeological Excavations of Ancient Monuments in Armenia 1985-1990.- Ancient Civilizations 1,2, Leiden, 1994, p. 192-194.*

*Դամբարան 6* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Ծածկասալը քշել տարել է տեխնիկան: Սալարկղի ուղղանկյունը կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Գլխի հատվածի քարը պայտածև մշակում ունի: Դամբարանը մեծ է (երկ.՝ 180սմ, լայն.՝ 50սմ, խոր.՝ 40սմ): Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ ծնոտի մոտ իրար միացած: Գանգի աջ կողմում՝ ուսագլխի մոտ, գտնվեց մի գավաթ:

*Դամբարան 9* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործվել է 180x90x70սմ չափերի մի քար: Սալարկղը երկուական կողասալերով ուղղանկյուն է՝ գլխի և ոտքերի հատվածում հավելված մեկական քարով: Դամբարանը մեծ է (երկ.՝ 175սմ, լայն.՝ 40սմ, խոր.՝ 15սմ): Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Չախ ձեռքի տակ գտնվեցին երկու ուլունք-կնիք և ուլունք-կնիքի մեկ նախասպատրաստուկ: Կնիքներից մեկը կարմիր ապակուց է՝ ձիու պատկերով, մյուսը՝ լեռնային բյուրեղից՝ ցլի պատկերով:

*Դամբարան 10* - Սալարկղ՝ թաղում արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Ծածկասալն ունի 170x80x15սմ չափեր, լավ մշակված է, հատկապես՝ եզրերը: Դամբարանի ծածկասալը գլխի և ոտքերի հատվածում լրացված է մանր քարերի շարվածքով: Սալարկղը երկուական կողասալերով, գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով ձևավորված ուղղանկյուն է: Դամբարանը փոքր է (երկ.՝ 135սմ, լայն.՝ 32սմ, խոր.՝ 23սմ): Կմախքը խիստ քայքայված է, ունի ուղիղ՝ մեջքի վրա, դիրք: Թաղումը կատարվել է առանց աճյունի վրա հող լցնելու: Գանգի աջ և ձախ կողմերում գտնվեց բրոնզյա ականջօղեր:

*Դամբարան 11* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Ծածկասալը քշել տարել է տեխնիկան: Սալարկղը երկուական կողասալերով, գլխի և ոտքերի հատվածում հավելված մեկական քարով ձևավորված ուղղանկյուն է: Դամբարանը միջին մեծության է (երկ.՝ 175սմ, լայն.՝ 40սմ, խոր.՝ 40սմ): Ծանր տեխնիկայի

վրաերթից կմախքի ոսկորները տեղաշարժվել և խառնվել են, իսկ գանգը՝ ճխվել: Ըստ այդմ էլ՝ կմախքի նախնական դիրքն անհայտ է: Գանգի աջ կողմում գտնվեց արծաթալարից ականջօղ:

*Դամբարան 15* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Ծածկասալը քշել տարել է տեխնիկան: Փոքր սալարկղը (երկ.՝ 74սմ, լայն.՝ 25սմ, խոր.՝ 20սմ) երկուական մանր քարերից կողասալերով ուղղանկյուն է՝ գլխի և ոտքերի հատվածում հավելված մեկական քարով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Աջ ձեռքի մոտ գտնվեցին ապակու մածուկից մանր, գույնզգույն ուլունքներ:

*Դամբարան 16* - Սարկոֆագ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործվել է 135x85x16սմ չափերի մի քար: Սարկոֆագը փորվել է ժայռաբեկորի մեջ՝ հյուսիսային կողմից լրացնելով մշակված այլ քարով: Դամբարանը մեծ է (երկ.՝ 170սմ, լայն.՝ 46սմ գլխի հատվածում և 30սմ՝ ոտքերի: Խորությունը գլխի մոտ 30սմ է, ոտքերի մոտ՝ 25սմ): Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի:

*Դամբարան 17* - Սարկոֆագ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Ծածկասալը և սարկոֆագը փշրված են: Դամբարանը մեծ է (երկ.՝ 180սմ, լայն.՝ 40սմ, խոր.՝ 20սմ): Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Փշրված գանգի տակ գտնվեց բարակ բրոնզալարից մատանի:

*Դամբարան 18* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Դամբարանն ավերված է, պահպանվել է միայն հյուսիսային կողասալի մի մասը: Սալարկղի կողքին մոխրաշերտ է: Կմախքի բացակայությունը ենթադրում է կենտաֆ լինելը:

Ետերկրաշարժյան առաջին գարնանը Շիրակի տարածքում հնագիտական հետախուզության արդյունք է նաև Բենիամինի հնավայրի հայտնաբերումը:<sup>14</sup>

Հուշարձանը բավականին մեծ է, ընդգրկում է Գյումրի-Երևան ավտոմայրուղուց աջ

<sup>14</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Լ. Ե զ ա ն յ ա ն, 1991, էջ 84-86:



և ձախ ընկած տարածքները (մոտ 60 հա) և բաղկացած է բնակավայրից ու դամբարանադաշտից: Ըստ գյուղացիների պատմածի՝ տարածքի տարբեր հատվածներում վարուցանքի ժամանակ բազմիցս բացվել են սալարկղային և կարասային թաղումներ: Նախնական զննումը թույլ է տալիս ենթադրել, որ հնավայրի տարածքում կա մի քանի դամբարանադաշտ:\*

Պեղումները սկսվեցին 1989թ. Շիրակի երկրագիտական թանգարանի արշավախմբի կողմից (հնագետներ՝ Խաչատրյան Հ., Եզանյան Լ., ճարտարապետ՝ Սկրտչյան Վ., մարդաբան՝ Ա. Խուդավերդյան): 1990թ. ստեղծվեց ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Շիրակի երկրագիտական թանգարանի միացյալ արշավախումբ (գիտական խորհրդատու՝ Ֆ. Տեր-Մարտիրոսով):

1989թ. Մարալիկի ջրագծի շինարարության ժամանակ, ավելի վաղ գցված գազատարին զուգահեռ, հնավայրի տարածքով անցկացվել է հյուսիսից հարավ ձգվող նոր խողովակաշար, որն էլ կրկին վնասել է բնակավայրն ու դամբարանադաշտը: Բնակավայրի, զուգահեռաբար նաև դամբարանադաշտի պեղումները սկսվեցին այս հատվածից: 1989թ. պեղվեցին բնակելի հատվածի մի քանի սենյակներ, որոնցից մեկի սալահատակի վրա էլ բացվեցին իրար զուգահեռ դրված սալարկղային հինգ թաղումներ: Գտնվեցին քարից ձու, ճան և սարդիոնից մատանի: Այս դամբարաններից մեկում (թիվ 5) հայտնաբերված, 4-րդ դարով թվագրվող սարդիոնից մատանին օգնում է հստակ թվագրել նաև կողքկողքի դրված և նյութ չունեցող մյուս չորս թաղումները:

1990թ. աշխատանքները ծավալվեցին նախորդ տարի կիսատ թողած հատվածում՝ թեք լանջով բարձրացող հարթության վրա՝ ջրատարի խրամատի երկարությամբ: Պեղվեց 34 դամ-

բարան և, ի թիվս սալարկղայինների, բացվեցին նաև կարասային թաղումներ: Գտնվեցին ապակու մածուկից ուլունքներ և բրոնզե օձագլուխ ապարանջան: Պեղումների արդյունքում պարզ դարձավ, որ դամբարանադաշտում կան անտիկ ժամանակաշրջանին բնորոշ թաղման մի քանի ձևեր՝ սալարկղային, կարասային և հիմնահողային: Հետաքրքրական էր նաև թաղման տեսակների և ծեսի մի քանի յուրահատկությունների դիտարկումը, ինչպես օրինակ՝ կողասալերի (թիվ 6) վրա արված փորվածքներն ու միջանցիկ անցքերը, երկանքաքարը որպես ծածկասալ և կողասալ օգտագործելը (թիվ 8), ինչպես նաև ականջօղերը (թիվ 6) միայն աջ ականջին կրելը:<sup>15</sup>

1991թ. աշխատանքները շարունակվեցին առաջին տեղամասում, ավելի ուշ՝ նաև հնավայրի հյուսիսային հատվածում, որտեղ նախորդ՝ 1990թ. բացվել էր մի քանի դամբարան: Պեղվող հատվածը ձգվում է հյուսիսից հարավ, ունի 65մ երկարություն և 12-15մ լայնություն: Հյուսիսային կողմում բնակավայրի ավերված լինելը, բացառությամբ կիսավեր պատի և սալահատակի մի մասի, հնարավորություն է տվել թաղումները կատարել ավելի մեծ խտությամբ՝ մի քառակուսու մեջ 5-8 թաղում: Դեպի հարավ դամբարանները նոսրանում են: Այս հատվածում թաղումները սկսվել են դեռևս բնակավայրի կենսագործունեության ժամանակ՝ մ. թ. ա. 1-ին դարում:

Դամբարանադաշտի կենտրոնական հատվածում պատկերը քիչ այլ է: Այստեղ թաղումները կատարված են տարբեր ժամանակաշրջաններում, գտնվում են գետնի մակերեսից 20-40սմ, 40-60սմ և 60-120սմ, երբեմն նաև՝ 140սմ խորության վրա: Դամբարանադաշտի այս հատվածն ունի մոտ 30° թեքություն: Արևմտյան հատվածը, որ ամենաբարձրն է, արևմուտքից արևելք բարձրացող եռաստիճան հարթակ է, և դամբարաններն էլ դրված են երեք

\* Բենիամին գյուղի բնակիչ Վաչիկ Արշակյանը 1961 թվականին տնտեսության մեջ օգտագործելու նպատակով բլրի լանջից, որն այսօր պեղավայրի 2-րդ տեղամասն է, գյուղ է տեղափոխել մի սարկոֆագ: Նշված սարկոֆագը 1990թ. փոխադրվել է Շիրակի երկրագիտական թանգարան:

\* Բնակավայրի և դամբարանադաշտի պեղումներն ընթացել են միաժամանակ՝ ելնելով դամբարանադաշտը բնակավայրի վրա մատած լինելու հանգամանքից:

<sup>15</sup> Լ Ե զ ա ն յ ա ն, Բենիամինի անտիկ դամբարանադաշտի պեղումները, ՀՀ 1989-1990թթ. դաշտային հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Եր., 1991, էջ 92-94:

հարթակների վրա: Դրա հետևանքով թաղումները կատարվել են ոչ թե մի քանի շերտով, ինչպես հյուսիսային հատվածում է, այլ՝ մեկ: Այս տարածքում բավականին լավ պահպանված կառույցներ են, որոնք մասամբ ավերվել են մալ թաղումներ կատարելիս: Արևմուտքից արևելք աստիճանաբար բարձրացող դամբարաններից առաջինները կառույցների հատակին են (թիվ 93, 94, 109): Այսինքն՝ նույն ժամանակաշրջանի թաղումները, պայմանավորված տեղանքի առանձնահատկություններով, հայտնվել են տարբեր մակարդակների վրա: Արևելքից արևմուտք ձգվող հատվածում բացված սենյակի մեջ պեղվեց սալարկղային մի թաղում: Արևմտյան հատվածում՝ բնակելի համալիրի մեջ, բացվեցին մեկ հիմնահողային և երկու կարասային թաղումներ (թիվ 43ա, բ, գ): Նույն միջանցքի մեջ բացվող սենյակներից ամենամեծի հատակին բացվեց կրամլեխի մեջ կատարված կարասային թաղում (թիվ 40)՝ շների և ձիու զոհաբերության ուղեկցությամբ: Մի դամբարան (թիվ 121) պեղվեց դեպի գյուղ ձգվող դաշտում դրված ստուգողական փոսորակի մեջ, երեք հիմնահողային թաղում՝ թիվ 123, 124, 125, երրորդ տեղամասում՝ ամբարի բերանին:

Բացված թաղումներում կրկնվում են թաղման հիմնական եղանակները՝ սալարկղային, կարասային և հիմնահողային: Միաժամանակ կան նոր եղանակներ, ինչպես ամբարների մեջ կատարված թաղումներ (թիվ 79, 90), և հայտնի եղանակների յուրահատուկ դրսևորումներ, ինչպես զույգ թաղում՝ տղամարդ և կին (թիվ 121), կրամլեխի մեջ կատարված թաղում՝ շների և ձիու զոհաբերության ուղեկցությամբ (թիվ 40):

1992թ. աշխատանքները ծավալվեցին առաջին տեղամասում՝ նպատակ ունենալով ավարտել սյունազարդ դահլիճի և նրանից հյուսիս որոշ հատվածների պեղումները:՝\* Սյունազարդ

\* Բենիամինի առաջին տեղամասի մոնումենտալ կառույցը բնակավայրի մ.թ.ա. 1-ին դարի առանցքային շենքն է, որին ստորադասվել են շրջակայքում հայտնաբերված բնակելի և տնտեսական համալիրները: Շենքը հյուսիս-հարավ փոքր-ինչ շեղված առանցքով ուղղանկյուն է: Մոնումենտալ կառույցի արևելյան թևը բաղկացած է սյունազարդ դահլիճից և դրան հարավից հարող երկու սենյակներից: Դահլիճն ունի մոտ 19,5x9,5մ չափեր: Այն

դահլիճի մեջ բացվեց երեք թաղում, որոնցից երկուսը հիմնահողային են, մեկը՝ սալարկղային: Թիվ 126-ը հիմնահողային թաղում է՝ սյունազարդ դահլիճի հյուսիս արևմտյան անկյունում, թիվ 127-ը՝ արևմտյան երրորդ խարսխի դիմաց՝ երկրորդ հատակի տակ: Թիվ 130 և 60 դամբարանները ևս բացվեցին սյունազարդ դահլիճի մեջ: Թիվ 130 դամբարանը բացվեց սյունազարդ դահլիճի արևելյան կողմում՝ սալահատակի վրա: Նշված բոլոր թաղումները վերաբերում են մ. թ. 1-ին դարին: Բնակելի հատվածը պեղելիս բացվեցին նույն սենյակի սալահատակի մեջ, կողքկողքի դրված սալարկղային թաղումներ (թիվ 131, 132, 133...), որոնք ավելի ուշ են և վերաբերում են մ. թ. 2-րդ դարին: Նույն հատվածում՝ բնակավայրի հատակի մեջ դրված սալարկղային թաղման տակ, բացվեց ավելի վաղ կատարված կարասային թաղում (թիվ 134), որը վերաբերում է մ. թ. ա. 1-ին դարին:

1992թ. պեղումներով բացվեցին մալ թաղումներ, որոնք կատարվել են տնտեսական հորի (թիվ 146) և ամբարի մեջ (թիվ 129): Հորի մեջ կատարված թաղումը բացվեց բնակավայրի սալահատակի տակ՝ հորի մեջ, և վերաբերում է մ.թ. 1-ին դարին: Տնտեսական նշանակության շինության մեջ բացվեց կարասային թաղում (թիվ 150): Թիվ 129 թաղումը բացվեց 2-րդ տեղամասում՝ պալատական համալիր տանող բլրի լանջին՝ քարաշար պատերով, կեղծ թաղով ամբարի հատակին: Թաղումը կատարվել է մ. թ. ա. 1-ին դարում:<sup>16</sup> Երրորդ տեղամասում բացվեց մի սալարկղ-կենտաֆ (թիվ 171):

Այսպիսով, 1992թ. աշխատանքները ցույց տվեցին, որ այստեղ ժամանակագրորեն երեք տարբեր շրջանի թաղումներ են: Ամենավաղ թաղումը վերաբերում է մ.թ.ա. 1-ին դարին և

հյուսիսից հարավ երկու սյունաշարերով բաժանված է երեք համադրյա հավասար մասերի: Հ. Խաչատրյան, Բենիամինի անտիկ դաստակերտի հեղինակազմի ժամանակաշրջանի ճարտարապետությունը (մասն I), ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. II, Գյումրի, 1999, էջ 48-49:  
<sup>16</sup> Լ. Ե գ ա ն յ ա ն, Բենիամինի անտիկ դամբարանադաշտի պեղումները 1991-1992թթ., ՀՀ 1991-1992թթ. դաշտային հնագիտական պեղումների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Եր., 1994, էջ 30-32:

բացվեց մայր հողի մեջ: Մ.թ. 1-ին դարի մի թաղում բացվեց սենյակի երկրորդ հատակի տակ, իսկ մ. թ. 2-րդ դարի մի թաղում՝ սյունազարդ դահլիճի սալահատակին:

1993թ. աշխատանքներ իրականացվեցին միայն առաջին տեղամասում՝ ընդգրկելով հյուսիսից հարավ ձգվող լայն ժապավենի արևելյան մասը, ինչպես նաև ճամփեզրին փռված արտի արևմտյան հատվածը: Արտի մեջ պեղված թաղումները բնակելի հատվածի արևելյան եզրին են և շարված են մի գծով: Այստեղ բացվեցին մ. թ. ա. 1-մ. թ. 1-ին դարերի թաղումներ. կարասային թաղում սալարկղի մեջ, մանր քարերով շարված ձվածիքի մեջ կատարված զույգ թաղում, ինչպես նաև հիմնահողային և կարասային թաղումներ (թիվ 182,183,184,195...): Բացվեցին նաև սալարկղային թաղումներ (թիվ 172, 173, 174...), որոնք ունեն նույնատիպ թաղումների կառուցվածքը և թաղման ծեսին բնորոշ բոլոր առանձնահատկությունները: Թիվ 176 դամբարանի ծածկասալի քարերից մեկի վրա կողք-կողքի զույգ միջանցիկ անցք է արված: Բացվեցին նաև հիմնահողային (թիվ 177,184,189, 207) և կարասային թաղումներ (թիվ 182, 183, 206): Առանձնապես հետաքրքիր է թիվ 183 դամբարանը, ուր թաղումը կատարվել է սալարկղի մեջ դրված կարասի երկայնակի կտրված (կտրված) մոտ 20սմ լայնությամբ ժապավենաձև բեկորների վրա: Բացվեցին նաև հորերի մեջ կատարված թաղումներ (թիվ 194, 207), որոնցից մեկի մոտ (թիվ 194) գտնվեցին նաև շան ոսկորներ: Դամբարանադաշտի արևելյան հատվածում բացվեցին մանր քարերով շարված ձվածիքի մեջ կատարված հիմնահողային թաղումներ (թիվ 184, 185, 190, 195), որոնցից առաջին երկուսը՝ նստած դիրքով: Թիվ 95 և 207 դամբարաններում կատարվել է զույգ թաղում:

Առաջին տեղամասում, 20-40սմ խորության վրա բացված սալարկղային թաղումները նստած են բնակավայրի մ. թ. ա. 1-ին դարի վերջ - մ. թ. 1-ին դարերի շերտի մեջ:

Այստեղ տեղանքը բլրաշար է, և բնակավայրը կառուցված է արհեստական դարավանդների վրա, որի տարբեր հատվածները

հողմնահարվել են տարբեր չափով, ապա ըստ ռելիեֆի և բնակավայրի որոշ կառույցների առանձնահատկությունների (որտեղ պատերը պահպանվել են մինչև մակերես և պատվար են հանդիսացել հողմնահարման և սահքի դեմ), որոշ դամբարաններ գտնվում են համարյա մակերեսին, մի քանիսն էլ բավականին խորն են և հայտնվել են մ. թ. ա. 1-ին դարի շերտում: Բնակավայրի մշակութային վերին շերտը տեղամասի տարբեր հատվածներում ունի մինչև 0,5մ հզորություն և դուրս է գալիս մակերես:<sup>17</sup>

1994թ. աշխատանքները ծավալվեցին հնավայրի արևելյան հատվածում՝ ճամփեզրի արտի մեջ: Այստեղ նախորդ տարիներին պեղվել էր մի քանի թաղում, այդ թվում՝ նաև ձվածիք շարվածքի մեջ: 1994թ. նույնպես բացվեց ձվածիքի մեջ կատարված թաղում (թիվ 209): Սալարկղային թաղումներ բացվեցին բնակավայրի կիսավեր պատերին կից հատվածում (թիվ 211, 212), որոնցից վերջինը՝ վերաբաղման հետքերով: Պեղված թաղումները վերաբերում են մ.թ.ա. 1-մ. թ. 1-ին դարերին:

1995թ. աշխատանքները շարունակվեցին պեղավայրի նախորդ տարի անավարտ թողած հատվածում, ուր պեղվեց ընդամենը չորս թաղում՝ երկու հիմնահողային և երկու սալարկղային: Սրանցից առանձնաճանաչ է նստած դիրքով թիվ 217 հիմնահողային թաղումը, որ բացվեց մ. թ. ա.1-ին դարով թվագրվող, մի գծով դրված դամբարանների կողքին և վերաբերում է նույն ժամանակաշրջանին:<sup>18</sup> Այս հատվածը բնակավայրի արևելյան սահմանն է, իսկ բացված կառույցները, դրանցում առկա տորածև խարիսխ-գոհասեղանները, նաև պաշտամունքային բնույթի բազմաթիվ այլ գտածոները, ենթադրում են կառույցի ծիսապաշտամունքային բնույթը: Եվ բացառված չէ, որ նման պարագայում այստեղ՝ նշված շինության պատերից դուրս, կարող էին թաղվել տաճարական ստրուկները:

<sup>17</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Բենիամինի անտիկ դաստակերտի հեյնենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը (մասն II), Գ.Ա.Ա. ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. III, Գյումրի, 2000, էջ 31:  
<sup>18</sup> Լ. Ե գ ա ն յ ա ն, 1991, էջ 22-23:

1996-1999թ.թ. բնակավայրի պեղումների ընթացքում առաջին տեղամասում բացվեց հիմնահողային և սալարկղային վեց թաղում՝ առանց ուղեկցող նյութի (թիվ 219-224):

2000-2001թթ. Բենիամինի դամբարանադաշտը շարունակվեց պեղվել մեր կողմից՝ հայ-ֆրանսիական համատեղ արշավախմբի կազմում: \* Պեղվեց 25 դամբարան:

2000 թվականին պեղումներն ընթացան առաջին տեղամասում՝ արևելք-արևմուտք աստիճանաբար բարձրացող տարածքի երկու տարբեր հատվածներում: Այստեղ դրվեցին լրացուցիչ քառակուսիներ, որտեղ բացվեցին տարբեր խորություններում կատարված մի քանի սալարկղային թաղումներ (թիվ 225-229): Ամենավաղը մակերեսից 80սմ խորության վրա գտնվող թիվ 225 և 228 սալարկղային թաղումներն են, ընդ որում թիվ 225 թաղման ձախ կողասալի վրա հետագայում դրվել է թիվ 226 դամբարանի աջ կողասալը: Նույն մակարդակի վրա՝ երկու թաղումների միջև, բացվեցին հոգեհացի մնացորդներ. կարասի նստուկ՝ շուրջը վառված փայտի կտորներ: Ավելի ուշ կատարվել է թիվ 229 թաղումը, որի վրա հետագայում դրվել է բնակավայրի կառուցողական վերջին շրջանի (մ.թ. 1-ին դար) պատը: Այս հատվածում ամենաուշ թաղումները կատարվել են թիվ 226 և 227 մակերևույթի դամբարաններում, որոնցից վերջինի ծածկասալը համարյա մակերեսին է:

Պեղավայրի այս հատվածից քիչ հյուսիս՝ գազատարի խրամատի հատվածում և դրանից հարավ՝ բնակավայրում, պեղվեց ևս երկու քառակուսի, որտեղ բացվեցին մի քանի սալարկղային թաղումներ: Գազատարի կառուցման ժամանակ մասամբ ավերվել է թաղումների մի մասը, իսկ մի քանիսն էլ՝ վնասվել: Այստեղ նույնպես թաղումները տարբեր ժամանակահատվածներում են կատարվել և երբեմն էլ դրված են իրար վրա: Բնակավայրի պահպանված հատվածը հյուսիս-արևմուտք հարավ-

արևելք ուղղությամբ անցնող քարե պատ է, որի վերին հորիզոնը կազմված է հում աղյուսե ուղղանկյուններից: Իրար հաջորդող կառուցողական տարբեր փուլերում այն փոփոխություններ է կրել՝ մնալով կավով ծեփված հատակի տակ: Բացվեց մի քանի հատակ, բոլորն էլ՝ կավածեփ: Դամբարանները դրվել են հենց այդ հատակներին: Ըստ այդմ էլ, մակերեսից առավելագույնը 120սմ ներքև բացված դամբարանների խորությունները տարբեր են. թիվ 230 և 233 սալարկղային մակերևույթի թաղումները բացվեցին ամենավերին շերտում և մակերեսից 40-50սմ խորություն ունեն, ավելի խորը թաղումները (թիվ 231 և 232)՝ 60-80 սմ: Թիվ 232 թաղումը դրված էր կավածեփ հատակին, իսկ թիվ 231 թաղումը, որ ավելի խորն է, մեկ այլ հատակի վրա է: Նշված թաղումների շրջակայքում մարդկային ոսկորների առկայությունն անշուշտ վերաթաղման հետևանք է:

Թիվ 230-233 թաղումների տարածքը մ.թ.ա. 5-մ.թ.ա. 1-ին դարերի հում աղյուսե պատերով մի շինության օրգանական շարունակությունն է: Ըստ Բենիամինի բնակավայրի առաջին տեղամասի ուսումնասիրության արդյունքների՝ այս շինությունը կործանվել է մ. թ. ա. 1-ին դարի կեսերին:<sup>19</sup>

Թաղումները շարունակվում են նաև գազատարից արևելք: Թիվ 230-233 դամբարանների տարածքում բնակավայրի վերջին հատակի վրա հայտնաբերված գտածոները (ոսկրե բրզաձև կնիք՝ արևի պատկերով, բրոնզե մատանի և այլն) խթան հանդիսացան հաջորդ շերտը պեղելու համար: Հատակի տակ բացվեց մարդկային գանգերի, խոշոր եղջերավոր անասունի ոսկորների և տարատեսակ կավանոթների բեկորների խառնակույտ: Պատկերն ամբողջական դարձնելու համար ընդարձակվեց պեղվող քառակուսին: Նախ պեղվեցին և հետացվեցին այս հատվածի ավելի ուշ ժամանակաշրջանի սալարկղային երկու թաղումները: Անվնաս մնացած հատվածները ևս պեղվեցին

\* Բենիամինում բնակավայրի պեղումները 1999-2008թթ. իրականացվեցին հայ-ֆրանսիական համատեղ արշավախմբի կողմից (հայկական կողմի ղեկավար Ֆ. Տեր-Մարտիրոսով, ֆրանսիական կողմի պատասխանատու՝ Ստեֆան Դեշանյ): Դամբարանադաշտը պեղվեց մինչև 2001թ.:

<sup>19</sup> Հ. Խ ա չ ա ու ը յ ա ն, Հում աղյուսե կառույցներ հելլենիստական Բենիամինում, *Conservation of Ruined Monuments, Workshop proceedings edited by Armenian National Committee of ICOMOS, Եր., 2003, էջ 133:*

և, բացի խիստ քայքայված գանգոսկերից, գտնվեց նաև երկու առան: Պեղումներով պարզվեց, որ նոր թաղումներ կատարելու համար հեռացրել են հները և մաքրել տարածքը՝ ցաքուցրիվ անելով և՛ կմախքները, և՛ զոհաբերության ու հոգեհացի մնացորդները (ձիու ոսկորներ, տարաբնույթ խեցեղենի բեկորներ):

Այսինքն՝ մ.թ. 1-ին դարի շերտում բացված այս թաղումներն ավերվել են նոր թաղումների կատարելիս: Երևույթը նորույթ չէ Բենիամինի դամբարանադաշտում, որտեղ քանիցս փաստված են վերաթաղմամբ դամբարաններ, երբ նախորդ կմախքի ոսկորները խնամքով կողքի են դրվել և կատարվել է նոր թաղում:

Դեռևս զարնանը հնավայրի առաջին տեղամասում՝ նախորդ տարիներին պեղված տարածքում, անձրևաջրերի հոսքից մասամբ բացվել էր մի կարասային թաղում: Ինչպես ցույց տվեցին պեղումները, ուղղահայաց դիրքով դրված կարասի մեջ կատարված մանկական թաղում էր՝ քայքայված կմախքով, առանց ուղեկցող նյութի: Հիմնահողային մեկ թաղում բացվեց երկրորդ տեղամասում՝ պալատական համալիրի մեջ: Այսպիսով, 2000թ. պեղվեց տասը դամբարան:

Պեղված տարածքում հիմնականում պահպանվում են Բենիամինի անտիկ թաղումներին բնորոշ թաղման տեսակներն ու ծեսը: Դրանք մեծ մասամբ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ սալարկղային թաղումներ են՝ կառուցվածքային նույն սկզբունքների պահպանմամբ (անկանոն, անմշակ քարերով ուղղանկյուն՝ փակված նույնպես անկանոն և անմշակ ծածկասալերով): Կան դամբարաններ, որոնց արևմտյան կողմը (գլխի) ավելի լայն է, քան՝ արևելյանը (ոտքերի կողմը): Թիվ 232 դամբարանի չափերը մեծացվել են արևելյան և արևմտյան կողասալերի քարերը իրարից քիչ հեռացնելով: Քանի որ վերաթաղման հետքեր չեն պահպանվել, կարող ենք ենթադրել, որ դամբարանը չի համապատասխանել ննջեցյալի չափերին, և կատարվել է քարերի հավելում:

Սալարկղային թաղումների ծածկասալերի եզրերին շարված են մանր քարեր: Այն առա-

վել նկատելի է թիվ 228 դամբարանի կառուցվածքում, որտեղ դամբարանի ծածկասալը՝ իրանից մինչև գլուխ հատվածը, ծածկված է միջին մեծության քարերով (կողասալերի վրա կամ կողասալերից 5-6սմ հեռու): Քարերի լրացուցիչ կուտակումը կարող էր արվել ծածկասալի ամրացման նպատակով: Այս քարերի մեջ գտնվեցին տարբեր ամանների, այդ թվում նաև տափաշշի բեկորներ: Դժվար է ասել, թե վերջիններս երբ են թողնվել դամբարանի վրա. թաղման օրը կամ հանգուցյալի հիշատակին նվիրված մյուս ծիսակարգերից հետո:

Դամբարանադաշտի այս փոքր հատվածում բնակավայրի հետքեր չկան: Վերջինս էլ հնարավորություն է տալիս թաղման ծիսակարգը դիտարկել առավել ամբողջական: Թաղումների մոտ հոգեհացի արարողակարգի վկայությունն են մոխրաշերտի առկայությունը, վառված փայտի մնացորդներն ու գտնված անոթների բեկորները: Այս թաղումներում ևս կմախքներն ունեն ուղիղ՝ մեջքի վրա պառկած դիրք, իրար վրա դրված ձեռքերը հանգչում են կրծքին կամ որովայնին: Թաղումները կատարվել են հիմնականում առանց ուղեկցող նյութի: Թիվ 228 դամբարանում՝ կմախքի ձախ ձեռքի մատնեմատին գտնվեց երկաթյա մատանի: Մանկական թաղումից գտնվեց երկու ուլունք, մեկը գլանաձև է՝ պատրաստված ապակուց, մյուսը՝ կարմիրի և սպիտակի խառը երանգներով ազաթից (թիվ 230):

2001թ. պեղումներն ընթացան նախորդ տարում պեղված տարածքի դեպի արևելք ընկած հատվածում, որտեղ բացվեց ինը թաղում (թիվ 237-245), որից յոթը սալարկղային են և մեկը՝ սարկոֆագի մեջ: Թիվ 239 դամբարանում վերաթաղում է կատարվել: Կողքկողքի դրվել են երկու զանգերը և կուտակվել մյուս ոսկորները, այնուհետև կատարել նոր թաղում: 2001թ. պեղված սալարկղերում ևս պահպանվում են բնորոշ թաղման եղանակն ու ծեսը: Միակ ուղեկցող նյութը թիվ 244 մանկական դամբարանից գտնված ապակյա սև ուլունքն է: Թիվ 245-ը սարկոֆագային միակ թաղումն է, որ պեղվել է Բենիամինում: Այստեղ նույնպես կատարվել է

վերաքաղում և քանի որ երկրորդ թաղման համար սարկոֆագը փոքր է եղել, ուղղակի կտրել են և, քարեր հավելելով, երկարացրել:

1989-2001թթ. Բենիամինում իրականացված պեղումները ցույց են տալիս, որ առաջին թաղումներն այստեղ կատարվել են մ. թ. ա. 1-ին դարում՝ բնակավայրի կենսագործունեության ժամանակ: Դրանք բնակավայրի հատակների տակ, տնտեսական ամբարների և կենցաղային հորերի մեջ կատարված հիմնահողային թաղումներն են, ինչպես նաև բնակավայրի ծայրարևելյան հատվածում մի գծով դրված հիմնահողային, կարասային և սալարկղի մեջ դրված կարասային մի քանի թաղումները:

Սյունագարդ դահլիճի և նրան հարող կից կառույցների տարածքում թաղումները շատ քիչ են: Այստեղ տափանված հատակի տակ բացվեց հիմնահողային մի թաղում, որը վերաբերում է մ.թ. 1-ին դարին: Տափանված հատակի տակ գտնվելու հանգամանքն արդեն հաստատում է, որ թաղումը կատարվել է բնակավայրի կենսագործունեության ժամանակ: Բացված երկու սալարկղային թաղումներն ավելի ուշ են և վերաբերում են մ. թ. 2-3-րդ դարերին: Նույն պատկերն է նաև սյունագարդ դահլիճին կից կառույցներում: Այստեղ ևս թաղումները հազվադեպ են: Նույն միջանցքի մեջ բացվող երեք սենյակներից բաղկացած համալիրի մեջ պեղվեց երկու թաղում, որոնցից մեկը կարասային է՝ շների և ձիու զոհաբերությամբ, իսկ մյուսը՝ հիմնահողային (նստած դիրքով): Նույնիսկ ավելի ուշ՝ 3-4-րդ դարերում, երբ տարածքը ծածկված էր հողի հաստ շերտով, բնակավայրի բազմագործառական բնույթ ունեցող այս շինության տարածքում հատուկենտ թաղումներ են կատարվել: Հավանաբար նույնիսկ ավերումից հետո էլ ապրողների մեջ մասամբ պահպանվել է շենքի սրբատեղի կամ սրբազնացված տարածք լինելու հիշողությունը, հանգամանք, որը և գուցե խանգարել է համատարած թաղումներ կատարելուն:

Սկսվելով արևելյան հատվածից՝ թաղումները տարածվել են դեպի արևմուտք և հյուսիս, որտեղ ամենաշատն են՝ 5x5մ չափերով քառա-

կուսու մեջ՝ 5-6 դամբարան: Երբեմն հանդիպում են նաև նույն հատվածի տարբեր մակարդակներում կատարված թաղումներ: Բնակավայրի ամկումից հետո՝ մ.թ. 2-րդ դարից սկսած, այստեղ թաղումները համատարած բնույթ են կրում, և արդեն 3-4-րդ դարերում նախկին բնակավայրի տարածքի մեծ մասը վեր է ածվում դամբարանադաշտի: Ավելի քան հինգ հարյուր տարի այստեղ թաղումներ են կատարվել և շատ դեպքերում՝ նաև՝ իրար վրա:

Բնակավայրի տարածքում վերջին թաղումները կատարվել են մ. թ. 4-րդ դարում: Ինչպես ցույց են տալիս պեղումները, Բենիամինի մ.թ. 2-4-րդ դարերի դամբարանադաշտը նստած է բնակավայրի վրա, հանգամանք, որը որոշակի դժվարություններ է ստեղծում: Դրանցից մեկն էլ այն է, որ հայտնաբերված նյութերը երբեմն կարող էին նաև դամբարանում հայտնվել հանգուցյալի վրա լցված հողի հետ: Ելնելով վերջինից՝ քննության առարկա են միայն կմախքի նկատմամբ որոշակի դիրք ունեցող իրերը: Նույնպիսի վերաբերումը է դրսևորվել նաև հոգեհացի առկայությունը փաստելիս:

Բենիամինում ընդհանուր առմամբ պեղվել է 245 դամբարան: Սրանցից նյութ հայտնաբերվել է միայն սալարկղային 40, կարասային 14 և հիմնահողային 9 թաղումներում: Թաղումներից 48-ը վերաբերում են բնակավայրի կենսագործունեության ժամանակաշրջանին (մ.թ. ա. 1-մ.թ. 1-ին դարեր) և բացվել են հատակների տակ, տնտեսական ամբարների ու կենցաղային հորերի մեջ: Իսկ մնացած թաղումները վերաբերում են մ.թ. 2-4-րդ դարերին (տախտակ 2):

*Դամբարան 1* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, սենյակի մեջ, սալահատակի վրա: Դամբարանի համար ծածկասալ է ծառայել միջին մեծության մի քար: Սալարկղի ուղղանկյունը երկուական կողասալերով է՝ գլխի և ոտքերի մոտ լրացված մեկական քարով (դամբարանի երկ.՝ 200սմ, լայն.՝ գլխի մասում 75սմ, ոտքերի մոտ՝ 60սմ, խոր.՝ 30 սմ): Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Ոտքերի տակ գտնվեց քարից ձու: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 2* - Մալարկո՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, սենյակի մեջ՝ սալահատակին: Որպես ծածկասալ օգտագործել են մի քանի փոքր քարեր: Դամբարանի ուղղանկյունը կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի մոտ մեկական քարի հավելումով (դամբարանի երկ.՝ 85 սմ, լայն.՝ 45սմ, խոր.՝ 25սմ.): Մանկական թաղում է՝ լավ պահպանված կմախքով, որի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Ուղեկցող միակ նյութը ոչխարի ճանն է՝ գտնված կմախքի իրանի հատվածում: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 5* - Մալարկո՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, սենյակի հատակին: Մալարկոյի ուղղանկյունը կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի մոտ հավելված մեկական քարով (դամբարանի երկ.՝ 180 սմ, լայն.՝ 42սմ, գլխի մասում, 28սմ՝ ոտքերի մոտ): Կմախքի դիրքն ուղիղ է: Գանգը հակված է աջ, ձեռքերը՝ կզակի տակ իրար միացած: Չախ ձեռքի մատնեմատին գտնվեց կարմրանարնջագույն սարդիոնից, ձվածիր, հարթեցված պակով մատանի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 6* - Մալարկո՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Երկու մեծ, կոպտատաշ քարեր ծառայել են որպես ծածկասալ (100x70x20սմ և 85x75x20սմ): Մալարկոյի ուղղանկյունը երկուական կողասալերով է՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Կողասալերի վրա՝ կմախքի կոնքի ուղղությամբ, փորվածքներ են արված: Աջ կողմում այն ունի 15սմ տրամագիծ և 12սմ խորություն, իսկ ձախում՝ 15սմ տրամագիծ և 9սմ խորություն: Դամբարանը մեծ է (երկ.՝ 180սմ, լայն.՝ 45սմ գլխի հատվածում, 28սմ ոտքերի մոտ, խոր.՝ 25սմ): Կմախքը դրված է ուղիղ՝ մեջքի վրա, աջ ձեռքը որովայնին է, ձախը՝ ծնոտի տակ: Աջ ականջի մոտ գտնվեց բարակ բրոնզալարից, եզրերը իրար սեղմված, քիչ ձվաձև մի ականջօղ (ըստ մարդաբանական տվյալների՝ 30-40 տարեկան կին է):

*Դամբարան 8* - Մալարկո՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Մալարկոյի ուղղանկյունը

կազմված է երկուական կողասալերով՝ ոտքերի և գլխի մասում լրացված մեկական քարով: Մալարկոյի (երկ.՝ 90սմ, լայն.՝ 38սմ, խոր.՝ 25սմ) ձախ կողասալերից մեկը շրջանաձև երկանքաքար է՝ մի կողմում ուղիղ կտրվածքով: Նույնպիսի մշակում ունի նաև որպես ծածկասալ ծառայած նմանատիպ մեկ այլ երկանքաքար: Երկու անմշակ քարեր լրացնում են ծածկասալը: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Առանց ուղեկցող նյութի: Դամբարանից 50-60սմ հեռավորությամբ բացվեց ձիերի գոհաբերություն: Հաստ մոխրաշերտի և փայտածուխի կտորների մեջ՝ երկու ձիերի երկատված ծնոտի իրարից հեռու, հակադիր դրված մասերի վրա գտնվեց սև տուֆից, կտրված դուրզի անիվ: Չոհաբերությունն առնված է հինգ անկանոն քարերով եզերված շրջանի մեջ: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 9* - Կարասային թաղում՝ հյուսիս - արևելք-հարավ-արևմուտք կողմնորոշմամբ: Կարասը դրվել է հորիզոնական դիրքով, թաղումը կատարվել է աջ կողքին կծկված դիրքով: Կարասի շուրթից իրանը կտրվել է և դին տեղավորելուց հետո վերադասավորվել նախնական դիրքով: Թաղման կողքին՝ կրակի մեջ, պահպանվել են հոգեհացի մնացորդները՝ ոսկորներ և կավանոթների բեկորներ: Մանկական թաղում է առանց ուղեկցող նյութի (ըստ մարդաբանական տվյալների՝ 0,5-1,1 տարեկան երեխա է):

*Դամբարան 10* - Հիմնահողային թաղում հարավ-հյուսիս կողմնորոշմամբ, բնակավայրից պահպանված պատի տակ՝ սալահատակի վրա: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ոտքերն՝ խաչված, ծնկները՝ բարձր, ոտնաթաթերն՝ իրար մոտ: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 16* - Հիմնահողային թաղում՝ հարավ-հյուսիս կողմնորոշմամբ, բնակավայրից պահպանված պատի մոտ՝ կավածեփի հատակին: Թաղումը կատարվել է աջ կողքին կծկված դիրքով, ձեռքերը՝ ծնոտի տակ: Չեռքերի մեջ գտնվեց վառված փայտի ուղղանկյուն կտոր՝ 25x25սմ չափերով: Կմախքը քարակույ-

տի տակ էր: Թաղման տարածքում գտնվեցին նաև փայտածխի և օրգանական այլ մնացորդներ: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 17* - Կարասային թաղում՝ կարասի ուղղահայաց դիրքով: Թաղումը կատարվել է 28սմ բարձրությամբ կարասի մեջ (բերանի տրամ.՝ 18սմ, իրանի տրամ.՝ 25սմ, նստուկինը՝ 14սմ): Թաղման կարասը ծածկվել է մեկ այլ կարասի մեծ բեկորով: Մանկական թաղում է՝ խիստ քայքայված կմախքով: Միակ ուղեկցող նյութը ձեռքով պատրաստված, անհարթ պատերով, կարասի ձև ունեցող, փոքրիկ մի կավանոթ է (բարձր.՝ 3, 5սմ): Թաղման կարասի մոտ պահպանվել է հոգեհացի կրակի մոխիրը (ըստ մարդաբանական տվյալների՝ 3,5 - 5,5 տարեկան երեխա է):

*Դամբարան 23* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Դամբարանի (երկ.՝ 100սմ, լայն.՝ 70սմ, խոր.՝ 20սմ) համար ծածկասալ և կողասալեր են ծառայել մանր, անկանոն քարերը: Մանկական թաղում է՝ խիստ քայքայված կմախքով: Դամբարանի ծածկասալի վրա գտնվեց ձիթաճրագ, իսկ դամբարանի մոտ՝ աջ կողքին պատկած ձիու ամբողջական կմախք (ըստ մարդաբանական տվյալների՝ 3-5 տարեկան երեխա է):

*Դամբարան 27* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, երկու մեծ ծածկասալերով (12 x80x35սմ և 70x70x20սմ): Դամբարանի ուղղանկյունը (երկ.՝ 200սմ է, լայն.՝ 65սմ, խոր.՝ 35սմ) կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ կրծքին: Աջ ականջի մոտ գրտնվեց բարակ բրոնզալարից, եզրերն իրար սեղմված, քիչ տանձաձև ականջօղ: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 28* - Կարասային թաղում անոթի պատկած դիրքով: Կարասի բերանն ուղղված է հյուսիս - արևմուտք: Նախապես տնտեսության մեջ օգտագործված կարասի բերանը փակվել է լյութերիայի և մեկ այլ կարասի բեկորներով: Կարասի (բարձր.՝ 70սմ, բերանի տրամ.՝

33սմ, իրանի տրամ.՝ 55սմ, նստուկինը՝ 21սմ) իրանի վրա պահպանվել է մինչ թրծելն արված 3սմ տրամագծով, հարթեցված եզրերով անցք: Կմախքը քայքայված է, պահպանվել է մի քանի ոսկոր: Կարասի մեջ գտնվեցին ապակու մածուկից մանր, գույնզգույն ուլունքներ և բաց վերջույթներով բրոնզե ապարանջան: Հանգուցյալի վրա լցված հողը հագեցած է վառված փայտի մնացորդներով: Կարասի կողքին հոգեհացի մոխիրն է: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 29* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Ծածկասալ են ծառայել 160x60x40սմ չափերով երկու սալ: Դամբարանի ուղղանկյունը (երկ.՝ 150սմ, լայն.՝ 35սմ, խոր.՝ 25սմ) կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Գանգի տակ գտնվեց բրոնզե ականջօղի բեկոր (ըստ մարդաբանական տվյալների՝ 20-30 տարեկան կին է):

*Դամբարան 33* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Թիվ 32 և 33 դամբարանների ծածկասալն ու կողասալն ընդհանուր են: Դամբարանը (երկ.՝ 160սմ, լայն.՝ 40սմ, խոր.՝ 25սմ) երկուական կողասալերով է՝ գլխի և ոտքերի հատվածում լրացված մեկական քարով: Կմախքի ոսկորները կուտակված են իրար վրա: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 36* - Կարասային թաղում սենյակներից մեկի հատակի մեջ, ուղղահայաց դիրքով: Միջին մեծության կարասի (իրանի տրամ.՝ 38 սմ, բարձր.՝ 39 սմ, նստուկի տրամ.՝ 15 սմ) նստուկը 5 սմ խորությամբ նստած է սենյակի հատակի մեջ: Անոթն իրանի և շուրթի մասում թերի է: Կմախքը քայքայված է, պահպանվել է մի քանի ոսկոր: Կարասի մեջ գտնվեցին ապակու մածուկից մի քանի ուլունք, որոնցից մեկը կնիքի նախապատրաստուկ է: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 39* - Կարասային թաղում անոթի ուղղահայաց դիրքով: Թաղումը բացվեց զազատարի համար փորված խրամատում: Բարեբախտաբար տեխնիկան խրամատը փո-



րել է կարասից մոտ 10սմ հեռու, և թաղումը չի վնասվել: Դեղնադարչնագույն կավից, փքուն իրանով, նեղ բերանով, շուրթը և իրանը թերի կարասը (բարձր.՝ 58սմ, բերանի տրամ.՝ 21սմ, իրանի տրամ.՝ 48սմ և նստուկի տրամ.՝ 16սմ) ուղղահայաց դիրքով դրվել է 2սմ հաստությամբ մոխրաշերտի մեջ: Դիրքն ապահովելու նպատակով կարասի նստուկի հատվածն ամրացվել է քարերով, որոնց մեջ գտնվեց երեք կոկիչ: Մոխրաշերտի մեջ գտնվեցին կրակից սևացած թասի և գավաթի բեկորներ, ինչպես նաև այրված ոսկորներ: Կմախքը չի պահպանվել, բացառությամբ մի ֆալանգի և թիակոսկրի: Թաղման կարասի մեջ գտնված միակ նյութը դեղնակարմրավուն կավից փուքսի օդամղիչն է: Ննջեցյալին հողով ծածկելուց հետո կարասի բերանը փակվել է քարերով: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 40* - կարասային թաղում՝ անոթի հորիզոնական դիրքով՝ բերանն ուղղված հյուսիս: Թաղումը կատարվել է նախապես ուսերը կտտրած կարասի մեջ: Դամբարանը բացվեց բնակավայրի ամենալավ պահպանված հատվածում՝ մույն միջանցքի վրա բացվող սենյակներից ամենամեծի կենտրոնում՝ հատակին: Սենյակը 7x7մ չափերով քառակուսի է: Պատերը պահպանված են 160սմ բարձրությամբ: Թաղումն առնված է քարաշար, 3մ տրամագծով շրջանի մեջ: Ի տարբերություն արևմտյան կողմում անկանոն, մեծ քարերով շարվածքի՝ շրջանի մյուս կողմերում մանր քարեր են: Թաղումն ուղեկցվել է շների և ձիու զոհաբերությամբ: Զարաշար շրջանը դրվել է զոհաբերված չորս շների վրա, որոնցից երկուսն ամբողջական կմախքով են, երկուսն՝ իրանից երկու մասի բաժանված: Կմախքները շարվել են ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ: Չոհաբերվել է նաև ձի, որի գլխի մի կեսը գտնվեց կարասի մոտ, մյուս կեսը՝ սենյակի արևմտյան պատի տակ: Դամբարանը կողոպտված է: Այդ է վկայում սենյակի տարբեր անկյուններում՝ վերին շերտում, 4-րդ դարով թվագրվող սանրաքաշ խեցիների հետ թաղման կարասի և ուղեկից այլ կավանոթների բեկորների առկայությունը: Դամ-

բարանից գտնվեցին ագաթից մատանու ակ, բրոնզյա երկու զանգակ, ձվածիր պսակով երկաթյա մատանի, թաս, գլանաձև իրանով կավանոթ, կարասի հողի մեջ՝ նաև բոժոժներ: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 43* - Բնակելի հատվածի մոտումենտալ կառույցի պատի մի հատվածը պեղելիս բացվեց երեք թաղում, որոնք դրված են իրար վրա՝ անջատված հողի աննշան բաժանարար շերտով: Դամբարանները տարբեր են թաղման եղանակներով. մեկը՝ հիմնահողային, երկուսը՝ կարասային: Ելնելով կառուցվածքային ամբողջականությունից՝ թաղումները դրել ենք մի համարի տակ և, հաշվի առնելով թաղման եղանակների տարբերությունը, յուրաքանչյուրին տվել ենք ահամար:

*Դամբարան 43 Ա* - Կարասային թաղում հյուսիս-հարավ կողմնորոշմամբ՝ բացված բնակավայրի ավերված հատվածում՝ պատի մեջ: Թաղման տարածքը պատրաստելիս հանդիպել են պատի շարվածքի, որի քարերի մի մասը հեռացվել է, ապա աճյունը ծածկվել մույն քարերով: Թաղումը կատարվել է հորիզոնական դիրքով դրված կարասի մեջ՝ աջ կողքին կրծկված դիրքով, ձեռքերը՝ կզակի տակ իրար միացած: Իրանից շուրթը թերի կարասը նախապես տնտեսության մեջ օգտագործված է, և վերականգնման համար արված անցքերը դրա վկայությունն են: Դամբարանում ուղեկցող նյութեր չեն դրվել: Մարդաբանական տվյալներ մույնպես չկան:

*Դամբարան 43 Բ* - Հիմնահողային թաղում՝ հարավ-հյուսիս կողմնորոշմամբ, կմախքի ձախ կողքին կծկված դիրքով: Թաղումը բացվել է թիվ 43 Ա թաղման տակ: Ձեռքերը ծալված են և կզակի տակ միացած իրար: Կմախքը քայքայված է: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 43 Գ* - Կարասային թաղում, որ բացվեց նախորդի կողքին՝ կիպ դրված: Կարասը դրվել է ուղղահայաց դիրքով և ամրացվել մանր քարերի շարվածքով: Կմախքը քայքայված է, պահպանվել է զանգի երկու փոքր ոսկոր: Միակ գտածոն գնդաձև իրանով, նեղ վզով,

մեկ ունկով գավաթն է: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 44* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Դամբարանը կիսավեր է, բացվել է ջրատարի համար փորված խրամատի արևելյան մասում: Ծածկասալը կոտրված է: Ըստ պահպանված մի հատվածի՝ սալարկղի ուղղանկյունը կազմվել է երկուական կողասալերից՝ գլխի և ոտքերի մոտ մեկական քարի հավելումով: Կմախքը քայքայված է, պահպանվել են գանգն ու երկու բազկոսկրը: Միակ ուղեկցող նյութը դամբարանի հողերի մեջ գտնված շրջանաձև, բրոնզե ականջօղի բեկորն է: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 47* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 170սմ, լայն.՝ 44 սմ, խոր.՝ 34սմ) կազմվել է երեքական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Ծածկասալ են ծառայել միջին մեծության երկու քարեր: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Միակ ուղեկցող նյութը բարակ բրոնզալարից, ծայրերը իրար բերված, քիչ տանձաձև ականջօղն է: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 50* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Դամբարանը կիսավեր է, պահպանվել է արևմտյան կեսը: Սալարկղի ուղղանկյունը կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա: Քայքայված գանգի աջ կողմում գտնվեց բրոնզալարից, ոլորուն օղակով ու կախիկով ականջօղ (ըստ մարդաբանական տվյալների՝ 30-40 տարեկան կին է):

*Դամբարան 51* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Դամբարանը բացվեց բնակավայրի հատակին, որի վրա դրված օջախի հյուսիսային պատն էլ ծառայել է որպես կողասալ: Դամբարանի ուղղանկյունը երկուական կողասալերով է՝ գլխի և ոտքերի մոտ մեկական քարի հավելումով (երկ.՝ 90սմ, լայն.՝ 30 սմ, խոր.՝ 25սմ): Մանկական թաղում է՝ կմախքի ուղիղ՝ մեջքի վրա դիրքով: Կմախքը քայքայված

է, պահպանվել են գանգը և ոսկորների մի մասը: Ուղեկցող միակ նյութը գանգի աջ կողմում գտնված քիչ ձվածիր, ծայրերն իրար հակված բրոնզե ականջօղն է: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 54* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Ծածկասալ է ծառայել 120x75x20սմ չափերի կոպտատաշ մի քար՝ ոտքերի մասում պակասը լրացնելով մանր քարերի շարվածքով: Դամբարանը մեծ է (երկ.՝ 190սմ, լայն.՝ 40սմ գլխի հատվածում, ոտքերի մոտ ավելի նեղ է՝ 30 սմ): Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Ծնկներից ներքև՝ երկու ոտքերի միջև, գտնվեցին մեկ այլ կմախքից մնացած կողոսկրեր և անոթոսկր: Վերաբաղման հետքերն ակնհայտ են: Դամբարանի հողը հագեցած է վառված փայտի և հատիկի մնացորդներով: Կմախքի կրծքին գտնվեց սև դիրիտից սրտաձև իր: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 59* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Դամբարանն առանց ծածկասալի է, ուղղանկյունը կազմված է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Դամբարանը կիսավեր է: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերի դիրքն՝ անհայտ, կողքին գտնվեցին ուլունքներ և նրբախեցի անոթի մի փոքրիկ բեկոր: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 66* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են 130x70x5սմ չափերի մի քար: Դամբարանը երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի մոտ մեկական քարի հավելումով ուղղանկյուն է (երկ.՝ 130սմ, լայն.՝ 40սմ, խոր.՝ 25սմ): Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Գանգի աջ կողմում գտնվեց ուղղաձիգ կախիկով ականջօղ (ըստ մարդաբանական տվյալների՝ 40-50 տարեկան կին է):

*Դամբարան 67* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են 70x40x5սմ չափերի մի քար: Սալարկղը (երկ.՝ 50սմ, լայն.՝ 20սմ, խոր.՝ 25սմ) կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և

նոքերի մոտ մեկական քարի հավելումով: Կոնստիտուցիոնալ պահպանված է միայն գանգը, մյուս ոսկորները խիստ քայքայված են: Կրծքի հատվածում գտնվեց խեցու բեկոր, իսկ գանգի աջ կողմում՝ բարակ բրոնզալարից, սրացող ծայրերը իրար միացած մի ականջող և կաթնագույն ապակուց երկկոնիկ կախիկ, որը հավանաբար ագուցված է եղել ականջողին: Աճյունի վրա հող չի լցվել, և դամբարանում միայն փոշու բարակ շերտ է: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 71* - Հիմնահողային թաղում հյուսիս-արևմուտք-հարավ-արևելք կողմնորոշմամբ: Թաղումը բացվեց տափանված հատակի տակ: Կոնստիտուցիոնալ բերանքսիվայր է (նախապես եղել է նստած՝ ոտնաթաթերը հպված գետնին, ծնկները՝ բարձր, այնուհետև մկանունքի քայքայումից հետո իրանն ընկել է աջ, իսկ ոտքերը մնացել են նույն դիրքով): Չեքերը կիսածալ են: Կավանոթի մի բեկոր գտնվեց բերանի մոտ, իսկ ձեռքերի և ոտքերի մոտ՝ վառված փայտի և հացահատիկի մնացորդներ: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 79* - Հիմնահողային թաղում տնտեսական ամբարի մեջ: Ամբարը կիսավեր է (պահպանված մասն ունի 170սմ խորություն և 140սմ տրամագծով բացվածք): Մանր քարերի շարվածքով շինությունն ավերվել է բնակավայրի կենսագործունեության ժամանակ, իսկ պահպանված մասը բացվում է մ.թ.1-ին դարի շերտի վրա: Կոնստիտուցիոնալ աջ կողքին կծկված դիրք: Աջ ձեռքը ծնոտի տակ է, ձախը՝ իրանի երկարությամբ: Ոտքերը ծալված և հպված են կրծքին: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 80* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Դամբարանի համար որպես ծածկասալ օգտագործվել է մի անկանոն քար: Մանկական դամբարան է, որի սալարկղի (երկ.՝ 50սմ, լայն.՝ 40սմ, խոր.՝ 25սմ) ուղղանկյունը կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Հարավային կողասալերից մեկը բացակայում է: Կոնստիտուցիոնալ ուղիղ է,

ձեռքերը՝ կրծքին: Գանգը քայքայված է, պահպանվել է միայն դիմալին մասը: Կոնստիտուցիոնալ հատվածում գտնվեց ձեռքերի բեկոր: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 83* - Հիմնահողային թաղում հյուսիս-հարավ կողմնորոշմամբ: Թաղումը կատարվել է կիսավեր ամբարի մեջ: Կոնստիտուցիոնալ ունի ձախ կողքին կծկված դիրք, ձեռքերը ծալված են դեպի կուրծքը, ոտքերը՝ ծնկներից ծալված և հակված դեպի կուրծքը: Հողը հագեցած է վառված փայտի և հացահատիկի մնացորդներով: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 89* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, սենյակի սալահատակի վրա: Որպես ծածկասալ ծառայել են միջին մեծության, անկանոն ու անմշակ չորս քարեր, որոնք ամրացվել են շուրջանակի շարված մանր քարերով: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 200սմ, լայն.՝ 30սմ, խոր.՝ 22սմ) կազմված է հինգական անտաշ, անկանոն քարերով՝ գլխի և ոտքերի մասում մեկական քարի հավելումով: Կոնստիտուցիոնալ ուղիղ է՝ մեջքի վրա, գանգը՝ ձախ թեքված: Ձախ ձեռքը կրծքին է, աջը՝ ծնոտի մոտ: Ձախ ձեռքի մատնեմատին գտնվեց օղակաձև բրոնզե մատանի (ըստ մարդաբանական տվյալների՝ 30-40 տարեկան կին է):

*Դամբարան 90* - Հիմնահողային թաղում՝ հարավ-հյուսիս կողմնորոշմամբ՝ բացված տնտեսական ամբարի հատակին: Մանր քարերով շարված, կեղծ թաղով ամբարի բերանն ավարտվում է չորս անմշակ, կոպիտ քարերով եզերված, 35 x 35սմ չափերով, անկյուններում քիչ ձգված, քառակուսի բերանով: Ամբարի խորությունը 100սմ է, հիմքի տրամագիծը՝ 90սմ: Կոնստիտուցիոնալ աջ կողքին կծկված դիրք, գլուխը աջ է թեքված: Կոնստիտուցիոնալ վառված փայտի մնացորդներ (ճյուղեր): Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 92* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործվել են երեք քարեր, որոնցից երկուսն անմշակ են, իսկ երրորդը սալաքար է՝ 155x60x

25սմ չափերով: Դամբարանի ուղղանկյունը (երկ.՝ 175սմ, լայն.՝ 55սմ գլխի հատվածում, ոտքերի մասում՝ 35սմ, խոր.՝ 45սմ) կազմվել է մշակված քարերից երկուական կողասալերով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Աջ ականջի մոտ գտնվեց բրոնզալարից ականջօղ: Հողը հագեցած է վառված հացահատիկի մնացորդներով, ձախ ձեռքի ավի մոտ գտնվեցին վառված փայտի կտորներ (ըստ մարդաբանական տվյալների՝ 30-40 տարեկան կին է):

*Դամբարան 98* - Կարասային թաղում անոթի ուղղահայաց դիրքով: Քանի որ գազատարն անցել է այս հատվածով, դամբարանի նախնական վիճակը մասամբ խաթարվել է: Նախապես ուղղահայաց դիրքով դրված կարասը թեքվել է՝ ստանալով կիսապտակած դիրք: Կտորված կարասի բերանը միջին մեծության երեք քարերով փակված է: Մի քանի անմշակ քարեր և սանդղաքի մի բեկոր շարված են կարասի նստուկի շուրջը: Դիրքը հաստատուն պահելու համար: Կմախքը խիստ քայքայված է, դիրքն՝ անորոշ: Կարասի հատակին գտնվեցին օձագալար ճարմանդ և կոյարգեզի ձևով ապակյա ուլունք-կնիք՝ Պեգաստի պատկերով: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 100* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, մեկ ուղղանկյուն սալաքարից ծածկասալով (118x40x20սմ): Ոտքերի հատվածում ծածկասալը լրացված է անմշակ, միջին մեծության մի քարով: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 120սմ, լայն.՝ 30սմ գլխի հատվածում և 19սմ՝ ոտքերի մասում, խոր.՝ 25սմ) կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Գանգի ոսկորները քայքայված են: Դամբարանից գտնվեցին կաուրի և զլանածև ուլունք: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 104* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Մի մեծ, ուղղանկյուն քար ծառայել է որպես ծածկասալ (190x80x20 սմ): Դամբարանի սալարկղի ուղղանկյունը

(երկ.՝ 190սմ, լայն.՝ 50սմ գլխի մասում, 40սմ ոտքերի հատվածում, խոր.՝ 30սմ) կազմվել է աջ կողմում երեք, ձախում՝ չորս կողասալերով, իսկ գլխի և ոտքերի մասում լրացված է մեկական քարով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ կրծքին: Կմախքը քայքայված է, գանգը՝ փշրված: Որովայնի վրա գտնվեցին վառված փայտի մնացորդներ: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի (ըստ մարդաբանական տվյալների՝ 40-50 տարեկան կին է):

*Դամբարան 105* - Կարասային թաղում բնակավայրի պարսպի արևմտյան պատի տակ: Թաղումը կատարվել է բնակավայրի պահպանված պատի հատվածին երկու կողմերից ուղղահայաց դրված պատերով կազմված խցի մեջ (երկ.՝ 220սմ, լայն.՝ 130սմ, բարձր.՝ 60սմ): Փքուն իրանով, բաց շագանակագույն, տափակ նստուկով, լայն ու բարձր ուտերով կարասը դրվել է խցի հյուսիս-արևելյան անկյունում՝ թեք դիրքով: Լայնաբերան թասով փակված բերանն ուղղված է հյուսիս: Կարասն, իրանի լայն մասից սկսած, ամրացված է մանր քարերով: Թաղման կարասը դրվել է մեկ այլ կարասի բերանքսիվայր դրված բերանի մեծ բեկորի վրա: Հենարան ծառայող կարասը կրակի մեջ է եղել և մրտոված է: Մրի հաստ, 2-3սմ հաստությամբ շերտ կա ինչպես կարասի իրանի, այնպես էլ նստուկին կիպ դրված քարերից մեկի վրա: Կարասի մեջ՝ նստուկին, մոտ 3սմ հաստությամբ օրգանական մնացորդների շերտ է: Թաղումը կատարվել է առանց աճյունի վրա հող լցնելու: Համարյա փոշիացած կմախքը, որից պահպանվել են մի քանի ատամ և մատների ֆալանգներ, ծածկված էր փոշու աննշան շերտով: Սեղմված մատնուկների մեջ գտնվեց մեկական բրոնզյա ապարանջան: Այսինքն, ապարանջանները ոչ թե եղել են դաստակներին, այլ՝ ավերի մեջ: Չախ ձեռքի ապարանջանի վրա օրգանական մնացորդի հաստ շերտ էր: Կարասի նստուկի վրա գտնվեցին մածուկից բազմագույն, կոնածև ուլունքներ, որոնցից մի բազմանիստ ուլունքի վրա նույնպես օրգանական մնացորդներն էին (ըստ մարդաբանական տվյալների՝ 5-7 տարեկան երեխա է):

*Դամբարան 107* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են 60x40x15սմ և 40x40x20սմ չափերով երկու քար: Դամբարանի ուղղանկյունը (երկ.՝ 80սմ է, լայն.՝ 30սմ, խոր.՝ 15սմ) կազմվել է մեկական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Կողասալերից մեկը (երկ.՝ 85սմ, լայն.՝ 36սմ, հաստ.՝ 12սմ) անկյունագծով կտրված է, մի անկյունում պահպանվել է երկու կողմից արված ձագարածն փորվածքը: Միջանցիկ անցքի տրամագծը 1սմ է: Մանկական թաղում է: Կմախքից պահպանվել է քայքայված, ցաքուցրիվ ոսկորների այլուրաշերտը: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տրվյալներ չկան:

*Դամբարան 114* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են 160x 90x20սմ չափերի մի մեծ, անտաշ քար՝ ոտքերի մոտ լրացնելով 60x40x10 սմ չափերի մեկ այլ քարով: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 190սմ, լայն.՝ 50սմ գլխի հատվածում, 25սմ՝ ոտքերի, խոր.՝ 30սմ) կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի մոտ մեկական քարի հավելումով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ կրծքին: Կատարվել է վերաթաղում, որի վկայությունն է ոտքերի մոտ երրորդ սրունքոսկրի առկայությունը: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի (ըստ մարդաբանական տվյալների՝ 20-30 տարեկան կին է):

*Դամբարան 116* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են ուղղանկյուն, մի ծայրը քիչ նեղ մի քար, որն ունի 170սմ երկ., 80սմ լայն., (նեղ մասում՝ 35սմ) և 20սմ հաստություն: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 160սմ է, լայն.՝ 40սմ գլխի հատվածում և 21սմ՝ ոտքերի, իրանի հատվածը ավելի լայն է՝ 55սմ, խոր.՝ 25սմ) կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ կզակի տակ: Չախ ձեռքի մատնեմատին գտնվեց եր-

կաթյա մատանի (ըստ մարդաբանական տրվյալների՝ 30-40 տարեկան կին է):

*Դամբարան 118* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են 130սմ և 60սմ երկարությամբ երկու անկանոն, անմշակ քարեր: Ծածկասալի քարերն ամրացվել են շուրջանակի շարված մանր քարերով: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 180սմ, լայն.՝ 80սմ, խոր.՝ 35սմ) կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի մոտ մեկական քարի հավելումով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, արմունկներից ծալված ձեռքերը ծնոտի տակ իրար են միանում: Մատների ոսկորները լցվել են որովայնի մեջ, որտեղից էլ գտնվեց շագանակագույնի խառը երանգներով սարդիոնից, հարթեցված ձվածիր պսակով մատանի: Կմախքի ոտքերի տակ վառված փայտի կտորներ են (ըստ մարդաբանական տվյալների՝ 30-40 տարեկան կին է):

*Դամբարան 121* - Հիմնահողային թաղում արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, Գյումրի-Երևան ավտոմայրուղու ձախ կողմում, գյուղի դիմաց դրված ստուգողական խրամատի մեջ: Կատարվել է միաժամանակյա զույգ թաղում՝ հողի աննշան բաժանարար շերտով: Առաջին կմախքն ունի ձախ, երկրորդը՝ աջ կողքին կծկրված դիրք: Թաղումը կատարվել է իրար վրա: Առաջին կմախքի աջ ականջի մոտ գտնվեց բրոնզե ականջօղ, իսկ երկու կմախքների միջև՝ առաջին կմախքի կրծքին, սև քարից, լավ հրղկված, եռանիստ բուրգ (ըստ մարդաբանական տվյալների՝ 30 - 40 տարեկան կին և 40-50 տարեկան տղամարդ է):

*Դամբարան 123* - Կարասային թաղում երրորդ տեղամասում, պալատական համալիրի բլրի տակ, տնտեսական նշանակություն ունեցող շինության կիսավեր տարածքում՝ հելլենիստական ժամանակաշրջանի շերտում: Կարասի մի բեկորով փակված, բերանքսիվայր դիրքով մանկական թաղումը բացվեց ուղղանկյուն եզրագծով շարվածք ունեցող քարե շինության պատի վրա: Կմախքը խիստ քայքայված է: Կարասի կողքին գտնվեցին շան երկատված ծնոտի երկու կեսերը՝ հակադիր դիրքով: Թաղումը

կատարվել է առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 124* - Կարասային թաղում երրորդ տեղամասում, պալատական համալիրի բլրի տակ՝ դաշտի մեջ, տնտեսական նշանակություն ունեցող շինության պատի տակ՝ հյուսիսային կողմում: Բերանքսիվայր կարասի նստուկի և իրանի մի հատվածի տակ՝ քարի վրա, մանկան կմախքն է՝ հյուսիս-հարավ կողմնորոշմամբ, գլուխը՝ արևմուտք: Վատ պահպանված կմախքի որովայնի հատվածում գտնվեց երկայնակի ակոսներով, ուղղանկյուն քառանկիստ քար: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 125* - Հիմնահողային թաղում երրորդ տեղամասում: Արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, նստած դիրքով, ձեռքերը՝ որովայնին, ծնկները՝ ծավված թաղումը բացվեց նախորդ երկու թաղումներից մոտ 50սմ հարավ: Գանգը բացակայում է, չկան մակ աջ ոտքի ոսկորները: Չախ ուսի մոտ գտնվեցին ապակյա հոտուքք՝ աչքերի վերադիր պատկերներով, ձախ ծնկի մոտ՝ խիստ քայքայված երկաթյա իրի կտոր, ոտքերի տակ, մոտ 110սմ երկարությամբ մոխրաշերտի մեջ՝ քարերի վրա լցված ոչխարի, կովի, վարազի ոսկորներ, մի ծեծիչ, իսկ ոսկորների մեջ մակ խեցի և այրված փայտի կտորներ: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 126* - Հիմնահողային թաղում՝ հյուսիս-հարավ կողմնորոշմամբ, սյունազարդ դահլիճի արևմտյան պատի տակ՝ սալահատակի վրա: Ննջեցյալի կողքերին շարված էին մանր քարեր, որոնք կառույցի պատի հետ կազմում են թաղումը եզերող շրջագիծը: Կմախքն ունի ձախ կողքին պառկած դիրք, ոտքերը ծնկներից ծավված են դեպի որովայնը, ձեռքերը ծնոտի տակ միացած են իրար: Գանգը հակված է դեպի արևելք: Ձեռքերի մեջ գտնվեց բրոնզե ասեղ, դամբարանի հողերի մեջ՝ ապակու մածուկից ուլունքներ: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 127* - Հիմնահողային թաղում՝ արևմուտք-արևելք կողմնորոշմամբ, սյունազարդ դահլիճի արևմտյան խարսխաշարի եր-

րորդ խարսխի դիմաց, արևմտյան պատից 50սմ հեռու: Թաղումը կատարվել է դահլիճի ծեփված հատակի տակ: Կմախքը խիստ քայքայված է, ձեռքերի դիրքն՝ անորոշ: Գանգի դիմաց գտնվեցին իրար կողքի դրված մի քանի իրեր՝ բերանքսիվայր դրված կարմիր արտաքինով և աստառով թաս, պուլիկ, ապակու մածուկից ուլունքներ, ինչ-որ իրի ոսկրե կոթ, գանգի աջ կողմում՝ բարակ բրոնզալարից ականջօղ (ըստ մարդաբանական տվյալների՝ 30-40 տարեկան կին է):

*Դամբարան 129* - Հիմնահողային թաղում՝ հարավ-հյուսիս կողմնորոշմամբ, երկրորդ տեղամասում՝ պալատական համալիր տանող բլրի հարավային լանջին բացված տնտեսական ամբարի մեջ: Ամբարն ունի 265սմ խորություն, դեպի հատակը լայնացող, մեծ քարերով շարված և ծեփված պատեր: Կեղծ թաղն ավարտվում է չորս քարով շրջանակված ուղղանկյուն բացվածքով (35x35սմ): Մակերեսից 220սմ խորության վրա 18սմ լայնությամբ ելուստը ներսից գոտևորում է ամբարի պատերը: Սրանից ներքև պատը շարունակվում է ևս 42սմ: Հատակը 190սմ տրամագիծ ունի, կենտրոնում 50սմ տրամագծով անկանոն քարերով շրջանի շուրջբոլորը շարված են հում կավից, երկրաչափական սեղանի ձև ունեցող, 70սմ երկարությամբ և 30-38սմ լայնությամբ 12 սալիկներ: Թաղումը կատարվել է սալիկների վրա՝ ձախ կողքին կծկված դիրքով: Գլխի դիրքը հարավ - արևելք է՝ դեմքով դեպի արևմուտք: Չախ ձեռքը կծկված է և հակված կրծքին, իսկ աջը դրված է իրանի երկարությամբ: Չախ ոտքը երկարած է հարավարևմտյան ուղղությամբ, աջը՝ խաչված ձախի հետ: Չախ ոտնաթաթը պրկված դիրք ունի: Առանց ուղեկցող նյութի (ըստ մարդաբանական տվյալների՝ 20-30 տարեկան կին է):

*Դամբարան 131* - Մալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են մշակված, ոտքերի մոտ մեկ հավելյալ փոքր քարով լրացված, երկու քարեր՝ 70x60x20սմ և 95x75x20սմ չափերով: Ծածկասալն ամրացվել է՝ կողքերը մանր քարեր շարելով: Դամբարանի ուղղանկյունը (երկ.՝ 180սմ, լայն.՝ 40սմ գլխի մասում և 25սմ ոտքերի մոտ,

խոր.՝ 25սմ) կազմվել է երկուական կողասալերով: Սալարկղի արևմտյան կողմի քարերը պայտածն են: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, աջ ձեռքը իրանի երկարությամբ, ձախը՝ որովայնին: Կմախքը ծածկող հողից 5սմ բարձր, աջ ձեռքի արմունկի մոտ, գտնվեց մեկ այլ կմախքի դաստակ: Հողը հագեցած է օխրայով: Առանց ուղեկցող նյութի (ըստ մարդաբանական տվյալների՝ 50-60 տարեկան տղամարդ է):

*Դամբարան 132* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, նախորդ թաղումից երեք մետր հյուսիս-արևմուտք: Որպես ծածկասալ օգտագործել են միջին մեծության երկու անմշակ քարեր՝ կողքերն ամրացնելով մանր քարերի շարվածքով: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 160սմ, լայն.՝ 32սմ, խոր.՝ 38սմ) կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, գանգը քիչ աջ թեքված, ձեռքերը՝ որովայնին: Կմախքի թիկունքի հատվածում, ոտքերի միջև, ինչպես նաև ոտնաթաթերի մոտ գտնվեցին վառված փայտի մնացորդներ, իսկ ձախ ձեռքի մատնեմատին՝ երկաթից մատանի (ըստ մարդաբանական տվյալների՝ 40-50 տարեկան կին է):

*Դամբարան 133* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, նախորդ դամբարանից հարավ, բնակավայրի փլված պատի քարերի տակ՝ սալահատակի վրա, կիսավեր վիճակում: Պահպանվել են գլխի հատվածի քարը և աջ կողասալի մի մասը, որոնց անկյունում էլ՝ մանկական թաղման մնացորդները՝ գանգոսկրի երկու բեկոր և մի քանի կողոսկր: Երկու դամբարանների համար կողասալն ընդհանուր է: Սալարկղի կողքին գտնվեց լծակավոր աղորիք: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 138* - Կարասային թաղում թիվ 134 սալարկղային թաղման ձախ կողասալի արևելյան անկյունում: Թաղումը կատարվել է ուղղահայաց դիրքով դրված կարասի մեջ: Կրմախքը քայքայված է, պահպանվել է գանգի մի քանի ոսկոր: Առանց ուղեկցող նյութի (ըստ մարդաբանական տվյալների՝ 0,5 - 1,1 տարեկան երեխա է):

*Դամբարան 141* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, բնակավայրի սալահատակի մեջ: Որպես ծածկասալ օգտագործել են 100սմ երկարությամբ և 50սմ լայնությամբ կոպտատաշ մի քար՝ կողքերն ամրացնելով մանր քարերով: Դամբարանի ուղղանկյունը (երկ.՝ 100սմ, լայն.՝ 25սմ, խոր.՝ 25սմ) կազմվել է մեկական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում նույնպես մեկական քարի հավելումով: Որպես կողասալեր օգտագործել են բնակավայրի սալահատակի քարերը: Արևելյան կողասալի տակ՝ ոտքերի հատվածում, սյան խարխիս է դրված, որը կարող էր վերաբերել նաև բնակավայրին: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Գանգի աջ կողմում՝ ուսագլխի մոտ, գտնվեց թմբուկածն պսակով բրոնզե մատանի (ըստ մարդաբանական տվյալների՝ 6-9 տարեկան երեխա է):

*Դամբարան 142* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են մոտավորապես 75-ական սմ երկարությամբ երկու անկանոն, մեծ քար: Հյուսիսային կողմում ծածկասալերն ամրացվել են ևս մեկ փոքր քարով: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 150սմ, լայն.՝ 20սմ, խոր.՝ 25սմ) կազմվել է աջ կողմում երեք, ձախում՝ երկու կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Թիկունքի մասում գտնվեց երկաթե շքասեղ (ըստ մարդաբանական տվյալների՝ 20-30 տարեկան կին է):

*Դամբարան 144* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են մի մեծ, անկանոն քար: Դամբարանի ուղղանկյունը (երկ.՝ 67սմ է, լայն.՝ 25սմ, խոր.՝ 22սմ) կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Կմախքը լավ է պահպանված, դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Կրծքի հատվածում գտնվեցին կապույտ ապակուց և սարդիոնից ուլունքներ (ըստ մարդաբանական տվյալների՝ 1,3-2,2 տարեկան երեխա է):

*Դամբարան 146* - Հիմնահողային թաղում հորի հատակին՝ հյուսիս-հարավ կողմնորոշ-

մամբ: Սենյակի հատակի վրա բացվող, բերանը շուրջանակի շարվածքով հորն ունի 120սմ տրամագիծ և 82սմ խորություն: Թաղումը կատարվել է հորի հատակին՝ կծկված դիրքով: Կմախքը խիստ քայքայված է, ձեռքերի դիրքն՝ անորոշ: Առանց ուղեկցող նյութի (ըստ մարդաբանական տվյալների՝ 30-40 տարեկան կին է):

*Դամբարան 148* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, ջրագծի խրամատի եզրին: Պահպանվել է կոպտատաշ ծածկասալը (երկ.՝ 104սմ, լայն.՝ 70սմ): Ջրատարի շինարարության ժամանակ դամբարանը մասամբ ավերվել է, պահպանվել է արևելյան կեսը: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ կրծքին: Գոտկատեղի մոտ գտնվեց կավից թռչնի փոքրիկ արձանիկ: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 150* - Կարասային թաղում երրորդ տեղամասում, շուրֆի մեջ բացված պատի վրա: Նախասպես տնտեսության մեջ օգտագործված, լայն, փքուն իրանով կարասն ունի կիսապառկած դիրք, բերանն ուղղված է արևմուտք: Կմախքը խիստ քայքայված է: Կարասի մեջ գտնվեց երկաթե իրի քայքայված երկու բեկոր (ըստ մարդաբանական տվյալների՝ 0,5 - 1,1 տարեկան երեխա է):

*Դամբարան 157* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են 90x80x15սմ և 100x60x15սմ չափերի երկու անմշակ, անտաշ քարեր: Սալարկղի ուղղանկյունը կազմվել է ճախ կողմում հինգ, աջում՝ երեք կողասալերով, գլխի և ոտքերի հատվածում՝ մեկական քարի հավելումով: Չախ կողմի կողասալերը պատկանում են պատին, որին կից էլ դրվել է դամբարանը (երկ.՝ 195սմ է, լայն.՝ 55սմ գլխի հատվածում և 45սմ՝ ոտքերի, խոր.՝ 35սմ): Դամբարանն անկանոն է, կոնքի հատվածում լայնությունը մոտ 70սմ է: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը հակված են դեպի ուսագլուխները: Գանգի աջ կողմում գտնվեց փոքրիկ կավանոթ: Դամբարանի հողը հագեցած է վառված փայտի մնացորդներով (ըստ մարդաբանական տվյալների՝ 20 - 30 տարեկան տղամարդ է):

*Դամբարան 158* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են 80x70x15սմ և 80x60x20սմ չափերի երկու մեծ և անմշակ քարեր: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 175սմ, լայն.՝ 25սմ, խոր.՝ 30սմ) կազմվել է երեքական կողասալերով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ կրծքին: Գանգի աջ կողմում գտնվեց կավանոթի շուրֆի մաս՝ վրան վառված փայտի և օրգանական այլ մնացորդներ: Դամբարանի հողը հագեցած է վառված փայտի մնացորդներով (ըստ մարդաբանական տվյալների՝ 30-40 տարեկան կին է):

*Դամբարան 159* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Մանկական դամբարանը (երկ.՝ 80սմ, լայն.՝ 40սմ, խոր.՝ 25սմ) դրվել է անկանոն քարերով շարված պատի վրա: Մեկ քարից, 120սմ երկարությամբ ծածկասալն ընկել է դամբարանի մեջ: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ կրծքին: Գանգը քայքայված է, որի տակ վառված փայտի մնացորդներ են շաղ տրված: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 160* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, սյունազարդ դահլիճի հյուսիսարևելյան կողմում՝ առաջին խարսխի դիմաց: Ավերված է, պահպանվել է երկու կողասալ, թիակի, ծնոտի և ողնաշարի մի քանի ոսկոր: Գտնվեց երկաթյա դանակ (ըստ մարդաբանական տվյալների՝ 30-40 տարեկան տղամարդ է):

*Դամբարան 169* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, ջրատարի խրամատի եզրին: Որպես ծածկասալ օգտագործել են 50x40x20սմ և 50x35x15սմ չափերի երկու անմշակ քարեր: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 70սմ, լայն.՝ 35սմ, խոր.՝ 25սմ) կազմվել է երկուական կողասալերով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ կրծքին: Հողը հագեցած է վառված փայտի մնացորդներով, որոնցից մի քանի կտոր էլ դրված է ոտքերի տակ: Առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 171* - Սալարկղ՝ հյուսիս-հարավ կողմնորոշմամբ: Այս կենտոսֆ թաղումը



բացվեց երրորդ տեղամասում, կառույցի հատակին: Որպես ծածկասալ օգտագործել են 70x50x20սմ չափերով մի սալ, որը հյուսիսային կողմում ամրացված է միջին մեծության քարերով, որոնցից մեկն աղորիք է: Սալարկղի ուղղանկյունը կազմվել է երկուական կողասալերով (երկ.՝ 165 սմ, լայն.՝ 45սմ, խոր.՝ 35սմ)՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով:

*Գամբարան 172* - Սալարկղ՝ թաղում արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են չորս կոպտատաշ քարեր, որոնցից երկրորդը, որը համընկնում է կմախքի կրծքի հատվածին, ունի զույգ միջանցիկ անցք: Փորվածքներն արված են քարի կենտրոնական մասում, անհամաչափ են, ունեն 5-6սմ տրամագիծ: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 90սմ, լայն.՝ 40սմ, խոր.՝ 20սմ) կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա: Քայքայվածության պատճառով ձեռքերի դիրքն անորոշ է: Առանց ուղեկցող նյութի (ըստ մարդաբանական տվյալների՝ 6-9 տարեկան երեխա է):

*Գամբարան 173* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են մի անտաշ քար, որն ունի 90սմ երկարություն և 50սմ լայնություն: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 73սմ, լայն.՝ 30սմ, խոր.՝ 20 սմ) կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա պառկած: Խիստ քայքայվածության պատճառով ձեռքերի դիրքն անորոշ է: Գանգի տակից գտնվեց խոշոր եղջերավոր անասունի մշակված կողոսկր՝ հավանաբար քերիչ (ըստ մարդաբանական տվյալների՝ 1,3 - 2,2 տարեկան երեխա է):

*Գամբարան 174* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են երեք անտաշ քարեր: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 85սմ, լայն.՝ 30սմ գլխի հատվածում և 23սմ՝ ոտքերի, խոր.՝ 20սմ) կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Գամ-

բարանի արևելյան կողմում գտնվեց բերանք-սիվայր դրված աղորիք: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին (ըստ մարդաբանական տվյալների՝ 1,4 - 2,5 տարեկան երեխա է):

*Գամբարան 176* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են հինգ անկանոն, անմշակ քարեր: Գամբարանը եզերված է մանր քարերի շարվածքով: Երկրորդ քարի վրա, որը համընկնում է կմախքի կրծքին, զույգ միջանցիկ անցք է արված: Աջ անցքը մի կողմում 10սմ տրամագիծ ունի, մյուսում՝ 5սմ, իսկ ձախը երկու կողմից էլ 10սմ տրամագիծ ունի: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 176սմ է, լայն.՝ գլխի հատվածում 40սմ և 20սմ՝ ոտքերի, խոր.՝ 30սմ) կազմվել է աջ կողմում հինգ, ձախում՝ չորս կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ կրծքին, գանգը՝ քիչ աջ թեքված: Առանց ուղեկցող նյութի (ըստ մարդաբանական տվյալների՝ 30-40 տարեկան տղամարդ է):

*Գամբարան 177* - Հիմնահողային թաղում՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Թաղումը կատարվել է նստած դիրքով, հետագայում իրանը ստացել է ուղիղ՝ մեջքի վրա պառկած դիրք: Ձեռքերն իրանի երկարությամբ են, ոտքերը՝ ծնկներից ծալված վեր: Ձախ դաստակին գտնվեց օձագլուխ ապարանջան: Կմախքի աջ կողմում մոխիր և վառված ոսկորներ են (ըստ մարդաբանական տվյալների՝ 30-40 տարեկան կին է):

*Գամբարան 181* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են երեք անկանոն, անմշակ քարեր, որոնցից մեկը 120սմ երկարություն և 50սմ լայնություն ունի: Ծածկասալերի շուրջըլորը մանր քարեր են շարված, որոնց հետ մաս ամանների բեկորներ կան: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 190սմ, լայն.՝ 45սմ գլխի կողմում և 30սմ՝ ոտքերի, խոր.՝ 30սմ) կազմվել է աջ կողմում երեք, ձախում՝ չորս անմշակ քարերից կողասալերով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ ծալված դեպի ուսագլուխները: Գանգի տակ՝

մոխրաշերտի մեջ, գտնվեցին վառված փայտի խոշոր կտորներ և տափաշշի բեկորներ (ըստ մարդաբանական տվյալների՝ 50-60 տարեկան կին է):

*Դամբարան 182* - Կարասային թաղում առաջին տեղամասի սկզբնամասում՝ արտի մեջ: Կիսաթեք դիրքով դրված կարասի բերանն ուղղված է հյուսիս - արևմուտք: Կարասի իրանի և նստուկի վրա արված անցքերն անոթի տնտեսության մեջ օգտագործված լինելու մասին են վկայում: Թաղման անոթի կողքերին ձվածիքի ձևով (երկ.՝ 100սմ, լայն.՝ 70սմ) շարված են մանր քարեր, որոնց մեջ կա նաև կոկիչ: Կարասի բերանը քարով փակված է: Անոթի իրանը կտորվել է, և ննջեցյալին տեղավորելուց հետո բեկորները վերաշարվել են իրենց տեղում: Կմախքը քայքայված է, պահպանվել են գանգը և կոնքոսկրի մի քանի բեկոր: Նստուկի մոտ՝ մոխրաշերտի մեջ, գտնվեց ոչխարի մի քանի ֆալանգ: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 183* - Կարասային թաղում սալարկղի մեջ, արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Դամբարանը բացվեց մշակվող արտի մեջ: Ծածկասալը չի պահպանվել: Դամբարանի ուղղանկյունը կազմվել է աջ կողմում երկու կողասալով, ձախում՝ մանր քարերի շարվածքով: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 110սմ, լայն.՝ 60սմ, իրանի մասում ավելի լայն է՝ 70սմ) գլխի և ոտքերի հատվածում լրացվել է մեկական քարով: Թաղումը կատարվել է կարասի լայնակի կտրված, 20սմ լայնությամբ, հարթ եզրերով ժապավենների վրա: Կարասի կտորները շարելով սալարկղի երկարությամբ՝ ստացել են գոգավոր մակերես, որի վրա էլ դրվել է աճյունը, ապա՝ ծածկվել հողով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա: Դատելով պահպանված ոսկորների դիրքից՝ ձեռքերը եղել են կրծքին: Կարասի շարվածքի գոգավորությունից թաղումը ստացել է կիսաթեք դիրք: Գլխի դիրքը բարձր է, քիչ ձախ հակված և փակվել է կարասի շուրթի մեծ բեկորով: Կմախքը քայքայված է: Դամբարանը հարուստ ուղեկցող նյութ ունի: Գանգից բարձր՝ սալարկղի ձախ անկյունում, գտնվեց տրամագծով կիսաված, բերանքսիվայր դրված մի թաս:

Մեկ այլ թաս, նույնպես բերանքսիվայր դրված գտնվեց ոտքերի տակ՝ դամբարանի աջ անկյունում դրված փոքր սափորի բերանին: Չարդերը ևս բազմազան են. վզին հաստ բրոնզալարից մանյակ էր, գանգի աջ և ձախ կողմերում՝ օղակավոր ականջօղեր, գանգի աջ կողմում՝ պարույրազարդ բրոնզալարից ականջօղ, ձեռքերի դաստակներից՝ օձագլուխ ապարանջաններ, ձախ ձեռքի մոտ՝ բրոնզե մատանի: Որովայնի մասում գտնվեցին ապակու մածուկից, ոսկորից, ազաթից բազմազույն ուլունքներ և պիրիտից խորանարդաձև մի կախիկ: Ծնոտի վրա գտնվեց ոլորուն բրոնզալարից, իրար մեջ ագուցված շարժական փականքով մի ապարանջան, որը հավանաբար դրված է եղել ննջեցյալի բերանին և հետագայում սահել է ցած (ըստ մարդաբանական տվյալների՝ 10-15 տարեկան աղջիկ է):

*Դամբարան 184* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Դամբարանը կառուցվել է նախորդ թիվ 183 դամբարանի արևելյան կողասալին զետաքրքով ձվածիք շարվածք ավելացնելով, և կողասալն ընդհանուր է դարձել երկու դամբարանների համար: Թաղումը կատարվել է նստած դիրքով, դեմքով դեպի արևելք: Կմախքի որովայնի հատվածում գտնվեցին ոչխարի ֆալանգներ՝ մի մասը կրակի հետքերով: Կրակի հետքեր կան նույն հատվածից գտնված ոսկրե կոթառի վրա: Դամբարանից գտնվեց նաև կրաքարից, կլորացված անկյուններով քառակուսի մի իր: Իրը կենտրոնում միջանցիկ անցք ունի, որի վրա է բացվում քառակուսու մի անկյունից սկսվող շեղ կտրվածքը: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 185* - Հիմնահողային թաղում՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, մանր քարերով շարված տնտեսական ամբարի բերանին: Ամբարն ավերված է, պահպանվել է շարվածքի վերջին շարքը: Թաղումը կատարվել է ծնկաչոք դիրքով, գլուխը՝ հակված կրծքին: Գանգի միջից գտնվեց բարակ, օղակաձև մատանի (ըստ մարդաբանական տվյալների՝ 40-50 տարեկան կին է):

*Դամբարան 187* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են չորս անկանոն քարեր: Սալարկղի ուղղանկյունը կազմված է աջ կողմում երկու, ձախում՝ երեք կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով (երկ.՝ 70սմ, լայն.՝ 25սմ գլխի հատվածում և 15սմ՝ ոտքերի): Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ որովայնին: Գանգը խիստ քայքայված է: Դամբարանից գտնվեց երկու ուլունք: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 190* - Կարասային թաղում՝ ձվածիր շարվածքի մեջ: Կարասի դիրքը կիսապառկած է՝ բերանն ուղղված արևմուտք: Չվածիրն ունի 70սմ երկ. և 50սմ լայն. արևմտյան մասում՝ շարվածքի քարերի մեջ, գտնվեց նավածև աղորիք: Կարասի շուրթի և իրանի մի մասը կտրվել է, ապա թաղումը կատարելուց հետո՝ վերաշարվել իր տեղում: Կմախքը խիստ քայքայված է, պահպանվել է մի քանի ոսկոր: Գտնված միակ նյութը վարդագույն սարդիոնից ուլունքն է: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 194* - Հիմնահողային թաղում հորի մեջ: Թաղումը կատարվել է 210սմ խորություն ունեցող հորի մեջ՝ հատակին: Կմախքը խիստ քայքայված է, դիրքն՝ անորոշ: Խառնիխումն ոսկորների մեջ կան նաև շան ոսկորներ: Առանց ուղեկցող նյութի (ըստ մարդաբանական տվյալների՝ 30-40 տարեկան կին է):

*Դամբարան 195* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, մանր քարերով շարված ձվածիրի մեջ: Չվածիրն ունի 120սմ երկարություն և 80սմ լայնություն: Չույզ թաղում է՝ կողքկողքի: Կմախքների դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ոտքերը՝ ծնկներից ծաված և հակված դեպի որովայնը: Չախ կմախքի գանգին կիպ գտնվեց գավաթ՝ փակված բերանքսիվայր դիրքով թասով, վզի շուրջը՝ ոչխարի ֆալանգների երկու շարան և շաղ տված բոժոժներ: Ֆալանգներ են լցված նաև ձվածիրի շարվածքից դուրս՝ դամբարանի արևմտյան մասում: Աջ կմախքի ծոճրակի տակ գտնվեց երկաթյա դանակ (ըստ մարդաբանական տվյալների՝ աջ կողմում՝ 5-7

տարեկան տղա է, ձախում՝ 11-15 տարեկան աղջիկ):

*Դամբարան 196* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ ծառայել է մի անմշակ, մեծ քար, որն ունի 204սմ երկարություն և 110սմ լայնություն: Սալարկղի ուղղանկյունը կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով (երկ.՝ 170սմ, լայն.՝ 40սմ գլխի հատվածում, իսկ ոտքերի մոտ՝ 25սմ, խոր.՝ 25սմ): Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, աջ բազկոսկրը բացակայում է, չկան նաև ոտնաթաթերի ոսկորները: Կոնքից վերև պահպանվել է միայն ութ ող: Կոնքի տակ գտնվեց ոչխարի ճան (ըստ մարդաբանական տվյալների՝ 20-25 տարեկան կին է):

*Դամբարան 198* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Մանկական թաղում է, որն ավերվել է գազատարն անցկացնելիս: Պահպանվել են փշրված կողասալերից երկուսը և մի քանի ոսկոր: Դամբարանից գտնվեց փոքր կավանոթ՝ մեջը ապակու մածուկից մի ուլունք և մետաղի հանքաքարի երկու փոքր բեկոր: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 206* - Կարասային թաղում բնակավայրի առաջին շինարարական շերտի աղյուսե պատի տակ: Կարասի նախնական դիրքն եղել է ուղղահայաց, հետագայում թեքվել է և ստացել պառկած դիրք՝ բերանն ուղղված արևմուտք: Կմախքն ունի ձախ կողքին պառկած դիրք: Թաղումը կատարվել է առանց հանգուցյալի վրա հող լցնելու: Կարասի մեջ գտնվեցին մետաղյա քայքայված իրի կտոր և ուլունքներ (ըստ մարդաբանական տվյալների՝ 1,3 - 2, 2 տարեկան երեխա է):

*Դամբարան 207* - Հիմնահողային թաղում՝ հյուսիս-հարավ կողմնորոշմամբ: Թաղումը կատարվել է 140սմ խորությամբ, ծեփված պատերով հորի մեջ, հատակի քարերի վրա: Հորի բերանը բացվում է կառույցի հատակին, որը պեղավայրի մակերեսից 170 սմ խորություն ունի, այսինքն՝ թաղումը կատարվել է 310սմ խորության վրա: Կմախքն ունի ձախ կողքին պառկած դիրք, գլուխը դեպի արևելք է, դեմքով՝ հա-

րավ: Չախ ձեռքը ծնոտի տակ է, աջը ծաված է և հասնում է ուսագլխին: Կմախքի վրա լցված հողերի մեջ գտնվեցին լյութերիայի բեկորներ: Հորի հատակին բացվեց մախորդից 30սմ հողաշերտով բաժանված մեկ այլ կմախք: Աջ կողքին կծկված երկրորդ կմախքն ունի հյուսիս - հարավ կողմնորոշում: Երկու կմախքները միմյանց նկատմամբ խաչվող դիրք ունեն: Կոնքի մոտ գտնվեց քրեղանի բեկոր, իսկ գլխի տակ՝ կենդանու ոսկորներ (ըստ մարդաբանական տվյալների՝ 30-40 տարեկան կին և 40 - 50 տարեկան տղամարդ է):

*Դամբարան 209* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Թաղումը բացվեց է արտի մեջ: Տարիներ շարունակ տարածքում կատարված գյուղատնտեսական աշխատանքների արդյունքում տեղահանվել և ոչնչացվել են այստեղ բացված մի քանի դամբարանների ծածկասալերը: Ծածկասալ չունի նաև այս սալարկղը: Չվածիր դամբարանի հատակը կճաքարով սալարկված է: Արևմտյան հատվածում կողասալը քիչ ավելի բարձր է և գոգավոր մշակված: Դամբարանը փոքր է (երկ.՝ 110սմ, լայն.՝ 55սմ): Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, աջ ձեռքը դրված է իրանի երկարությամբ, ձախը՝ որովայնին: Ոտքերը ծաված են և հակված որովայնին: Գանգի ձախ կողմում գտնվեց կիսագնդաձև թաս՝ բերանն ուղղված դեպի արևելյան անկյունը: Թասի մեջ գտնվեցին բոժոժներ, գանգի աջ կողմում՝ մահիկաձև մի ականջող, իսկ գանգի մեջ՝ երկու ապարանջան: Վզի մոտ գտնվեց մի քանի ուլունք: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 211* - Սալարկղի մեջ կատարված կարասային թաղում՝ կարասի ուղղահայաց դիրքով: Ակնհայտ է, որ կատարվել է վերաթաղում: Կմախքի և կարասի մնացորդները հավաքվել և լցվել են սալարկղի հարավային անկյունում, ապա կատարվել է նոր թաղում: Առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 212* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Թիվ 211 թաղման վրա կատարված վերաթաղում է: Որպես ծածկասալ

օգտագործել են միջին մեծության երկու քար: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 65սմ, լայն.՝ 30սմ, խոր.՝ 20սմ) կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Մանկան կմախքը խիստ քայքայված է, դիրքն՝ անորոշ: Դամբարանից գտնվեցին ոչխարի ֆալանգներ, ինչպես նաև բրոնզե իրի կտոր, (հավանաբար ականջողի կախիկ) և ուլունքներ (մեկը՝ կնիքի նախապատրաստուկ) (ըստ մարդաբանական տվյալների՝ 0,6 - 1 տարեկան երեխա է):

*Դամբարան 213* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են միջին մեծության երկու անկանոն քարեր: Դամբարանի ուղղանկյունը կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Դամբարանը փոքր է (երկ.՝ 80սմ, լայն.՝ 63սմ, խոր.՝ 22սմ): Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, գանգը աջ է թեքված: Ոսկորների քայքայվածության պատճառով ձեռքերի դիրքն անորոշ է: Գանգի մեջ գտնվեց բրոնզե իր՝ բարակ, զույգ ելուստներով (ըստ մարդաբանական տվյալների՝ 0,9 - 1,8 տարեկան երեխա է):

*Դամբարան 215* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Որպես ծածկասալ օգտագործել են 220x80x30սմ չափերով մեկ ամբողջական քար՝ ոտքերի հատվածում մանր քարերով ամրացնելով: Դամբարանի ուղղանկյունը կազմվել է երեքական կողասալերից՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Դամբարանը մեծ է (երկ.՝ 200սմ, լայն.՝ 40սմ, խոր.՝ 30սմ): Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ կրծքին: Իրանի հատվածում գտնվեց երեք ուլունք: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 217* - Հիմնահողային թաղում՝ հյուսիս-հարավ կողմնորոշմամբ: Թաղումը բացվել է 20սմ հաստությամբ մոխրաշերտով ծածկված տափանված հատակի տակ: Կմախքը քարակույտի վրա էր և ծածկված էր քարերով, ուներ ծնկաչոք դիրք, ոտքերը ետ էին ծաված, ոտնաթաթերը բնորոշ մոտեցած կոնքին, ձեռքերն՝ անփույթ ընկած կողքի: Թաղումը կա-

տարվել է առանց ուղեկցող նյութի (ըստ մարդաբանական տվյալների՝ 50-60 տարեկան տղամարդ է):

*Դամբարան 218* - Հիմնահողային թաղում հյուսիս-հարավ կողմնորոշմամբ: Թաղումը կատարվել է նստած դիրքով: Հետագայում կմախքը ստացել է ուղիղ մեջքի վրա դիրք, իսկ ծնկները մնացել են ծավալած դեպի որովայնը: Չեռքերը ոտքերի միջև են, գանգը թեքված է ձախ: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 224* - Հիմնահողային թաղում, որ բացվեց երկրորդ տեղամասում, մակերեսից 80սմ խորության վրա: Մանկան ոսկորների (մի քանի կողոսկրեր և մեկ անրակոսկր) կույտի հետ խառնիխուռն լցված անասունի ոսկորներ են: Դրանց մեջ նաև կողոսկր՝ մի ծայրը մշակման հետքերով: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 225* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Ծածկասալը չի պահպանվել: Սալարկղը, որ կառուցված է մանր և միջին չափերի անկանոն քարերից (երկ.՝ 187սմ, լայն.՝ գլխի հատվածում 65սմ, ոտքերի մոտ՝ 45սմ, խոր.՝ 40սմ, գլխի հատվածում մոտ 20սմ ավելի լայն է, քան՝ ոտքերի: Ավելի ուշ դրված մանկական մեկ այլ սալարկղային թաղման ժամանակ մասամբ ավերվել է առաջին սալարկղը: Գանգի և կոնքի հատվածներում գտնվեց փայտի երկու փոքրիկ բեկոր, որոնք ամենայն հավանականությամբ դագաղի մնացորդներ են: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը իրար խաչված դիրքով հանգչում են որովայնին: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 226* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Մանկական թաղում է, որի համար որպես ծածկասալ օգտագործել են միջին մեծության երկու անկանոն քարեր: Դամբարանի երկարությունը 90սմ է, լայնությունը՝ 45սմ: Ծածկասալի քարերն ամրացվել են անկանոն, մանր քարերով: Դամբարանի ծածկասալի քարերի շարվածքի մեջ գտնվեցին կավանոթների բեկորներ: Սալարկղի ուղղանկյունը

կազմվել է անկանոն քարից՝ երկուական կողասալերով: Դամբարանի ուղղանկյունը խախտված է, արևելյան կողմը սուրանկյուն է: Ըստ ամենայնի՝ դամբարանը փոքր է եղել (վերաթաղման հետքեր չկան), այդ իսկ պատճառով ուղղանկյունը բացվել է, երկու կողմերից մեկական քար սուր անկյան տակ իրար միացնելով, մեծացվել: Դամբարանը փոքր է. (երկ.՝ 90սմ, լայն.՝ 25սմ, խոր.՝ 30սմ): Մանկական թաղում է՝ շատ վատ պահպանված կմախքով, համեմատաբար լավ պահպանված հատվածը գանգի դիմային մասն է: Կմախքը նախապես ունեցել է ուղիղ մեջքի վրա պռակած դիրք, աջ ձեռքը դրվել է իրանի երկարությանը, ձախը՝ որովայնին: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 227* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Թաղումը բացվեց հնավայրի վերին շերտում՝ մակերեսից 5-6սմ խորության վրա: Մանկական թաղում է մեկ քարից ծածկասալով (երկ.՝ 75սմ, լայն.՝ 34սմ, հաստ.՝ 20-25սմ): Ծածկասալն ամրացվել է միջին մեծության քարերով, որոնց շարվածքի մեջ գտնվեցին խեցու բեկորներ: Սալարկղի ուղղանկյունը (երկ.՝ 71սմ, լայն.՝ 30սմ, խոր.՝ 30սմ) կազմվել է անմշակ քարերից մեկական կողասալով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը՝ կրծքին: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տրվյալներ չկան:

*Դամբարան 228* - Սալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ: Մեկական մետր երկարությամբ, 60-70սմ լայնությամբ երկու անկանոն քարեր, որ ծառայել են որպես ծածկասալ, ամրացվել են միջին մեծության անկանոն քարերով: Դամբարանի ընդհանուր երկարությունը 200սմ է: Սալարկղի ուղղանկյունը կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Դամբարանը միջին չափերի է. երկարությունը 166սմ է, լայնությունը՝ 55սմ, խորությունը՝ 44սմ: Կմախքի գոտկատեղի հատվածից վերև՝ կողասալերի վրա, իսկ գլխի հատվածում կողասալից 5-10սմ հեռավորությամբ շարված են միջին մեծության

անկանոն քարեր՝ կիսով չափ գոտևորելով դամբարանը: Շարվածքի հյուսիսարևմտյան մասում գտնվեցին խեցիներ, որոնք հավանաբար հոգեհացի հետ են կապված: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը որովայնին են, ձախ ձեռքի մատներում գտնվեց տափակ պսակով, երկաթյա, խիստ քայքայված մատանի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 230* - Մալարկղ բացվեց է գազատարից արևելք: Միջին մեծության երկու անկանոն քարերից ծածկասալով (երկ.՝ 90սմ, լայն.՝ 40սմ), որ բացվեց մակերեսից 10սմ խորության վրա, կողքերից ամրացված է երկու քարով: Դամբարանի ուղղանկյունը (երկ.՝ 90սմ, լայն.՝ 30սմ, խոր.՝ 25սմ) կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի մոտ մեկական քարերի հավելումով: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերն իրար են միանում որովայնին, որտեղից էլ գտնվեց երկու ուլունք (մեկն ապակյա, մյուսը՝ կարմիր և սպիտակ երանգներով ազաթից): Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 232* - Մալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, շուրջբուրդ քարերով ամրացված երկու մեծ ծածկասալով: Մալարկղի ուղղանկյունը կազմվել է երկուական կողասալերով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Ինչպես թիվ 226 սալարկղը, այնպես էլ այս դամբարանը, ըստ ամենայնի, փոքր է եղել (վերաթաղման հետքեր չկան), այդ իսկ պատճառով ուղղանկյունը բացվել է, երկու կողմերից մեկական քար սուր անկյան տակ իրար միացնելով, մեծացվել է (երկ.՝ 175սմ, լայն.՝ 45սմ): Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, աջ ձեռքը կրծքին է, ձախը՝ որովայնին: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 234* - Մալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, որի վրա հետագայում կատարվել էր նոր թաղում (թիվ 233): 110սմ խորության վրա բացվեցին ցաքուցրիվ մարդկային վեց գանգեր, ինչպես նաև ձիու գանգ ու ազդուկը: Ակնհայտ է, որ դամբարանն ավերվել է, գուցե նոր թաղում կատարելիս: Մնացորդներից միայն կարելի է ենթադրել, որ առաջինում

կատարվել է խմբակային թաղում, որն ուղեկցվել է ձիու գոհաբերությամբ:

*Դամբարան 237* - Մալարկղ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, միջին մեծության երկու ծածկասալով (երկ. 112սմ, լայն.՝ 36-51սմ): Ծածկասալը ոտքերի հատվածում ամրացվել է մանր քարերի շարվածքով: Դամբարանի ուղղանկյունը կազմվել է մեկական կողասալով՝ գլխի և ոտքերի հատվածում մեկական քարի հավելումով: Արևմտյան կողասալի արտաքին կողմում դրված է աղյուս՝ հավանաբար դամբարանի ամրացման նպատակով (այս հատվածում պահպանված են բնակավայրի աղյուսե պատի մնացորդները): Մանկական դամբարան է (երկ.՝ 83սմ, լայն.՝ 24սմ, խոր.՝ 25սմ): Կմախքը քայքայված է: Թիվ 237 և 238 դամբարանների միջակայքում մոխրաշերտի և ոսկորների խառնակույտի ձևով պահպանվել են հոգեհացի մնացորդները: Թաղումը կատարվել է առանց ուղեկցող նյութի: Մարդաբանական տվյալներ չկան:

*Դամբարան 245* - Սարկոֆագ՝ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ, մեկ ամբողջական քարից ծածկասալով (երկ.՝ 113սմ, լայն.՝ 60սմ), որի տակ երկու այլ քարեր են դրված: Դամբարանի ընդհանուր երկարությունը 196սմ է: Ակնհայտ է, որ կատարվել է վերաթաղում: Սարկոֆագը նախապես ավելի կարճ է եղել, սպա ոտքերի հատվածից կտրվել է և, այլ քարով լրացնելով, մեծացվել: Դամբարանի հողը, մինչ թաղմանը հասնելը, հազեցած էր մարդկային ոսկորներով: Մարդաբանական տվյալներ չկան:

Բենիամինում պեղված թաղումներին պիտի հավելել դիպվածաբար բացված և ավերված երկու դամբարան: Առաջինը հյուսիս-հարավ կողմնորոշմամբ հիմնահողային թաղում է, երկրորդը՝ սալարկղային: Առաջինում եղել են տարբեր գույնի ուլունքներ, բրոնզյա օղակ (մատանի կամ ականջօղ), մանյակ և հայելի, որոնք կտրվել և դեն էին նետվել: Հաջողվեց գտնել մանյակը և հայելին: Երկրորդ դամբարանից գտնվեց փոքրիկ անոթ: Երկու թաղումներում էլ կմախքի դիրքն անհայտ է:

Անտիկ ժամանակաշրջանի երկու թաղում պեղվեց Հայկաձորում: 2001թ. այստեղ անտիկ

բնակավայրի հետախուզական պեղումների ժամանակ բացվեց թաղում:<sup>20</sup> Գյուղի հարավային մասում, ուր տարածքն արևմուտքից և հարավից հեղեղատով ավարտվող հարթակ է, ըստ գյուղացիների, մինչև անցյալ դարի 50-ական թվականներին այստեղ առաջին տների կառուցումը, դեռևս պահպանվում էին ինչ-որ կառույցների պատեր: Տարածքը հագեցած է անտիկ ժամանակաշրջանին բնորոշ խեցեղենի բեկորներով:<sup>21</sup> Բնակավայրի հատակին՝ մայր հողի վրա, կողքկողքի բացվեցին 2,25մ և 1,9մ տրամագծով, 60սմ բարձրությամբ պատերի չորս շարքով շրջանաձև երկու կառույցներ:<sup>22</sup> Շրջանաձև այս կառույցները տնտեսական ամբարներ են, որոնցից մեկի մեջ բացվեց հարավ-հյուսիս կողմնորոշմամբ, նստած դիրքով թաղում: Կմախքը ետ է ընկել նստած դիրքն ամուր պահելու նպատակով շարված քարերի վրա: Կմախքի տակ՝ կոնքի հատվածում, գտնվեց երկաթե դանակի կտոր:

Ըստ բնակավայրի շերտագրական դիտարկման՝ հուշարձանի այս հատվածն ունի չտարանջատված երկու շերտ և շինարարական երկու հորիզոն, որոնք վերաբերում են մ.թ.ա. 2-րդ և մ.թ.ա. 1-ին դարերին: Հետագայում՝ մ.թ. 1-2-րդ դարերում, տարածքը վեր է ածվում դամբարանադաշտի,<sup>23</sup> և բնակավայրի ավերված ամբարներից մեկում էլ կատարվել է թաղումը, թեև չի բացառվում նաև, որ թաղումը կարող է վերաբերել բնակավայրի կենսագործունեության ժամանակին:

Անտիկ ժամանակաշրջանով թվագրվող գտածոներ հայտնի են նաև տարաբնույթ աշխատանքների ժամանակ ավերված կամ կիսավեր դամբարաններից: Տարածաշրջանի տարբեր հնավայրերից այսօրինակ բազմաթիվ նյու-

թեր պահվում են Շիրակի երկրագիտական թանգարանի զետեղարաններում: Այսպես, դեռևս 1974թ. Լենինականի «Լարդբաղ» տարածքում մարգահամալիրի շինարարության ժամանակ բացվել են 3-4-րդ դարերով թվագրվող սալարկղային թաղումներ:<sup>24</sup>

Կառնուտում մ.թ.ա. 1-ին դարի սալարկղային մի դամբարան բացվել է 1989թ. շինարարական աշխատանքների ժամանակ:\* Դամբարանում կմախքի դիրքի, թաղման ծեսի և ուղեկցող այլ նյութերի մասին մանրամասներ հայտնի չեն: Դամբարանի հայտնաբերումից մեկ տարի անց՝ 1990թ., Շիրակի երկրագիտական թանգարան է հանձնվել չորս իր՝ կրատերիսկ, քաս, սափոր և թռչնակերպ մի անոթ:<sup>25</sup>

Անուշավանում\* 1998թ. կարտոֆիլի հոր փորելիս բացվել է հիմնահողային թաղում, որտեղից հայտնաբերվել են բրոնզից հայելի, սարդիոնից, բրոնզից և ապակու մածուկից ուլունքներ,<sup>26</sup> մկրատ, շքասեղ, ինչպես նաև վերադիր զարդի մաս կազմող փոքր, շրջանաձև և տափակ թիթեղիկներ:

Թեև վերջին երկու դեպքում էլ մեծավ մասամբ անհայտ են թաղման եղանակների և ծեսի մանրամասները, այնուամենայնիվ, այս գտածոները որոշակի տեղեկատվություն են պարունակում դամբարանադաշտերի տեղի, թաղման տեսակների, ուղեկցող նյութերի վերաբերյալ մասին և Շիրակի հնագիտական ուսումնասիրության համար կարևոր, լրացուցիչ նյութ են:

<sup>20</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Լ. Ե զ ա ն յ ա ն, Անիի նորահայտ արվարձանի 2003թ. պեղումները, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. VI, Գյումրի, 2003, էջ 134:

<sup>21</sup> Այսօր էլ Մարտիկ Հովհաննիսյանի տան բակում՝ մակերեսին ընթերցվում են սալարկղերի կողասալերը: Ե՛վ տունը կառուցելիս, և՛ տարաբնույթ հողային աշխատանքների ժամանակ քանիցս բացվել են կարասային և սալարկղային թաղումներ:

<sup>22</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Լ. Ե զ ա ն յ ա ն, 2003, էջ 136:

<sup>23</sup> Նույնը:

<sup>24</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Լ. Ե զ ա ն յ ա ն, 1991, էջ 84:

\* Գտածոները (ՇԵԹ ԳԳ, 3681/1,4) 1990թ. թանգարան է հանձնել Միսակ Գևորգի Ստեփանյանը:

<sup>25</sup> Dans les montagnes d' Arménie, 500 000 ans d' histoire avant notre ère: France, 2007, էջ 192, նկ. 193-195.

\*Գտածոները (ՇԵԹ ԳԳ, 3942/1,4) 1998թ. Շիրակի երկրագիտական թանգարան է հանձնել դպրոցական Էդգար Բադայանը:

<sup>26</sup> Dans les montagnes d' Arménie ..., էջ 200, նկ. 220:

## Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

### ԹԱՂՄԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Դիակից ազատվելու անհրաժեշտությունը ժամանակի ընթացքում աստիճանաբար հանգեցրել է թաղման կառույցների տարբեր եղանակների ստեղծման՝ թաղումներ կատարելով ինչպես հողի շերտում, այնպես էլ՝ սալարկղերի, կարասների, փայտից կամ քարից դազաղների մեջ:

#### ՀԻՄՆԱՀՈՂԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐ

Շիրակի անտիկ ժամանակաշրջանի հիմնահողային թաղումները<sup>27</sup> վերաբերում են մ.թ. ա. 1- մ.թ. 3-4-րդ դարերին և հայտնի են Բենիամինից, Առափիից, Կարմրաքարից ու Անուշավանից: Առափիում պեղվել է միայն մեկ հիմնահողային թաղում (թիվ 4), Կարմրաքարում՝ երեք (թիվ 20, 21, 22): Անուշավանից հայտնի է պատահական բացված հիմնահողային մի թաղում: Բենիամինում նույնպես հիմնահողային թաղումները փոքր մաս են կազմում, ընդամենը՝ 28: Շիրակում հիմնահողային թաղումներ հայտնի են նաև Շիրակավանից<sup>28</sup> և Վարդքաղից:<sup>29</sup>

Շիրակի հիմնահողային թաղումները չունեն հաստատուն կողմնորոշում: Հանդիպում են հյուսիս-հարավ (թիվ 10, 16, 30, 55, 83, 126, 146, 149...), հարավ-հյուսիս (թիվ 43<sup>բ</sup>, 90, 129, 207...), արևելք - արևմուտք (թիվ 121, 127, 177, 195...), հյուսիս-արևմուտք-հարավ-արևելք (թիվ 71), ինչպես նաև հարավ-արևմուտք-հյուսիս-արևելք

(թիվ 129) կողմնորոշմամբ թաղումներ: Վերջին երկուսը հյուսիս-հարավ կամ հարավ-հյուսիս կողմնորոշմամբ թաղումներ են, իսկ մասնակի շեղումները կապված են տարվա տարբեր եղանակներին արեգակի ծագման կետի տեղաշարժի հետ:

Բենիամինի հիմնահողային թաղումների մեծ մասը (թիվ 30, 55, 121, 127, 151, 161...) կատարվել է հողի շերտի մեջ՝ աջ կամ ձախ կողքին կծկված դիրքով (տախտակ III, նկ. 1): Հանդիպում են նաև հիմնական տեսակից շեղումներ. թիվ 185 կմախքն ունի ծնկների վրա նստած դիրք, թիվ 218 թաղումը մեջքի վրա է, ոտքերը՝ ծնկներից ծալված վերև: Վերջինս նախապես ունեցել է նստած դիրք, այնուհետև մկանունքի քայքայումից հետո իրանը ետ է ընկել: Թիվ 121 դամբարանում իրար վրա, կծկված դիրքով երկու թաղումներ են, որ հավանաբար կատարվել են միաժամանակ և գուցե իրենց մեջ կրում են այր և կնոջ մեկ մարմին լինելու գաղափարը,<sup>30</sup> որն այն աշխարհում ևս ենթադրում է միասնականության պահպանում: Ի տարբերություն Բենիամինի՝ Առափիի թիվ 4 հիմնահողային թաղումն ունի հարավ-հյուսիս կողմնորոշում, կմախքի ուղիղ՝ մեջքի վրա դիրք, աջ ձեռքը դրված է իրանի երկարությամբ, իսկ ձախը՝ արմունկից մի կողմ ծալված: Կարմրաքարի հիմնահողային թաղումներն ունեն կմախքի ուղիղ՝ մեջքի վրա դիրք, ձեռքերը կրծքին են: Շիրակավանի և Վարդքաղի թաղումներում կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը դրված են իրանի երկարությամբ:

<sup>27</sup> Լ. Ե գ ա ն յ ա ն, Շիրակի անտիկ թաղման ձևերը, ՀՀ ԳԱԱ ԵՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. III, Գյումրի, 2000, էջ 46-56:

<sup>28</sup> Ф. Т е р - М а р т и р о с о в, Раскопки античного Ширакавана. (АО 1980 года.), М., 1981, с. 427; Ф. Тер-Мартirosов, Г. Караханян, Раскопки поселения и некрополя античного Ширакавана, ԳԱԱ ԵՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. I, Գյումրի, 1999, էջ 27:

<sup>29</sup> Մո. Տ եր - Մ ա ր գ ա ր յ ա ն, 1991, էջ 94:

<sup>30</sup> Ա ս տ վ ա ծ ա շ ու ն չ, Կ. Պոլիս, 1922, Գիրք ծննդոց, Բ, էջ 25:



# Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ըստ «Աշխարհագրոյցի»՝ պատմական Շիրակն Այրարատ նահանգի ութերորդ գավառն էր, որը գրավում էր Ախուրյան գետի միջին և ստորին հովիտը:<sup>1</sup> Ծովի մակերևույթից 1530մ բարձրության վրա գտնվող Շիրակի սարահարթը արևմուտքում սահմանակից է Վանանդին, հարավում՝ Արշարունիքին (Երասխաձոր), արևելքում՝ Արագածոտնին, Նիզիկն և Վերին Տաշիրին, հյուսիսում՝ Աշոցքին:<sup>2</sup> Շիրակի բնակչության պայմանները, աշխարհագրական դիրքը հնագույն ժամանակներից նպաստավոր են եղել մարդու բնակության համար:

Գրավոր աղբյուրների վկայությամբ՝ Շիրակը ճանապարհներով կապվում էր հարևան երկրների քաղաքական և մշակութային կենտրոնների հետ: Մայրտիս-Բաբելոն մայրուղու շիրակյան ճյուղը գործում էր դեռևս մ. թ. ա. 6-5-րդ դարերում՝ իր նշանակությունը պահելով նաև հետագայում:<sup>3</sup> Պևտինգերյան տախտակների (Tabula Peutingeriana) մեջ բերված Արտաշատից Շիրակ, այնտեղից Վրաստան ու Արխազիա գնացող ճանապարհի մի հատվածը մատենագիտական աղբյուրներում կոչվում էր «ճանապարհ Աշոցաց» կամ «պոդոտայ Աշոցաց»:<sup>4</sup>

Հայաստանի անտիկ պատմությունը հայ և օտար հեղինակների գործերում հիշատակվում է՝ կապված հատկապես հռոմեական գորավարների ռազմական արշավանքների հետ: Իսկ օտար հեղինակների վկայությունները երբեմն նաև կանխակալ են ու միակողմանի: Եվ բացի այդ, գրավոր աղբյուրները հիմնականում հիշատակում են երկրի քաղաքական պատմության անցքերը, իսկ նյութական և հոգևոր մշակույթի տարաբնույթ բազմաթիվ հարցեր պատմիչների ուշադրությանը չեն արժանացել:

Թեև Հայաստանի անտիկ ժամանակաշրջանի պատմությունը վաղուց ի վեր ուսումնասիրության առարկա է,<sup>5</sup> սակայն հնագիտական հուշարձանների ուսումնասիրությունն իր հերթին կարևորվում է պեղումներով հայտնաբերված նյութերի անառարկելի սկզբնաղբյուր լինելու իրողությամբ: Եվ յուրաքանչյուր նոր հուշարձան, թաղման տարատեսակ, ծիսակարգի մի յուրահատկություն կամ մինչ այդ անհայտ մի զարդածև ինչ-որ մանրամասներ են հավելում եղածին՝ բացահայտելով հոգևոր և նյութական մշակույթի նորանոր գծեր:

1988 թվականի երկրաշարժից հետո սկսվեց Շիրակի հնագիտական ուսումնասիրության նոր փուլ: Մի կողմից փլատակների մաքրում, մյուս կողմից՝ շինարարական աշխատանքներ և Շիրակում առանց նախնական զննման շինհրապարակների էին վերածվում տարածքներ՝ հայտնի ու նաև դեռևս անհայտ հնավայրերը թաղելով ավերված քաղա-

<sup>1</sup> Մ. Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհագրոյցի», Եր., 1963, էջ 73-74:  
<sup>2</sup> А. М а г а к ъ я н, Растительность Армянской ССР, Ер., 1984, с. 13.  
<sup>3</sup> А. А. М а н а н д я н, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (Vв. до н. эры- XV в.н. эры). Эривань, 1930, с. 8, 22: А. Акоюн, Армения в торговле Запада с Востоком (первые века н.э.), СА, 1984, N. 2, с. 70-90: Մ. Չարդարյան, Շիրակը առաջավորասիական ինտեգրացիոն համակարգում (մ.թ.ա. I-ին հազարամյակում), Շիրակի պատմամշակութային ժառանգությունը (այսուհետև՝ ՇՊՄԺ) 2-րդ գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 11:  
<sup>4</sup> Հ. Մանյան, Երկեր, հ. Ե, Եր., 1984, էջ 161:

<sup>5</sup> Խ. Մամուկչյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ.1, Եր., 1931, հ. 2, 1941, և հ. 3, 1941: Գ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Եր., 1966: Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Եր., 1970:

քից տեղափոխվող շինարարական աղբի օրե-  
ցօր մեծացող բլուրների տակ: Խնդիր ունե-  
նալով հնարավորինս կանխել նախ հուշար-  
ձանների տարածքներ փլատակների մաքրու-  
մից գոյացած աղբի տեղափոխումը, ապա  
նաև շինարարական աշխատանքներ սկսելը՝  
Շիրակի երկրագիտական թանգարանի տնօ-  
րեն Հ. Խաչատրյանի նախաձեռնությամբ  
ստեղծվեց արշավախումբ (հնագետներ՝ Հ.  
Խաչատրյան, Լ. Եզանյան, նկարիչ-վերա-  
կանգնող՝ Հ.Ավետիսյան):

Իրականացված աշխատանքների ար-  
դյունքում ոչ միայն կանխվեց բազմաթիվ հու-  
շարձանների ավերումը, այլ նաև հայտնաբեր-  
վեցին մինչ այդ անհայտ հնավայրեր, իսկ  
որոշ դեպքերում էլ անհրաժեշտ եղավ փրկա-  
րարական պեղումներ իրականացնել՝ արդեն  
մասամբ ավերված հուշարձանները վերջնա-  
կան կորստից փրկելու համար: Արշավախմբի  
կողմից հայտնաբերվեցին անտիկ ժամանա-  
կաշրջանի հետևյալ հնավայրերը՝ Կամո, Ա-  
ռափի, Գյուլիբուլաղ (ներկայիս՝ Արեգմադեն,  
Սարատակ, Վարդաղ, Բենիամին):<sup>6</sup>

Շիրակում 1987-2001թթ. իրականացված  
դամբարանային պեղումների արդյունքում  
կուտակվել է մ. թ. ա.1 - մ. թ. 4-րդ դարերն ընդ-  
գրկող, մոտ 20 կմ շառավղով իրարից հեռու  
գտնվող մի քանի հուշարձանների թեև քանա-  
կապես ոչ շատ, սակայն բավականին հետա-  
քրքիր և խոսուն նյութ: Պեղվել է հիմնահողա-  
յին, սալարկղային, կարասային և սարկոֆա-  
գային մոտ 300 թաղում:

Պեղված դամբարանադաշտերում ան-  
տիկ ժամանակաշրջանին բնորոշ և մինչ այժմ  
հայտնի թաղման տեսակների կողքին կան  
նաև այլ տարբերակներ: Հիմնահողային թա-  
ղումներ են կատարվել տարբեր եղանակնե-  
րով: Հանդիպում են նաև տնտեսական և կեն-  
ցաղային ամբարների մեջ կատարված թա-  
ղումներ: Թաղումներում բացահայտվում են ո-

րոշակի յուրօրինակություններ, ինչպես օրի-  
նակ, թաղում սալարկղի մեջ դրված կարասի  
բեկորների վրա, սալարկղային թաղումների  
ծածկասալերի և կողասալերի վրա միջանցիկ  
անցքերի և փորվածքների առկայություն, որ-  
պես ծածկասալ կամ կողասալ երկանքի օգ-  
տագործում և այլն:

Քննարկվող հուշարձաններում կան նաև  
թաղման ծեսի տարատեսակ արարողակար-  
գեր (շան և ձիու համատեղ զոհաբերություն-  
ներ, ականջօղերը միայն աջ ականջին, մա-  
տանին միայն ձախ ձեռքին կրելը և այլն),  
որոնք, ներկայումս հայտնի տվյալների հա-  
մաձայն, բնորոշ են միայն Շիրակին:

Թաղմանն ուղեկից նյութերը տարա-  
բնույթ են և երբեմն էլ Հայաստանում չունեն  
զուգահեռներ: Դրանց ծիսական դերի բացա-  
հայտումը հնարավորություն է տալիս տեսնել  
թաղման ծեսի նորանոր նրբերանգներ՝ առա-  
վել ամբողջական դարձնելով ծիսակարգի լու-  
սաբանումը:

Պեղված դամբարանադաշտերը հնարա-  
վորություն են տալիս դիտարկել թաղման տե-  
սակների ու ծիսակարգերի փոփոխություն-  
ներն ու զարգացումները մ. թ. ա.1 - մ. թ. 4-րդ  
դարերն ընկած ժամանակահատվածում, ինչ-  
պես նաև հասարակության սոցիալ-տնտեսա-  
կան կյանքի, նյութական և հոգևոր մշակույթի  
զարգացման գործընթացը:

Շիրակի անտիկ թաղման տեսակների և  
ծեսի ուսումնասիրությունն իրականացվել է  
Կարմրաքարի (1987), Առափիի (1989), Վարդ-  
բաղի (1989) և Բենիամինի (1989-2001) դամ-  
բարանադաշտերի պեղումների նյութերով:  
Նաև օգտագործվել են Շիրակի հնագիտա-  
կան հետախուզության ընթացքում հայտնա-  
բերված դամբարանային նյութերը, Շիրակի  
երկրագիտական թանգարանի զետեղարան-  
ներում պահվող պատահական գտածոները:

<sup>6</sup> Հ. Խաչատրյան, Լ. Եզանյան, Հնագիտական  
հետախուզություն Շիրակում, ՀՀ 1989-1990թթ. դաշ-  
տային հնագիտական աշխատանքների արդյունքնե-  
րին նվիրված գիտական նստաշրջան, գեկուցումների  
թեզիսներ, Եր., 1991, էջ 84-86:

Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձաններից մնանատիպ հիմնահողային թաղումներ հայտնի են Արտաշատից:<sup>1</sup> Մ. թ. ա. II-I դդ. հիմնահողային թաղումներ հայտնի են Ագարակից:<sup>2</sup>

Շիրակի հիմնահողային թաղումներում կմախքների դիրքերի տարբերությունները թույլ են տալիս, ելնելով միավորող հատկանիշներից, որոշակի խմբավորումներ կատարել և ներկայացնել որպես հիմնահողային թաղման տարբերակներ:

**Նստած դիրքով հիմնահողային թաղումներ:**

Այս թաղումների նախնական դիրքը չի պահպանվում, և մկանունքի քայքայումից հետո կմախքն ընդունում է տարբեր դիրքեր (տախտակ III, նկ. 2), որի արդյունքում էլ մտածող դիրքով մի քանի թաղումներ բացելու պահին բերանքսիվայր են (Բենիամին, թիվ 71, 125, 217): Թիվ 71 թաղումը բացվեց ամբարի բերանին: Նստած դիրքից կմախքն առաջ է ընկել և ստացել բերանքսիվայր ձև: Թիվ 125 բերանքսիվայր թաղումը, որ բացվեց 3-րդ տեղամասում՝ մ. թ. ա. 1-ին դարի շերտում, նախապես ունեցել է ծալապատիկ մտածող դիրք: Կմախքի կողքին պահպանվել են հոգեհացի հետքերը: Ուղքերի տակ հաստ մոխրաշերտի վրա դրված քարը (25x 25սմ) ծառայել է որպես զոհասեղան: Այստեղ պահպանված է խոզի, ոչխարի ոսկորների խառնակույտը<sup>3</sup> դրանց մեջ՝ նաև մի կոկիչ: Կմախքի տակ գտնվեց ապակյա հոտուրք՝ աչքերի վերադիր պատկերներով և մետաղյա իրի փոքրիկ բեկոր: Նստած թաղումների նախնական ձևը ենթադրելի է ուղքերի դիրքից: Աճյունը մտնեցրել են կամ ծալապատիկ, կամ ծնկները դեպի վեր կծկած ձևով (թիվ 10, 177): Թիվ 10 թաղումը, որ բացվեց մոնումենտալ համալիրի 2-րդ սենյակի արևմտյան պատի տակ՝ սալա-

հատակի վրա, ունեցել է մտածող դիրք, հետագայում աստիճանաբար սահել է դեպի ետ, իսկ ծալված ծնկները մնացել են նախնական՝ պատին հենված դիրքով: Թիվ 177 թաղումն ունի իրանի ուղիղ՝ մեջքի վրա դիրք, իսկ ուղքերը ծնկներից ծալված են վեր: Այս թաղումները վերաբերում են մ. թ. ա. 1-մ. թ. 1-ին դարերին:

Ծնկաչոք դիրքով մի թաղում բացվեց առաջին տեղամասում՝ դամբարանադաշտի արևելյան հատվածում (թիվ 217): Ունաթաթերը, ինչպես նաև ձախ ձեռքը 45 աստիճան անկյան տակ ետ էին ծալված: Կմախքն ընկած էր քարակույտի վրա: Աճյունը մնացել էր տափանջված հատակի տակ, որի վրա 20սմ մոխրաշերտ է: Թիվ 218 թաղումը մեջքի վրա է, ուղքերը ծալված են վեր: Ակներև է, որ իրանը հետ է ընկել: Թաղումը վերաբերում է մ.թ. 1-ին դարին:

Հողի շերտի մեջ կծկված դիրքով հիմնահողային թաղումները զուգահեռներ ունեն Հայաստանի և հարևան երկրների համաժամանակյա հուշարձաններում: Արտաշատից հայտնի են հիմնահողային թաղումներ,<sup>4</sup> որոնցից մեկը կատարվել է հատակի տակ:<sup>5</sup> Հայտնի են նաև Դվինից<sup>6</sup> և Շիրակավանից:<sup>7</sup> Ե՛վ Շիրակավանի, և՛ Արտաշատի 1, 7, 8 բլուրների մնանատիպ թաղումները, ինչպես նաև Բենիամինում բացվածները, մանկական են: Այսօրինակ թաղումներ հայտնի են նաև Վրաստանից:<sup>8</sup> Ա. Մելյուկովայի կարծիքով կծկված դիրքով թաղել են ստրուկներին:<sup>9</sup> Շիրակավանում հատակի տակ բացված մնան թաղումները, ըստ Ֆ. Տեր-Մարտիրոսովի, վերաբերում են համայնքի ոչ լիիրավ անդամներին ու ստրուկներին, որոնց ընդ-

<sup>1</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Արտաշատ, II, Եր., 1981, էջ 26:

<sup>2</sup> Ի. Կ ա ր ա պ ե տ յ ա ն, Ն. Ե ն զ ի ք ա թ յ ա ն, Ագարակի դամբարանային համալիրները (նախնական հաղորդում), Հայաստանի հնագույն մշակույթը 2, Էմմա Խանգաղյանի հորելյանին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2002, էջ 65:

<sup>3</sup> Ոսկրաբանական նյութի ուսումնասիրությունը կատարել է կենսաբանական գիտությունների դոկտոր Ն. Մասեսերյանը:

<sup>4</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1981, էջ 9:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>6</sup> Գ. Զ ն չ ա թ յ ա ն, Դվին III, Դվինը անտիկ ժամանակաշրջանում, Եր., 1991, էջ 31:

<sup>7</sup> Փ. Թ ե ր-Մ ա ր տ ի ր ո ս ո ւ Վ, Կ ա ր ա խ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 25:

<sup>8</sup> Ю. Г а г о ш и д з е, Памятники эллинистического времени из Самадло, ВГМГ XXVII-В, Тбилиси 1967, табл. IX.1/24.

<sup>9</sup> А. М е л ю к о в а, Поселение и могильник скифского времени у села Николаевка, М., 1975, с. 143.

հանուր գերեզմանոցում չէին թաղում, այլ այն տարածքում, որտեղ նրանք ապրում էին:<sup>10</sup>

Թաղման տեսակների քննությունը ցույց է տալիս, որ քննարկվող դամբարանադաշտերում կծկված դիրքով թաղումները ոչ միայն հիմնահողային են, այլ ինչպես կտեսնենք, նաև՝ սալարկղային, հաճախ ունեն ուղեկցող նյութեր, պահպանվել են նաև հոգեհացի հետքեր: Ելնելով թաղման բոլոր գործողությունների իրականացման նպատակով ծախսված ժամանակից ու կատարված աշխատանքից՝ Բենիամինի այս թաղումները վերաբերում են սոցիալական որոշակի կարգավիճակ ունեցող մարդկանց:

Բենիամինում բնակավայրի հատակների տակ կատարված մ.թ.ա.1-մ.թ. 1-ին դարերի թաղումներից երկուսը հիմնահողային են (թիվ 71 և 217), մյուս՝ կարասային (թիվ 38): Թեև նշված ոչ բոլոր թաղումների վերաբերյալ մարդաբանական տվյալներ կան, սակայն, դատելով կմախքների չափերից, թիվ 38-ում թաղվածը նորածին է, իսկ թիվ 71-ում՝ հասուն մարդ: Մեկ այլ թաղում (թիվ 217), որ նույնպես բացվեց 20սմ հաստությամբ տափանցված մոխրաշերտի տակ (ըստ մարդաբանական տվյալների հանգուցյալը եղել է 50-60 տարեկան տղամարդ): Կմախքը դեմքով ընկած էր քարակույտի վրա և ծածկված էր քարերով: Նախապես ունեցել է ծնկած դիրք: Կմախքի դիրքը և թաղման ծեսի կանոնակարգի բացակայությունը ենթադրում են, որ մարդը հավանաբար սպանվել և թողնվել է տեղում:

**Ամբարների մեջ կատարված հիմնահողային թաղումներ:** Բենիամինում թաղումներ բացվեցին նաև տնտեսական ամբարներում, որոնք միջին մեծության, անկանոն քարերով շարված պատերով, կեղծ թաղով շինություններ են (թիվ 79, 83, 90, 129): Ամբարներ բացվեցին նաև Հայկաձորում (թիվ1, 2): Բենիամինի թիվ 79 թաղումը բացվեց 1-ին տեղամասում բնակելի հատվածի տնտեսական մասում: Ամբարը կիսավեր է և բավականին մեծ (հատակի տրամ.՝ 140 սմ, պահպանված հատվածի խոր.՝

170 սմ): Կեղծ թաղը չի պահպանվել (բերանը բացվում է մ. թ. ա. 1-ին դարի հատակի վրա): Մանր քարերի շարվածքով պատերի վրա պահպանվել են սվաղի հետքեր: Ամբարն ավերվել է մ.թ.ա. 1-ին դարում: Թաղումը կատարվել է մ. թ. ա. 1-ին դարի վերջին, ամբարի հատակին՝ աջ կողքին կծկված դիրքով: Նույնպիսի մի թաղում բացվեց 3մ հեռավորությամբ գտնվող մեկ այլ ամբարի մեջ: Այս ամբարը քիչ ավելի փոքր է (հատակի տրամ.՝ 90սմ, խոր.՝ 104սմ) և պահպանված է նախնական տեսքով (տախտակ III, նկ. 3): Կեղծ թաղն ավարտվում է 35x35սմ չափերի բացվածքով: Այստեղ ևս թաղումը կատարվել է ամբարի հատակին, աջ կողքին կծկված դիրքով: Ծնկները սեղմված են կրծքին, իրար միացած ձեռքերը՝ ծնոտի տակ: Թաղումը կատարելուց հետո ամբարի բերանը ծածկվել է սալաքարով: Ի տարբերություն ամբարների մեջ կատարված մյուս թաղումների՝ այստեղ կառույցը պահպանված է նախնական տեսքով:

Տարածքը, որտեղ բացվեցին թիվ 79 և 90 ամբարային թաղումները, բնակելի հատվածի տնտեսական համալիրն է: Թաղումներն այստեղ կատարվել են մ.թ. ա. 1-ին դարում, բնակելի հատվածի կենսագործունեության ժամանակ: Համաժամանակյա թաղում բացվեց (թիվ 83) մեկ այլ կիսավեր ամբարի մեջ (տախտակ IV): Երկրորդ տեղամասում, պալատական համալիր տանող բլրի լանջին ևս ամբարի մեջ կատարված թաղում բացվեց (թիվ 129): Այս ամբարը ևս կեղծ թաղով շինություն է, որի վերին չորս քարով ավարտվող մասը կազմում է 40x35սմ չափերի բացվածքով բերանը: Պատերի կանոնավոր շարվածքով, բավականին մեծ (խոր.՝ 265 սմ) ամբարի հատակը 190սմ տրամագիծ ունեցող, արևելք- արևմուտք ձգվածությամբ քիչ անկանոն շրջան է: Թաղումը կատարվել է հատակին շարված հում աղյուսե 12 սալերի վրա: Մալիկներն իրենց ձևով երկրաչափական սեղան են (երկ.՝ 70սմ, լայն.՝ 35-45սմ): Ծարվածքն ունի վարդյակի ձև, որի կենտրոնում ընկած մի քանի անկանոն քարերի վրա էլ կատարվել է ճախ կողքին կծկված դիրքով թաղումը (դեմքն՝ արևմուտք, աջ ձեռքը՝ ձգված իրանի երկարությամբ,

<sup>10</sup> Ф. Тер - Мартиросов, Памятник классической античности Армении, ԲԵՀ, թիվ 3, 1993, էջ 71:

ձախը՝ ծնոտի մոտ): Ուտքերը պրկված են: Կմախքի դիրքը հուշում է, որ հանգուցյալն, ըստ ամենայնի, մահացել և մնացել է տեղում: Հնարավոր է, որ ամբարը ծառայել է որպես պատժախուց: Ըստ մարդաբանական տվյալների հանգուցյալը 20-30 տարեկան կին է և ունեցել է 190սմ հասակ: Թաղումը վերաբերում է մ.թ.ա.1-մ.թ.1-ին դարերին:

Ամբարում կատարված մի թաղում բացվեց Անիի տարածաշրջանի Հայկաձոր գյուղում: Ինչպես արդեն նշել ենք, այստեղ հետախուզական պեղումների ժամանակ անտիկ բնակավայրի հատակին՝ մայր հողի վրա, բացվեցին 2,25մ և 1,9մ տրամագծով, կողք կողքի, 60սմ բարձրությամբ երկու շրջանաձև կառույցներ, որոնց վերջին շարքերը մակերեսից ընդամենը 20սմ խորություն ունեն:<sup>11</sup> Կառույցներից մեկի մեջ բացվեց հարավ-հյուսիս կողմնորոշմամբ, նստած դիրքով թաղում: Ինչպես ձևը, այնպես էլ բնակավայրի մեջ գտնվելը ենթադրում են կառույցների տնտեսական ամբար լինելը: Թաղումը կատարվել է, երբ ամբարը կորցրել է նախնական դերը, որն էլ կարող է պայմանավորված լինել բնակավայրի անկումով:

Ամբարների մեջ կատարված մանրօրինակ թաղումներ հայտնի են Շամիրամից<sup>12</sup> և Կոչից: Նշված հնավայրերում թաղումները կատարվել են շրջանաձև կամ ներքևում կլորացող փոսերում (խոր.՝ 1, 2-1, 5մ), որոնք ունեն միջին մեծության քարերի շարվածքով, լավ մշակված արտաքին մակերեսով պատեր: Թաղումները կատարվել են փոսի խորության միջնամասում, հատակին շարված թաղման գույքի վրա (հաճախ բեկորներով կամ խեցեղենով հագեցած քարահողային լիցքով): Նշված երկու հնավայրերում հանդիպում են կողքի, կծկված, մեջքի վրա պառկած, ծավված ոտքերով, նստած և այլ դիրքերով թաղումներ, որոնց բնորոշ է աղբատիկ ուղեկցող նյութը: Շամիրամում նշված թաղումները կատարվել են անտիկ ժամանակաշրջանի բնակեցման առաջին շրջանում՝ բնա-

կավայրի ճակատային պաշտպանական պատից դուրս, վաղ երկաթիդարյան կառույցների մեջ և դիտվում են որպես Հայաստանի անտիկ կանոններից շեղում:<sup>13</sup>

Շամիրամի թաղումների մանրամասն նկարագրությունից պարզ է դառնում, որ ջրհորանման փոսերը մասամբ լցված ամբարներ են (դեպի ներքև լայնացող ձև, քարերով շարված պատեր): Կմախքների դիրքը (կծկված, մեջքի վրա, ոտքերը ծավված), ուղեկցող նյութերի բնույթը (բեկորային խեցեղեն, որն ավելի հաճախ քարի և հողի լիցք է) հիմք է տալիս ենթադրելու, որ Շամիրամում<sup>14</sup> ևս թաղումները կատարվել են իրենց դերը կորցրած, բայց մասամբ նախնական ձևը և տեսքը պահպանած ամբարների մեջ: Հայկաձորում նույնպես շրջանաձև շարվածքի մեջ բացված թաղումը կատարվել է կիսավեր (պատերը պահպանվել են 60սմ բարձրությամբ) ամբարի հատակին: Ինչպես Բենիամինում, այստեղ ևս ամբարները երկրորդական նշանակությամբ օգտագործվել են թաղման համար:

Հորերի մեջ կատարված հիմնահողային թաղումներ:

Հիմնահողային թաղումների տարբերակներ կամ տարատեսակներ են կենցաղային հորերի մեջ կատարված թաղումները: Հորերն, ի տարբերություն ամբարների, կենցաղային նշանակության փոսեր են, և գտնված կենցաղային բազմազան, խառը և տարածամանկյա նյութերը հաստատում են դրանց բնույթը: Բենիամինի հորերի մեջ կատարված հիմնահողային թաղումներից (թիվ 146, 194, 207) հետաքրքրական է թիվ 207-ը, որտեղ գույգ թաղում է՝ 30-40 տարեկան կին և 40-50 տարեկան տղամարդ: Հողի մոտ 30սմ շերտով իրարից անջրպետված երկու կմախք, որոնք ունեն կծկված դիրք, դրված են տղամարդն՝ աջ, կինը՝ ձախ կողքին: Կնոջ կմախքն ունի արևելաարևմուտք կողմնորոշում, դեմքով՝ հարավ, իսկ տղամարդունը՝ հյուսիս-հարավ կողմնորոշում, դեմքով՝ հյուսիս: Տղամարդու կմախքն ընկած էր քարի վրա: Գանգի տակ խոշոր եղջերավոր ա-

<sup>11</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Լ. Ե գ ա ն յ ա ն, 2003, էջ 136:  
<sup>12</sup> А. О г а н я н, Культура античных поселений Армении. Автореферат на соиск.уч. степ. канд. истор. наук., Ер., 1990, с. 16-17.

<sup>13</sup> Նույնը:  
<sup>14</sup> Նույնը:

նասունի ոսկորներ են, իսկ կնոջ կմախքի ոտքերի մոտ գտնվեցին լյութերիայի բեկորներ և թասի շուրթի մաս: Նման պատկեր ունեն հորերի մեջ կատարված մյուս թաղումները (թիվ 146, 194): Այս թաղումները տարածամասնակյա են՝ կատարված ոչ երկար ժամանակահատվածի տարբերությամբ:

Եթե ամբարների մեջ կատարված թաղումները զուգահեռներ ունեն Շամիրամում, ապա հորերի մեջ մ. թ. ա.1-մ. թ. 1-ին դարերում կատարված թաղումները մնում են Բենիամինին բնորոշ և յուրօրինակ ձև: Իսկ ինչո՞վ է այն պայմանավորված: Առաջին հայացքից և՛ ամբարների, և՛ հորերի մեջ կատարված թաղումների հիմքում սոցիալական է (մյուսի բացակայություն, թաղման համար անօգտագործելի դարձած կառույցների և փոսերի օգտագործում): Հորերի մեջ կատարված թաղումներում կմախքների անկանոն դիրքը և մյուսի բացակայությունը ենթադրում են, որ աճյուններն ուղղակի նետվել են փոսերի մեջ: Այսպես կարող էին թաղվել հասարակության ոչ լիիրավ անդամները:

Հորերի մեջ կատարված թաղումների վերաբերյալ հիշատակում գտնում ենք Խորենացու մոտ: Արշակի կողմից Կամսարականների ցեղը կոտորելու մասին Խորենացին գրում է. «Եւ եղև ի սատակել Արշակայ զագգն Կամսարականաց՝ հրամայեաց գոհակունս նոցա քարշել և ընկենուլ անթաղ, կերակուր լինել շանց...», այնուհետև շարունակում. «Իսկ սայլորդացն տեսեալ ոսկերս մարդկան զագանակուր եղերոց, ցրուեալս առ եզերք փոսոյն, հարցեալ ուսան՝ իրեանց լինել տերանց. հաւաքեալ ի սայլսն ներքոյ եղեգանն՝ բերին թաղեցին ի նոյն հորս: Չոր զգացեալ Արշակայ՝ հրամայէ զսայլորդսն ի վերայ հորոցն կախել զփայտէ»: <sup>15</sup> Բերվածը ժամանակով և վայրով (Շիրակի Նախճավան) կապ չունի մ. թ. ա.1-ին դարում Բենիամինում հորերի մեջ կատարված թաղումների հետ, սակայն փաստում է, որ կար նաև թաղման նման եղանակ: Իսկ Արշակի կողմից Կամսարականների դիակները «ընկենուլ անթաղ, կերակուր լինել շանցի» թողնելն առաջին հերթին վրեժ-

խնդրություն լինելով, նաև քրիստոնյա թագավորի որոշակի վերաբերմունք է նրանց հավատի՝ հեթանոսական կրոնին:

### ՄԱԼԱՐԿՂԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐ

Այս թաղումների վերաբերյալ կարծիք կա, որ ձևն օտար ծագում ունի: <sup>16</sup>Սակայն, ինչպես արդարացիորեն նկատել է Գ. Տիրացյանը, սալարկղային թաղումը Հայկական լեռնաշխարհում թաղման հիմնական տեսակներից մեկն էր դեռևս բրոնզի դարում: <sup>17</sup>

Յուրօրինակ սալարկղային թաղումներ են կոպտատաշ քարերից կառուցված, հելլենիստական ժամանակաշրջանի հնգանկյուն կամ վեցանկյուն դամբարանները, որ գտնվել են Կարմիր բլուրում՝ Թեյշեբահի ուրարտական քաղաքի ավերակներում: <sup>18</sup> Մ. թ. ա. VI - մ. թ. VIդդ. սալարկղային թաղումներ հայտնի են Ագարակից: <sup>19</sup>

Շիրակի անտիկ դամբարանադաշտերում սալարկղային թաղումներն ամենատարածվածն են և ամենից շատ պեղվել են Բենիամինում (245-ից 174-ը սալարկղային են): Մրանք հիմնականում ունեն արևելք-արևմուտք կողմնորոշում: Բացառություն են Բենիամինի թիվ 154, Առափիի թիվ 9 դամբարանները, որտեղ թաղումները կատարվել են հարավ - արևելք - հյուսիս - արևմուտք, Առափիի թիվ 5 դամբարանը՝ հյուսիս արևելք-հարավ արևմուտք, Բենիամինի թիվ 171 դամբարանը՝ հյուսիս-հարավ կողմնորոշմամբ: Սալարկղային թաղումներում ևս երբեմն արևելք-արևմուտք կողմնորոշման մասնակի շեղումներ են նկատվում:

Բենիամինի սալարկղային թաղումները հիմնականում մեկ կամ երկու քարից ծածկասալեր ունեն, որոնք մշակված (թիվ 7, 14, 15, 49, 114, 116...) կամ անմշակ, անկանոն քարեր են (27, 29, 74, 118, 196...): Ծածկասալերը նույնիսկ

<sup>16</sup> И. А л и е в, В. А л и е в, О Сармато-аланских памятниках на территории Нахичеванской АССР, СА, 1976, ном. 1, 1976, с. 181.

<sup>17</sup> Г. Т и р а ц я н, 1988, էջ 102:

<sup>18</sup> Նույն տեղում, նկ. 21:

<sup>19</sup> Ի. Կ ա ր ա պ ե տ յ ա ն, Ն. Ե ն զ ի բ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 61:

<sup>15</sup> Մ. Խ ո ռ ե ն ա գ ի, Գ, լր:

եթե արտաքին կողմից մշակված չեն, ապա տակի մասում միշտ հարթեցված են: Վարդբաղում նույնպես ծածկասալերի համար օգտագործվել են մեկական ամբողջական, լավ մշակված սալեր: Երբեմն ծածկասալի կողքերին շարված են մանր քարեր: Բենիամինում այսպես ամրացված են թիվ 25, 54, 60, 82, 89, 110, 131, 182, 136, 142, 155, իսկ Վարդբաղում՝ թիվ 7 և 10 դամբարանների ծածկասալերը: Նման թաղումներ հայտնի են նաև Շիրակավանից:<sup>20</sup> Բենիամինում սալարկղային որոշ թաղումների ծածկասալերն ամրացնող քարերի մեջ կան տարատեսակ ամանների բեկորներ (թիվ 157, 164, 181): Սալարկղային թաղումների ծածկասալերի համար հաճախ օգտագործվել են երեքից հինգ անկանոն, անմշակ քարեր (թիվ 176, 180, 181, 187, 192...), իսկ երբեմն էլ՝ նախապես այլ նպատակի համար ծառայած քարեր: Այսպես, թիվ 8 դամբարանի ծածկասալի քարերից մեկը երկանքի քար է (տրամ. 40սմ, հաստ. 6սմ), որի մի կողմը կտրված հանված է: Կարելի էր մտածել, թե ձևափոխությունն արված է ծածկասալ ծառայած մյուս քարերի հետ ուղիղ շարվածք ապահովելու համար, սակայն բնակավայրի վրա նստած դամբարանադաշտի տարածքի քարերով հագեցած լինելը ենթադրում է, որ հավելյալ աշխատանք չէր ծախսվի քարը ձևափոխելու համար, եթե իհարկե այն կապված չէ ծխակարգի հետ: Թիվ 216 սալարկղի ծածկասալն ամրացնող քարերից մեկն աղորիք է: Երբեմն ծածկասալերն ունեն նաև յուրահատուկ մշակում: Այսպես, Բենիամինի թիվ 172 դամբարանի ծածկասալի չորս քարերից երկրորդի վրա երկու միջանցիկ անցք է արված: Անցքերը համապատասխանում են կրծքի հատվածին: Թիվ 176 դամբարանի ծածկասալի հինգ քարերից երկրորդի վրա, որը ևս համապատասխանում է կրծքի հատվածին, արված են նույնանման միջանցիկ անցքեր: Երկու դեպքում էլ անցքերն արված են կողքկողքի, 8-10սմ տրամագծով: Ծածկասալերի նման մշակումներ հայտնի են նաև Շիրակի մյուս անտիկ հուշար-

ձաններից: Առափիի թիվ 11 դամբարանի (տախտակ V, նկ. 2) ծածկասալի վրա՝ գլխամասում, արված է 10սմ տրամագծով միջանցիկ անցք, որից սկսվող նույն լայնությամբ ակոսը հասնում է սալի եզրը (խոր.՝ 6սմ, երկ.՝ 35սմ): Փորվածքն արված է ծածկասալի եզրից 35սմ հեռավորության վրա և նույնպես համապատասխանում է գանգի հատվածին: Փոսիկն արտաքուստ քիչ պայտաձև է, ներսից՝ շրջանաձև: Վարդբաղի թիվ 2 դամբարանի ծածկասալի վրա՝ գլխի կողմում, ակոս է արված (երկ.՝ 20սմ, լայն.՝ 6սմ, խոր.՝ 2,5սմ): Միջանցիկ անցքով ծածկասալ հայտնի է Շիրակավանից, որտեղ բացի գանգի դիմաց արված անցքից, մեկն էլ կենտրոնում է:<sup>21</sup> Վարդբաղի թիվ 2 և Առափիի թիվ 11 դամբարանների ծածկասալի անցքերն արված են գլխամասում: Նման մեկ այլ ծածկասալ Վարդբաղում բացվել է Սո. Տեր-Մարգարյանի պեղումների ժամանակ:<sup>22</sup>

Սալարկղային թաղումներում հիմնականում պահպանվում է դամբարանի ուղղանկյուն ձևը: Երբեմն սալարկղի արևմտյան կողմը 5-10սմ լայն է, քան՝ արևելյանը: Այսպիսին են Բենիամինի թիվ 1, 4, 5, 18, 20, 21, 22, 48, 53, 54, 73, 84, 116, 122, 139, 186, 197, 204, Առափիի թիվ 7, 8, 9, 10, 12, 13, 15, 16, 17, 18, Վարդբաղի թիվ 19, Կարմրաքարի թիվ 9, 10 դամբարանները: Սալարկղերի ուղղանկյունը կազմվել է 1-5 քարերից կողասալերով: Բենիամինում կողասալերի քանակը 2-5 է, Առափիում, Վարդբաղում և Կարմրաքարում՝ 1-2: Բենիամինում կան աջ և ձախ կողասալերի քանակով տարբեր դամբարաններ. աջը՝ երկու, ձախը՝ երեք (թիվ 52, 187, 188), աջը՝ երեք, ձախը՝ երկու (թիվ 95, 142, 186, 191, 192, 193, 200): Հանդիպում են նաև այսպիսի տարբերակներ. աջը երկու, ձախը՝ մեկ (թիվ 203), աջը երեք, ձախը՝ չորս (թիվ 181), աջը՝ երեք, ձախը՝ չորս (թիվ 104, 109), աջը՝ չորս, ձախը՝ յոթ (թիվ 61), աջը՝ հինգ, ձախը՝ երկու (թիվ 167), աջը հինգ, ձախը՝ չորս (թիվ 176), աջը՝ երկու, ձախը՝ մանր քարերի շարվածք (թիվ 183): Առափիի թիվ 9 դամբարանի

<sup>20</sup> Ф. Тер-Мартirosов, Г. Караханян, 62վ. աշխ., էջ 27:

<sup>21</sup> Նույնը:

<sup>22</sup> Սո. Տեր-Մարգարյան, 62վ. աշխ., էջ 95:

հարավային կողասալը երկու քարից է, հյուսիսայինը՝ մեկ: Արեգնադեմում սալարկղերի ուղղանկյունը կազմվել է երեքական կողասալերով (տախտակ VI, նկ. 2, 3): Բենիամինում կան նաև սալարկղային թաղումներ, որտեղ որպես կողասալ օգտագործել են բնակարանի պատը՝ դիմացը քարեր շարելով (թիվ 30, 153, 157): Վարդգադի թիվ 7 սալարկղային թաղման հյուսիսային կողասալը և թիվ 8 դամբարանի և՛ հյուսիսային, և՛ հարավային կողմերը կազմվել են մանր քարերի շարվածքով: Բենիամինում որպես կողասալեր հիմնականում օգտագործվել են լայնաբերան հատիչով մշակված ուղղանկյուն քարեր, որոնք երբեմն էլ այնքան կիպ են դրված, որ անջատ լինելը երևում է միայն լավ մաքրելուց հետո: Նման դեպքերում հիմնականում օգտագործվել են բնակավայրի սալահատակի քարերը (թիվ 95, 123, 142, 192, 200...): Դամբարանների կողասալերի համար օգտագործվել են նաև անտաշ քարեր (թիվ 145, 155, 167): Մի քանի դամբարաններում մշակված են նաև արևելյան և արևմտյան կողասալերը: Բենիամինում թիվ 131 և 132 և Վարդգադի թիվ 6 սալարկղերի գլխի հատվածի քարերը կամարածև մշակում ունեն: Այս դամբարանները մասամբ սարկոֆագ են, մասամբ՝ սալարկղ: Նման թաղում հայտնի է դեռևս վաղ բրոնզի դարաշրջանից:<sup>23</sup> Բերված օրինակներում հավանաբար նպատակը կամարի ձև տալն է եղել:

Որպես կողասալ օգտագործվել է մի կողմը հարթեցված երկանքի քարը (Բենիամին, թիվ 8): Այս դամբարանում երկու երկանքաքար օգտագործվել են որպես կողասալ և ծածկասալ: Ակներև է, որ քարերն օգտագործել են զուտ ծիսական նշանակությամբ՝ կարևորելով ունեցած անցքերը:

Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, Բենիամինի մի քանի սալարկղերի և դրանցում թաղված աճյունների չափերի միջև որոշակի անհամապատասխանություն կա: Բերենք մի քանի օրինակներ՝ նշելով սալարկղի երկարութ-

յունն ու լայնությունը: Այսպես, թիվ 29 դամբ.՝ 150-35, թիվ 33 դամբ.՝ 160-40, թիվ 47 դամբ.՝ 170-44, թիվ 54 դամբ.՝ 190-40, թիվ 89 դամբ.՝ 200-30, թիվ 131 դամբ.՝ 180-40, թիվ 132 դամբ.՝ 160-32, թիվ 142 դամբ.՝ 150-20, թիվ 158 դամբ.՝ 175-25 և թիվ 215 դամբ.՝ 200-40:

Ըստ մարդաբանական տվյալների՝ նշված դամբարաններում հանգուցյալների տարիքը տատանվում է 20-60-ի միջև, հետևաբար Բենիամինում հասուն տարիքի մարդու կրծքի շրջագիծը, ելնելով սալարկղերի չափերից, տատանվել է 40-80սմ միջև: Այսինքն՝ կմախքների չափերում անատոմիական շեղումներ կամ անհամամասնություններ չկան: Բերվածից հետևում է՝ որոշ դեպքերում թաղումները կատարվել են ոչ թե նախապես պատրաստված սալարկղերում, այլ՝ քարերը դիակի շուրջբուրդը կիպ շարելով:

*Սալարկղային թաղում ձվածիրի մեջ:* Սալարկղային թաղման տարբերակ են դամբարանաղաշտում հանդիպող փոքրաթիվ թաղումները, որ կատարվել են 2-3 շարք կճաքարերով շարված ձվածիրների մեջ: Այս դամբարանները ծածկասալեր չունեն: Բենիամինում նման չորս թաղում է բացվել (թիվ 83, 184, 195, 209). ձախ կողքին կծկված՝ (թիվ 83), նստած՝ (թիվ 184) և (թիվ 195): Վերջին դամբարանում զույգ թաղում է՝ մանկահասակ տղա և աղջիկ: Կմախքներն ունեն մեջքի վրա պառկած դիրք, ծնկները բարձր են, հակված դեպի որովայնը, ոտնաթաթերն՝ ուղիղ: Այս թաղումները վերաբերում են մ.թ.ա.1-ին դարին: Մեկ այլ սալարկղում (թիվ 209) կմախքն ունի մեջքի վրա պառկած դիրք, ծնկները հակված են որովայնին: Այս դամբարանի հատակը, ի տարբերություն նախորդների, կճաքարերով սալարկված է: Թիվ 184 դամբարանը կառուցվել է՝ կճաքարերով լրացնելով թիվ 183 դամբարանի արևելյան կողասալը (տախտակ VII, նկ.1, 2): Հնարավոր է, որ վերջին երկու թաղումները կատարվել են միաժամանակ: Կճաքարերով շարված ձվածիրի մեջ կատարված թաղումներ բացվել են Կարճ-

<sup>23</sup> Т. Ч у б и н и ш в и л и, Амиранис Гора, Материалы к древнейшей истории Мецхет-Джавახети, Тбилиси, 1963, с. 96.



աղբյուրի հեղինակական բնակավայրում,<sup>24</sup> ինչպես նաև նույն հնավայրի «Քարե դուռ» ամրոցում:<sup>25</sup> Չվաճև հատակագծով, ուղղասահայաց դիրքով դրված քարերով մ.թ.ա. III-II դարերի դամբարաններ հայտնի են Ագարակից:<sup>26</sup>

Շիրակի անտիկ դամբարանադաշտերում հանդիպում են նաև ընդհանուր կողասալով կից սալարկղային թաղումներ (Բենիամին՝ թիվ 132, 133, Առափի՝ թիվ 17, 18, Կարմրաքար՝ թիվ 28, 29), որոնք կարող են ընտանիքի անդամների տարածամանակյա թաղումներ լինել:

Շիրակի սալարկղային թաղումների մեծ մասին բնորոշ է կմախքի ուղիղ՝ մեջքի վրա դիրքը, երբ ձեռքերը կրծքին են կամ որովայնին, կամ ձգված են իրանի երկարությամբ: Կան նաև այլ դիրքերով թաղումներ:\*

<sup>24</sup> И. К а р а п е т я н, Раскопки Карчахпюра, (АО, 1978г. ), М., 1979, с. 523.

<sup>25</sup> Հ. Օ հ ա ն յ ա ն, Հեղինակական ժամանակաշրջանի դամբարան Կարմրաղբյուր գյուղի Քարե դուռ ամրոցում (Վարդենիսի շրջան), ՀԱԻ դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Եր., 1981, էջ 31:

<sup>26</sup> Ի. Կ ա ռ ա պ ե տ յ ա ն, Ե. Ե ն զ ի բ ա ը յ ա ն, 2002, էջ 61:

\* 1. Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերի դիրքերը տարբեր են.

ա) կրծքին են (Բենիամին՝ թիվ 4, 18, 27, 94.. Առափի՝ թիվ 13, 14, 15, 16, 17, Կարմրաքար՝ թիվ 19, 20, 21, 22, 28...), Վարդաղ՝ թիվ 4, 5, 7, 14):

բ) որովայնին են (Բենիամին՝ թիվ 1, 2, 8, 12, 15..., Առափի՝ թիվ 6, 9, 12, Կարմրաքար՝ թիվ 5, 13, 17, Վարդաղ՝ թիվ 8, 9, 13, 15, 16):

գ) իրանի երկարությամբ են (Բենիամին՝ թիվ 97, 166, 203, Առափի՝ թիվ 1, 4, 5, 8, 11):

դ) ծնոտի տակ են (Բենիամին՝ թիվ 5, 11, 49, 106, Վարդաղ՝ թիվ 3, Կարմրաքար՝ թիվ 6):

ե) ուսագլուխներին են (Բենիամին՝ թիվ 134, 147, 157, 175, 181, 193):

զ) աջ ձեռքը որովայնին է, ձախը՝ կզակի տակ (Բենիամին՝ թիվ 6, Առափի՝ թիվ 18):

է) ձախ ձեռքը կրծքին է, աջը՝ ծնոտի տակ (Բենիամին՝ թիվ 14 և 89):

ը) աջ ձեռքը ծնոտի տակ է, ձախը՝ իրանի երկարությամբ (Բենիամին՝ թիվ 32):

թ) ձախ ձեռքը որովայնին է, աջը՝ իրանի երկարությամբ (Բենիամին՝ թիվ 131):

ժ) աջ ձեռքը իրանի երկարությամբ, ձախը՝ որովայնին (Բենիամին՝ թիվ 209):

ի) աջ ձեռքը կրծքին, ձախը՝ իրանի երկարությամբ (Բենիամին՝ թիվ 164, Վարդաղ, թիվ 19):

2) կմախքն ունի աջ կողքին կծկված դիրք (Կարմրաքար՝ թիվ 23 և 24):

3) կմախքն ունի ձախ կողքին կծկված դիրք (Բենիամին՝ թիվ 83, Վարդաղ՝ թիվ 2):

4) կմախքն ունի մեջքի վրա պատկած դիրք, ոտքերը՝ հակված դեպի որովայնը, աջ ձեռքն իրանի երկարությամբ է, ձախը՝ որովայնին (Բենիամին՝ թիվ 209):

Բենիամինի սալարկղային թաղումներում ոտքերը մեծ մասամբ ուղիղ դիրք ունեն, բացառություն է թիվ 175 դամբարանը, որտեղ աջ ոտքը ձախի վրա է, իսկ թիվ 83, 209, 195՝ ծնկները հաված են եղել կրծքին կամ որովայնին:

Առափիի թիվ 8 դամբարանում կմախքն ունի բերանքսիվայր դիրք՝ ի տարբերություն նույն դամբարանադաշտում մեջքի վրա կատարված մյուս թաղումների: Առափիի սալարկղային թաղումներում ձեռքերի դիրքը հիմնականում ուղիղ է՝ դրված իրանի երկարությամբ: Սակայն հանդիպում են նաև այլ տարբերակներ: Թիվ 18 դամբարանում ձեռքերը կզակի տակ են, իսկ թիվ 6, 9, 12՝ որովայնին: Թիվ 9 դամբարանում աջ ձեռքը ձախի վրա է, իսկ մի քանի թաղումներում (թիվ 13, 14, 15, 16) ձեռքերը կրծքին են:

Վարդաղի սալարկղային թաղումներում կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա: Բացառություն է թիվ 2 դամբարանը, որտեղ կմախքն ունի ձախ կողքին պատկած դիրք, ծնկները ծավված են, ողնաշարը՝ ծռնոված: Վարդաղի թաղումներում ձեռքերը կամ կրծքին են (թիվ 4, 5, 7), կամ որովայնին (թիվ 9, 13, 14, 15): Հանդիպում են նաև այլ տարբերակներ. թիվ 6 դամբարանում ձեռքերը կզակի տակ են, իսկ թիվ 19 դամբարանում աջ ձեռքը կրծքին է, ձախը՝ իրանի երկարությամբ:

Կարմրաքարում կմախքները հիմնականում ունեն ուղիղ՝ մեջքի վրա պատկած դիրք: Սակայն հանդիպում են նաև կծկված թաղումներ: Նման երկու մանկական թաղում բացվեց, որտեղ կմախքները կծկված են աջ կողքին (թիվ 23 և 24): Կարմրաքարում ևս կմախքի ձեռքերը հիմնականում կամ կրծքին են (թիվ 19 և 29), կամ՝ որովայնին (թիվ 5, 13, 17), իսկ թիվ 28 դամբարանում, որտեղ գույգ թաղում է, ձեռքերը խաչված են կրծքին:

Սալարկղային թաղումներում ծիսակարգն ավարտվել է անյունը դամբարանի ողջ պարու-

5) Կմախքն ունի նստած դիրք, ոտքերն ուղիղ են, ձեռքերը՝ որովայնին (Բենիամին՝ թիվ 184):

6) Կմախքներն ունեն կծկված դիրք: Թաղված են տղա և աղջիկ՝ համապատասխանաբար աջ և ձախ կողքին կծկված դիրքերով (Բենիամին՝ թիվ 195):

նակությանը հողով ծածկելով: Սակայն հանդիպում են նաև թաղումներ, երբ աճյունը հողով չի ծածկվել (Բենիամին, թիվ 67): Վարդաբաբուն Ստ. Տեր-Մարգարյանի պեղումների ժամանակ բացված թիվ 16 և 17 դամբարանները ևս մասամբ են հողով ծածկված:<sup>27</sup>

**Սալարկղային թաղում փայտյա դագաղի մեջ:** Կարմրաքարում պեղված փայտյա դագաղով միակ թաղումը թիվ 12 դամբարանն է: Դագաղը պատրաստված է եղել փայտի ուղղանկյուն կտորներից: Գամեր չեն գտնվել: Դամբարանն ուղեկցող նյութով թվագրվում է մ.թ. 4-րդ դարով: Կարմրաքարում շինարարական աշխատանքների ժամանակ դիպվածաբար բացված թաղումը ևս եղել է սալարկղի մեջ դրված փայտյա դագաղում: Բենիամինի թիվ 225 սալարկղում գտնված փայտի երկու փոքր կտորը ենթադրում են, որ այս թաղումը ևս կատարվել է փայտյա դագաղի մեջ:

Շիրակում փայտյա դագաղի վաղագույն օրինակը հայտնի է մ. թ. ա. 8-7-րդ դարերով թվագրվող Տիրաշենի դամբարանադաշտից, որտեղ թիվ 9 դամբարանում գտնվեցին փայտյա դագաղի մնացորդներ:<sup>28</sup> Անտիկ ժամանակաշրջանին վերաբերող փայտյա դագաղի մեջ կատարված թաղումներ են բացվել Արտաշատում:<sup>29</sup> Մ. թ. 1-ին դարերում փայտե դագաղի մասին վկայում է Ագաթանգեղոսը՝ պատմելով Հռիփսիմեի և Գայանեի թաղման մասին. «*Եւ հրամայեաց մեն մի իւրաքանչիւր արկղագործ, տախտակամած, մայրափայտեայ, բլեռայինդ, հաստահեղոյս, երիցագամ տապան գործել*»:<sup>30</sup>

**Վերաթաղում:** Անտիկ Շիրակի դամբարանադաշտերում կատարվել է նաև վերաթաղում: Բենիամինի թիվ 20 արևելք-արևմուտք կողմնորոշմամբ հիմնահողային թաղումը կատարվել է սալարկղային թաղման տեղում: Նախկին թաղում

մից պահպանվել են հյուսիսային երկու կողմապար և գլխի հատվածը լրացնող քարերից մեկը, այնուհետև կուտակել են առաջին կմախքի ոսկորները, ապա կատարվել է նոր՝ հիմնահողային թաղում՝ կմախքի ուղիղ, մեջքի վրա դիրքով: Բենիամինի թիվ 32 սալարկղում կմախքի մնացորդները (գանգը, վզի ողերը, բազկուկները, սրունքի ոսկորները) խառնակույտով լցրել են դամբարանի կողքը, կողասալի վերին մակարդակին և կատարվել է նոր թաղում (թիվ 33): Այս դամբարանի ծածկասալի տակ գտնվեց մի դաստակ: Քանի որ երկու կմախքներն էլ ամբողջական են, ուրեմն այս դաստակը պատկանել է մի երրորդ աճյունի և հավանաբար ավելի ուշ է դրվել դամբարանի մեջ: Վերաթաղման արդյունք է նաև Բենիամինի թիվ 61 դամբարանի հողերի մեջ մեկ այլ կմախքից մնացած ոսկորների առկայությունը: Նույն պատկերն է նաև Բենիամինի թիվ 114 դամբարանում, որտեղ կմախքի ոտքերի հատվածում գտնվեցին մեկ այլ կմախքի սրունքուկները: Թիվ 239-ում երկու գանգ դրված էին կողքկողքի, դեմքով՝ արևելք, իսկ հյուսիսային կողմում շարված էին կմախքի երկար ոսկորները, որոնց մեջ՝ նաև մեկ այլ գանգի բեկոր: Թիվ 245-ում ևս վերաթաղում է կատարվել: Նախապես թաղված է եղել երեխա (հողը հագեցած է մանկական կմախքի ոսկորներով), և այս դեպքում ոչ թե նախորդ կմախքի մնացորդները կուտակել են մի կողմում, այլ թողնվել են հողի մեջ: Վերաթաղման մասին է վկայում նաև սարկոֆագ ձևափոխությունը: Վերջինս արևելյան կողմից կտրել են, ապա քարեր հավելելով՝ մեծացրել: Վերաթաղման հետքեր են պահպանվել Կարմրաքարի թիվ 20 դամբարանում: Ավերված սալարկղից պահպանված հյուսիսային և արևելյան կողմասալերի անկյունում հավաքվել են կմախքի մնացորդները, իսկ մաքրված տարածքում կատարվել է նոր՝ հիմնահողային թաղում: Վերաթաղում կատարվել է նաև Վարդաբաբուն: Այստեղ Ստ. Տեր-Մարգարյանի պեղումների ժա-

<sup>27</sup> Ստ. Տ ե ռ - Մ ա ռ գ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., էջ 95:

<sup>28</sup> Մ. Հարությունյանին պեղումներ (նյութերը հրատարակված չեն):

<sup>29</sup> Մ. Խ ա չ ա տ ռ յ ա ն, 1981, էջ 19-22:

<sup>30</sup> Ա գ ա թ ա ն գ ե դ ո ս, Հայոց պատմություն, (աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի), Եր., 1983, ԳԴ:

մանակ թիվ 17 դամբարանում բացվել է զույգ թաղում՝ մեկի վերաթաղմամբ:<sup>31</sup>

**Կենոտաֆ:** Երկու սալարկղային դամբարան-կենոտաֆ բացվեց, որտեղ թաղում չի կատարվել. Բենիամին (թիվ 171), Վարդաթաղ (թիվ 18): Վարդաթաղում դամբարանի կողքին բացվեց մոխրաշերտ, որը մնացել է հոգեհացի կրակից: Հայաստանի համաժամանակյա հուշարձաններից կենոտաֆ հայտնի է Կարճաղբյուրի պեղումներից:<sup>32</sup>

Շիրակի սալարկղային կառույցների տեսակները վերաբերում են մ.թ. 2-4-րդ դարերին: Այստեղ առկա են թաղման ձևի որոշակի յուրահատկություններ, ինչպես օրինակ՝ ծածկասալերի և կողասալերի վրա փորվածքները և միջանցիկ անցքերը, որոնք Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձաններում չեն հանդիպում:

#### ԿԱՐԱՍԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐ

Կարասային թաղումներ բացվեցին միայն Բենիամինում:<sup>33</sup> Կարասները դրված են ուղահայաց (թիվ 17, 35, 36, 39, 43գ, 138, 206), կիսապառկած (թիվ 9, 28) և հորիզոնական դիրքերով (թիվ 40, 43ա, 43բ, 183): Կարասի իրանը կոտրվել է և, դիակը տեղավորելուց հետո, անոթի բեկորները վերաշարվել են (թիվ 9, 28): Մա վերաբերում է կիսապառկած և հորիզոնական դիրքով կարասային թաղումներին: Կարասների բերաններն ուղղված են հյուսիս (թիվ 9, 28, 40, 105, 124, 182), արևելք (թիվ 98, 150) և արևմուտք (թիվ 183, 190): Բենիամինում ուղղահայաց դիրքով դրված կարասներն ամբողջական են: Սրանք հիմնականում մանկական թաղումներ են, և աճյունը տեղավորելու համար կարասը կոտրելու անհրաժեշտություն չի եղել (թիվ 17, 35, 36, 138, 206): Թիվ 38 կարասային թաղումը

բացվեց թիվ 134 սալարկղային թաղման տակ: Թաղումը կատարվել է մ.թ. ա. 1-ին դարի երկրորդ կեսին՝ բնակավայրում տեղի ունեցած հրդեհից հետո, այս ժամանակաշրջանով թվագրվող շինարարական երրորդ հորիզոնին վերաբերող սալահատակի տակ: Ուղղահայաց դիրքով դրված կարասներից կոտրված է միայն թիվ 39-ի կարասը, որի իրանից նստուկ հատվածում արված բազմաթիվ անցքերը վերանորոգման մասին են վկայում: Թիվ 28 թաղման կարասի իրանի վրա 3սմ տրամագծով անցք կա, որը հավանաբար արվել է կարասը խնոցու ձևափոխելիս: Բերված օրինակները ցույց են տալիս, որ թաղման կարաս են ծառակել տնտեսության մեջ օգտագործված, երբեմն էլ արդեն ոչ պիտանի դարձած անոթները: Վրաստանում ևս, Հայաստանի և այլ երկրների օրինակով, հաճախ թաղման կարաս են ծառայել տնտեսության մեջ օգտագործված անոթներ:<sup>34</sup> Մանկական թաղումների կարասներն ամբողջական են, որը պայմանավորված է հանգուցյալի մարմնի չափերով: Մանկական թաղումների համար օգտագործվել են փոքր տարողությամբ լայնաբերան տարբեր անոթներ, իսկ մեծերի համար՝ նստուկներին անցք ունեցող կարասներ: Վերջիններս արվել են դրանցում պահվող սննդամթերքի փտումը կանխող անհրաժեշտ օդի ներթափանցումն ապահովելու համար: Նախապես ուղղահայաց դիրքով է դրված եղել նաև թիվ 105 թաղման կարասը, որը բացելու պահին ուներ հյուսիս-հարավ կողմնորոշմամբ կիսապառկած դիրք: Կարասը նախապես ուղղահայաց դիրքով դրվել է բերանքսիվայր դրված մեկ այլ կարասի մեջ, սակայն ամրացվել մանր քարերով (տախտակ III, նկ. 4): Ուղղահայաց դիրքով թաղման կարասների մեծ մասը փոքր-ինչ փքուն իրան և լայն բերան ունի: Միայն մի դեպքում (թիվ 39) կարասը միջին մեծության է (բարձր.՝ 61սմ): Հատուկ թաղման համար պատրաստված կարասներ չկան: Բոլոր կարասներն էլ նախապես տնտեսության մեջ օգտագործված են, նույնիսկ վերանորոգված (թիվ 9, 36, 39, 43ա, 150): Հաճախ վերականգնելուց հետո էլ ամբողջական

<sup>31</sup> Ստ. Տ ե ռ - Մ ա ռ գ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., էջ 95:

<sup>32</sup> Ի. Կ ա ռ ա պ ե տ յ ա ն, Կարճաղբյուրի պեղումները, ՀԱԻ 1981-1982թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Եր., 1983, էջ 24:

<sup>33</sup> Լ. Ե գ ա ն յ ա ն, Գրասխանակերտի անտիկ դամբարանադաշտի կարասային թաղումները, ՇՊՄԺ հանրապետական III գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1998, էջ 22-23:

<sup>34</sup> Նույնը:

տեսք չեն ստանում (թիվ 36, 43ա, 150, 183): Երբեմն օգտագործվել են նաև կարասի բեկորներ: Թիվ 43ա թաղումը կատարվել է բնակավայրի արդեն հողի հաստ շերտով ծածկված պատի մոտ՝ կարասի բերանից իրանը կազմող լայնակի կտրված (կտրվա՞ծ) ժապավենների վրա: Կարասի բեկորների վրա կատարված մեկ այլ թաղում բացվեց թիվ 183 սալարկղի մեջ:

Ուղղահայաց դիրքով կարասային թաղումներում կարասի դիրքն ամուր պահելու համար մատուկի մոտ շարել են քարեր, որոնց մեջ կան նաև սրաքարեր և կոկիչներ (թիվ 39): Այս դիրքով դրված կարասի բերանը փակվել է լայնաբերան քրեղանով (թիվ 105), լայնաբերան, ծորակավոր թասերով (թիվ 28, 150), նաև՝ քարերով (թիվ 39): Անկախ կարասի դիրքից՝ աճյունը միշտ դրվել է ոտքերը դեպի կարասի մատուկը: Կմախքն ունի կծկված դիրք. ծնկները ծալված են և հակված դեպի կուրծքը, ձեռքերն իրար են միացած կրծքին կամ ծնոտի տակ: Ուղղահայաց դիրքով կարասային թաղումներում, ոսկորները սահելով ներքև, կուտակվել են կարասի հատակին:

Կմախքների խիստ կծկված դիրքը, հատկապես ամբողջական կարասների մեջ տեղավորվածներից, հնարավոր է աճյունը կապելու արդյունք է: Կարելի է ենթադրել, որ կապել են անոթի մեջ տեղավորելու նպատակով, սակայն ինչպես կտեսնենք, կապված է նաև թաղման ծեսի հետ:

Կարասային թաղումներում ուղեկցող նյութը սովորաբար դրված է իրանի հատվածում (թիվ 43), իսկ եթե կարասն ուղղահայաց դիրքով է՝ ոտքերի մոտ (թիվ 9, 28), որոշ դեպքերում նաև կարասի բերանը ծածկող քարերի մեջ (թիվ 39): Մի քանի կարասային թաղումների մոտ պահպանվել են հոգեհացի մնացորդները. խարույկի տեղը, մոխրաշերտը, կրակի մեջ նետված ոսկորներ ու կավանոթների բեկորներ (թիվ 17, 28): Թաղման ծեսն ավարտվել է աճյունը հողով ծածկելով: Բենիամինում երկու դեպքում (թիվ 105, 206) կմախքի վրա մտած է միայն 2-3մմ հաստությամբ փոշի: Արտաշատի Նոր Կյանքի արևելյան դամբարանադաշտում (թիվ

9 դամբ.) ևս կան կարասներ, որոնց մեջ հող լցված չէ:<sup>35</sup>

Բենիամինի կարասային թաղումները հիմնականում կրկնում են Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձանների նույնատիպ թաղումներին բնորոշ թաղման եղանակն ու ծեսը. Արտաշատ,<sup>36</sup> Դվին,<sup>37</sup> Գառնի,<sup>38</sup> Օշական:<sup>39</sup>

Բենիամինում բացվեցին նաև կարասային մի քանի թաղումներ, որոնք որոշակի յուրահատկություններ ունեն:

**Չվածիրի մեջ կատարված կարասային թաղում:** Թիվ 190 թաղումը կատարվել է մանր քարերով շարված ձվածիրի մեջ: Շարվածքի քարերից մեկը աղորիքի բեկոր է: Հորիզոնական դրված կարասի ուտերը կտրել են, ապա կատարել թաղումը: Այսօրինակ թաղումներ հայտնի են Օշականից:<sup>40</sup>

**Սալարկղի մեջ կատարված կարասային թաղում:** Թիվ 183 կարասային թաղումը բացվեց արտի մեջ՝ մակերեսից 20սմ խորության վրա: Ծածկասալ չկա, որ տարածքում մշտապես իրականացվող գյուղատնտեսական աշխատանքների հետևանք է: Թաղումը կատարվել է աջ կողմում 60x80սմ չափերի երկու տափակ կողասալերով, իսկ ձախում՝ մանր քարերի շարվածքով ուղղանկյուն սալարկղի մեջ: Աճյունը դրվել է կարասի մոտ 20սմ լայնությամբ, հավասար կտրված (կտրա՞ծ) ժապավենաձև բեկորների մավաձև շարվածքի վրա: Կմախքն ունի մեջքի վրա պառկած դիրք, ձեռքերը կրծքին են: Թաղումը վերաբերում է մ. թ. ա. 1-ին դարում:

Սալարկղի մեջ դրված կարասային թաղումներ հայտնի են Օշականից (թիվ 19, 38, 41, 87): Այստեղ թիվ 38 սալարկղի մեջ դրված կա-

<sup>35</sup> Ժ. Խ ա չ ա տ ը յ ա ն, 1981, էջ 31:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 31-32:

<sup>37</sup> Գ. Ք ո չ ա ը յ ա ն, 1991, էջ 29-30:

<sup>38</sup> Ж Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 23-28:

<sup>39</sup> Ст. Е с а я н, А. К а л а н т а р я н, Ошакан I, Основные результаты раскопок 1971-1983гг. Ер., 1988, с. 51-66:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 59:

րասային թաղման շուրջբոլորն ու վրան քարեր են շարված:<sup>41</sup>

Կարասային թաղման հետաքրքիր օրինակներ են թիվ 40 և 123 դամբարանները, որոնք ուղեկցվել են շների և ձիու զոհաբերությամբ: Թիվ 123-ը մանկական թաղում է՝ բացված երրորդ տեղամասում պեղված քարաշար պատերով հսկա ամբարի բերանին՝ բերանքսիվայր դրված կարասի բեկորների տակ: Կմախքի կողքին գտնվեցին շան երկատված ծնոտի երկու կեսերը: Բնակավայրի մ. թ. ա. 1-ին դար թվագրվող շերտում բացված թաղումը վերաբերում է մ. թ. 1-ին դարին:

Շան զոհաբերությամբ ուղեկցվող թաղման առավել հետաքրքրական օրինակ է թիվ 40 դամբարանը, որտեղ բացի շներից, զոհաբերվել և թաղվել է նաև ձի: Թաղումը կատարվել է բնակավայրի մեջ՝ նույն միջանցքի մեջ բացվող սենյակներից ամենամեծում, Յմ տրամագծով քարաշար շրջանի կենտրոնում: Կարասի նախնական դիրքն անհայտ է, բեկորները գտնվեցին հորիզոնական դիրքով՝ բերանն ուղղված հյուսիս: Դամբարանը թալանված է եղել դեռևս մ.թ. 4-րդ դարում: Այդ են վկայում ինչպես շրջանի շարվածքի քարերի մի մասի բացակայությունն, այնպես էլ վերին շերտում հայտնված ուղեկցող նյութերի բեկորները, որոնք գտնվեցին սանրաքաշ խեցիների հետ: Կարասի կտորված լինելը ծիսակարգի, թե՞ թալանի հետևանք է, պարզ չէ: Թաղումն ուղեկցվել է երկու ամբողջական և երկու մասնատված շների (իրանից երկու կես արված) և ձիու զոհաբերությամբ: Չիու գլուխը գտնվեց կարասի մոտ, իսկ շների կմախքները՝ թաղումը սահմանափակող Յմ տրամագծով քարաշար շրջանի տակ՝ շարված ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ:<sup>42</sup>

Հայաստանի ուշ հելլենիստական դարաշրջանի կրոնախառն կառուցվածք ունեցող քարարկղերում կատարված թաղումներ բացվել են Էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղում: Մ. թ. ա. 1 - մ.թ. 1-ին դարերով թվագրվող այս թաղումները փաստում են, որ Հայաստանի նախ-

նադարյան մշակույթին բնորոշ կրոնախառն կառուցվածք ունեցող քարարկղերում թաղումներ կատարելու սովորույթը շարունակվում է նաև մ.թ. 1-ին դարերում:<sup>43</sup> Անտիկ ժամանակաշրջանով թվագրվող, կրոնախառն մեջ ուղղահայաց դիրքով կարասային թաղում պեղվել է Կարճաղբյուրում:<sup>44</sup>

Հայաստանում մ.թ.ա VIII-VIIդդ. թվագրվող թաղման այս եղանակը հայտնի է Արգիշ-թիխիսիից:<sup>45</sup> Հայաստանում կարասային թաղումները գալիս են ուրարտական ժամանակաշրջանից, և նրանց ծագումը կապվում է Միջագետքի հետ:<sup>46</sup> Մ. թ. ա VI և մ.թ.ա II-IIIդդ. կարասային թաղումներ հայտնի են Ագարակից:<sup>47</sup> Կարասային թաղումները լայն տարածում են ստանում մ.թ.ա. 3-1-ին դարերում և մ. թ. ա. 1-ին դարում կրում համատարած բնույթ<sup>48</sup> և հայտնի են Գառնիից,<sup>49</sup> Օշականից,<sup>50</sup> Արտաշատից,<sup>51</sup> Դվինից:<sup>52</sup> Շիրակում կարասային թաղումներ պեղվել են նաև Շիրակավանում<sup>53</sup> և Ջրափիում:<sup>54</sup>

Կարծիք կա, որ կարասային թաղումները ծագել են այն երկրներում, որտեղ քարը քիչ էր, այնուհետև տարածվել են այլ երկրներ՝ ստանալով համատարած բնույթ: Անդրկովկասում թաղման կարասային եղանակի տարածման համար հիմք են ծառայել պիֆոսների մեջ կատարված թաղումները:<sup>55</sup> Կարասային թաղումներ հայտնի են Միջերկրական ծովի ափամերձ

<sup>43</sup> Ռ. Թ ը ռ ը ս յ ա ն, Ֆ. Տ ե թ - Մ ա թ տ ի ը ն ս յ ա ն, Ուշ հելլենիստական ժամանակաշրջանի դամբարաններ Էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղում, ՊԲՀ, 1976, թիվ 2, էջ 265:

<sup>44</sup> Տ. Ե ս ա յ ա ն, Ա. Կ ա լ ա ն տ ա ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 59:

<sup>45</sup> Ա. Մ ա ռ տ ի ռ ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 55:

<sup>46</sup> Ա. Մ ա ռ տ ի ռ ո ս յ ա ն, Город Аргиштихили. Археологические памятники Армении. 8, Урартские памятники. вып. I, Ер., 1974, с. 50-53.

<sup>47</sup> Ի. Կ ա թ ա պ ե տ յ ա ն, Ն. Ե ն զ ի թ ա թ յ ա ն, նշվ. աշխ., էջ 59:

<sup>48</sup> Ժ. Խ ա չ ա տ ը յ ա ն, նշվ. աշխ., էջ 32:

<sup>49</sup> Ջ ի խ ա չ ա տ ը յ ա ն, Гарни V, Античный некрополь (результаты раскопок 1956-1972гг.), Ер., 1976, с. 7-20.

<sup>50</sup> Տ. Ե ս ա յ ա ն, Ա. Կ ա լ ա ն տ ա ղ յ ա ն, Ошакан I, Ер., 1988, с. 55-56.

<sup>51</sup> Ժ. Խ ա չ ա տ ը յ ա ն, 1981, էջ 8-20:

<sup>52</sup> Փ. Ք ն չ ա թ յ ա ն, 1991, էջ 25-29:

<sup>53</sup> Փ. Թ ե թ - Մ ա ռ տ ի ռ ո ս յ ա ն, 1981, с. 27-28:

<sup>54</sup> Ա. Կ ա ն ե ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 28-29:

<sup>55</sup> Ա. Ո ն ե շ վ ի լ ի, Погребальные обряды народов Закавказья, Тбилиси, 1992, с. 127.

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 56:

<sup>42</sup> Լ. Ե գ ա ն յ ա ն, 1998, էջ 43-44:

շրջաններից: Ամֆորաների մեջ կատարված մ.թ.ա. V-IV դարերի թաղումներ պեղվել են Հռոդոս և Կրետե կղզիներում, Կիպրոսում, Սև ծովի հյուսիսային ափերին՝ Կերչում, Խերսոնեսում:<sup>56</sup> Փոքր Ասիայում (արևմտյան մասում) թաղման այս եղանակը գոյատևել է մինչև մ.թ.ա. III դ.:<sup>57</sup>

Անդրկովկասում թաղումների կարասային եղանակն անհետանում է մ.թ.ա. VII դարում և մինչև մ.թ.ա. IV դար չի հանդիպում, բայց մ.թ.ա. IV դարում թաղման այս եղանակը համարյա միաժամանակ հայտնվում է ողջ տարածքում:<sup>58</sup> Անդրկովկասի կարասային թաղումների ուսումնասիրության արդյունքում մնան եզրահանգման է եկել Ա. Նոնեշվիլին: Ավելի ուշ, Ազարակում բացված մ.թ.ա VI դարի կարասային թաղումները երկու հարյուր տարով ետ են տանում այս թաղումների վերստին կիրարկման ժամանակը: Ամենաշատ կարասային թաղումները, որ ընդգրկում են բավականին մեծ ժամանակահատված՝ մ. թ. ա. IV-մ.թ. ա IIIդդ. հայտնի են ինչպես Հայաստանից, այնպես էլ Վրաստանից և Ադրբեջանից:

Արևմտյան Վրաստանում՝ Կոլխիդայում, կարասային թաղումները վերաբերում են մ.թ.ա. VI-II դարերին:<sup>59</sup> Իսկ Արևելյան Վրաստանում՝ Իբերիայում, թաղման այս եղանակը հանդիպում է մ.թ.ա VI- IIIդդ: Ներկայիս Ադրբեջանի տարածքում կարասային թաղումները հանդիպում են՝ սկսած մ.թ.ա. II դարից:<sup>60</sup> Անդրկովկասում կարասային ամենատառ թաղումները վերաբերում են մ.թ. III-VIII դարերին:<sup>61</sup>

Բենիամինի կարասային թաղումները վերաբերում են մ. թ. ա. 1 - մ. թ. 1-ին դարերին: Որպես թաղման անոթ օգտագործված են հիմնականում տնտեսության համար այլևս ոչ պիտանի կարասները: Թաղման կարասները դրվել են հատուկ այդ նպատակով փորված փոսերում կամ քարաշար՝ ուղղանկյուն, երբեմն էլ ձվաձիթ շարվածքների մեջ: Հորիզոնական դիրքով թաղ-

ման անոթների կողմնորոշումն ազատ է, և որևէ օրինաչափություն չկա: Որպես կանոն, կարասներն օգտագործել են անհատական թաղման համար, և մի անոթի մեջ դրվել է մի աճյուն, որին տրված է աջ կամ ձախ կողքին կծկված դիրք: Երեխաները թաղվել են փոքր անոթների մեջ և հիմնականում բնակելի հատվածում՝ հատակների տակ:

## ՍԱՐԿՈՖԱԳԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐ

Շիրակում սարկոֆագներ պեղվել են Վարդբաղում, Կարմրաքարում և Բենիամինում: Վարդբաղում սարկոֆագները երկու տեսակի են: Առաջինը տուֆի շերտի կամ ժայռաբեկորի մեջ փորված, կլորացված անկյուններով ուղղանկյուն արկղեր են (տախտակ III, նկ. 5): Վարդբաղում մնան երեք սարկոֆագ բացվեց: Թիվ 16 սարկոֆագի հյուսիսային կողմում ժայռի պակասը լրացված է հարթ մշակված մի քարի հավելումով: Վարդբաղում տուֆի շերտի մեջ փորված սարկոֆագը (թիվ 1) երկայնքով ճեղքվածք ունի, որը կարող է նաև երկրաշարժի հետևանք լինել: Դամբարանադաշտի հյուսիսային կողմում գտնվեց ժայռաբեկորի մեջ փորված մեկ այլ սարկոֆագ: Այն արտաքուստ 3մ երկարություն ունի (ներսից՝ 2մ), 1, 65մ լայնություն, 95սմ բարձրություն: Սարկոֆագը գլխի մասում ավելի լայն է (75սմ), քան ոտքերի (60սմ), հատակն անհավասարաչափ է մշակված և գլխի մասում ավելի բարձր է: Սարկոֆագների մեջ կատարված այս թաղումները վերաբերում են մ.թ. 2-3-րդ դարերին: Ժայռափոր դամբարաններ հայտնի են Ազարակից և Կողբից:<sup>62</sup>

Երկրորդ տեսակն արտաքինից և ներսից մշակված ուղղանկյուն արկղեր են, ունեն 17-20սմ (թիվ 3 դամբ.) կամ 20-25 սմ ( թիվ 4 դամբ.) հաստությամբ պատեր: Վարդբաղի թիվ 3 սարկոֆագը կոնքի հատվածում ավելի լայն է (70սմ), քան գլխի մասում (57սմ), իսկ թիվ 4-ը գլխի մոտ ավելի նեղ է (35սմ), քան ոտքերի մոտ (40սմ): Այս թաղումները վերաբերում են 3-4-րդ

<sup>56</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 26.

<sup>57</sup> Б. К у ф т и н, Материалы к археологии Колхиды, II, 1950, Тбилиси, с. 74.

<sup>58</sup> Б. К у ф т и н, նշվ. աշխ., էջ 74:

<sup>59</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 26:

<sup>60</sup> Նույնը:

<sup>61</sup> А. Н о н е ш в и л и, նշվ. աշխ., էջ 127:

<sup>62</sup> Ի. Կ ա ր ա պ ե տ յ ա ն, Ն. Ե ն գ ի բ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 59:

դարերին: Կարմրաքարում մեր կողմից պեղված միակ սարկոֆագը (թիվ 10 դամբ.) նույնպես մշակված է ներսից ու դրսից: Ավելի ուշ, 1992թ. Հ.Հակոբյանն այստեղ պեղել է երկու մեծ և երեք փոքր սարկոֆագ:<sup>63</sup> Ի տարբերություն Վարդաբաղի՝ Կարմրաքարի սարկոֆագի գլխի հատվածը կամարաձև է և ավելի լայն (70սմ), քան ոտքերի կողմը (50սմ): Բենիամինում բացվեց ներսից և դրսից կլորացված անկյուններով ուղղանկյուն մի սարկոֆագ (թիվ 245), որտեղ վերաթաղում է կատարվել: Քանի որ նոր թաղման համար այն փոքր է եղել, ոտքերի հատվածում երկու կողմից քարարկղ կողերը կտրվել են, այնուհետև լրացվել քարերով: Միակտոր, սև գույնի տեղական տուֆի ժայռակտորից, կլորացող անկյուններով տաշտականման մի սարկոֆագ հայտնի է Արգիշթիխիի պեղումներից:<sup>64</sup>

Սարկոֆագների մեջ կատարված բոլոր թաղումներն ունեն արևելք-արևմուտք կողմնորոշում: Որպես ծածկասալ ծառայել են մեկական ամբողջական, լավ մշակված քարեր, որոնք ունեն 135-250սմ երկարություն, 95-110սմ լայնություն, 15-20սմ հաստություն: Այս ձևում ևս կան միջանցիկ անցքերով ծածկասալեր: Վարդաբաղի թիվ 3 դամբարանի ծածկասալի վրա, ուղիղ գանգի դիմաց, արված է միջանցիկ անցք, որը դրսի կողմից ունի 6սմ տրամագիծ, տակից՝ 10սմ: Մյուս սարկոֆագը (թիվ 16) նույնպես ունի միջանցիկ անցք, որը համապատասխանում է ոտքերի հատվածին: Անցքը փորված է արտաքուստ 8սմ, իսկ տակից՝ 5սմ տրամագծով: Վարդաբաղի թիվ 3 քարարկղի ծածկասալի տակ՝ ոտքերի հատվածում, դրվել է 32x32x2,5սմ չափերի մի քար, որը հավանաբար սպահովել է ծածկասալի ուղիղ դիրքը: Նույնպիսի մի քար, քիչ ավելի փոքր չափերի, դրվել է կրծքի մասում: Սարկոֆագային թաղումներում ևս կմախքն ունի ուղիղ՝ մեջքի վրա դիրք, իսկ ձեռքերը կրծքին են: Ծիսակարգն ավարտվել է՝ աճյունը դամբարանի ողջ պարունակությամբ հողով ծածկելով: Միայն Վարդաբաղի թիվ 3

սարկոֆագի հողն է փոշիանման և գուցե, մինչև դամբարանի մեջ լցվելը, մաղվել է:

Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, անկախ կառույցների տարբեր տեսակներից, ստեղծվել է սահմանազատված տարածք՝ հանգուցյալին ողջերի աշխարհից տարանջատելու համար: Հիմնահողային թաղումների ժամանակ նման տարածքը ստեղծվել է թաղման շուրջը քարեր շարելով, ամբարների մեջ կատարված թաղումներում՝ ամբարների բերանը փակող սալերով, սալարկղային թաղումներում՝ ծածկասալերով, կարասայինի դեպքում՝ կարասների բերանն այս կամ այն անոթով ծածկելով: Նման սահմանազատող տարածքի ստեղծումը ենթադրում է ներսի (մահվան) և դրսի (կյանքի), այսինքն՝ այս և այն աշխարհների տարանջատում՝ հանգուցյալի և ողջերի միջև եղած բոլոր կապերի խզում, և ինչպես կտեսնենք թաղման ծեսի վերլուծության ժամանակ, նաև՝ հանգուցյալից սպասվող վտանգների կանխում:

Թաղման կառույցների տարբեր տեսակների բոլոր մանրամասների քննությունը ցույց է տալիս, որ դրանց փոփոխությունը մ.թ.ա. 1-մ. թ. 4-րդ դարերի ընթացքում ուրվագծում է հետևյալ պատկերը:

Քննարկվող հուշարձաններում ամենավաղ թաղումները թվագրվում են մ.թ.ա. 1-ին դարով և բացվել են Բենիամինում ու Կառնուտում: Բենիամինի այս ժամանակաշրջանի դամբարանադաշտը դեռևս հայտնաբերված չէ: Նշված մի քանի թաղումները կատարվել են սենյակների հատակների տակ, նաև հորերի ու ամբարների մեջ և վերաբերում են բնակավայրի կենսագործունեության ժամանակաշրջանին:

Մ. թ. ա. 1-մ. թ. 1-ին դարերում գերակշռողը հիմնահողային և կարասային թաղումներն են, կա նաև սալարկղի մեջ կատարված կարասային թաղում (թիվ 183): Այս դամբարաններում ուղեկցող նյութն ավելի հաճախ է հանդիպում և բազմազան է: Նույն ժամանակաշրջանին վերաբերող, Բենիամինի բնակավայրի պեղված ծայրարևելյան հատվածի կառույցներից դեպի հարավ հայտնաբերված կարասային, հիմնահողային և սալարկղային մի քանի թաղումները

<sup>63</sup> Հ. Հակոբյան, 1994, էջ 41-43:

<sup>64</sup> Հ. Մարտիրոսյան, Ռ. Թորոսյան, Արգիշթիխիի սարկոֆագը, ՊԲՀ, թիվ 3, 1986, էջ 221:

կատարվել են արևելք-արևմուտք միևնույն առանցքի վրա: Այս թաղումներն իրենց տեղադրությամբ և դիրքով որոշակի համակարգման են ենթարկված: Ինչպես ցույց են տալիս պեղումները, կառույցների հետքեր չկան, և բնակավայրն այստեղ ավարտվում է:

Բենիամինի դամբարանադաշտում մ.թ.ա. 1-մ. թ. 1-ին դարերում թաղումներ կատարվել են ինչպես հատակների տակ, այնպես էլ՝ տնտեսական ամբարների և կենցաղային հորերի մեջ:

Մ. թ. 2-րդ դարից տիրական են դառնում սալարկղային թաղումները: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը հանգչում են կամ որովայնին, կամ կրծքին: Ուղեկցող նյութը կորցնում է բազմազանությունը և դառնում մեկ կամ երկու իր: Մ. թ. 3-4-րդ դարերում համատարած սալարկղային թաղումների մեջ կա նաև սալարկղի մեջ դրված փայտե դագաղով թաղում: Մ. թ. 2-րդ դարից սալարկղային թաղումներին զուգահեռ հայտնվում են սարկոֆագներ: Այս թաղումները թեև շատ քիչ են, սակայն ուղեկցող նյութն ավելի հաճախ է հանդիպում, որը հավանաբար սոցիալական հիմք ունի: Պեղված դամբարանադաշտերում վերջին թաղումները կատարվել են մ. թ. 4-րդ դարում (Բենիամինի, Առափիի, Վարդբաղի և Կարմրաքարի սալարկղային ու սարկոֆագային թաղումներ):

Եթե մ. թ. ա. 1-ին դարում աճյունն առավելապես դրվում էր աջ կամ ձախ կողքին՝ ծնկները ծավված դիրքով, ապա մ. թ. առաջին դարերի թաղումներում այն ունի ուղիղ՝ մեջքի վրա պառկած դիրք, ձեռքերը կրծքին են կամ որովայնին: Աճյունի նման դիրքը մ. թ. 3-4-րդ դարերում դառնում է տիրական: Պահպանվում է հանգուցյալի հետ ուղեկցող նյութեր դնելու սովորույթը: Եվ երբեմն շատ դժվար է տարբերակել անտիկ և քրիստոնեական թաղումները:

Այսպիսով, Շիրակի անտիկ դամբարանադաշտերում փաստված են անտիկ ժամանակաշրջանին բնորոշ թաղման սալարկղային, կարասային, հիմնահողային և սարկոֆագային ձևերը: Սալարկղային թաղումներ պեղվել են բոլոր դամբարանադաշտերում, իսկ կարասային թաղումներ՝ Բենիամինում և Ջրափիում: Հիմնահողային թաղումներ հայտնի են Շիրակի բոլոր դամբարանադաշտերից, իսկ սարկոֆագներ՝ Բենիամինից, Վարդբաղից և Կարմրաքարից: Անկախ դամբարանների կառուցվածքային տարբերություններից, դամբարանադաշտերում կատարվել է դիադրում:<sup>65</sup> Բացվել է նաև կենտոսաֆ:

Այսպիսով, պեղված դամբարանները, միավորվելով ձևերի ընդհանուր հատկանիշներով, երբեմն ունեն նաև յուրահատկություններ, որոնք էլ թույլ են տալիս դրանք խմբավորել որպես ենթաձևեր, ինչպես օրինակ՝ տնտեսական ամբարների, հորերի մեջ կատարված հիմնահողային թաղումներ, սալարկղի մեջ կատարված կարասային թաղում և այլն:

<sup>65</sup> Աճյունը (աճիւն) բնիկ հայ բառ է, որ ծագել է azgy ձևի as պարզ արմատից, նշանակում է այրել, չորանալ: Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Եր., 1971, էջ 14: Այստեղից հետևում է, որ բառի մեջ ներառված է թաղման երկու ձևն էլ՝ դիակիզում և թաղում հոդի մեջ:



# Գ Լ ՈՒՆ Ե Ր Ր Ո Ր Դ

## ԹԱՂԱՍՆ ԳՈՒՅՔԸ

Շիրակի անտիկ դամբարանադաշտերի նյութը թեև քանակապես շատ չէ, սակայն տարատեսակ է և բազմաբնույթ: Գտածոների մեջ կան ինչպես խեցեղենի նմուշներ, այնպես էլ աշխատանքային գործիքներ, մատանիներ, ականջօղեր, ապարանջաններ, հայելիներ և պերճանքի այլ առարկաներ:

Գտածոների մեջ խեցեղենը մեծ թիվ չի կազմում: Դրանք թաղման կարասներ են, հանգուցյալի գլխի կամ ոտքերի մոտ դրված ուղեկից անոթներ, ինչպես նաև սալարկղային մի քանի թաղումների ծածկասալերի և կողասալերի քարերի մեջ խցկած թասերի և գավաթների բեկորներ:

Կարասները կամ տնտեսության մեջ օգտագործված և արդեն թերի են, կամ էլ թաղման նպատակով կտորված (լայնակի ժապավենների բաժանված): Բեկորային կարասները, եթե վերականգնելուց հետո էլ չեն ամբողջանում, ապա ձևի և չափերի մասին մոտավոր պատկեր տալիս են: Մանկական թաղումների համար բացի կարասներից օգտագործել են նաև կճուճներ, որոնք մեծ մասամբ ամբողջական են: Խեցեղենի երկրորդ խմբում Բենիամինի, Վարդբաղի և Կառնուտի դամբարանների ուղեկից անոթներն են:

Կարասների կրկնվող ձևեր չկան, կան ընդհանրություններ, և յուրաքանչյուրը ներկայանում է որպես առանձին ձև: Թիվ 9 դամբարանի կարասը դեղնավարդագույն, քիչ ավազախառն կավից է՝ վատ թրծված, շփոթով պատված և փայլեցված: Նստուկից իրան կարկատանի անցքերը վկայում են, որ կարասը տնտեսության մեջ օգտագործված է եղել:

Անոթն ունի կենտրոնում միջանցիկ անցքով տափակ նստուկ, աստիճանաբար լայնացող իրան, որն ամենաբարձր հատվածում բավականին լայն է, ապա սահուն անցումով նվազում, ավարտվում է կարճ վզի վրա բացվող ետ ճկված շուրթով, լայն բերանով (բարձր.՝ 50սմ, նստուկի տրամ.՝ 19սմ, իրանը՝ 46սմ, վիզը՝ 22սմ, բերանը՝ 27սմ): Անոթն ուղղահայաց դիրքով եղել է կրակի մեջ, որի հետքերը հասնում են մինչև իրանի փքուն հատվածը:

Թիվ 17 դամբարանի կարասն ամենաանորակն է, պատրաստված է վատ հունցված կավից և շատ վատ է թրծված (տախտակ VIII, նկ. 1): Հետևանքը՝ սպիտակից կարմրավունի խառը երանգներ, ճաքճքված մակերես: Չեռածեփ ամանի շուրթերն անհամաչափ են, որից էլ բերանը ձվաձիթ տեսք է ստացել: Մանկական թաղման համար օգտագործված այս անոթն ամբողջական է, ունի տափակ նստուկ, կենտրոնում քիչ ուռուցիկ, համարյա երկկոնիկ իրան, կարճ վիզ, լայն բերան (բարձր.՝ 27սմ, նստուկի տրամ.՝ 14, 5սմ, իրանի տրամ.՝ 26սմ, վիզը՝ 15սմ, բերանի տրամ.՝ 17, 5սմ): Կարասը նախապես տնտեսության մեջ օգտագործված է:

Թիվ 105 թաղման կարասը բաց դեղնավուն ավազախառն կավից է: Նախապես տնտեսության մեջ օգտագործված կարասը թաղման ժամանակ ամբողջությամբ բեկորների է վերածվել: Ամանն ունի տափակ նստուկ, որից դեպի իրան անցումը մեծանում է փոքր թեքությամբ, ապա միանգամից լայնանում՝ ավելի շեշտելով ուսերի լայնությունն ու բարձրությունը: Ուսերից վիզ անցումը շատ կարճ է: Շուրթը քիչ ետ է ճկված, բերանի բացվածքը՝ քիչ ձվաձիթ: Կարասը միջին

մեծությամբ է. (բարձր.՝ 46սմ, իրանի տրամ.՝ 46սմ, բերանի տրամ.՝ 26սմ, մատուկինը՝ 15սմ):

Կարասների մեջ առանձնանում են երկուսը՝ թիվ 150 և թիվ 183, որոնք ձեռածեփ են, պատրաստված են դեղնավուն, ավազախառն կավից: Անոթները բարձր են, ունեն սլացիկ իրան: Թիվ 150 թաղման կարասն ունի տափակ մատուկ, որից ուղիղ բարձրացող իրանը փքվում է, ապա ստանում գնդի ձև: Իրանից վիզ անցումն աննշան է: Կարասը (բարձր.՝ 58սմ) եղել է կրակի մեջ, որի հետքերը պահպանվել են իրանից շուրթ հատվածում, ունի կարկատանի համար արված անցքեր, իրանի վրա օրգանական մնացորդներ են՝ սև կետերի ձևով: Մյուս կարասը (թիվ 183) ևս ձգված իրան ունի: Կարասի իրանը բաժանված է լայնակի (մոտ 20սմ) ժապավենների, իսկ ուսերի և շուրթերի հատվածներն ուղղակի բեկորային են: Նստուկը բացակայում է (բարձր՝ մոտ 75սմ, իրանը՝ 46սմ, վիզը՝ 28սմ, բերանը՝ 30սմ): Թաղումը կատարվել է կարասի բեկորներով նավածև շարվածքի վրա:

Թիվ 43ա թաղման կարասը դեղնադարչնագույն, խոշորահատիկ, ավազախառն կավից է, ձեռածեփ և վատ թրծված: Թերի է, պահպանվել է շուրթից իրան լայն հատվածը: Իրանը երկար է, ունի թեթև անցումով ձևավորված վիզ և թեթևակի ճկումով ավարտվող լայն բերան: Պահպանված մասի բարձր.՝ 50սմ է, իրանի տրամ.՝ 37սմ, վզի տրամ.՝ 25սմ բերանի տրամ.՝ 31սմ: Թիվ 43գ թաղման կարասն ավազախառն կավից է, նույնպես ձեռածեփ է և քիչ անհամաչափ (բարձր.՝ 43սմ, իրանի տրամ.՝ 43սմ, մատուկինը՝ 22սմ, վիզը՝ 22սմ, բերանը՝ 28սմ): Կարասն ունի միջանցիկ անցքով տափակ մատուկ, ոչ շատ փքուն իրան, կարճ վիզ, լայն, քիչ ձվածիր բերան և բարակ, անկանոն եզրերով ետ ճկված շուրթեր:

Թիվ 39 դամբարանի կարասը դեղնավուն մանրահատիկ կավից է, ունի փոքր մատուկ, փքուն իրան, կլորավուն ուսեր, որը և կարասի վերին մասին գնդաձևություն է տալիս: Վիզը կարճ է, շուրթն աստիճանաբար լայնանում է և ետ ճկվում: Վատ թրծելու արդյունքում իրանի

վրա դեղինի և կարմիրի երանգներ են (բարձր.՝ 61սմ, իրանը՝ 50սմ, վիզը՝ 18 սմ, մատուկը՝ 21, 5սմ) (տախտակ VIII, նկ. 5):

Թիվ 28 դամբարանի կարասը ամբողջացող վերջին անոթն է: Այն դեղնավուն ավազախառն կավից է, ձեռածեփ, կոպիտ է և անհամաչափ թրծված: Նստուկից իրան անցումը կտրուկ է: Ուսերը բարձր են, վիզը՝ կարճ, շուրթերը՝ հաստ և ետ ճկված (տախտակ VIII, նկ. 4): Կարասը նախապես օգտագործված է տնտեսության մեջ, ճաքճքված է, ունի միջին չափեր (բարձր.՝ 49սմ, հիմքը՝ 13սմ, իրանը՝ 49սմ, բերանը՝ 31սմ):

Մանկական թաղումների համար օգտագործել են ավելի փոքր, անկանթ անոթներ: Թիվ 38 կարասային թաղման անոթ ծառայել է ուղղահայաց դիրքով դրված լավ հունցված, վարդագույն մանրահատիկ կավից ձեռածեփ, իրանի, բերանի և շուրթերի զգալի անհամաչափություններով մի կճում: Ամանն ունի տափակ մատուկ, գնդաձև իրան, կարճ վիզ, լայն բերան և ետ ճկված շուրթեր (բարձր.՝ 27սմ, մատուկը՝ 13, 5սմ, բերանը՝ 24, 5սմ): Իսկ իրանի մի կողմում կրակի հետքերը ենթադրում են, որ անոթը պառկած դիրքով եղել է կրակի մեջ:

Թիվ 206 մանկական թաղումը նույնպես կատարված է փքուն իրանով, կարճ վզով, լայն բերանով և ետ ճկված շուրթով կճումի մեջ (բարձր.՝ 28սմ, մատուկի տրամ.՝ 14սմ, իրանի տրամ.՝ 30սմ, վզի տրամ.՝ 18, 5սմ, բերանը՝ 22, 8սմ): Նախապես տնտեսության մեջ օգտագործված անոթը (իրանի վրա մրի հետքեր են) ձեռածեփ է, բերանը քիչ անկանոն շրջանի ձև ունի: Ամանի մեջ պահպանվել են օրգանական մնացորդներ:

Թիվ 209 դամբարանի թաղման անոթը դեղնակարմրավուն, փայլեցման ընդգծված հետքերով կճում է (բարձր.՝ 36սմ, իրանը՝ 30սմ, բերանը՝ 26սմ, մատուկը՝ 14, 5սմ): Նստուկը տափակ է, իրանը՝ քիչ լայնացող: Իրանից վիզ անցումը կարճ է, բերանը՝ լայն, շուրթը՝ քիչ ետ ճկված, մի կողմում ուսից շուրթ հատվածը կտրված է: Նստուկի կենտրոնում միջանցիկ անցք է: Ամանը պառկած դիրքով եղել է կրակի մեջ:

Ուղղահայաց դիրքով դրված մանկական կարասային թաղման մեկ այլ անոթ (թիվ 36)

պատրաստված է դեղնավուն, ավազախառն կավից, ունի տափակ նստուկ, որն ամբողջությամբ քայքայված է (բարձր.՝ 41սմ, իրանի տրամ.՝ 37սմ, նստուկի տրամ.՝ 15սմ): Իրանը թեքությամբ կտրուկ բարձրանում է դեպի ուտերը և շատ կարճ անցումով ձևավորում վզից շուրթ հատվածը: Անոթը նախապես տնտեսության մեջ օգտագործված է եղել և արդեն կտրված վիճակում (շուրթը թերի է) վերածվել է թաղման անոթի:

Թաղման նպատակով օգտագործված բեկորային անոթները (թիվ 40, 58, 123, 124) կրկնում են կարասների ձևերը (թիվ 40 դամբ., տախտակ VIII, նկ. 3): Դրանք միջին (40-50սմ) բարձրությամբ, հարթ նստուկով, փքուն իրանով, լայն բերանով, ետ ճկված շուրթով, իրարից քիչ տարբեր ամաններ են:

Ելնելով չափերից՝ Բենիամինի թաղման անոթները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբում ձգված իրանով կարասներն են, որոնք օգտագործված են, երբեմն նաև՝ վերականգնված: Երկրորդ խմբում մանկական թաղման անոթներն են, որոնք փոքր չափերի, ամենօրյա օգտագործման ամաններ են՝ հաճախ մրի հետքերով:

Բենիամինի թաղման անոթների քննությունը ցույց է տալիս, որ պատրաստված են տեղական, խոշորահատիկ ավազախառն կավից, և, ունենալով ձևերի և համաչափությունների ընդհանրություններ, այնուամենայնիվ տարբեր են: Զննարկվող կարասները իրենց զուգահեռներն ունեն չայաստանի համաժամանակյա հուշարձաններում: Նման կարասներ հայտնի են Արտաշատից,<sup>1</sup> Արմավիրից, Գառնիից:<sup>2</sup>

Թասերը գտնվեցին Բենիամինից և Կառնուտից: Բենիամինի թիվ 195 դամբարանից գտնված թասը բաց դարչնագույն է, ձեռածեփ, ունի փոքրիկ նստուկ, ձագարածև վեր բարձրացող կողեր, որոնք շուրթերի մոտ դառնում են ուղիղ: Շուրթի եզրագիծը քիչ անկանոն է, և ներսից՝ խորակոս գծով շրջագծված: Թասը փոքր է. բարձր.՝ 4,5սմ, նստուկը՝ 3, 5սմ, բերանը՝

11սմ (տախտակ VIII, նկ. 6): Ամանի մեջ պահպանվել են օրգանական մնացորդներ, իսկ նստուկի մի անկյունում կրակի հետք է: Թասը թվագրվում է մ. թ. ա.1-ին դարով:

Բենիամինից գտնված երկրորդ թասիկը (թիվ 127) դեղնավուն կավից է, լայն, տափակ նստուկով, ցածր պատերով, շուրթերը՝ քիչ ներս հակված: Թասի մեջ՝ շուրթի տակ, խորակոս գծանախշ է արված, որն ավելի է ընդգծում շուրթի ներս հակված լինելը: Թասն ամբողջությամբ, բացի նստուկի արտաքին երեսից, կարմիր անգորբապատ է (տախտակ VIII, նկ. 7): Թվագրվում է մ. թ. 1-2-րդ դարերով: Թասերի նման օրինակներ հայտնի են Գառնիից:<sup>3</sup>

Բենիամինի թիվ 209 դամբարանից գտնված կիսագնդաձև թասը դեղնադարչնագույն կավից է: Ուղիղ, տեղ-տեղ կտրված շուրթերն արտաքուստ մոտ 2, 5սմ, իսկ ներսից 4-5սմ լայնությամբ անգորբապատ ժայավեցնով են երիզված: Թասի մեջ օրգանական մնացորդների հետքեր կան: Ամանը մի կողմում սևացած է, որ պատկած դիրքով կրակի մեջ լինելու հետևանք է: Թասը (տախտակ VIII, նկ. 8) փոքր է (բարձր.՝ 8սմ, բերանը՝ 14սմ): Բենիամինի թիվ 183 դամբարանում, զանգից քիչ բարձր, գտնվեց տափակ նստուկով, ներս հակված շուրթով, տրամագծով կիսված մի թաս՝ բերանքսիվայր դիրքով (տախտակ IX, նկ. 1): Նույն դամբարանից գտնվեց նաև (տախտակ IX, նկ. 2) դեղնավուն ավազախառն կավից կիսագնդաձև մի թաս (բարձր.՝ 8սմ, բերանը՝ 16սմ): Նստուկի կենտրոնում՝ արտաքինից, 0, 5սմ խորությամբ փոսիկ է արված: Շուրթը քիչ ներս է հակված, և ներսից քիչ զանգվածեղ շրթերիզն ավարտվում է ուղիղ կտրվածքով: Շրթերի երկու երեսով էլ անցնում է կարմիր անգորբապատ ժայավեցն, որն աստառի վրա ավելի լայն է: Թասը պատկած դիրքով եղել է կրակի մեջ. մի կողմում՝ նստուկից մինչև շուրթը, պահպանվել են կրակի հետքեր:

Կառնուտի թասը (բարձր.՝ 9,5սմ, բերանի տրամ.՝ 15սմ, նստուկի տրամ.՝ 2,3սմ) ձեռածեփ է, ունի տափակ փոքր նստուկ, բարակ և ուղիղ կտրված շուրթեր (տախտակ IX, նկ. 3): Թասի

<sup>1</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1981, էջ 95:

<sup>2</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., նկ. 7, 8, 9:

<sup>3</sup> Նույն տեղում, նկ.15/2:

շուրթի տակով անցնում է կարմիր երիզ, որի տակ կողքկողքի, շարունակական կիսաշրջաններից կազմված երկշարք զարդ է: Թասի իրանն օղակում է կարմիր երիզը, իսկ միջնամասում օձագալար է արված: Թասը թերի է: Արդյոք օձագալարն ընդհատվել է, կամ օղակել է ողջ իրանը, հստակ չէ: Պատկած դիրքով կրակի մեջ լինելու արդյունքում թասի մի կողմը ներսից և դրսից սևացած է:

Թեև կիսագնդաձև թասերի ձևի զարգացումը երկար պատմություն ունի, սակայն առավել տարածում է ստանում հելլենիստական դարաշրջանում և ձևն ընդգրկում է ինչպես խեցեղեն անոթները, այնպես էլ մետաղյա իրերը և ապակին:<sup>4</sup> Կիսագնդաձև թասերը գոյատևում են մինչև մ. թ. 1-ին դարեր:

Այսօրինակ թասեր հայտնի են բազմաթիվ հուշարձաններից: Վրաստանից գտնված մնացորդնակ թասերը թվագրվում են մ. թ. ա. 3-2-րդ դարերով:<sup>5</sup> Նման թասեր հայտնի են Արմավիրից, Արտաշատից, Գառնիից:<sup>6</sup> Բենիամինի բնակավայրից հայտնի են նույն թասերի բազմաբնույթ նախազարդումով գունազարդ օրինակները:<sup>7</sup> Աղերսներ ունենալով այլ հնավայրերի գտածոների հետ՝ Բենիամինի դամբարաններից հայտնաբերված թասերը նախազարդ չեն, երևույթ, որ ավելի բնորոշ է մ. թ. ա. 1-ին դարին:

Գավաթներն երկուսն են, գտնվեցին Բենիամինից և Վարդգադից: Բենիամինի (թիվ 40 դամբ.) գավաթը (տախտակ IX, նկ.4) դեղնավուն, մանրահատիկ կավից է՝ վզից մինչև նստուկը կարմիր անգորբապատ (բարձր.՝ 10սմ, նստուկի տրամ.՝ 7սմ, բերանինը՝ 9սմ): Գավաթն ունի լայն, տափակ նստուկ, տանձաձև իրան: Վիզը կարճ է, շատ բարակ և ետ ճկված, մի կողմում պահպանվել է ունկի հիմքը: Ամանը պառկած դիրքով եղել է կրակի մեջ և մի կողմը՝

նստուկից շուրթը, սևացած է: Գավաթը զուգահեռներ ունի Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձաններում<sup>8</sup> և թվագրվում է մ. թ. 1-2-րդ դարերով: Վարդգադի (թիվ 6 դամբ.) գտածոն (տախտակ IX, նկ. 5) դեղնավուն մանրահատիկ կավից է, ունի տափակ նստուկ, լայն բերան և իրանը վզին միացնող մեկ ունկ: Գավաթը ձևով առնչվում է մ.թ.ա.1-ին և մ. թ.1-ին դարերի անոթներին, իսկ զուգահեռը Գառնիի նյութերում է:<sup>9</sup>

Խեցեղենի մեջ կան նաև սափորներ: Առանձնանում է թիվ 183 դամբարանից գտնված սափորը, որը միակ սև, բարձրորակ անոթն է (տախտակ IX, նկ. 6): Նստուկը տափակ է, իրանը՝ գնդաձև, վիզը՝ քիչ ձգված, շուրթն իրանին է միանում շուրթից բարձր դիրք ունեցող մեկ աղեղնաձև ունկով (բարձր.՝ 16սմ, իրանը՝ 10սմ, նստուկը՝ 7,2սմ, բերանը՝ 6,5սմ): Անոթի վզից մինչև նստուկը երկայնակի անկանոն գծերով փայլանախշեր են: Մ.թ.ա. 1-ին դ. թվագրվող անոթի թեթևակի փայլեցումը հելլենիստական ավանդույթների աստիճանական նվազման հետևանք է:

Թիվ 195 դամբարանից գտնված ձեռածեփ մեկ այլ սափոր (տախտակ X, նկ. 1), ի տարբերություն նախորդի, դեղնադարչնագույն ավազախառն կավից է: Պատերը հաստ են, նստուկն՝ առավել: Սափորն ունի տափակ նստուկ, ձգված իրան, կարճ վիզ, ուղիղ, քիչ լայնացող բերան (բարձր.՝ 13սմ, իրանը՝ 8, 5սմ, նստուկը՝ 6, 5սմ, բերանը՝ 5սմ): Շուրթն իրանին է միացել մեկ ունկով, որի հիմքերն են պահպանվել: Իրանի վրա կրակի հետք է, որը պառկած դիրքով կրակի մեջ լինելու հետևանք է: Անոթի շուրթի և վզի վրա, ինչպես նաև աստառի վրա օրգանական մնացորդներ են: Սափորի ձևը բնորոշ է հելլենիստական ժամանակաշրջանին և թվագրվում է մ. թ. ա. 1-ին դարով:

Սափորի մեկ այլ տարբերակ է թիվ 43գ դամբարանի գտածոն՝ պատրաստված բաց դեղնավուն մանրահատիկ կավից և կարմիր անգորբապատ է: Անոթն ունի տափակ նստուկ, գնդաձև իրան, երկար վիզ, ուղիղ շուրթ (տախտակ X, նկ. 2): Իրանը շուրթին է միանում

<sup>4</sup> Г. Т и р а ц я н, 1988, с. 120:

<sup>5</sup> Д. Х а х у т а й ш в и л и, Уплисцихе II, Тбилиси, 1970, табл. XV /1.

<sup>6</sup> Б. А р а к е л я н, 1982, աղ. 4ա:

<sup>7</sup> Հ. Խ ա չ ա տ ը յ ա ն, Բենիամինի հելլենիստական բնակավայրը, ՀՀ 1989-1990թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզներ, Եր., 1991, էջ 91:

<sup>8</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., աղ. VIII /4.

<sup>9</sup> Г. Т и р а ц я н, 1988, նկ. 45:

շուրթից քիչ բարձր դիրք ունեցող աղեղնաձև ունկով: Սափորի վիզը ուղղանկյուն է (բարձր.՝ 8սմ, իրանը՝ 6, 5սմ, մատուկը՝ 4սմ, բերանի ուղղանկյուն բացվածքը՝ 3x2սմ): Անոթը պառկած դիրքով եղել է կրակի մեջ, որի արդյունքում իրանի մի մասը սևացած է: Սափորի վզի ձևավորման այսօրինակ գուգահեռներ մեզ հայտնի չեն: Թիվ 43գ դամբարանի անոթը կարող է վերաբերել մ.թ. 1-ին դարին և դասվում է քննարկվող խեցեղենի երկրորդ խմբին, որն առանձնանում է պատրաստման ու թրծման որակով:

Կառնուտից գտնված դեղնավուն, մանրահատիկ կավից սափորի (բարձր.՝ 24, 3սմ, տրամ.՝ 19,3սմ, բերանը՝ 8սմ) իրանը քիչ թեք է, մատուկը՝ տափակ (տախտակ X, նկ. 3): Բարակ և բարձր վիզն ավարտվում է կլորավուն, քիչ ետ ճկված շուրթով: Շուրթի ներսից կարմրավուն լայն երիզ է անցնում: Կարմրավուն է ներկված եղել նաև տափակ և լայն ունկի արտաքին կողմը: Շուրթի տակից աղեղնաձև ունկը միանում է իրանին: Իրանը քիչ թեք է. վզի տակից խորակոս մի գիծ է անցնում, այնուհետև երկու գուգահեռ գծերով սահմանափակված 3սմ լայնությամբ ժապավեն, որը նախշված է մուգ շագանակագույն, իրար խաչվող թեք գծերով ստացված ցանցով: Ունկի հիմքից սկսվում է մուգ և բաց շագանակագույն, իրար միացող աղեղների շարունակական երեք շարք: Իրանի կեսից ներքև ութ անհամաչափ, կլորավուն ծայրը դեպի վեր, տերևանման նախշեր են, որոնք ընդմիջվում են իրարից հեռացող երկու աղեղների մեջ բարակ գծերով արված ցանցկեն նախշով: Ինչպես դամբարանից գտնված մյուս նյութերը, սափորը ևս կտրված է, և մակերեսին յուղի հետքեր են:

Չարդանախշման ոճով Կառնուտի սափորն աղերսներ ունի Գառնիի<sup>10</sup> և Արմավիրի<sup>11</sup> գունազարդ խեցեղենի հետ: Նշված խեցեղենի հետ Կառնուտի անոթի ընդհանրությունն արտահայտված է մակերեսի մի քանի գոտիների և՛ գունային լուծումներում (դեղնավուն դաշտ,

շագանակագույնի և կարմրավունի երանգներ), և՛ նախշաձևերում (թեք գծերի հատումով ստացված ցանցկեն նախշ, մեծ և փոքր կիսաշրջանների հորիզոնական ուլունքաշար, կլորացված գազաթով հավասարասրուն եռանկյունիների շարք):

Հելլենիստական ժամանակաշրջանում լայնորեն օգտագործվում է հորիզոնական ժապավենների մեջ արված երկրաչափականի և բուսանախշերի համադրումը:

Այս խեցեղենը լայն տարածում ուներ Մերձավոր Արևելքի երկրներում՝ Իրանում, Սիջագետքում և Փոքր Ասիայում, հատկապես Փռուզիայում, Էգեյան ծովի կղզիներում:<sup>12</sup> Հայաստանին հարևան երկրներում խեցեղենի նախշագարդումը զգալի զարգացման հասավ ոչ միայն մ.թ.ա.VIդ. նախորդող ժամանակաշրջանում, այլ նաև՝ աքեմենյան և հելլենիստական գեղարվեստական ըմբռումներին համապատասխան:<sup>13</sup> Բնականաբար հելլենիստական Արևելքում խեցեղենի պատկերազարդման նոր գեղարվեստական լուծումներից գերծ չմնաց նաև Հայաստանը: Աքեմենյան պետության մեջ մտնող Հայաստանում, խարսխվելով սեփական մշակույթի դարավոր ավանդույթների վրա, զարգացավ և տարածում ստացավ հելլենիստական գունազարդ խեցեղենը:

Կառնուտից գտնված կրատերիսկը միակն է քննարկվող նյութերում (տախտակ X, նկ. 4): Պատրաստված է քիչ ավազախառն, մանրահատիկ կավից, անհամաչափ է թրծված, որով էլ պայմանավորված է գուներանգների տարբերությունը: Կրատերիսկն ունի զանգակաձև իրան, որը նստած է գլանաձև, հիմքը դեպի դուրս լայնացող բարձր ոտքի վրա (բերանի տրամ.՝ 18, բարձր.՝ 15սմ, ոտքի տրամ.՝ 5սմ): Մակերեսն անհարթ է, ուղիղ կտրված շուրթերը ևս անկանոն են և քիչ ալիքաձև: Իրանը, դեպի ունկերը լայնանալով, այնուհետև աննշան ներս սեղմվելով, ավարտվում է ուղիղ կտրված և նույնպես աննշան ներս հակված շուրթերով: Իրանի հակադիր մասերում, երկու աղեղնաձև, վերին մա-

<sup>10</sup> Б. А р а к е л я н, Очерки по истории искусства Древней Армении (VI в. до н.э.- III в. н. э.), Ер., 1976, табл.10.

<sup>11</sup> Նույն տեղում, տախտ. VI և VII:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 72:

<sup>13</sup> Նույնը:

սում դեպի իրանը թեքությամբ կտրված ունկեր են: Մակերեսին և՛ դրսից, և՛ ներսից յուղի սև բծեր են: Կրատերիսկը ներսից և դրսից զարդանախշված է: Պատկերներն արված են դեղնավուն դաշտի վրա: Շուրթի մի փոքր մաս առանձնանում է դեպի ներս և դուրս լայնացող, շուրթից բարձր դիրք ունեցող, 1սմ լայնությամբ կտրված հատվածով: Շրթեզրի այս հատվածի լայնացող և կավի հաստ զանգվածով հիմքը, ինչպես նաև անոթի ներսում, նույն հատվածից սկսվող կարմիրով արված թռչունի պոչ պատկերող թեք գծիկները հուշում են, որ անոթի շուրթին եղել է թռչնի կավե արձանիկ: Եթե այս հատվածում հստակ է թռչնի պոչի պատկերը, ապա շրթերիզից սկսվող իրար հանդիպակաց կողերին դրսից արված իրար զուգահեռ չորսական գծիկները ենթադրում են, որ վերջիններս հավանաբար նույնպես թռչուն են խորհրդանշել: Կրատերիսկի երեսի և աստառի զարդանախշումը ներկայացված է երեքական հորիզոնով: Արտաքին երեսին կարմիր շրթերիզի տակից անցնում են երկու ունկերի միջև ընկած հատվածում գալարվող, իսկ դեպի ունկերը աստիճանաբար ուղղվող, ապա բարձր կորագծով ունկերի վերին մասի կարմիրին միացող գծերը: Պատկերը կրկնվում է նաև անոթի մյուս կողմում: Երկրորդ հորիզոնը ներկայացված է օձագալարով, որի վրա 1սմ տրամագծով կարմիր կետ է: Արդյոք վերջինս խոտանի արդյունք է, թե՞ պատկերված են երկու օձեր, որոնցից մեկի պոչը և մյուսի կծիկ դարձած մարմինն են միացած: Կրատերիսկի ոտքից քիչ բարձր հատվածն օղակված է կարմիր ժապավենով:

Անոթի աստառի վրա շրթերիզի կարմիրին միանում են ուլունքաշարի ձևով իրար հաջորդող, անհամաչափ կիսաշրջանների աղեղների ծայրերը: Երկրորդ հորիզոնը անոթի իրանն օղակող օձագալարն է, որի սկիզբն ու վերջն անհայտ են: Երրորդ հորիզոնի վրա իրանի թեք կողին խոյի պատկեր է: Վերջինս արված է շտրիխային եղանակով, և նկարագրող վարպետը կարմիրի հաստ և հատու գծերով ստացել է երկարավուն իրանը, քիչ դեպի աջ թեքված, երկար ոտքերը և լավ ետ ճկված, եր-

կար և կոր եղջյուրները: Անոթը գտնվել է բեկորային վիճակում, որոշ մասերը բացակայում են, և հենց այս մասում էլ պատկերների ամբողջականությունը մասամբ կորսված է: Ի տարբերություն խոյի և թռչնի, օձը պատկերված է անոթի և՛ դրսից և՛ ներսից:

Կրատերիսկի զուգահեռը հայտնի է Արմավիրից:<sup>14</sup> Ունենալով նույն ձևը, Արմավիրի գտածոյի պատկերագարդումը սահմանափակվում է շրթերիզի կարմիրով ու օձագալարներով:

Հայաստանյան երկու գտածոները հիշեցնում են անտիկ կրատերիսկները, սակայն, ինչպես նկատել է Գ. Տիրացյանը. «անհնար է որոշել մ. թ. ա. 1-ին դարով թվագրվող նշված անոթների և անտիկ կրատերիսկների, այդ թվում նաև զանգակի ձև ունեցողների հետ կապը, որոնք բացահայտում են որոշ նմանություն, իսկ անոթի համամասնությունները, անտիկ կանֆարների և սկիֆոսների վրա հանդիպող ոչ սովորական բռնակները կասկած չեն հարուցում, որ այդ ձևը ստեղծվել է հունական կենտրոններից հեռու և հայկական մշակույթ է մտել հունական կենտրոններից՝ փոյուզիական ազդեցությամբ, քանի որ Փռուզիայի վաղ կրատերիսկներն ունեն մման բռնակներ, իսկ Արմավիրի կրատերիսկի իրանի նախշագարդումը մոտ է գեղարվեստական նույն ձևերի սկզբունքների»:<sup>15</sup>

Անոթը հավանաբար օգտագործվել է զոհաբերության համար և ըստ ծիսակարգի՝ կտրվել: Անոթի ներմուծված ձևի վրա տեղական նախշագարդումը ցույց է տալիս, որ ոչ թե սոսկ կրկնօրինակում է կատարվել, այլ նոր ձևի մեջ ներկայացվել են սեփական, ավանդական պաշտամունքային տարրերը: Անոթի որակը (մակերեսի անհարթություն, անկանոն շուրթեր, շրթերիզով անցնող կարմիրի անհամաչափություն) և պատկերագրման եղանակը բերում են այն համոզման, որ Կառնուտի կրատերիսկը Հայաստանի խեցեգործական կենտրոններից մեկի արտադրանք է: Անոթի զարդանախշումն արված է երեք կենդանիների՝ թռչնի, խոյի, օձի պատկերներով, որոնք ըստ հնդեվրոպական դի-

<sup>14</sup> Г. Т и р а ц я н, 1988, с. 122.

<sup>15</sup> Նույնը:

ցարանության, ներկայացնում են վերին (երկինք), միջին (երկիր) և ստորին (ստորերկրայք) աշխարհների կենդանիներին:

Օձի հնագույն պատկերները գալիս են ժայռապատկերներից,<sup>16</sup> իմաստները խտացված են վիշապ-կոթողներում,<sup>17</sup> բրոնզեդարյան խեցեղենի զարդանախշերում,<sup>18</sup> զարդերի՝ հատկապես ապարանջանների և՛ ձևերում, և՛ զարդանախշման մեջ:<sup>19</sup>

Խոյի կամ նրա եղջյուրի ոճավորված պատկերները նույնպես, սկսած ժայռապատկերներից,<sup>20</sup> տիրապետող են հայ մշակույթում և պահպանվել են նաև միջնադարում: Խոյի պաշտամունքն արտացոլված է ինչպես բրոնզի դարաշրջանի մշակույթի զարգացման փուլերում,<sup>21</sup>

այնպես էլ անտիկ ժամանակաշրջանում<sup>22</sup> և միջնադարում:<sup>23</sup>

Թռչունների հնագույն պատկերները և ժայռապատկերներում են:<sup>24</sup> Հայաստանի տարածամասնակյա հուշարձաններից բազմաթիվ են թռչունների բրոնզե արձանիկները, շրթաններից կախված թռչունները կամ ուղղակի թռչնի պատկերները:<sup>25</sup> Թռչունը զարդանախշման թեմա է հելլենիստական և անտիկ ժամանակաշրջաններում:<sup>26</sup> Հնդեվրոպական դիցաբանության մեջ արծվին, խոյին և օձին հատկացված ծիսական դերերով էլ պայմանավորված է կրատերիսկի պատկերազարդման բովանդակությունը, որտեղ միահյուսվում են կյանքի, մահվան և վերածննդի հետ կապված առասպելաբանական պատկերացումները:

Քննարկվող դամբարաններից հայտնաբերված խեցեղենը, չնայած փոքր քանակին, բազմազան է ձևերի մեջ: Բաց գույնի ավազախառն կավից, ձեռքով պատրաստված մի պուլիկ գտնվեց թիվ 127 դամբարանից: Մակերեսը բաց

<sup>16</sup> Գ. Կ ա ռ ա խ ա ն յ ա ն, Պ. Ս ա Ֆ յ ա ն, Սյունիքի ժայռապատկերները, Եր., 1970, տախտ. 9, նկ. 2, տախտ. 21, նկ. 3, տախտ. 100, նկ. 5: Հ. Մարտիրոսյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1981, տախտ. 81, նկ. 3, տախտ. 73, նկ. 2, տախտ. 5, նկ. 4:

<sup>17</sup> Н. М а р р и, Я. С м и р н о в, Вышапы, Труды Гос. Акад. Истории материальной культуры, т. I, 1931: Նույնի՝ Les Vichaps, Leningrad, 1931: Է. Խանգաղյան, «Լճաշենի վիշապը» Հին Հայաստանի մշակույթը, XIII, նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Եր., 2005, էջ 86: Լ. Բարսեղյան, Ժ. Խաչատրյան, Ա. Քալանթարյան, Նորահայտ պաշտամունքային կոթողներ Գեղամա լեռներից, Հայկ. ՄՍՀ ԳԱ «Տեղեկագիր հաս. գիտ.», 1964, թիվ 8, էջ 85-88: Б. Пиотровский, Вышапы. Каменные статуи в горах Армении. Издание Армянского филиала Академии Наук СССР, А-д, 1930. Հ. Մարտիրոսյան, Գիտությունը ծնվում է նախնադարում, Եր., 1978, էջ 111:

<sup>18</sup> Հ. Ի ս ռ ա յ ե լ յ ա ն, Պաշտամունքն ու հավատալիքը ու շրջանադարյան Հայաստանում, Եր., 1973: Т. Хачатрян, Древняя культура Ширака, Ер., 1975; А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964.

<sup>19</sup> Н. А к о п я н, Художественный металл средневековой Армении, X-XIV в. автореферат канд. дис. на соискании уч. степ. канд. ист. наук, Ер., 1977, с. 18; Ժ. Խաչատրյան, 1981, էջ 75: С. Казиев, 1960, с. 25; А. Мнацаканян, Г. Тирацян, Новые данные о материальной культуре древней Армении, ИАН Арм. ССР н. 8, 1961, табл. 2.

<sup>20</sup> Գ. Կ ա ռ ա խ ա ն յ ա ն, Պ. Ս ա Ֆ յ ա ն, 1970, տախտ. 1, 3, 6-15...: Հ. Մարտիրոսյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1981, նկ. 3-10, 18-20, տախտ. IV/1-15՝ VII, աղյուսակներ 1, 5, 8, 10-34:

<sup>21</sup> Т. Х а ч а т р я н, Древняя культура Ширака, Ер., 1975, с. 71-72, рис. 39-41; Ս. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Եր., 1967, էջ 175, նկ. 6: Է. Խանգաղյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Եր., 1967, աղ. XVI: Նույնի՝ 1973, էջ 128., նկ. 126: Նույնի՝ Խոյի պաշտամունքը, Հին Հայաստանի մշակույթը, XII, Եր., 2002, էջ 3: А. Петросян, Раскопки Кети и Воскеаска, Ер., 1989. ( табл. 33/); Հ. Խաչատրյան, Հին հայկական օրացույցի մասին, ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտա-

կան աշխատություններ», հ. I, Գյումրի, 1998, էջ 14-16: Լ. Եզանյան, Մեծ Մեպասարի պեղումները, մ.թ.ա. III հազարամյակի բնակավայրը (2004-2005թթ. պեղումների նախնական արդյունքները), ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. VIII, Գյումրի, 2005, տախտ. VI, նկ. 5:

<sup>22</sup> Հ. Իսրայելյան, 1973, էջ 38, նկ. 11:

<sup>23</sup> Լ. Ե գ ա ն յ ա ն, Կավից պայտածև իրեր Անիի արվարձանից, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XI, Գյումրի, 2008, էջ 100:

<sup>24</sup> Հ. Մ ա ռ ա ի ը յ ա ն, Հայաստանի հնագիտական հուշարձանները, Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1981, աղ. 62:

<sup>25</sup> Т. Х а ч а т р я н, Артикский некрополь, Ер., 1979, с. 119, п-15, 34; Ս. Եսայան, Կառամարտիկ գործասերը և հեծելագորը Հին Հայաստանում, Եր., 1994, էջ 54: К. Кушнарева, Древнейшие памятники Двина, Ер., 1977, с. 12; Arménie..., էջ 92, նկ. 53, էջ 100, նկ. 72ա,բ,գ: Ս. Գևեջյան, 1981, նկ. 8: Tresors de l' Arménie ancienne, Paris, 1996, p. 90, f. 50: Հ. Մարտիրոսյան, 1981, նկ. 37,38,39: Ս. Եսայան, Կառամարտիկ գործասերը և հեծելագորը Հին Հայաստանում, Եր., 1994, էջ 54:

<sup>26</sup> Stü' Tresors de l' Arménie ancienne, Paris, 1996, p.236, f. 240, 241; Б. Аракелян, 1976, գում. տախտ. II; Б. Н. Аракелян, Очерки по истории искусства Древней Армении (VI в. до н.э.- III в. н. э.), Ер., 1976, табл. XVIII: Dans les montagnes d' Arménie, Rouen, France, 2007, p. 194, f. 188; Ф. Тер – Мартиросов, Памятник классической античности Армении, ԲԵՀ, թիվ 3, 1993, էջ 65: Ժ. Խաչատրյան, 1965, էջ 273, նկ. 1: Նույնի՝ Գիտություններ Հայաստանի հելլենիստական շրջանի գիտականության մասին, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններ», 1974, թիվ 7, էջ 100: Բ. Առաքելյան, 1976, էջ 33: Կ. Կաֆադարյան, 1982, էջ 134: Ս. Գաբրիելյան, նշվ. աշխ., աղ. I, նկ. 13:

դեղնավուն է՝ տեղ-տեղ վարդագույնի երանգներով (տախտակ X, նկ. 5), վատ հունցված է և վատ թրծված: Պուլիկը գնդաձև իրան ունի, թեթև անցումով սեղմված կարճ վիզ, տեղ-տեղ վնասված, բարակ և ետ ճկված շուրթեր: Ամանը փոքր է (բարձր.՝ 10սմ, ցատուկը՝ 6, 5սմ, իրանը՝ 8,5սմ, բերանը՝ 6, 2սմ, պատերի հաստությունը՝ 1,2սմ): Անոթի ձևը գալիս է վաղ հայկական ժամանակաշրջանից և, փոփոխություններ չկրելով, շարունակվում է նաև հետագայում: Այն հիշեցնում է մ. թ. ա. 2-մ. թ. ա. 1-ին դարերի խոհանոցային տարբեր չափերի ամանները, որոնք մեծ թվով գտնվել են Գառնիից, Արտաշատից և Արմավիրից:<sup>27</sup> Բենիամինի անոթն ավելի ուշ է և թվագրվում է մ. թ. 1-ին դարով:

Խեցեղենի մեջ կա երկու անոթ, որոնք գտնվեցին թիվ 28 և թիվ 150 դամբարաններից: Մրանք ծորակավոր թասեր են՝ լյութերիաներ, որոնք բերանքսիվայր դիրքով ծածկել են թաղման կարասների բերանը: Առաջինը (թիվ 28 դամբ.) դեղնագորշ, տափակ ցատուկով, փքուն իրանով, բարձր և ներս հակված շուրթով անոթ է՝ ուղիղ կտրված շրթերիզով (տախտակ X, նկ. 6): Անոթի (բարձր.՝ 15 սմ, ցատուկը՝ 14 սմ, բերանը՝ 30 սմ) շուրթի տակ լայնացող բերանով ծորակն է (երկ.՝ 3սմ,բացվածքի տրամ.՝ 4սմ):Երկրորդը (թիվ150 դամբ.) դեղնավուն կավից, վատ թրծված, տափակ ցատուկով, դեպի վեր աստիճանաբար լայնացող կողերով, ներս հակված շուրթով աման է (տախտակ XI, նկ.1): Շուրթից 1սմ խորությամբ հորիզոնական կտրվածքով լայն ծորակն է: Ամանը (բարձր.՝ 22սմ, ցատուկը՝ 14սմ, իրանը՝ 42սմ, բերանը՝ 39սմ, ծորակի երկ.՝ 6սմ, տրամ.՝ 4սմ) իրանից շուրթ հատվածում թերի է: Այս անոթները գուգահեռներ ունեն Արտաշատում, Դվինում, Կարճաղբյուրում, Մոխրաբլուրում, Ջրառատում,<sup>28</sup> որոնք թվագրվում են 1-2-րդ դարերով, իսկ Շիրակավանի դամբարաններից գտնվածները՝ մ. թ. 2-3-րդ դարերով:<sup>29</sup> Բենիամինի լյութերիաները թվագրվում են մ. թ. 1-2-րդ դարերով:

<sup>27</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 35, աղ. XXII/1.

<sup>28</sup> Գ. Ք ն չ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 44:

<sup>29</sup> Ф. Т е р - М а р т и р о с о в, Г. К а р а х а н я н, նշվ. աշխ., էջ 27:

Հասարակ խեցեղենի մեջ կա բեկորների վերածված, ձեռածեփ մի անոթ (թիվ 40 դամբ.), որն ունի գլանաձև, կենտրոնում քիչ սեղմված իրան (տախտակ XI, նկ. 2): Բերանը և ցատուկը նույն լայնության են: Շուրթն ուղիղ է, շրթերիզը՝ քիչ անհամաչափ (բարձր.՝ 15 սմ, ցատուկի տրամ.՝ 14սմ, բերանիցը՝ 13,5սմ): Ամանի վրա կրակի հետքեր են: Մ. թ. ա. 1-մ. թ. 1-ին դարերի այս անոթի գուգահեռները Բենիամինի բնակավայրի նյութերում են:

Բենիամինի թիվ 105 դամբարանից գտնված քրեղանը ձեռածեփ է (տախտակ XI, նկ. 3)՝ դարչնագույնի և շագանակագույնի խառը երանգներով: Պատերը հաստ են և կոպիտ (բարձր.՝ 17սմ, ցատուկը՝ 15սմ է, իրանը՝ 34սմ, բերանը՝ 30, 5սմ): Նստուկը տափակ է, կողերն աստիճանական թեքությամբ բարձրանում են և, վերածվելով շուրթի, ներս հակվում: Իսկ աստառի վրա արված ակոսն ավելի է ընդգծում շուրթի ներս հակված լինելը: Ամանի մի կողմում պատկած դիրքով կրակի մեջ լինելու հետքեր են: Իրանի վրա մինչ թրծելը հորիզոնական և ուղղահայաց գծերի հատումով քսան (4x5) վանդակներ են արված: Քրեղանը կրկնում է ժամանակակից ձևերը, որոնք հանդիպում են բազմաթիվ հուշարձաններում: Հայտնի են Օշականից,<sup>30</sup> Արտաշատից:<sup>31</sup> Այսօրինակ քրեղանները, այդ թվում նաև Բենիամինի գտածոն, թվագրվում են մ. թ. 1-2-րդ դարերով:

Բենիամինի խեցեղենի մեջ կան երեք փոքրիկ կավանոթներ, որոնք ունեն փոքր ցատուկ, քիչ փքուն իրան և լայն բերան: Թիվ 157 սալարկղային թաղումից, գանգի աջ կողմում գտնված անոթը փոքր է (բարձր.՝ 4սմ, ցատուկը՝ 4սմ, իրանը՝ 4,5սմ, բերանը՝ 3,7սմ): Այն ձեռածեփ է, կոպիտ է և անհամաչափ (տախտակ XI, նկ. 5): Նմանատիպ մյուս երկու փոքր անոթները, որ գտնվելին թիվ 17 կարասային թաղումից (տախտակ XI, նկ. 4) և ավերված դամբարանից (տախտակ XII, նկ. 1), մոտավորապես նույն չափերն

<sup>30</sup> Ст. Е с а я н, А. К а л а н т а р я н, նշվ. աշխ., աղ. L/8.

<sup>31</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1981, նկ.10 /8.



ունեն: Երեք անոթներն էլ կարող են թվագրվել մ. թ. 1-2-րդ դարերով:

Շիրակի անտիկ դամբարանադաշտերից գտնված խեցեղենը դիտարկելիս հստակ տարբերակվում է երկու խումբ: Առաջինը դեղնավուն կավից, կոպիտ, ամենօրյա օգտագործման ձեռածեփ անոթներն են՝ հիմնականում կարասներ և կճուճներ: Մրանց մի մասը չունի որևէ նախաշագարդում, պատրաստված է ձեռքով, ավազախառն կավից է, վատ է թրծված, որի արդյունքում խառը երանգավորում է ստացել: Առաջին խմբում հարթ նստուկով, երկարավուն, քիչ տանձաձև իրանով, բարձր վզով և ուղիղ շուրթերով թաղման կարասներն են, որոնք նույնատիպ են և իրարից տարբերվում են բարձրությամբ և իրանի ու շրթերիզի լայնությամբ: Կարասների տարբերության այսպիսի դրսևորումները բնորոշ են անդրկովկասյան խեցեղենին և կապված են հնագույն ավանդույթների հետ:<sup>32</sup> Նույնպիսի տարբերակում ունեն նաև թաղման անոթ ծառայած մյուս անոթները, որոնք կարաս որակելու համար փոքր են, ունեն կճուճի չափեր, սակայն, ի տարբերություն կճուճների, անկանթ են: Չներով իրար մոտ անոթներ հանդիպում են դամբարանադաշտի ողջ տարածքում, և թաղման միանման կարասներ հանդիպում են ինչպես վաղ, այնպես էլ ավելի ուշ թաղումներում: Իսկ Բենիամինի կարասային թաղումները վերաբերում են մ. թ. ա. 1-ին-մ. թ. 1-ին դարերին:

Երկրորդ խմբում այն անոթներն են, որոնք պատված են բաց գույնի անգորով: Այս խմբի անոթների կավը, ի տարբերություն նախորդների, մաքուր է և լավ հունցված: Անոթներից մի քանիսը նաև փայլեցված են: Կան նաև ավելի բաց երանգով անոթներ՝ առավելապես գավաթներ կամ սավորներ, որոնք ունկով են կամ առանց ունկի: Անոթների մի մասը պատրաստված է դուրգով, մյուսները՝ ձեռքով:

Շիրակի մ.թ. առաջին դարերի խեցեղենի մեջ բավականին հստակ առանձնանում են կավանոթներ, որոնք տարբերվում են ավելի վաղ և ավելի ուշ օրինակներից:

Բենիամինի խեցեղենը հիմնականում այսպես կոչված խոհանոցային է և ամենատարբեր կիրառություն կարող էր ունենալ տնտեսության մեջ: Համեմատաբար փոքր ամանները հավանաբար ծառայել են ինչպես կերակուր պատրաստելու, այնպես էլ պահելու համար: Կանթավոր և անկանթ գավաթները կարող էին ծառայել ջրի, գինու կամ կաթի համար: Շատ փոքր անոթները կարող էին նախատեսված լինել անուշահոտ յուղերի կամ քսուկների համար:

Մեծ ու փոքր թասերը երկու տիպի են՝ դեղնավուն, անգորապատ, տափակ նստուկով ու թեքությամբ բարձրացող ցածր կողերով և կիսագնդաձև, առանց նստուկի կամ նստուկի տակ մատնաչափ փոսիկով: Մրանք ներսից ամբողջապես են գունազարդ, իսկ դրսից՝ միայն լայն շրթերիզը:

Ինչպես ցույց է տալիս Շիրակի անտիկ դամբարանադաշտերից հայտնաբերված խեցեղենի քննությունը, դրանց գերակշիռ մասը պատրաստված է տեղական շեկ կավից, որոնք տարաբնույթ, ամենօրյա օգտագործման հասարակ անոթներ են՝ կենցաղային-կիրառական նշանակության: Միագույն, անզարդ այս անոթները շատ հաճախ, հատկապես կարասները, վերանորոգման համար արված բազմաթիվ անցքեր ունեն: Առանձին դեպքերում անոթներն անգորապատ են:

Բավականին բազմազան այս խեցեղենը թվագրվում է մ.թ.ա. 1-մ. թ. 1-2-րդ դարերով: Դամբարանադաշտի նյութերը սերտորեն առնչվում են բնակավայրից հայտնաբերված նյութերին և շատ հաճախ նույնն են: Մ.թ.ա 1- մ.թ. 1-ին դարերում բնակավայրի կենսագործունեության ժամանակ հատակների տակ կատարված հիմնահողային թաղումների ուղեկից նյութերը, ինչպես նաև նույն ժամանակաշրջանի կարասային թաղման անոթները զուգահեռներ ունեն բնակավայրի նյութերում: Բնակավայրի և դամբարանադաշտի նյութերի մնամությունը ցույց է տալիս, որ խեցեղենի արտադրության մեջ պահպանվում էին հելլենիստական ավանդույթները:

Բենիամինի մանկական երկու թաղումներից գտնվել են ձիթաճրագներ, որոնցից մեկն

<sup>32</sup> Г. Т и р а ц я н, 1988, с. 178:

ամբողջական է (թիվ 23 դամբարանի ծածկասալի վրա), մյուսը՝ բեկորային (թիվ 80 դամբարանում՝ կմախքի կրծքին): Ծրագների բեկորներ թեև գտնվել են նաև այլ դամբարանների մոտ, սակայն նկատի առնելով դամբարանադաշտը բնակավայրի վրա նստած լինելու հանգամանքը և որ դամբարանի հողերի մեջ կարող էին նաև բնակավայրից նյութեր լինել, քննարկման առարկա են միայն այս երկուսը: Չիթածրագները պատրաստված են դեղնավուն, մանրահատիկ կավից, շրջանաձև են, ունեն տափակ նստուկ, ուղիղ կողեր և պատրույզի համար փոքրիկ ելուստ (տախտակ XII, նկ. 2):

Շիրակի դամբարաններից հայտնաբերված նյութերի մեջ կան նաև թռչնակերպ անոթ Կառնուտից և թռչնի արձանիկ Բենիամինից: Կառնուտից հայտնաբերված թռչնակերպ անոթը (բարձր.՝ 10,5սմ, իրանի երկ.՝ 21,5սմ, իրանի լայն.՝ 8, 5սմ) թերի է, բացակայում է գլուխը, սակայն մարմնի ձևից հստակ է, որ լողացող թռչուն է, հավանաբար՝ բաղ (տախտակ XII, նկ. 3): Անոթն ունի տափակ, ձվածիր նստուկ, երկարավուն իրան: Կտրավուն կուրծքը դուրս է ցցված, պոչն ուղիղ է: Իրանի երկու կողմերում՝ կրծքից մինչև պոչը, անցնում է խորակուս գիծ՝ եզերված կարմիրով արված, թևերը խորհրդանշող փետրածև նախշերով (մի կողմում յոթ, մյուս կողմում՝ ինը): Մեջքի վրա 3սմ տրամագծով բացվածք է, 1սմ տրամագծով անցք է արված նաև պոչի տակ:

Կենդանակերպ նման անոթների նախօրինակները բրոնզիդարյան մշակույթի վերջին փուլում են, իսկ լողացող թռչնի պատկերները՝ ավելի վաղ՝ միջին բրոնզի փուլի գունագարդ խեցեղենի զարդապատկերներում:<sup>33</sup>

Մ.թ.ա XII-Վրդ. թվագրվող երկու ոտքերի վրա կանգնած բաղի մարմնով անոթ հայտնի է Ժակ դը Մորգանի Ախթալայում (Հրազդան) կատարած պեղումներից (դամբ. 47): Իրը պահվում է Մեն Ժերմենի թանգարանում:<sup>34</sup> Մ. թ. ա.

VII-VIդդ. թվագրվող նմանօրինակ անոթներ հայտնի են նաև Խրտանոցից, Նոյեմբերյանից, Աստղիբլուրից:<sup>35</sup> Հելլենիստական ժամանակաշրջանի կենդանակերպ անոթներ հայտնի են Արմավիրից (արջ),<sup>36</sup> Արտաշատից (ոչխար),<sup>37</sup> Շիրակավանից (ձի և եղջերու):<sup>38</sup> Կենդանակերպ տարբեր անոթների բազմաթիվ բեկորներ հայտնի են Բենիամինի հելլենիստական բնակավայրից:

Ջրային թռչնի կերպարը, որպես կանոն, կապվում է տիեզերքի ստեղծման առասպելի հետ: Նախնական ջրերի խորքն է սուզվում բաղիկը աշխարհի ստեղծման համար նյութ հայթայթելու համար:<sup>39</sup> Իրանական սովորույթներում Կառնիպտար ջրային թռչունը փետրավորների գլխավորն է և իրենով անճնավորում է ջրային տարերքն ու նյութեղեն աշխարհը:<sup>40</sup>

Բենիամինի թիվ 142 կիսավեր դամբարանից գտնված կարմրավուն կավից, թռչնի փոքրիկ արձանիկը քննարկվող նյութերում իր տեսակի մեջ միակն է (տախտակ XII, նկ.4): Արձանիկն ունի կարճ վիզ, փոքր գլուխ, տափակ պոչ: Իրանը նախշագարդված է փոքր օղակներով: Գլխի և հատկապես կտուցի ձևով, իրանի պուտանախշերով թռչունը նման է լորի: Իրանի նախշերը (փոքրիկ օղակներ) կարող են ընկալվել նաև որպես արևանախշեր:

Հելլենիստական ժամանակաշրջանում, ինչպես նաև ավելի ուշ, մանկական թաղումներում հանդիպում են տարբեր կենդանիներ պատկերող խաղալիքներ:<sup>41</sup> Մ. թ. 2-3-րդ դարերին են վերաբերում նաև Կերչի մանկական դամբարան-

<sup>33</sup> Հ. Ի ս ա յ ե լ յ ա ն, 1973, էջ 25, նկ. 1: Dans les montagnes d' Arménie..., էջ 147, նկ. 51:

<sup>34</sup> Նշված անոթը 2007թ. ցուցադրվում էր Ֆրանսիայում (Ռուան), Հայաստանի տարվա շրջանակներում Շիրակի երկրագիտական թանգարանի «Հայաստանի լեռնե-

րում, 500.000 տարվա պատմություն» վերստառությամբ ցուցահանդեսում՝ Մեն-Ժերմենի թանգարանում պահվող Ժակ դը Մորգանի պեղումները ներկայացնող նյութերի հետ:

<sup>35</sup> Ст. Е с а я н, Древняя культура племен северо - восточной Армении (III тыс. до н. э.- I тыс. до н. э.), Ер., 1976, с. 243.

<sup>36</sup> Б. Н. А р а к е л я н, 1976, էջ 73, աղ. LXXXI/2.

<sup>37</sup> Նույն տեղում, աղ. XXXII/2.:

<sup>38</sup> Dans les montagnes d' Arménie..., նկ. 232, 233:

<sup>39</sup> А. З о л о т а р е в, Родовой строй и первобытная мифология, М., 1964, с. 278,279.

<sup>40</sup> Ю. Р а п о п о р т, „ Космогонический сюжет на хорезмийских сосудах,, в кн: Средняя Азия в древности и средневековье. М., 1977, с. 62-64, 68.

<sup>41</sup> И. К р у г л и к о в а, Античная сельскохозяйственная усадьба близ Керчи, АИКСП, М., 1968, с. 209.

ներից գտնված արձանիկ-խաղալիքները:<sup>42</sup> Նույն ժամանակաշրջանին է վերաբերում նաև Բենիամինի գտածոն:

Բենիամինի դամբարանադաշտի նյութերի մեջ կան նաև քարից իրեր, որոնք կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինում կիրառական որոշակի նշանակության իրեր են, որոնք թաղման կառույցներում օգտագործվել են պաշտամունքային որոշակի դերով (դուրգի անիվ, սյան խարիսխ, երկանքներ): Երկրորդ խմբում երկրաչափական տարրեր ձևեր ունեցող մի քանի իրեր են, որոնք կիրառական որևէ նշանակություն չունեն և դամբարանում հայտնվելը պայմանավորված է ծիսական որոշակի իմաստով (երկրաչափական տարրեր մարմիններ՝ եռանկյունի, ձվածիր, ուղղանկյուն, երկարչափական սեղան և այլն):

Աշխատանքային գործիքները հիմնականում կոնիչներ են, աղորիքներ, երկանքաքարեր, ինչպես նաև դանակներ, մկրատ և ասեղ: Գտնվել է նաև անասունի կողոսկրից մի քերիչ: Գտնված մետաղյա իրերի մեջ կա երեք դանակ, որոնցից երկուսը Բենիամինից են, մեկն՝ Անուշավանից: Երկաթյա իրի, հավանաբար՝ դանակի փոքր, քայքայված մի կտոր գտնվեց նաև Հայկաձորում, ամբարի մեջ կատարված թաղումից:

Դանակներից առաջինը (թիվ 160) երկաթից է, կոթից մինչև ծայրը ուղիղ կտրվածքով, որի շեղքը, կոթի տակից քիչ կորանալով, աստիճանաբար նեղանում է և, հասնելով ծայրին, հավասարվում կոթին: Դանակը (տախտակ XIII, նկ. 1) քայքայված է, կոթի մասը՝ կտրված (երկ.՝ 15, 5սմ, կոթը՝ 3սմ): Երկրորդ դանակը (տախտակ XIII, նկ. 2), որ գտնվեց թիվ 195 դամբարանից, ունի տափակ և ուղիղ կոթ, որի վրա պահպանվել են երկու գամ և երրորդի համար արված անցքը: Դանակը կտրված է այս հատվածում: Շեղքը կոթից շեշտակի կեռվում է, ապա բարակելով, հասնում մինչև կտրացող ծայրը (կոթի երկ.՝ 4, 5սմ, լայն.՝ 2, 5սմ, շեղքի երկ.՝ 10սմ, հիմքի մոտ՝ 2, 2սմ, ծայրի կտրացող

մասում 8սմ): Փոքր, շեղքը քիչ կեռ, կոթը բարակ և երկար մի դանակ (տախտակ XIII, նկ. 3), գտնվել է Անուշավանից (ընդ. երկ.՝ 13, 5սմ, շեղքի երկ.՝ 10սմ: Գտածոն նման է Արտաշատի մ. թ. ա. 2-1-ին դարերի շերտից գտնված կեռ դանակին:<sup>43</sup> Շիրակի համաժամանակյա հուշարձաններից երկաթե դանակի բեկոր գտնվել է Վարդգեսաղում, Ստ. Տեր-Մարգարյանի պեղումների ժամանակ:<sup>44</sup> Հայաստանում նմանօրինակ կեռ դանակներ գտնվել են Գառնիից<sup>45</sup> և թվագրվում են մ. թ. ա. 2-1-ին դարերով: Կեռ դանակներ հայտնի են Վրաստանի և Ադրբեջանի հուշարձաններից:<sup>46</sup> Բենիամինի կեռ դանակը զուգահեռն ունի Գառնիում (թիվ 107 դամբ.) և թվագրվում է մ. թ. 1-ին դարով:<sup>47</sup> Անուշավանում պատահական բացված դամբարանից գտնվել է տափակ կոթով և սրացող ծայրերով մի մկրատ (տախտակ XIII, նկ. 4): Մկրատը երկաթից է (երկ.՝ 12, 5սմ, շեղքի երկ.՝ 7, 5սմ, լայն.՝ հիմքի մոտ 2սմ է, ծայրում՝ 2սմ, կոթի լայն.՝ 1, 5սմ): Չուգահեռներն Արտաշատում<sup>48</sup> և Գառնիում են:<sup>49</sup> Գառնիի և Արտաշատի գտածոները թվագրվում են մ.թ. 1-ին դարով: Նմանօրինակ մկրատի պարզ ձևը լայնորեն տարածված է անտիկ ժամանակաշրջանում և հայտնի է բազմաթիվ հուշարձաններից: Իրն ունի նույն ձևը, ինչ ոչխար խուզելու մկրատները (հեբրիկ): Հավանաբար հնագիտական գտածոները ևս այդ նպատակին են ծառայել, մանավանդ մկրատների մերօրյա ձևեր հայտնի են Արտաշատի թիվ 42 դամբարանից և վերաբերում են մ. թ. 1-2-րդ դարերին:<sup>50</sup> Նույն ժամանակաշրջանին (մ.թ. 1-2-րդ դարեր) է վերաբերում նաև Անուշավանից գտնված մկրատը (տախտակ XIII, նկ. 4): Վրաստանից գտնվածները վերաբերում են մ. թ.

<sup>42</sup> Նույնը:

<sup>43</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 85:

<sup>44</sup> Ստ. Տ Ե ր - Մ ար գ ար յ ա ն, նշվ. աշխ., էջ 96:

<sup>45</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., նկ. 29/2.

<sup>46</sup> Д. Х а х у т а й ш в и л и, Уплисцихе II, Тбилиси, 1970, табл. II/1.: Т. Голубкина, Четыре кувшинных погребения из Мингечаура, ИАН Аз. ССР, N. 3. 1956, табл. I/11.

<sup>47</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 15:

<sup>48</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1981, էջ 70:

<sup>49</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 17:

<sup>50</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1981, նշվ. աշխ., էջ 72:

2-3-րդ դարերին:<sup>51</sup> Մինգեչաուրի կարասային թաղումներից գտնված նույնատիպ մկրատները թվագրվում են մ.թ.1-3-րդ դարերով:<sup>52</sup> Անուշավանի մկրատի նմանակները հայտնի են նաև Թանահիսից և վերաբերում են 3-րդ դարին:<sup>53</sup> Աշխատանքային գործիքների թվում է նաև Վարդքաղի թիվ 3 դամբարանից գտնված 72մմ երկարությամբ, տափակ գլխիկով բրոնզյա ասեղը (տախտակ XIII, նկ. 5):

Թիվ 39 կարասային թաղումից գտնվեց դեղնավուն կավից փուքսի օղամղիչ (տախտակ XIII, նկ. 6), որը պատրաստված է դեղնավուն մանրահատիկ կավից, գլանաձև է՝ կենտրոնում միջանցիկ անցքով (երկ.՝ 3,5սմ, լայն.՝ 2սմ, անցքի տրամ.՝ 1սմ): Այն, որ փուքսի օղամղիչի գլուտը բոլորովին էլ պատահական չէ, հաստատվում է բնակավայրի պեղումներից ապակու և մետաղի խարամի բազմաթիվ գտածոներով, որն էլ իր հերթին փաստում է տեղական արտադրության գոյությունը:

Սև տուֆից դուրզի անիվ գտնվեց Բենիամինի թիվ 8 սալարկղային թաղման կողքին կատարված ձիերի զոհաբերության վրա (տախտակ XIII, նկ. 7): Այն հատած կոն է (հիմքը՝ 35սմ, բարձր.՝ 16սմ, հատած մասը՝ 18սմ, որի վրա արված փորվածքն ունի 7սմ տրամագիծ և 14սմ խորություն): Դուրզի անիվը հավանաբար զոհասեղանի դեր է կատարել և ջարդվել է ծիսակարգի ժամանակ: Քարից դուրզի անիվ հայտնի է Արտաշատից, գտնվել է 7-րդ բլուրի մ.թ.ա. 2-1-ին դարերի շերտում:<sup>54</sup> Դվիհից ևս հայտնի են տուֆից դուրզի անիվներ:<sup>55</sup> Եվ երկու դեպքում էլ ենթադրվում է, որ անիվներն աշխատել են ձեռքի օգնությամբ և ժամանակագրորեն նույնպես աղերսվում են: Դուրզի անիվը նյութով և ձևով մոտ է Դվիհի և Արտաշատի գտածոներին և նույնպես վերաբերում է մ. թ. ա.

1-ին դարին: Բենիամինում դուրզի անիվի գտածոն վկայում է է խեցեղենի տեղական արտադրության մասին:

Թիվ 8 դամբարանի կողասալերից և ծածկասալի քարերից մեկը երկանքաքար է: Այսօրինակ երկանքաքարերը (կենտրոնի փոքր անցքով) վերջնական ձևը ստացել են հավանաբար մ. թ. ա. 2-մ. թ. ա. 1-ին դարերում և իրենց գոյությունը շարունակում են մինչև մ. թ. 3-4-րդ դարեր: Նման երկանքները Հայաստանում առաջին անգամ հանդիպում են Արտաշատի դամբարանադաշտում:<sup>56</sup>

Քարերի մեջ կան նաև կոկիչներ, որոնք գտնվեցին թիվ 39 կարասային թաղման մոտ: Մրանք առաջին հերթին ապահովել են կարասի ուղղահայաց դիրքը, հնարավոր է, նաև ծիսական դեր են ունեցել: Խոշոր եղջերավոր անասունի կողոսկրից քերիչ գտնվեց թիվ 173 դամբարանից: Վերջինս հավանաբար հողի հետ է հայտնվել դամբարանում և կապ չունի թաղման հետ:

Արդուզարի ասարկաներ: Շիրակի անտիկ դամբարանադաշտերի նյութերում կան նաև ականջօղեր, քունքակախիկներ, մանյակներ, ապարանջաններ, մատանիներ, շքասեղներ, ուլունքներ, կնիքներ, հայելիներ, ճարմանդ, կոճակ և այլն: Դամբարանների նյութերում ամենաշատ հանդիպող զարդերը ականջօղերն են, որոնք կարելի է բաժանել երեք խմբի՝ օղակաձև կամ ձվածիր, մահիկաձև և կախիկավոր:<sup>57</sup> Առաջին խմբում են բաց ծայրերով շրջանաձև և ձվածիր ականջօղերը, որոնք պատրաստված են տափակ, երբեմն էլ կտրվածքում եռանկյունաձև ու շրջանաձև բրոնզալարերից: Մրանք ամենաշատ տարածված ձևերն են: Գտնվեցին Բենիամինի թիվ 27 (տախտակ XIV, նկ. 1) և 47 սալարկղային թաղումներից (տախտակ XIV, նկ. 2): Թիվ 44 սալարկղային թաղումից գտնված նմանատիպ ականջօղը, ի տարբերություն նախորդ-

<sup>51</sup> О. Г а м б а ш и д з е, Бичинта, (Итоги раскопок 1958г.) МАГК, IV, Тбилиси, 1965, с. 124.

<sup>52</sup> С. К а з и е в, Альбом кувшинных погребений Мингечаура, Баку, 1960, с. 25.

<sup>53</sup> Д.Ш е л о в, Нижне-Донская экспедиция в 1962-1963гг. КСИА, вып. 107, Киев, 1966, с. 94.

<sup>54</sup> Ժ. Խ ա չ ա տ ը յ ա ն, Արտաշատի 7-րդ բլուրի 1973 - 1975թթ. պեղումների արդյունքները, ԼՀԳ, 1978, թիվ 8, էջ 63:

<sup>55</sup> Գ. Ք ո չ ա ը յ ա ն, 1991, էջ 39:

<sup>56</sup> Ժ. Խ ա չ ա տ ը յ ա ն, 1981, էջ 6:

<sup>57</sup> Լ. Ե զ ա ն յ ա ն, Մատանիների և ականջօղերի դերը անտիկ Շիրակի թաղման ծիսակարգում, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. II, Գյումրի, 1999, էջ 68-85:

ների, կտրվածքում շրջանաձև է (տախտակ XIV, նկ. 3) և ավելի փոքր: Բենիամինի գտածոներից այս շարքի վերջին ականջողը տափակ բրոնզալարից օղակ է, որ բավականին մեծ է (տրամ.՝ 2, 5սմ), ունի իրար հակված եզրեր (տախտակ XIV, նկ. 4), գտնվեց թիվ 51 սալարկղային թաղումից: Բենիամինի թիվ 92 դամբարանից (տախտակ XIV, նկ. 5) գտնված մնանատիպ ականջողը շրջանաձև է, և բրոնզալարն ավելի հաստ է: Առափիում մնանատիպ բավականին փոքր ականջող գտնվեց թիվ 10 սալարկղային թաղումից (տախտակ XIV, նկ. 7), մեկ ուրիշը՝ Բենիամինի թիվ 6 սալարկղային թաղումից (տախտակ XIV, նկ. 6), իսկ քիչ ավելի մեծ օրինակը՝ Բենիամինի թիվ 127 դամբարանից (տախտակ XIV, նկ. 8): Բենիամինի թիվ 183 կարասային թաղումից գտնված ականջողը մույնպես այս խմբին է պատկանում, սակայն, ի տարբերություն նախորդների, պատրաստված է 2,5 մմ հաստությամբ ոսկեգօծ և ոլորանախշ բրոնզալարից (տախտակ XIV, նկ. 9): Ականջողը փոքր է (տրամ.՝ 1 5մմ) և քիչ տանձաձև: Այս օրինակում բրոնզալարի ծայրերը չեն մշակվել, պահպանվել է նախնական հաստությունը, և ականջողը հնարավոր չէ կրել, որն էլ հանգեցնում է այն կարծիքին, որ հնարավոր է զարդը հատուկ պատրաստվել է թաղման համար: Այս ականջողն ավելի վաղ է, վերաբերում է մ. թ. ա. 1-ին դարին, իսկ մյուս տարբերակներն ուշ են և թվագրվում են մ. թ. 1-2-րդ դարերով:

Օղակի պարզ լուծումով ականջողերը լայն տարածում ունեին հելլենիստական ժամանակաշրջանում: Դա հաստատվում է հնագիտական բազմաթիվ զուգահեռներով, դրամագիտական նյութերով, ինչպես նաև գրավոր աղբյուրներով: Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձաններից մնան ականջողեր գտնվել են Դվինից,<sup>58</sup> Արտաշատից,<sup>59</sup> Գառնիից,<sup>60</sup> որոնք արծաթյա են և թվագրվում են 1-2-րդ դարերով: Պարզագույն օղակի լուծմամբ ականջողեր

հայտնի են նաև Օշականից:<sup>61</sup> Գտնվել են նաև Արգիշտիխիսիլիից և ըստ Հ. Մարտիրոսյանի, սրանց համար նախատիպ են ծառայել ուրարտական ականջողերը:<sup>62</sup> Արտաշատից գտնված ականջողերը Ժ. Խաչատրյանը համարում է Սիրիայից և Միջագետքից տարածված:<sup>63</sup> Ականջողերի այս տեսակը լայն տարածում ունի Կովկասում: Հայտնի են Մինգեչաուրից,<sup>64</sup> Հարավային Օսեթիայից,<sup>65</sup> Հյուսիսային Կովկասից:<sup>66</sup> Խերսոնեսում այս ականջողերը գտնվել են գանգի աջ կողմում, որն էլ հանգեցրել է այն կարծիքին, թե ծեսը պայմանավորված է ականջողի ձևով:<sup>67</sup>

Առաջին խմբին պիտի դասել նաև երկթեք կտրվածքով ականջողերը: Սրանք մույնպես սեղմված օղակի ձևն ունեն, միայն բրոնզալարը կամ արծաթալարը կտրվածքում երկթեք է, որ բրոնզալարը երկու կողմից ակոսելու արդյունք է: Իսկ մնան մշակումն արվել է գեղագիտական նպատակով և ապահովել է լույս ու ստվերի խաղը: Այսպիսին են Բենիամինի թիվ 27 դամբարանից (տախտակ XIV, նկ. 1) գտնված բրոնզե ականջողը և Վարդբաղի թիվ 11 դամբարանից (տախտակ XIV, նկ. 10) գտնված արծաթյա տարբերակը: Ականջողերի երկու տարբերակն էլ թվագրվում են մ. թ. 1-2-րդ դարերով: Ականջողերի այս ձևը հայտնի է նաև հելլենիստական դրամների պատկերագրությունից: Հայոց Արտավազդ 2-րդ թագավորի դրամի վրա<sup>68</sup> հստակ երևում է արքայի ականջող զարդարող օղը: Ականջողի ձևը՝ բոլորակ օղակ, հայերենում ունի

<sup>61</sup> Ст. Е с а я н, А. К а л а н т а р я н, 62վ. աշխ., էջ 65:

<sup>62</sup> А. М а р т и р о с я н, 62վ. աշխ., էջ 54, նկ. 16/4:

<sup>63</sup> Ժ. Խ ա չ ա տր յ ա ն, 1981, էջ 82:

<sup>64</sup> С. К а з и е в, Археологические раскопки в Мингечауре, МКА т. I, Б., 1949, с. 46; Г. Асланов, Т. Голубкина, Ш. Садыхзаде, Каталог золотых и серебряных предметов из археологических раскопок Азербайджана, Б., 1966, с. 18.

<sup>65</sup> Б. Т е х о в, Очерки древней истории и археологии Юго-Осетии, Тбилиси, 1971, с. 230, рис. 84/2.

<sup>66</sup> Д. Ш е л о в, Некрополь Танаиса, МИА н. 98, М., 1961, с. 54, 76-77; В. Саханеев, Раскопки на Северном Кавказе в 1911-1912г.г., ИАК ном. 56, 1914, с. 132.

<sup>67</sup> Н. П я т ы ш е в а, Ювелирные изделия Херсонеса, конец IV в. до н. э. - IV в. н. э., М., 1956, с. 46.

<sup>68</sup> Խ. Մ ն ի շ ե ղ յ ա ն, Հայաստանի դրամական զանգեղները, Եր., 1973, էջ 30:

<sup>58</sup> Գ. Զ ն չ ա տր յ ա ն, 1991, տախտակ 25/ 9,12:

<sup>59</sup> Ժ. Խ ա չ ա տր յ ա ն, 1981, նկ. 82:

<sup>60</sup> Ж. Х а ч а т р я н, 62վ. աշխ., նկ. 48:

իր անվանումը՝ *զինդ*, որ նշանակում է «*քոլորածև, ոլորակ, օղակի պէս կլոր*»:<sup>69</sup> Ինչպես վկայում են Մովսես Խորենացին և Եղիշեն, ականջօղի այս տեսակը մտնում էր թագավորի կողմից նախարարներին տրվող պատվական հագուստի և արդուզարդի մեջ: Խորենացու վկայությամբ Արտաշես թագավորը Մուրացան նախարարին շնորհած պատիվների հետ տալիս է նաև «*զինդ յերկուսին ականջսն*»:<sup>70</sup> Բերվածից կարելի է եզրակացնել, որ կար նաև մեկ ականջին կրելու սովորույթ, և այն հավանաբար պայմանավորված էր սոցիալական կարգավիճակով: Ջուլգ ականջօղ կրելու մասին մեկ այլ վկայություն գտնում ենք Եղիշեի մոտ: Վասակի պատվական հագուստը նկարագրելիս Եղիշեն ավելացնում է, «*զինդեր կախեց ականջներին*»:<sup>71</sup> Բերված պատմական վկայությունները հավաստում են, որ ականջօղի այս տեսակն ուներ իր անվանումը և, կախված սոցիալական վիճակից, նաև կրելու ձևը:

Երկրորդ խմբում մահիկաձև ականջօղերն են, որոնք պատրաստված են բրոնզե բարակ թիթեղից և պարզ օղակից վերաճում են ձվաձիրի: Սրանք նույնպես փոքր են և նուրբ, բացի Բենիամինի թիվ 40 կարասային թաղումից գտնված տարբերակից, որը երկաթից է, բավականին մեծ է և կռախտ (տախտակ XIV, նկ. 11): Բենիամինի թիվ 121 հիմնահողային (տախտակ XIV, նկ. 12) և թիվ 209 սալարկղային (տախտակ XIV, նկ. 13) թաղումներից գտնված ականջօղերը բրոնզի բարակ թիթեղից են: Վերջին ականջօղն իր ձևով աղերսվում է Միսիանից գտնված մ. թ. ա. 1-ին դարով թվագրվող մահիկաձև ականջօղին:<sup>72</sup> Մահիկաձև զարդերի հնագույն օրինակներ հայտնի են Լոռի բերդի վաղ երկաթի ժամանակաշրջանի հուշարձաններից, որոնք գուգահեռներ ունեն Բերդի և Խանլարի վաղհայկական դամբարան-

ների նյութերում:<sup>73</sup> Բենիամինի ականջօղերը թեև ձևաձևական աղերսներ ունեն նշված ականջօղերի հետ, սակայն վերաբերում են մ. թ. 1-2-րդ դարերին:

Անտիկ ժամանակաշրջանում լայն տարածում ստացած մահիկաձև ականջօղերը գուցե կապվել են լուսնի պաշտամունքի հետ: Դեռևս հին Հռոմում երեխաներին կախարհանքից պաշտպանելու համար վզերից կախում էին մահիկաձև հմայիլ-պահպանակներ:<sup>74</sup> Հայոց մեջ լուսնի պաշտամունքի մասին է Խորենացու վկայությունը. «Իսկ յետ այսր ամենայնի մեհեան շինեալ յԱրմավիր՝ անդրիս հաստատե արեգական և լուսնի և իւրոց նախնեաց»:<sup>75</sup> Հայ մանրանկարչության մեջ լուսինը երբեմն պատկերվում է իրար մեջ, մի կետում իրար հպվող երկու՝ մեծ և փոքր շրջանների ձևով:<sup>76</sup> Օղակի մեջ տղամարդու դեմք է, իսկ օղակից ձախ գրված է՝ *լուսին*: Հայոց մեջ հավանաբար լուսնի պաշտամունքի հետ է կապվում *նորեց* կամ *նորեց* կոչվող հիվանդությունը բուժելու նպատակով երեխաների վզից մահիկաձև կտրվածքով արծաթյա դրամ կախելու սովորույթը, որ մինչ այժմ էլ պահպանվում է Շիրակում: Իսկ հիվանդությունը, ըստ հավատալիքի, առաջանում է լուսինը նորելիս, որտեղից էլ ծագել է նաև անվանումը: Իսկ թե ինչու էր անպայման արծաթյա դրամի վրա կտրվում, հավանաբար այն պատճառով, որ արծաթը լուսնի հովանավորության տակ է գտնվում:<sup>77</sup>

Վերջին խմբում կախիկավոր ականջօղերն են, որոնք բարակ բրոնզալարից օղակի վրա անցկացված կախիկ ունեն: Բենիամինի թիվ 67 դամբարանից գտնված նման մի ականջօղի (տախտակ XIV, նկ. 14) բարակ բրոնզալարից ձվաձիրի վրա ազուցված է կաթնագույն ապակուց երկկոնիկ կախիկ: Նմանօրինակ մեկ այլ ականջօղ գտնվել է Անուշավանում (տախտակ

<sup>69</sup> Հ. Ա ճ ա ն յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ.1, Եր., 1971, էջ 557:

<sup>70</sup> Մ. Խ ո ռ ե ն ա զ ի, Բ, խ:

<sup>71</sup> Ե ղ ի շ ե ն, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Եր., 1971, (թարգմանությունը Ե. Տեր-Մինասյանի), Գ VI, էջ 127:

<sup>72</sup> Arménie, Tresors de l' Arménie ancienne, 1996, Paris, p. 229. pl. 228:

<sup>73</sup> С. Д е в е д ж я н, Лори-Берд I, Ер., 1981, с. 63.

<sup>74</sup> Е. Г о л ь ц м а н, Дурной глаз и сексуальность, М., 1998, с. 80.

<sup>75</sup> Մ. Խ ո ռ ե ն ա զ ի, Բ, ը:

<sup>76</sup> Հայկական մանրանկարչություն, Վասպուրական, Եր., 1978, նկ. 3 (Միսն Արճեշցի, Խաչելություն, Ավետարան, 1305թ. Արճեշ, Չեռ. N 2744):

<sup>77</sup> Е. Г о л ь ц м а н, նշվ. աշխ., էջ 81:

XIV, նկ. 15): Վերջինս ավելի փոքր է (տրամ. 2սմ), կախիկը ոսկորից է և ինչպես Բենիամինի ականջողինը, ուղղակի անցկացված է օղակի մեջ: Ականջողը գտնվել է պատահական բացված և ավերված հիմնահողային թաղումից, և եղե՞լ է արդյոք երկրորդը, հայտնի չէ: Այսօրինակ ականջողերն իրենց գուգահեռներն ունեն Արտաշատում:<sup>78</sup> Նմանատիպ ականջողեր հայտնի են Գառնիից և թվագրվում են մ. թ. 1-ին դարով:<sup>79</sup> Բենիամինի թիվ 50 դամբարանից գտնված ականջողը բրոնզից օղակ է, որը մեկ հավելյալ ոլորումով դարձել է ևս մեկ օղակ (տախտակ XIV, նկ. 16): Սրա վրա անցկացված է կախիկը, որը մի ծայրը զանգակաձև լայնացող զլան է (երկ.՝ 11մմ, տրամ.՝ 5 մմ, լայն ծայրի տրամ.՝ 7մմ): Ոլորումով արված փոքրիկ օղակն ապահովում է կախիկի շարժունությունը: Այս ականջողերին իրենց ձևով սերտորեն առնչվում են Բենիամինի թիվ 183 դամբարանից (տախտակ XIV, նկ. 17,18) և Սարատակում դիպվածաբար բացված թաղումից (տախտակ XIV, նկ. 22) գտնված ականջողերին: Սարատակի գտածոները (տրամ.՝ 25մմ) արծաթյա են, օղակի հաստ ծայրերը նախազարդված են համաչափ ոլորանախշով, իսկ ձվածիր կախիկները ոսկորից են: Ոչ միայն կախիկների չափերը տարբեր են, այլ նաև ականջողի և կախիկի մեծ ու փոքր օղակներն իրար միացած են արծաթալարի անփույթ ոլորումով: Բենիամինի մնանօրինակ ականջողերը բրոնզից, ծայրերը բաց օղակներ են (տրամ.՝ 3սմ), կախիկները՝ երկարավուն, քառակող, ծայրերը գնդիկավոր փոքրիկ ելունով: Իրար մեջ ագուցված մեծ ու փոքր օղակներով ապահովված է կախիկների շարժունությունը: Այս ականջողերն առանց նախազարդման են և չափերի ու ձևի աննշան տարբերություններ ունեն: Մեկի վրա պահպանվել են ինչ-որ իրի մնացորդներ (հավանաբար կաշվե ժապավենի): Բենիամինի այս ականջողերի գուգահեռները հայտնի են Օշականից:<sup>80</sup> Թիվ 183 դամբարանից գտնված ականջողերը

վերաբերում են մ. թ. ա. 1-ին դարին, իսկ Սարատակի գտածոները կարող են թվագրվել մ. թ. 1-ին դարով: Վերջին երկու օրինակներում ականջողերի ծայրերը, ի տարբերություն նախորդ ձևերի, մշակված չեն և հարմար չեն կրելու համար:

Վերջին ձևը ներկայացնում են անշարժ ելունով ականջողերը: Բենիամինի թիվ 66 դամբարանից գտնված ականջողը բարակ բրոնզալարից ձվածիր է (տախտակ XIV, նկ. 19), որի մի ծայրին ամրացված է անշարժ, սուր ծայրով ելունը: Վերջինիս վրա ագուցված է եղել վերադիր ինչ-որ զարդամաս: Առափիից և Վարդբաղից գտնված մնանօրինակ ականջողերն ունեն անշարժ ելուն, որի վրա շարված են մանր ուլունքներ, իսկ ծայրին ագուցված է գունդ: Առափիի թիվ 9 դամբարանից գտնված ականջողի վրա (տախտակ XIV, նկ. 23) ապակյա և բրոնզյա գնդաձև ուլունքները շարված են մեկընդմեջ, ընդ որում չափերը համաչափորեն աճում են (տրամագիծը՝ 5մմ, 7մմ, 9մմ, 11մմ): Վերջինը բրոնզի թիթեղով պատված գնդիկի չափն է: Նույնանման ականջողեր գտնվեցին Վարդբաղի թիվ 10 դամբարանից (տախտակ XIV, նկ. 20, 21): Սրանք կրկնում են Առափիի ականջողի ձևը, ունեն չափերի աննշան տարբերություն և գտնվեցին զանգի աջ ու ձախ կողմերում: Ի տարբերություն Առափիի ականջողի, վերջիններն ամբողջական են: Ականջողի կախիկի բրոնզյա գնդիկ գտնվեց Բենիամինի թիվ 212 դամբարանից (տախտակ XIX, նկ. 3): Նման ականջող հայտնի է նաև Էլառից և թվագրվում է մ. թ. 3-րդ դարով:<sup>81</sup> Այսօրինակ ականջողերի վաղ օրինակը հայտնի է Տոսպի թագավոր Միհրդատի մ. թ. ա.1-մ. թ.1-ին դարերով թվագրվող մետաղադրամի պատկերազրույթումից, որտեղ ձախ կիսադեմով տղամարդու ականջին երևում է նույն ցողունի վրա շարված երեք գնդիկներից կազմված ականջողը:<sup>82</sup> Բենիամինի այսօրինակ

<sup>78</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1981, էջ 80, նկ. 19/10, 11:

<sup>79</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 102:

<sup>80</sup> Ст. Е с а я н, А. К а л а н т а р я н, նշվ. աշխ., ապստ. XLIV, նկ. 13:

<sup>81</sup> Է. Խ ա ն զ ա ղ յ ա ն, Էլառ - Գարանի, Եր., 1979, էջ 136:

<sup>82</sup> Э. Х у р ш у д я н, Монета Митридата царя Тоспы, ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVII, Եր., 1998, էջ 167:

ականջողերը վերաբերում են մ. թ. 1-2-րդ դարերին:

Շիրակի անտիկ դամբարանադաշտերի պեղումներից գտնված, ինչպես նաև դիպվածաբար հայտնաբերված ականջողերը բազմաձև են և վերաբերում են մ. թ. 1-2-րդ դարերին: Բոլոր ականջողերը գտնվեցին են միայն աջ ականջի մոտ՝ բացառությամբ Վարդգաթի թիվ 10 և Բենիամինի թիվ 183 դամբարանների գտածոների:

Չարդերի մեջ կան նաև ոսկյա, ոսկեզօծ բրոնզից, բրոնզից, սարդիոնից, ինչպես նաև երկաթյա մատանիներ, որոնք ձևով, պատրաստման տեխնիկայով, նյութով տարբեր են:<sup>83</sup> Բենիամինի թիվ 40 դամբարանից գտնված մատանին երկաթից է՝ միաձույլ, ձվաձիթ պսակով (տախտակ XIV, նկ. 24): Մատանին փոքր է, բարակ օղակով, որն աստիճանաբար լայնանալով, թեթև անցումով միանում է պսակին: Չարդը եղել է կրակի մեջ, պսակի հիմքում պահպանվել է հավածքի բարակ շերտ: Դամբարանը, ինչպես արդեն նշել ենք, թալանված է և հայտնի չէ, թե մատանին որ մատին է եղել: Չկան նաև մարդաբանական տվյալներ: Նմանատիպ մեկ այլ մատանի գտնվեց Բենիամինի դամբարանադաշտի ավերված հատվածից: Մատանին երկաթից է, կրկնում է նախորդի ձևը, սակայն քիչ ավելի մեծ է և խիստ քայքայված (տախտակ XIV, նկ. 25): Երկու մատանիներն էլ վերաբերում են մ. թ. 1-ին դարին: Ավելի վաղ՝ մ. թ. ա. 1-ին դարով թվագրվող այսօրինակ մատանի հայտնի է Արտաշատից:<sup>84</sup>

Բրոնզի թիթեղից մատանիներ գտնվեցին Բենիամինի թիվ 89 և 185, Վարդգաթի թիվ 17, Առափիի թիվ 9 դամբարաններից: Բենիամինի թիվ 89 դամբարանից հայտնաբերված մատանին (տախտակ XV, նկ. 1) բրոնզի թիթեղից, պսակի հատվածում քիչ լայնացող օղակ է: Մատանին գտնվեց ձախ ձեռքի մատնեմատին: Իսկ Բենիամինի թիվ 185 դամբարանից գտնված մատանին (տախտակ XV, նկ. 2) երկու կողմերից աղեղնաձև տաշվածքով նախշազարդված ոսկեզօծ բրոնզալարից օղակ է: Մա-

տանին գտնվեց գանգի մեջ, այսինքն՝ եղել է ննջեցյալի բերանում: Վարդգաթից (տախտակ XV, նկ. 3) գտնված մատանին բրոնզե թիթեղից է, առանց նախշազարդման և նույնպես գտնվեց գանգի մեջ: Նույնպիսի մի մատանի գտնվեց նաև Առափիից: Մատանիների այս տեսակը, չունենալով նախշի, զարդի, ձևի յուրահատկություն, միաժամանակ հստակ թվագրման ենթակա չէ: Պարզագույն օղակի լուծմամբ մատանու մի տարատեսակն է Բենիամինի թիվ 183 դամբարանի գտածոն: Այն պատրաստված է ամբողջությամբ պարույրազարդ ոսկեզօծ բրոնզալարից: Օղակ կազմելուց հետո բրոնզալարի ծայրերը իրար զուգահեռ շարունակվում են՝ ձևավորելով մատանու պսակը (տախտակ XV, նկ. 4): Ելնելով դամբարանի մարդաբանական տվյալներից (15-ամյա աղջիկ)՝ կարելի է ենթադրել, որ մատանին սեղմումով փոքրացվել է՝ ստանալով նոր ձև: Մ. թ. ա. 1-ին դարով թվագրվող այս մատանին գտնվեց ձախ ձեռքի մոտ, սակայն ոսկորները տեղաշարժված լինելու պատճառով հայտնի չէ, թե նախապես որ մատին է եղել: Բրոնզի թիթեղից պատրաստված հետաքրքիր մի մատանի է գտնվել Վարդգաթում՝ շինարարական աշխատանքների ժամանակ բացված և ավերված դամբարանից: Մատանին նեղ և տափակ բրոնզե թիթեղից օղակ է, որը պսակի մասում վերածում է հավասարաթև խաչի (տախտակ XV, նկ. 5): Հայկական աղբյուրներում խաչ-մատանու մասին հիշատակություններ կան միջնադարյան ձեռագրերում: Կաթողիկոսների, եպիսկոպոսների մատանիների մասին հիշատակում է Ղազար Փարպեցին՝ Գրիգոր Լուսավորչի մատանու մասին գրելով. «և դիր զմատանին զգծած խաչի քո, ի մատին աջոյ մերոյ...»:<sup>85</sup> Իսկ հավասարաթև խաչի պատկերը բնորոշ է մ.թ. IV-V դարերին և հայտնի այդ դարերի քրիստոնեական հնագույն քանդակներից՝ Աղց, Էջմիածին, Քասաղ, Թալին, Մրեն, Կարմրաքար, Երերույք:<sup>86</sup> Վարդգաթից գտնված մատանին կարող է թվագրվել 2-4-րդ

<sup>83</sup> Լ. Ե գ ա ն յ ա ն, 1999, էջ 68 - 85:

<sup>84</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1981, էջ 154:

<sup>85</sup> Ղ. Փ ա ր պ ե ց ի, Դրուագ Բ, րբ:

<sup>86</sup> Բ. Ա ն ա ք ե լ յ ա ն, Հայկական պատկերաբանդակները IV-VII դարերում, Եր., 1949, էջ 29, 41-43:



դարերով, քանի որ այն չի կարող լինել ավելի վաղ, քան 2-րդ և ավելի ուշ, քան 4-րդ դարերը՝ ելնելով դամբարանադաշտի ամենավաղ թաղումների և այսօրինակ խաչերի թվագրման ժամանակագրական սահմաններից:

Անտիկ Շիրակի մինչ այժմ պեղված բոլոր հուշարձաններից գտնվել են սարդիոնից մատանիներ: Վերջիններս շատ տարածված զարդ են անտիկ ժամանակաշրջանում, հայտնաբերվել են համաժամանակյա բոլոր հուշարձաններում և հասնում են մ. թ. 4-5-րդ դարեր: Շիրակում հայտնի են Բենիամինից, Առափիից և Կարմրաքարից: Չվածիր պսակով մատանիներ կան Բենիամինի թիվ 5 (տախտակ XV, նկ. 6) և 118 (տախտակ XV, նկ. 7) դամբարանների նյութերում: Երկու դեպքում էլ մատանիները գտնվեցին ձախ ձեռքի մատնեմատին: Մատանիների տարբերությունը միայն չափերի և քարերի երանգավորման մեջ է: Նույնատիպ մեկ այլ մատանի գտնվեց Առափիի դամբարանադաշտի ավերված տարածքից (տախտակ XV, նկ. 8), մեկ ուրիշը՝ Կարմրաքարի թիվ 19 դամբարանից: Հայաստանի այլ հուշարձաններից մնան մատանիներ հայտնի են Գառնիից, Վաղարշապատից, Լանջաղբյուրից: Առաջին երկու հնավայրերի գտածոները թվագրվում են մ. թ. III-IV դարերով, իսկ Լանջաղբյուրի գտածոն վերաբերում է IV-V դարերին: Գառնիից հայտնաբերված մատանին, ըստ Ժ. Խաչատրյանի, կարող է տեղական արտադրանք լինել:<sup>87</sup> Բացառված չէ նաև Շիրակի տարբեր հուշարձաններից գտնված մատանիների տեղական լինելը, մանավանդ որ Բենիամինի բնակավայրի պեղումներից բազմաթիվ են ինչպես անմշակ, այնպես էլ մշակման հետքերով սարդիոնի կտորները: Նմանատիպ մատանու՝ նուան հատիկի թափանցիկություն ունեցող սպակյա տարբերակը գտնվեց Վարդքաղի թիվ 3 դամբարանից (տախտակ XV, նկ. 9)՝ կմախքի ձախ ձեռքի մոտ: Մատանու շատ փոքր չափից կարելի է ենթադրել, որ այն կարող էր ազուցված լինել ճկույթին: Ապակյա և քարե այսօրինակ

մատանիներ հայտնի են նաև Վրաստանից<sup>88</sup> և Ադրբեջանից,<sup>89</sup> ինչպես նաև Գրիմից և վերաբերում են III-IV դդ.:<sup>90</sup> Վարդքաղի սպակյա մատանին վերաբերում է մ. թ. III-IV դդ.:

Մատանիների քննությունը ցույց է տալիս, որ ըստ Շիրակի անտիկ դամբարանադաշտերի նյութերի՝ այս զարդերը կրելու որոշակի ձև կա: Բենիամինում մատանիները կրել են ձախ ձեռքին: Այս կանոնից շեղում է փաստված Բենիամինի երկու և Վարդքաղի մի դամբարանում: Բենիամինի թիվ 185 դամբարանում մատանին գանգի մեջ: Մատանին գանգի մեջ գտնվեց նաև Վարդքաղի թիվ 17 դամբարանում: Հստակ է, որ մատանիները եղել են ննջեցյալների բերանում:

Գտնվել են նաև կնիք-մատանիներ: Բենիամինի թիվ 141 դամբարանից, գանգի աջ կողմում՝ ուսազլիսի մոտ, գտնվեց 2մմ հաստությամբ բրոնզալարից, թմբուկաձև պսակով (տրամ.՝ 10մմ, բարձր.՝ 4մմ) կնիք-մատանի: Թմբուկի վերին հարթության վրա աղեղներով դեպի կենտրոն ուղղված երեք կիսաշրջաններ են: Աղեղների ծայրերին և շրջանի եզրերի մոտ արված է յոթ կետ (տախտակ XV, նկ. 10): Պատկերի վրա թերևս առկա է երկնքի հետ կապի խորհուրդը (կետերը կարող են խորհրդանշել երկինքը, կամ աստղերը): Թմբուկի հակառակ կողմի հարթության վրա հավանաբար վերադիր ակ է եղել, որը հետագայում կորսվել է: Ասվածը ենթադրվում է՝ ելնելով այս հարթության ավելի խորը մակերեսից և անտիկ ժամանակաշրջանին բնորոշ ձևերի համադրությունից: Նման մատանիները լայն տարածում ունեին Մերձսևծովյան շրջանում:<sup>91</sup> Բենիամինի թիվ 141 դամբարանից գտնված մատանին թվագրվում է մ. թ. 3-րդ դարով:

Կարմրաքարի թիվ 12 դամբարանից (տախտակ XV, նկ. 11), որը սալարկղի մեջ

<sup>87</sup> Ж. Х а ч а т р я н, 62վ. աշխ., էջ 123:

<sup>88</sup> М ц х е т I, Тбилиси, 1958, табл. СХV / 15.

<sup>89</sup> Д. Х а л и л о в, О раннесредневековом могильнике у села Эных Кусарского района, Археологические исследования в Азербайджане, Баку, 1965, с. 176, табл. 9-11.

<sup>90</sup> Г. М о с б е р г, К изучению могильников римского времени юго-запада Крыма, СА, VIII, 1946, с. 113-120, рис. 2.

<sup>91</sup> А р х е о л о г и я СССР, Античные государства Северного Причерноморья, М., 1984, табл. СI X<sub>31</sub>, СII<sub>26</sub>.

դրված փայտյա դագաղով թաղում է, դագաղից դուրս, սալարկղի հարավարևելյան անկյունում գտնվեց ոսկյա մատանի:<sup>92</sup> Հստակ է, որ դամբարանը դեռևս հնում թալանված է եղել: Բնականաբար անհայտ է, թե մատանին հանգուցյալի որ ձեռքին է եղել: Ելնելով դամբարանի չափերից՝ (փայտյա դագաղի երկ.՝ 107սմ, լայն.՝ 30սմ) այստեղ կարող էր թաղվել 8-10 տարեկան երեխա: Ոսկուց միաձույլ մատանու օղակը քիչ սեղմված շրջան է: Իսկ պսակը ձվածիր է, որի մեջ ագուցված է կարմրանարնջագույն կորնալինից փորագիր քարը (երկ.՝ 15մմ, լայն.՝ 11մմ ), իսկ մի կողմում 3մմ տրամագծով վերադիր գնդիկ է արված: Մատանին ավելի հին է և նախկինում պսակի մեջ այլ կնիք է ագուցված եղել: Նոր կնիքը տեղադրելիս՝ կտրտվել ու վնասվել են եզրերը, նաև փոքր-ինչ փակվել է պատկերը: Մատանու պսակին ագուցված ձվածիր քարի վրա պատկերված է աջ ոտքը քիչ առաջ դրված դիրքով կանգնած կին: Դեպի ձախ թեքված կիսադեմի վրա հստակ են ուղիղ քիթը, աչքերը, սեղմված շուրթերը, կզակի կտրուկ անցումը, կլոր այտերը և երկար վիզը: Գլխին բարձր, կիսագնդաձև, գագաթի մասում քիչ վեր ձգված, գագաթից ծոծրակն իջնող և ճակատային մասում լայն ելուստներով սաղավարտ ունի: Մազերի գանգուրները սաղավարտի տակից իջել են ճակատին: Կինը կրում է երկար, մինչև գետին հասնող ծալքավոր քիտոն, որն ընդգծում է բարակիրան, նրբագեղ ու սլացիկ մարմինը: Երկայնակի ծալքավոր քիտոնի մինչև ուտերը հասնող վզի ուղիղ բացվածքը երիզված է լայնակի, հարթ ժապավենով: Նույնպիսի մի ժապավեն անցնում է կրծքի տակով, երեքը՝ կոնքի վրայով, որ ձախ կողմում աստիճանաբար ցած սահելով, ընդգծում են կոնքը: Աջ ձեռքը հանդարտ իջել է իրանի երկարությամբ, ձախը՝ մինչև արմուկը հաված է իրանին՝ առաջ պարզած երկար քիտոնով հասկը: Թիկունքի աջ կողմում պատկերված են թևերն ու առատության եղջյուրը:

<sup>92</sup> Լ. Ե գ ա ն յ ա ն, 1999, էջ 73: Tresors de l' Arménie..., p. 246, pl. 262; Հին Հայաստանի ոսկին, Եր., 2007, էջ 222:

Բացի պատկերաբովանդակային յուրահատուկ լուծումից, Կարմրաքարի մատանին, նաև որպես զարդ, հետաքրքիր ձևավորում ունի: Գեղարվեստական լուծմանը մեծապես նպաստել է ձվածիրի եզրին արված գունդը: Մատանին որպես կնիք օգտագործելու դեպքում այն սպահովում է որոշակի խորություն կնքվող նյութի վրա, դրանով նաև՝ պատկերի հստակություն: Գնդիկը առանձնակի հմայք է հաղորդում զարդին՝ վկայելով վարպետի գեղարվեստական բարձր ճաշակի և մատանու ձևի լավագույն լուծման մասին: Գնդիկն իհարկե նույնպես գուրկ չէ նաև որոշակի բովանդակությունից: Այն խորհրդանշում է տիեզերք, նաև մեծություն և հզորություն, սահմանի ու անսահմանի միասնություն: Հայտնի է, որ աստվածություններն ընկալվում էին գնդի ձևով: Տիեզերքը նույնպես որպես գունդ կամ առարկայացված ձևով՝ ձու, սկավառակ էր ընկալվում:<sup>93</sup> Մատանու պսակի կողքին արված վերադիր գնդիկը ավելի է ընդգծում պատկերի բովանդակությունն ու շեշտում աստվածությունների հետ կապը:

Կնիքի պատկերի մեջ պատկերված կնոջ կերպարում խտացված են երեք տարբեր աստվածների ատրիբուտները. սաղավարտ՝ Աթենաս, թևեր՝ Նիկե, հասկ ու առատության եղջյուր՝ Դեմետր: Ինչպիսի՞ն է հունական դիցաբանի այս երեք աստվածների դիցաբանական կերպարը, և ի՞նչ ընդհանրական հատկանիշներով նրանք կարող էին միավորվել:

Աթենասը ոչ միայն օլիմպիական դիցաբանի կարևոր հերոսներից է, այլև ուժով ու իմաստությամբ հավասարագոր է Ջևսին և հունական դիցաբանության հնագույն շրջանից սերելու ծագումնաբանությամբ երբեմն գերազանցում է նրան: Ջևսից հետո երկրպագում էին Աթենասին: Ռազմատենչ աստվածուհու իր նոր պարտականությունների հետ Աթենասը պահպանել է մայրիշխանական անկախությունը: Նա խոհեմության պահապանն է: Աթենասն ընկալվել է որպես ճակատագիր և Մեծ մայր աստվածուհի, նաև՝ ամեն ինչ ծնող և կործանող: Նա

<sup>93</sup> В. Т о п о р о в, М. М е й л а х, Круг, МНМ, Энциклопедия, т. 2, М., 1992, с. 19.

հերոսների հովանավորն է: Աթենասի օգնությամբ է Պրոմեթևսը գողանում կրակը:<sup>94</sup> Աթենասը Հայաստանում ուներ իր տաճարը, որը գտնվում էր Դարանաղյաց գավառի Թիլ ավանում:<sup>95</sup> Հայկական դիցաբանում Աթենասը նույնացվում էր Նանեի հետ:<sup>96</sup>

Երկրորդը Նիկեն է՝ հաղթանակի աստվածուհին: Նիկեն Աթենասի մականուններից մեկն է նաև, և Աթենասը միշտ պատկերվում է Նիկեն ձեռքին:<sup>97</sup>

Երրորդը Դեմետրն է՝ երկրագործության աստվածուհին, մարդկանց նկատմամբ բարեհաճ, գեղեցկատես, հասուն ցորենի գույնի մազերով: Դեմետրի լեգենդում արտացոլված է նաև կյանքի ու մահվան հավերժական պայքարը: Նա պատկերվում է որպես սգացող մայր, որը կորցրել է իր սիրասուն դստերը:<sup>98</sup> Հելլենիստական Հունաստանում Դեմետրը կրում էր «Մայր հացահատիկ» անունը և աղերսվում էր հացահատիկի պաշտամունքի հետ: Աստվածուհու սերտ կապը պտղաբերության, երկրագործական ծեսերի հետ արտացոլված է Էլելսիմյան հռչակավոր խորհրդածեսում:<sup>99</sup>

Անտիկ նկարիչները հացահատիկի երկու դիցուհիներին՝ Դեմետրին և Պերսեփոնեին պատկերում էին գլուխներին ցորենի հասկերից հյուսված թագերով և ձեռքերին՝ խրճեր: Առասպելի համաձայն, Դեմետրը հացահատիկը մշակելու գաղտնիքը բացեց աթենացիներին:<sup>100</sup> Պերսեփոնեին հատկացրել են աշնանը ցանվող և զարմանը աճող հացի դեր, իսկ Դեմետրին բաժին է ընկել հացի վշտացող մոր դերը, որ

ամեն տարի ողբում է դստեր ստորերկրայք իջնելը և ուրախանում է, երբ նա այնտեղից վերադառնում է:<sup>101</sup> Աթենաս, Նիկե, Դեմետր համահավաք կերպարը կնիքի վրա խտացվել է մի կնոջ պատկերում: Աթենասը, լինելով ամեն ինչ ծնող և կործանող, ուներ իրեն հատկացված երկրագործական տոները՝ կապված հացի աճի, հունձի սկզբի, պտուղների հասունացման հետ: Այստեղ Աթենասն ու Դեմետրը միավորվում են իրենց հատկանիշներով և հաղթանակը՝ Նիկեն, ուղեկից է: Երկու աստվածուհիների (ամեն ինչ ծնող և կործանող՝ Աթենաս և կյանքի ու մահվան հավերժական պայքար՝ Դեմետր) հատկանիշները նույնպես ընդհանրական են: Հողի պտղաբերումը, բնության զարթոնքն անհնար է առանց բուսական աշխարհի անխուսափելի մահվան, առանց որի էլ անհնար է վերածնվելը: Կնիքի պատկերի վրա երեք աստվածուհիները միավորվել են հենց այս հատկանիշներով և պատահական չէ, որ կենտրոնական՝ գլխավոր պատկերը Դեմետրն է:

Կնիք-մատանին պատկերի բովանդակությանը արձագանքում է հողի նկատմամբ երկրագործ հայերի ունեցած պաշտամունքին: Իսկ Շիրակը հայտնի էր որպես հացահատիկային մշակաբույսերի մշակության կենտրոն, հացի շտեմարան. «...արգասանդ և բերրի դաշտ...ի թիկունս հիսիսայ լեռինն, որ անուանեցաւ Արագած...»:<sup>102</sup> Շիրակի ամբարների մեծությունը չափվում էր առասպելական Շարայի ախորժակի հետ. «...թէ քո Շարայի որկորն է՝ ասեն, մեր Շիրակայ ամբարքն չեն ասին» Շիրակի ամբարների մասին Մովսես Խորենացու վկայությունը հաստատվում է Բենիամինի հելլենիստական բնակավայրի պեղումներով: Այստեղ բացված բազմաթիվ հորերում հայտնաբերվել են հացահատիկային մշակաբույսեր:<sup>103</sup>

Կնիքը, որպես պատկեր, բերքի և բերքատվության պահապան և բերրիության խոր-

<sup>94</sup> А. Ф. Л о с е в, Афина, МНМ, Энциклопедия, т. 1, М., 1991, с. 125-128; Словарь античности, М., 1989, с. 62; Мифологический словарь, М., 1990, 75-76; Հայերեն դիցաբանական բառարան, Եր., 1985, էջ 7-8:

<sup>95</sup> Մ. Խ ո ռ ե ն ա ճ ի, Բ, ժգ:

<sup>96</sup> Հայերեն դիցաբանական բառարան, Եր., 1985, էջ 168:

<sup>97</sup> А. Т а х о-Г о д и, Нике, МНМ, Энциклопедия, т. 2, М., 1992, с. 217; Словарь античности, М., 1989, с. 379, Мифологический словарь, М., 1990, с. 390.

<sup>98</sup> А. А. Т а х о-Г о д и, նշվ. աշխ., էջ 364-366: Словарь античности, 1989, с. 175, Мифологический словарь, М., 1990, с. 181; Հայերեն դիցաբանական բառարան, Եր., 1985, էջ 57:

<sup>99</sup> Н. Н о в о с а д с к и й, Елевсинские мистерии, СПб, 1939.

<sup>100</sup> Ջ. Ֆրեդեր, Ոսկե ճյուղը, Եր., 1989, էջ 466:

<sup>101</sup> Նույնը:

<sup>102</sup> Մ. Խ ո ռ ե ն ա ճ ի, Ա, ժբ:

<sup>103</sup> Հ. Խ ա չ ա տ ը յ ա ն, Ուրվագծեր Շիրակի դաստակերտի մ.թ.ա. 1-ին դարի առևտրատնտեսական հարաբերությունների, ԵՊՄԺ հանրապետական առաջին գիտաժողով, գեղարվեստի քննադատներ, Գյումրի, 1994, էջ 28-29:

հրդանիշ լինելուց զատ, ունի նաև զուտ որպես կնիք - մատանի իր որոշակի իմաստը: Հայտնի է, որ փորագիր քարերով մատանիները ծառայել են որպես ունևոր դասի կնիք,<sup>104</sup> և միայն որոշակի խավի մարդիկ իրավունք ունեին կնիք - մատանի կրել:<sup>105</sup> Մատանիներ կրելու սովորույթը լայն տարածում ուներ անտիկ դարաշրջանում: Իսկ թանկարժեք մատանիներ կրելը միշտ կապվում էր վերնախավի հետ և այդ իրավունքը նրա մենաշնորհն էր:<sup>106</sup> Մ.թ. առաջին դարերում ոսկյա մատանիներ կրելը հայկական վերնախավի համար նույնպիսի բովանդակություն և իմաստ է ունեցել:

Անտիկ ժամանակաշրջանում զարդն առաջին հերթին պահպանակ էր, և կրկնակի գոբություն ուներ ոսկյա զարդը: Հելլենիստական շրջանի կնիքներն ավելի շատ զարդի բովանդակություն են ստանում, և շատ բարդ ու խորը փորագրությունն ամբողջապես կորցնում է պրակտիկ նշանակությունը:<sup>107</sup> Կնիքներն այդ ժամանակաշրջանում և՛ կնիք են, և՛ զարդ, իսկ երբեմն ավելի շատ զարդ են, քան կնիք:

Կիսաթանկարժեք քարերի գեղարվեստական մշակումը լայն տարածում էր գտել ինչպես Հին Արևելքում, Իրանում, այնպես էլ անտիկ հունահելլենիստական և հռոմեական աշխարհում:<sup>108</sup> Հունական փորագրիչները հատուկ ուշադրություն էին դարձնում քարի ընտրությանը, և թեման ու պատկերն էին պայմանավորում քարի տեսակը:<sup>109</sup> Նյութի կարծրությունը կամ ամրությունը, աշխատանքի ժամանակ տարբեր

ազդեցություններին ենթարկվելը, թափանցիկությունը, անթափանց կամ կիսաթափանց լինելը, այս բոլորն անկասկած որոշակի ազդեցություն ունեին նաև կատարման տեխնիկայի ընտրության վրա: Ամեն մի նյութ, փորագրման համար ընտրված յուրաքանչյուր քար կարծես ուներ իր բնավորությունը, որ փորագրիչն անպայման հաշվի էր առնում աշխատանքը ձեռնարկելիս: Այս իմաստով Կարմրաքարի մատանին պատրաստելիս ավելին անելն անհնար էր: Մատանու ձևի և կնիքի պատկերի ներդաշնակության մեջ բնական քարը, ազնիվ նյութը՝ ոսկին, ինչպես նաև փորագրված պատկերը, մեկը մյուսից անբաժան են: Պատկերը հարստացնում է քարը, քարն իր հերթին հարստացնում է պատկերը: Բարձրորակ ոսկու ազնիվ դեղինն ու քարի տաք ու չճացող կարմիրը մի նուրբ ներդաշնակություն են ստեղծում: Կարծես միավորվել են արտերի ոսկեդեղինն ու հասուն գործնի կարմիրը: Ներդաշնակության մեջ են նաև թեման և նյութը: Եվ տասնյակ ամենալավ, ամենահստակ կնքադրոշմները չեն կարող ստեղծել այն տպավորությունը, որ թողնում է ինքը՝ կնիքը, քանի որ նյութից դուրս պատկերը մեռյալ է: Կնիքի բարդ և տեխնիկական բարձր կատարելությամբ շտրիխային պատկերն ունի ոչ խորը փորագրություն: Փորագրիչը մանր գծերի հստակ ու կտրուկ հատումներով հասել է ամբողջացնող պատկերի: Կնիքի գեղարվեստական լուծումը կատարյալ է՝ նյութ, թեմա, ձևավորում, կատարում ընդհանրության մեջ:

Ոսկուց միաձույլ մատանիները բնորոշ են ուշ հռոմեական շրջանին:<sup>110</sup> Հյուսիսային Մերձսևծովյան շրջանում Աթենասի պատկերով մանատիպ մի մատանի հայտնի է Գորգիայի պեղումներից և թվագրվում է մ. թ. 3-րդ դարով:<sup>111</sup> Հայտնի են նաև Վրաստանի անտիկ թաղումներից. գտնվել են Սամթավրոյից և թվագրվում են մ. թ. 4-6-րդ դարերով:<sup>112</sup> Նման մատանիներ

<sup>104</sup> М. М а к с и м о в а, Античные печати Северного Причерноморья, ВДИ. 1937, N 1. стр. 252; М. Максимова, Геммы из некрополя Мицхеты-Самтавро (раскопки 1938-1939 гг.) Вестник Гос. Иузея Грузии, т. XVI-B, 1950, с. 238; М. Вязьмитина, Золотобалковский некрополь, Киев, 1972, с. 146.

<sup>105</sup> Г. П у г а ч е н к о в а, Мервские геммы-интальи, Труды Южно-Туркменской археологической комплексной экспедиции. XII, Ташкент, 1963, с. 210.

<sup>106</sup> Е. А л е к с е е в а, Царская тамга на золотом перстне из Горгипии, В кн: „Проблемы античной культуры“, М., 1986, с. 118.

<sup>107</sup> М. Н и к у л и н а, О древней глиптике и ее материале: в кн: „Искусство Востока в античности“, М., 1977, с. 53.

<sup>108</sup> Բ. Ա ն ա թ է լ յ ա ն, Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության, Եր., 1976, էջ 31:

<sup>109</sup> М. Н и к у л и н а, նշվ. աշխ., էջ 58:

<sup>110</sup> F. M a r s h a l l, Catalogue of the Finger Rings, Greek, Etruscan and Roman in the Departments of antiq uities British Museum, London, 1907. pl. XXXI/ 495.

<sup>111</sup> Е. А л е к с е е в а, 1986, с. 118:

<sup>112</sup> М. И в а щ е н к о, Кувшинные погребения Азербайджана и Грузии, Изв. АН Азерб. ССР, N. 1, 1947. с. 73.

հայտնի են Աղայանից, Արմազիսից, Արևմտյան Վրաստանից, Ուրեկի մոտ գտնվող դամբարանադաշտից, Դիդոմիի հարուստ զինվորի դամբարանից:<sup>113</sup> Վերջինը երկաթից է՝ սարդիոնից կնիքով և թվագրվում է մ. թ. 3-րդ դարի երկրորդ կեսով:<sup>114</sup> Իսկ Արմազիսի գտածոն Լորդկիպանիձեն համարում է սասանյան և թվագրում մ. թ. 3-4-րդ դարերով:<sup>115</sup>

Հայաստանում պսակի եզրին ամրացված գնդիկով նմանօրինակ մի մատանի հայտնի է Վարդաձորից:<sup>116</sup> Երկու նման մատանի պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում, մեկն՝ Էրմիտաժում:<sup>117</sup> Հայաստանում գտնված նմանօրինակ մատանիները թվագրվում են 4-5-րդ դարերով: Կարմրաքարի մատանին իր ձևով, փորագրման տեխնիկայով, պատկերագրության ոճով աղերսվում է սասանյան շտրիխային կնիքների: Կնիք -մատանին կարող է թվագրվել 3-4-րդ դարերով, և դրան օգնում են նաև քիտոնի և սաղավարտի ձևերը:

Կարմրաքարի մեկ այլ՝ թիվ 5 դամբարանից գտնվեց կարմրավուն սարդիոնից մատանի (տախտակ XV, նկ. 12): Մատանու հետ միաձույլ պսակի (երկ. 15մմ, լայն. 5մմ) վրա փորագիր պատկերն է: Մոաջին հայացքից պատկերն ընկալվում է պատվանդանին կանգնած, թիկնոցի մեջ պարուրված ֆիգուր՝ ձախ կիսադեմի վրա ընդգծված մեծ քթով, թավ բեղերով: Գլխին կիսագնդաձև, թասականման սաղավարտ է, որից թիկունքին է իջնում երկար պոչը: Ջուգահեռ թեք գծերով իրանը, աստիճանաբար նեղանալով, միանում է փոքր պատվանդանին: Ծոծրակի և իրանի երկու կողմերից ելնող բարակ, կեռվող և իրանի ստորին հատվածին միացող գծիկներն ամբողջացնում են պատկերը: Շտրիխային պատկերի բոլոր մանրամասների հա-

մադրումը բերում է այն համոզման, որ պատկերված է ամֆորայից ելնող մարդ-մեղու: Մինկրետիկ պատկերում մարդու և մեղվի համադրումը դիցաբանական մտածողությանը հատուկ բնականի ու գերբնականի միահյուսում է:

Հնդեվրոպական դիցաբանության մեջ մեղվի և մեղրի հետ կապված տարբեր մոտիվներ կան: Նեոլիթյան դիցաբանական պատկերացումներում մեղուն արդեն հայտնի է: Մեղվի պատկերագրության հնագույն օրինակներն Արևելյան Իսպանիայում՝ Ալպերի քարանձավների ժայռանկարներում են (VII հազ. մ.թ.ա.), որտեղ պատկերված է անոթը ձեռքին, մեղունների պարսով շրջապատված, ծառի փչակից մեղր հանող կին:<sup>118</sup> Նույն ժամանակաշրջանին է վերաբերում նաև Չաթալ Հյույուկում (VII- VI հազ. մ.թ.ա.) հայտնաբերված մեղունների և մեղրամուսի պատկերագրությունը, որտեղ մեղուն կանացի աստվածության գլխավոր ատրիբուտ է:<sup>119</sup>

Մեղուն առանձնակի դեր ունի դիցաբանության մեջ և դեռևս «Խեթական օրենքներում» առանձին դրվագներ են հատկացված մեղունների պաշտպանությանը, և փոխհատուցում է նախատեսված մեղունները գողանալու դեպքում:<sup>120</sup>

Մեղուն կապված է բերքատվության և զարման գալստյան հետ, երբեմն էլ զարման զարթոնքին նպաստող աստծու գործիք է: Մեղուն առանձնակի դեր ունի անհետացող և վերադարձող աստծու (Ամարոսի աստված, Արևի աստված) հետ կապված հավատալիքներում: Խեթական ծիսակարգում Մայր աստվածուհին մեղվին ուղարկում է անհետացած և բերքատվությունն իր հետ տարած աստծուն փնտրելու: Մեղուն պետք է գտներ Տալիսիմուսին, ակնամոմով պատեր աչքերն ու ձեռքերը և ետ բերեր՝ վերադարձնելով նաև կորսված բերքատվությունը:<sup>121</sup>

<sup>113</sup> М. И в а щ е н к о, նշվ. աշխ., էջ 73:

<sup>114</sup> Նույնը:

<sup>115</sup> М. Л о р д к и п а н и д з е, Геммы Государственного музея Грузии. т. III, Тбилиси, 1961, рис. 442.

<sup>116</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Հայաստանի անտիկ շրջանի ոսկե մատանիները, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ կենտրոնական բանկ, «Հին Հայաստանի ոսկին» հանրապետական գիտական նստաշրջան, զեկուցումների թեզներ, Եր., 1997, էջ 15:

<sup>117</sup> Նույնը:

<sup>118</sup> Дж. К л а р к, Доисторическая Европа. Экономический очерк (Перевод с английского. Редакция и предисловие А. Брюсова), М., 1953, с. 44.

<sup>119</sup> М e l l e a r t, Catal- Hüyük. A neolithic town in Anatolia. London.1967.

<sup>120</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, Индо-европейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, с. 605.

<sup>121</sup> МНМ, Энциклопедия, т.2, М., 1992, с. 354; Т. Гамк-релидзе, Вяч. Иванов, 1984, с. 605:

«Ողիսականում» նկարագրվում են քարանձավի նիւփաները՝ կանացի աստվածությունները և նրանց հետ քարանձավում՝ քարե անոթների մեջ բույն դրած մեղուները: Քարե անոթները փեթակի մետաֆորիկ ձևն են: Հոմերոսյան ժամանակաշրջանի սովորությունները, որտեղ կանացի աստվածությունների հետ նաև նրանց կողքին բույն դրած մեղուներն են, արտացոլված են ավելի ուշ մոտիվներում՝ կապված Եփեսոսում Արտեմիսի տաճարի հետ:<sup>122</sup> Մեղուն Արտեմիսի խորհրդանիշն էր (Փոքր Ասիայի այլ վայրերում նաև՝ Կիբելայի), որոնց քրմուհիները մեղուներ էին կոչվում, իսկ ողջ տաճարը նմանեցվում էր փեթակի:<sup>123</sup>

Եթե դիցաբանության մեջ առանձնակի դեր ունի մեղուն, ապա ծիսակարգում նույնպիսի դեր ունի մեղրը: Մեղրի գոհաբերություն կատարվում էր խեթական ծիսակարգում: Անոթների մեջ լցված մեղրը, ի թիվս այլ սննդամթերքի, պահում էին տաճարում և բացում էին միայն գարնանը:<sup>124</sup> Հունական ծիսակարգում մեղվի և մեղրի օգտագործման մասին ամենահին վկայությունները վերաբերում են միքենյան ժամանակաշրջանին: Կաթի հետ խառնված մեղրն օգտագործվում էր բոլոր մեռածների համար կատարվող գոհաբերությունների ժամանակ՝ հեղելով երեք ընպելիք. մեղրը կաթի հետ, այնուհետև քաղցր գինով, ապա՝ ջրով:<sup>125</sup> Ռուսաստանում մեղրը ծիսական ուտելիք էր: Հոգեհացի շիլան ուտում էին մեղրով:<sup>126</sup>

«Ռիզվեդայում» մեղրը դիտվում էր աստվածային անմահության ընպելիք, իսկ մեղուն՝ Կրիշնայի և Ինդրայի խորհրդանիշ:<sup>127</sup> Մեղրը և մեղրով ընպելիքները՝ նեկտարը և ամբրոսիան, Օլիմպոսի անմահ աստվածների ուտելիքն էին:<sup>128</sup> Դրանցով էին սնվում Դիոնիսոսն ու Հեր-

մեսը: Ըստ Սուրբ գրքի՝ կաթի և մեղրի գետեր էին հոսում Ավետյաց երկրում: Անապատում վայրի մեղրով էր սնվում Հովհաննես Սկրտիչը:

Մեղուն համարվել է աստվածուհու խորհրդանիշ, հավանաբար քանի որ կապվում է ծաղկի հետ, իսկ վերջինս իմաստաբանորեն կապված է հողի աստվածության հետ:<sup>129</sup> Քանի որ մեղրը համարվել է ամուսնության և մանկածնության հովանավոր աստվածուհու հետ կապված ուտելիք, նորաստեղծներին առաջարկվում էր հարսանիքից հետո որոշ ժամանակ մեղր ուտել: Սովորույթը պահպանվել է բազմաթիվ ժողովուրդների մոտ, որտեղից էլ ծնվել է *մեղրամիս* արտահայտությունը: Հայոց հավատալիքներում մեղրի և մեղվի պաշտամունքի վկայություններ են հարսանեկան ծեսում հարսին և փեսային մեղր կերցնելը, հարսանեկան սեղանի համար կաթով և հատիկով եփված ու մեղրով մատուցվող «սեր» կոչվող ուտեստ պատրաստելը: Իսկ ժողովրդական խոսքում բարեկեցության աստիճանը բնորոշող «մի ձեռքը մեղրի մեջ է, մյուս՝ յուղի» արտահայտությունը մեղրը աստվածների ուտելիք լինելու դիցաբանական ընկալման արձագանք է: Մեղրից պատրաստվող խմիչքները՝ մեղրաջուրն ու մեղրագինին հավանաբար ևս աստվածային ընպելիքներ են դիտվել:

Հայոց մեջ մեղվի պաշտամունքի մասին վկայող հնագույն հավատալիքի մի նմուշ է հետևյալ լեգենդը. «Մուշի Տիրկատար լեռան լանջին գտնվում են Մեղրի քարերը, իսկ գազաթին՝ Տիր աստծո տաճարը: Տիրը սովորություն ուներ նստել քարին ու վայելել հատուկ իր համար մեղուների կողմից հավաքած մեղրը, որը պահվում էր ոչ հեռու գտնվող քարանձավի մեջ՝ տասը մեծ կարասներում»:<sup>130</sup>

Տիրը հայկական դիցաբանության մեջ գրի և գրչության, գիտության և արվեստների աստվածն է, Արամազդի դայիր, ճակատագրեր կանխագուշակող:<sup>131</sup> Ազաթանգեղոսի բնորոշմամբ՝ Տիրը «երազացույց, երազահան» էր և ուներ

<sup>122</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, 62վ. աշխ., էջ 606

<sup>123</sup> Նույնը: МНМ, Энциклопедия, т.2, М.,1992, с. 354.

<sup>124</sup> А р д з и н б а, Ритуалы и мифы Древней Анатолии, М., 1982, с. 17.

<sup>125</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, 1984, с. 606:

<sup>126</sup> А. Г о л а н, Миф и религия, М., 1992 с.175.

<sup>127</sup> МНМ, Энциклопедия, т. 2, М., 1992, с. 355.

<sup>128</sup> Ե. Մ. Մ. Մ. Մ., Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Եր., 1956, էջ, 513:

<sup>129</sup> А. Г о л а н, 1992, с. 175:

<sup>130</sup> Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, Ավանդապատում, Եր., 1969, թիվ 195, էջ 74:

<sup>131</sup> Ս. Բ. А р у т ю н я н, Тир, МНМ, Энциклопедия, М., 1992, т. 2, с. 513.

ճարտարության ուսման մեհյան:<sup>132</sup> Տիրը նաև «գրող է», որ հաշվի էր առնում մարդկանց լավ և վատ արարքները:<sup>133</sup> Տիրի «գրող» լինելու իմաստը շատ հստակ է «գրողը տանի, գրողի բաժին դառնալ» պարսավանքի խոսքերում, որտեղ գրողին հանձնելը հավասարազոր է մահին հանձնել: Լեգենդի մեջ նշվում է, որ Տիրն ապրում է քարանձավում: Հնդեվրոպական դիցաբանության մեջ քարանձավը բնական կացարան է խտոնիկ էակների համար. ծիսական ապաստարան և թաքստոց,<sup>134</sup> տիեզերքի խորհրդանիշ և սրբավայր,<sup>135</sup> երկնքի և երկրի կապի տեղ, միաժամանակ՝ անդրաշխարհի մուտք: Կրետեում կար մեղուներին նվիրված քարանձավ: Այստեղ Դիկտա քարանձավում էր Հռեան ծնել Ջևսին: Քարանձավում էին ապրում Ջևսին կերակրող սրբազան մեղունները:<sup>136</sup> Անդրաշխարհի հետ Տիրի կապի մասին են վկայում նաև լատիներենում Տիր բառի դժնեայ, չարաչար<sup>137</sup> իմաստները:

Տիրի կերպարի մեջ միահյուսվել են մեռնող և հարություն առնող բնության, ճակատագրի և անդրաշխարհի հետ կապված հավատալիքները: Խեթական սովորույթներում մեղվի և մեղրի մասին պատկերացումների, մեռնող և հարություն առնող բնության և բերքատվության Տալիպինուս աստվածության և հայոց գրի, գրչության, երազացույց և երազահան, գիտության և արվեստների աստված Տիրի կապը հավանաբար հասնում է ծագումնաբանորեն հարազատ նախատիպին:

Մեղրը զոհաբերություն էր աստվածներին, կապվում էր նաև թաղման ծեսի հետ: Հերոդոտոսի վկայությամբ՝ բաբելոնացիները հանգուցյալներին թաղում էին մեղրի մեջ:<sup>138</sup> Թաղման ծեսի հետ են կապվում Հեկաթեին մեղրի

նվիրաբերումը, Մայր աստվածուհուն մեղրաբլիթներ նվիրելը, գերեզմանի վրա մեղրի ծիսական հեղումը: Մինչև անցյալ դարի 70-ական թվականները Լեռնականոնում էգնահողին հանգուցյալի տուն շաքար տանելը մեղրի զոհաբերության հնագույն ծեսի հետնագույն օրինակ է:<sup>139</sup> Մեղվի և մեղրի պաշտամունքի հետ կապված հավատալիքների և Կարմրաքարի կնիքի պատկերի համադրումը թույլ է տալիս ենթադրելու, որ ամֆորայից ելնող, մեռնող և հարություն առնող բնության պաշտամունքի հետ կապված մարդ-մեղուն կարող էր խորհրդանշել Տիրին:

Կնիք-մատանին ձևով Բենիամինից, Առափիից, նաև Կարմրաքարից գտնված սարդիոնից անգարդ մատանիների կրկնությունն է, իսկ պատկերի կատարման ձևով և ոճով աղերսներ ունի Անժերում գտնված, մ. թ. 2-րդ դարով թվագրվող կորնալինից կնիքի հետ:<sup>140</sup> Կարմրաքարի այս գտածոն վերաբերում է մ.թ. 3-րդ դարին:

Գտածոների մեջ կան նաև կնիքներ, որոնք գտնվել են Մարատակից, Բենիամինից և Վարդբաղից: Մարատակի գտածոն (տախտակ XV, նկ. 13) կապույտ ապակու մածուկից, միջանցիկ անցքով ուղղանկյուն է (բարձր.՝ 0,8սմ, երկ.՝ 1,7սմ, լայն.՝ 1,1սմ): Բազմանիստ կնիքը պատահական գտածո է:<sup>141</sup> Կնիքի վրա պատկերված է առջևի ոտքերը պրկված, գավակը՝ քիչ ցածր ձի: Չիուց ձախ շրջանի մեջ առնված խաչով պատկերված է անիվը, որի երեք տարբեր կետերից բարձրանում են ուղղահայաց գծեր, հավանաբար մարտակառքի կողերը: Կարծում ենք, կնիքի վրա պատկերված է սանձը ձեռքին, ուղիղ կողերով մարտակառքի մեջ կանգնած մարդ: Մակերեսը, որի վրա դրոշմվել է կնիքը, փոքր է եղել և դրոշմելիս պատկերի վերին հատվածն ուղղակի դուրս է մնացել դաշտից՝ կնիքի վրա թողնելով խաթարված պատկեր: Այնուամենայնիվ, անիվի խորհրդանշական արևապատկերն արդեն իսկ շեշտում է երկնքի և աստվածայինի հետ կապը:

<sup>132</sup> Ա գ ա թ ա ն գ ե դ ն ս, Պատմություն հայոց, Եր., 1977, 778, էջ 120:

<sup>133</sup> Դիցաբանական բառարան, Եր., 1985, էջ 236:

<sup>134</sup> МНМ, Энциклопедия, том 2, М., 1992, с. 311.

<sup>135</sup> Ս. Մ խ ի թ ա ռ յ ա ն, Թաղման ծեսի մի քանի դրվագ ըստ Գր. Մագիստրոսի, Հին Հայաստանի մշակույթ, 3, Եր., 2003, էջ 146:

<sup>136</sup> А. Ф. Л о с е в, Античная мифология в ее историческом развитии. М., 1957, с.250.

<sup>137</sup> ՆԲՀԼ, հ. 2, 1981, էջ 876:

<sup>138</sup> Հ ե թ ն դ ն ս, Պատմություն ինը գրքից, Եր., 1986, Գ I, 198:

<sup>139</sup> Գ.ԱՆ, հեղինակի գրառումներից, Գյումրի:

<sup>140</sup> V i n g t - c i n q annees d' archeologie Gallo-Romain. Nantes, 1980, pl. 46.

<sup>141</sup> Dans les montagnes d' Arménie, 500 000 ans d histoire avant notre ere. Rouen, France, 2007, p.205, f. 239

Հայաստանից հայտնաբերված մ.թ.ա. VI - մ. թ. II դդ. թվագրվող կնիքների և Արտաշատից հայտնաբերված կնքադրոշմների մեջ<sup>142</sup> բավականին շատ են ձիու պատկերները: Կենդանին պատկերված է ինչպես մարտակառքին լծված՝ այնպես էլ՝ առանձին կամ այլ կենդանիների հետ. Արմավիր,<sup>143</sup> Ագարակ,<sup>144</sup> Գառնի,<sup>145</sup> Դվին,<sup>146</sup> Գյումրի,<sup>147</sup> Օշական,<sup>148</sup> Գեղաղիր,<sup>149</sup> Գորիս,<sup>150</sup> Արտաշատ:<sup>151</sup> Մարաստակի կնիքը ձևով, պատրաստման տեխնիկայով և թեմայով աղերսվում է հելլենիստական կնիքներին և թվագրվում է մ. թ. ա. II-III դդ.:

Ձիու պատկերով մեկ այլ կնիք գտնվեց նաև Բենիամինի թիվ 98 դամբարանից: Կնիքը դեղնականաչավուն ապակուց է՝ մի կողմում հարթ, մյուսում քիչ ուռուցիկ, և ունի կոյարզեզի ձև: Հարթ մակերեսի ձվածիքի վրա պատկերված է թևավոր ձի՝ Պեգասոսը, բարձր վզով, փոքր գլխով, առջևի ոտքերը ծնկներից ծալված: Գավակն ուղիղ է, մեջքին պատկերված են թևերը (տախտակ XV, նկ. 14):

Հունական դիցաբանությունից հայտնի է, որ որպես Մեդուզայի և Պոսեյդոնի կապի պտուղ, Պեգասոսը ծնվել է Պերսևսի կողմից սպանված Մեդուզայի արյունից: Պեգասոսի սմբակների արյունից է ծնվել Հիպպոկլայենի աղբյուրը, որը բանաստեղծներին ներշնչանք էր պարգևում:<sup>152</sup> Հայոց հավատալիքներում առասպելական

կենդանակերպ էակներից են հրեղեն ձիերը, որոնց մասին Եզնիկը գրում է. «Իբրև զծովացուլն՝ գոր ի կովէ ելեալ ասեն,... և ոչ ի կովուց ծովացուլն ելեալ՝ եթէ ի ծովակս բնակիցէ... Մին ասէ՝ թէ ի մերում գեղ ծովացուլ զկով գործեաց»: Հրեղեն ձիերը լճերի մեջ են բնակվում, հաճախ դուրս են գալիս ջրից և նույն տեսակի այլ կենդանիների հետ խաչասերվում: Դրանցից ծնվում են ճեփ-ճեփմակ անբիծ մտրուկներ:<sup>153</sup> Հայ դիցաբանության մեջ հրեղեն ձիու մասին գրույցների մեջ առանձնանում է Քուկիկ Ջալալին, որին ծովածին Սանասարը ձեռք է բերում ծովից:<sup>154</sup>

Իսկ ի՞նչ ծագում ունի կնիքը: Իրանական հին արևելյան ձևերի (կոյարզեզ) և հունա-հռոմեական սյուժեների զուգորդմամբ կնիքների պատկերները հարստացնում էին փորագիր քարերի հունա-պարսկական ոճը, որ հանդես է գալիս կոյարզեզների և բազմամիստ կնիքների ձևով:<sup>155</sup> Հայաստանում արվեստի այս տեսակը զարգանում էր իրանափոքրասիական միջավայրի հետ ունեցած կապերի շնորհիվ: Հայաստանի հելլենիստական տարբեր հուշարձաններից գտնվել են զանազան փորագիր քարեր: Ավելի մեծ խումբ են կազմում սկարաբեոիդները, որոնց վրա կենդանիների, այդ թվում նաև ձիերի պատկերներ են փորագրված:<sup>156</sup> Քարի վրա փորագիր վաղագույն կնիքները, որ գտնվել են Հայաստանի տարբեր հուշարձաններից, վերաբերում են մ. թ. ա. 6-5-րդ դարերին:<sup>157</sup> Հելլենիստական շրջանում գերակշռում են ապակյա կնիքները, որոնք, ըստ հետազոտողների, քարե կնիքների նմանակումներ են:<sup>158</sup> Ելնելով պատրաստման տեխնիկայից՝ Հայաստանի այլ հուշարձաններից հայտնի գտածոների հետ ունեցած ո-

<sup>142</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Հայ իրանական մշակութային կապերն ըստ Արտաշատի կնքադրոշմների, Հայ արվեստի հանրապետական 7-րդ գիտական կոնֆերանս, զեկուցումների թեզեր, Եր., 1995, էջ 27-28: Arménie, Tresors de L' Arménie ancienne, 1996, Paris, p. 223-224.  
<sup>143</sup> Բ. Ա ռ ա ք ե լ յ ա ն, 1976, էջ 33:  
<sup>144</sup> Ա. Գ ա ր ր ի ե լ յ ա ն, Էրեբունիի պատկերազարդ կնքադրոշմը, ՊԲՀ, 2008, թիվ 3 (179), աղ. I, նկ. 13:  
<sup>145</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Դիտողություններ Հայաստանի հելլենիստական շրջանի զիպտիկայի մասին.- ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, թիվ 7, էջ 100:  
<sup>146</sup> Կ. Ղ ա ֆ ա ղ ա ղ յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, Եր., 1982, էջ 134: Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Հայաստանում հայտնաբերված բազմամիստ կնիքները, ՊԲՀ, 1965, թիվ 1, էջ 273, նկ. 1:  
<sup>147</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1965, էջ 275:  
<sup>148</sup> С. Е с а я н, А. К а л а н т а р я н, Ошакан, I, Ер., 1988, с. 58.  
<sup>149</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1965, էջ 276:  
<sup>150</sup> Օ. Խ ն կ ի կ յ ա ն, Նորահայտ հուշարձան Գորիսում, ՊԲՀ, 1981, թիվ 4, էջ 313, նկ. 3/1:  
<sup>151</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1981, էջ 91, նկ. 49/6:  
<sup>152</sup> Мифологический словарь, М., 1990, с. 425.

<sup>153</sup> Մ. Ա ր ե ղ յ ա ն, Երկեր, հ. Է, Եր., 1975, էջ 83:  
<sup>154</sup> Նույնը:  
<sup>155</sup> A. F u r t v a n g l e r, Die antiken gemmen. Geschichte der stein Scheidekunst im Klassischen altertum III Leipzig - Berlin, 1900, էջ 116-128.  
<sup>156</sup> А. М н а ц а к а н я н, Раскопки могильников у селения Атарбекян в Армянской ССР. КСИИМК вып. 60, 1955, с. 34-35.  
<sup>157</sup> А. М а р т и р о с я н, Город Тейшебаини, Ер., 1961, с. 147-148.  
<sup>158</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 127: М. Максимова, Артюховский курган, Л., 1979г. стр. 75, 88: М. Лордкипанидзе, 1961, էջ 44-47:



ճական ընդհանրություններից՝ Բենիամինի կնիքը թվագրվում է մ. թ. ա. 1-ին դարով:

Երկու ուլունք- կնիք՝ մեկը կարմիր ապակուց, մյուսը՝ լեռնային բյուրեղից, գտնվեցին Վարդգառի թիվ 9 դամբարանից: Կնիքներից առաջինը (տախտակ XV, նկ. 15), կարմիր ապակուց է, ունի սեղմված գնդի ձև (տրամ.՝ 2մմ, պատկերի երկ.՝ 20մմ, լայն.՝ 9մմ ) մեծ անցքով: Մի եզրը հատված է, և ստացված ձվածիրի վրա գլուխը ձախ ուղղված ձիու շտրիխային պատկերն է: Կնիքը վնասված է, ձիու փորի մասում՝ պատկերը քիչ աղճատված: Կենդանու գլուխն արված է հունական A տառի ձևով՝ երկու կեռ շտրիխների զուգակցմամբ: Կնիքի վերին մասում կետագծեր են:

Երկրորդ կնիքը (տախտակ XV, նկ. 16) սեղմված գնդի ձև ունի, որը երկու կողմից չորսական թևերի բաժանված վարդյակ է (ուլունքի տրամ.՝ 15մմ, պատկերի երկ.՝ 17մմ, լայն.՝ 8մմ): Չորրորդ թևի հատվածը կտրված է և ստացված ձվածիր հարթության վրա փորագիր պատկերն է:<sup>159</sup> Մասանյան ուլունք-կնիքի այս ձևը հայտնի է Բրիտանական թանգարանի հավաքածուներից, որտեղ կան հեմատիտից և քաղկեդոնից օրինակներ:<sup>160</sup> Կնիքի վրա շտրիխային եղանակով պատկերված է ցուլ: Պատրաստող վարպետը կարողացել է քիչ գծերով խոստուն պատկեր ստանալ հատկապես գլխի մասում, որտեղ երկու կեռ շտրիխների միացմամբ հստակ գծագրվել է գլուխը, որը, ինչպես և նախորդ կնիքի վրա, հունական A տառն է: Կնիքի ներքևի մասում՝ ցուլի փորի տակ, ուղիղ և կիսաթեք գծերով պատկերված են խոտերը: Կնիքի վերին մասում կետագծեր են, ինչպես նախորդ կնիքի վրա:<sup>161</sup> Կետանախշերը ոչ միայն առնչվում են պատկերներին՝ շեշտելով նրանց երկնային բնույթը, այլև ավելի են ընդգծում կնիքների ոճական ընդհանրությունը՝ հաստատելով նաև նույն վարպետի կողմից պատրաստված լինելը: Իսկ

երկու տարբեր նյութերից ուլունք-կնիքների համատեղ՝ նույն դամբարանում գտնվելը փաստում է և՛ քարի, և՛ ապակու համաժամանակյա օգտագործումը կնիքագործության մեջ:

Նման շտրիխային կնիքներ գտնվել են Բուսպորից:<sup>162</sup> Կնիքների թվագրման համար հիմք է ընդունվում այն, որ Հարավային Իրանում գտնված 6-7-րդ դարերով թվագրվող մոտ 4000 կնքադրոշմների վրա բացակայում են շտրիխային կնիքների դրոշմները:<sup>163</sup> Նույն պատկերն է նաև Իրանական Ադրբեջանում և հարավային Թուրքմենստանում,<sup>164</sup> որտեղ գտնված հարյուրավոր կնիքների մեջ շտրիխային կնիքների բացակայությունը ենթադրում է դրանց գոյատևելը մինչև 4-5-րդ դարեր: Վարդգառի կնիքները, որոնք կրկնում են Բրիտանական թանգարանի սասանյան կնիքներին, նույնպես կարող են վերաբերել մ. թ. 3-րդ դարին:

Յլի պատկերը շատ տարածված թեմա է անտիկ կնիքագործության մեջ՝ սկսած մ. թ. ա. 5-րդ դարից մինչև մեր դարաշրջանի առաջին դարերը:<sup>165</sup> Ելնելով ֆիզիկական ուժից, տնտեսության մեջ ունեցած դերից, երկրագործական արգասավորությունից՝ ցուլը վերաճել է սրբազան կենդանու և, բազմազան դրսևորումներ ունենալով տարբեր ժողովուրդների հավատալիքներում ու ծեսերում, առնչվում է մեկ լուսնային, մեկ արևային աստվածություններին:<sup>166</sup> Ցուլն աստվածուհու հետ է աղերսվում վաղ տրիպոլյան մշակույթում: Յլի գլխին նստած, դեպի ետ թեքված իրանով կանացի արձանիկ հայտնաբերվել է Սաբատինովկա II (Հարավային Բուգ) մի սրբարանում, որտեղ պտղաբերություն հայցող ծիսակատարություններ են կատարվել:<sup>167</sup>

<sup>159</sup> Arménie, Tresors de l' Arménie ancienne, 1996, Paris, էջ 245, նկ. 260.

<sup>160</sup> Christopher J., Brunner, Sasanian Stamp seals In The Metropolitan Museum of Art. Mow York, 1978, էջ 43, 46, նկ. 38, 41.

<sup>161</sup> Arménie ..., էջ 245, նկ. 259.

<sup>162</sup> П а н т и к а п е й, Материалы и исследования по археологии СССР, N 105, М., 1962, с. 192-193.

<sup>163</sup> Л. Л е в и н а, А. Н и к и т и н, Об одной группе иранских резных камней из восточного Приаралья, ВДИ, N 4, 1991, с. 63.

<sup>164</sup> А. Г у б а е в, Сасанидские буллы из замка Ак - депе, ЭВ вып. XX, Л., 1971, с. 46:

<sup>165</sup> В. V a l t e r s, Catalogue of the engraved gems in the British Museum. London, 1926, p. 544, 585.

<sup>166</sup> L a b a t R., Les religions du Proche-Orient asiatique. Textes babyloniens ougaritiques hitites. Presantes et traduits par R. Labat. Paris, 1970, p. 280.

<sup>167</sup> Т. М о в ш а, Святыища трипольской культуры, СА, N 1, М., 1971, с. 203; Է. Խանգաղյան, 1973, էջ 119:

Նույն հուշարձանի վերին շերտում, ցլի եղջյուրի ձև ունեցող թիկնակներով կլոր բազկաթոռներում հայտնաբերվել են ետ ընկած իրանով, կանացի 16 ֆիգուրներ:<sup>168</sup> Բիլեն-Չլոտեում հայտնաբերված ցլի գլխի ձևով ոսկրե թիթեղի վրա ուրվագծված է ձեռքերը վեր պարզած կանացի մի ֆիգուր:<sup>169</sup>

Չաթալ-Հյույուկի սրբարաններում երբեմն ցլի գլուխը պատկերված է սխեմատիկ, որից էլ սերվում է հին կրետական պաշտամունքային հայտնի խորհրդանիշը, որ պաշտվում էր Միջերկրական ծովի ափերին:<sup>170</sup>

Հայաստանում ցլի պաշտամունքի հնագույն վկայությունները ժայռապատկերներում են:<sup>171</sup> Հավատալիքի և պաշտամունքի փաստումն է մաս ցլի մարմնի տարբեր մասերի պատկերումը Գեղամա լեռներից և Աժդահա Յուրտից հայտնի վիշապների վրա,<sup>172</sup> ինչպես մաս ցլի արձանիկները քուրարաքսյան մշակույթում:<sup>173</sup> Ուսերին ցլերի արձանիկներով անոթ գտնվել է Էրեբունու պեղումներից:<sup>174</sup> Յուլը որպես ուժի մարմնավորում, հնագույն ժամանակներից ի վեր սերտորեն աղերսվել է երկնային ջրերի, պտղաբերության և վերածննդի հետ: Այս հենքի վրա էլ կենդանին աստվածացվել է և երկինք բարձրացվել, որպես երկրագործությունը հովանավորող պտղաբերող աստվածություն:<sup>175</sup>

Դիցաբանական նույն ակունքից է սերում բրոնզիդարյան Եվրոպայում ննջեցյալների մոր սորթած ցլի կաշվի մեջ թաղելու սովորույթը:<sup>176</sup> Յուլն արական սկզբի խորհրդանիշ լինելով, եղջյուրը դարձավ արիության խորհրդանիշ, որի վկայությունն են եղջերավոր տղամար-

դու ինտիֆայլիկ արձանիկները:<sup>177</sup> Մայրաստվածուհիների պաշտամունքը սերտորեն աղերսվել է եզան, ցլի և կովի պաշտամունքների հետ: Եղջյուրներով էին պատկերվում Մելեման և Աստարտեն: Յլի պաշտամունքի վկայությունն է մաս Անահիտի մեհյանի շուրջ, ըստ մատենագիրների վկայությունների, դիցուհուն նվիրված և ճակատներին նրա խորհրդանիշ ջահաձև խառանը կրող ցուլերի և երինջների հուտերի ազատ շրջելը. «Եւ զայն երինջսն առնուն նոքա առ ի զոհ միայն, թողեալ այնպես ի դաշտին արձակս թափառականս, խարանեալ ի նոսա խարան զդիցուհույն ջահ մի իսկ ունել ի նոցանէ առ ի զոհ ոչ հեշտին ինչ է»:<sup>178</sup>

Յլի պաշտամունքին է առնչվում մաս միթրաիզմի գաղափարախոսությունը, որի գաղտնի պաշտամունքի գլխավոր խորհրդանիշը ցլի սպանությունն է: Արևի աստծու դաշնակից Միթրան հանդիպում է կատաղի ցլին և ուժով փակում քարայրում, սակայն ցուլը կարողանում է ազատվել: Արևի աստծու կողմից ուղարկված ազոավի օգնությամբ Միթրան բռնում և դաշունահարում է ցլին: Սպանված ցլի մարմնից էլ առաջանում են բոլոր բուժիչ խոտերն ու բույսերը, իսկ ողնուղեղից ժայթքում է հասկը:<sup>179</sup>

Յլի պաշտամունքի հետ կապված հավատալիքները հասնում են մինչև միջնադար: Էջմիածնի բակում կանգնեցված 1279թ. «Ամենափրկիչ» խաչքարի վերնամասում թռչունի թիկունքին ճանճանչավոր սկավառակի տեսքով պատկերված է արևը, ցուլի մեջքին՝ սկավառակի մեջ՝ լուսինը: Թռչնի պատկերի մոտ գրված է Արեգակ, իսկ ցլի մոտ՝ Լուսին:

Զննարկվող նյութերում կան մաս ուլունքաձև կնիքների մախապատրաստուկներ: Բենիամինի թիվ 212 սալարկղային դամբարանից գտնված ուլունքաշարերի մեջ կա մաս մոխրագույն ապակուց, մի կողմը հատված (տախտակ XV, նկ. 17 և քիչ սեղմված գնդի ձև ունեցող կնի-

<sup>168</sup> М. Макаревич, Об идеологических представлениях у трипольских племен, ЗОЛО, 1(34), Одесса, 1969, с. 291; Է. Խանգաղյան, 1973, էջ 119:  
<sup>169</sup> Т. Мовша, 1971, с. 203; Է. Խանգաղյան, 1973, էջ 119:  
<sup>170</sup> G. W i l k e, Kulturbeziehungen zwischen Indien Orient und Europa, Lpz., 1923, p.84.  
<sup>171</sup> Հ. Մ ա ռ ի ը յ ա ն, Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1981, էջ 42:  
<sup>172</sup> Հ. Ի ս ռ ա յ ե լ յ ա ն, 1973, էջ 31, նկ. 7,8:  
<sup>173</sup> Dans les montagnes d' Arménie..., էջ 144, նկ. f. 46:  
<sup>174</sup> Նույն տեղում, էջ 188, նկ. 172:  
<sup>175</sup> Է. Խ ա ն գ ա ղ յ ա ն, Մեծամոր, Եր., 1973, էջ 119:  
<sup>176</sup> История Европы, Древняя Европа, М., 1988, с. 122.

<sup>177</sup> M. G i m b u t a s, The gods and goddesses of Old Europe. Los Angeles. 1974. p. 221,223.  
<sup>178</sup> Պ լ ն ի տ ա ը ք ե ա յ Զ ե ը վ ն ա գ ը յ, Զուգակշեռք, հատ. Գ, քարգմ. Ե. Թումանյան, Վենետիկ, 1833, էջ 562:  
<sup>179</sup> Д. Ю л а н с и, Загадки митраизма, В мире науки,- Scientific American, n. 2, 1990 с. 75.

քի նախապատրաստուկ (տրամ.՝17մմ, պսակի երկ.՝ 13մմ, լայն.՝ 10մմ): Նմանատիպ երկու ուլունք-նախապատրաստուկ գտնվեց նաև Բենիամինի թիվ 36 կարասային թաղումից: Մրանցից մեկը դեղնադարչնագույն է, տափակ, քիչ ձվածիր՝ կենտրոնում մեծ անցքով (տախտակ XV, նկ. 18): Պսակի հարթեցված մասը փոքր է և նեղ (երկ.՝ 11մմ, լայն.՝ 9մմ):

Թաղումները, որտեղից գտնվեցին կնիքի նախապատրաստուկները, մանկական են: Վարդաբաղի թիվ 9 դամբարանից ևս կնիքների հետ գտնվեց նաև մի ուլունք-կնիքի նախապատրաստուկ (տախտակ XV, նկ. 19): Ինչպես և Բենիամինի թիվ 212 դամբարանի գտածոն, սրանք էլ գտնվեցին գոտկատեղի հատվածում, այսինքն՝ կախված են եղել գոտուց: Բենիամինում մնանատիպ ուլունք-կնիքի նախապատրաստուկներ գտնվեցին նաև կարասային թաղումներից, որտեղ սրանց նախնական դիրքն անհայտ է, քանի որ ոսկորները սահել են ցած և կուտակվել իրար վրա:

Ինչպես Վարդաբաղի, այնպես էլ Բենիամինի գտածոները վերաբերում են մ. թ. 3-րդ դարին: Նույն ժամանակաշրջանի քարից իրանական շտրիխային կնիքներ գտնվել են Մերձարայան շրջանից, որոնք նույնպես երկուսն են և գտնվել են գոտկատեղի հատվածում՝ սաթից ուլունքի կամ կոճակի հետ:<sup>180</sup> Այսօրինակ կնիքներն ավելի հաճախ տարբեր կենդանիների պատկերներ ունեն, փորագրման նույն՝ շտրիխային կամ գծիկային աշխատածևով են արված:

Կնիքների կիրառության վերաբերյալ տարբեր կարծիքներ կան: Կնիքները որոշակի խորհրդանիշ էին և գլխարկի և գոտու հետ տրվում էին որպես իշխանության նշան,<sup>181</sup> պատվի արժանանալիս ոչ թե մատանին էր տրվում, այլ կրելու իրավունքը և միաժամանակ վերնախավին դասվելու թույլտվություն:<sup>182</sup> Կնիքներն օգտագործվել են ոչ միայն փաստաթղթերը վավե-

րացնելու համար, այլ նաև փոխարինել են քիչ տարածված կողպեքների, և այդ պատճառով կենցաղում կնիքը յուրաքանչյուր մարդուն անհրաժեշտ պիտույք էր, սեփականության անձեռնմխելիության իրավունքի յուրատեսակ երաշխավոր:<sup>183</sup> Հին աշխարհում կնիքների տարածումը սերտորեն կապված է մասնավոր սեփականության ինստիտուտի զարգացման և գրչության տարածման հետ:<sup>184</sup> Ըստ հետազոտողների՝ մասնավոր անձանց պատկանում էին սեւեւկյան, նաև սասանյան այն կնիքները, որոնց վրա արձանագրություն, մակագրություն կամ գիր կար:<sup>185</sup> Տարբեր կենդանիներին վերագրվող խորհրդանշական իմաստներն ունեն խորը ակունքներ, և դրանց պատկերները դարեր ի վեր հաստատված իմաստով արդեն իսկ խոսում էին, և գրության առկայությունը հավանաբար բոլորովին էլ պարտադիր չէր կնիքի պատկերի բովանդակությունը հասկանալու համար:

Հերոդոտոսի վկայությամբ՝ ասորեստանցիներից ամեն մեկն ուներ իր կնիքը և գավազանը:<sup>186</sup> Այսինքն՝ կնիքը յուրաքանչյուր անձի ինքնությունը հաստատող իր էր: Անտիկ շրջանում կնիքներն առավելապես պահպանակ էին, որ մարդուն պաշտպանում էին տարբեր կործանարար ազդեցություններից, հատկապես չար աչքից: Երևույթն ինչ-որ չափով շարունակվում էր նաև հետագայում: Եվ քրիստոնեության ընդունումից հետո էլ կնիքները շարունակում են կրել որպես պահպանակ: Այդ մասին կարելի է դատել՝ ելնելով մասնավորապես հայկական միջնադարյան հուշարձաններում գտնված կնիքների վրա պատկերված տոտեմական և աստղային պատկերներից: Սակայն քրիստոնեության ընդունումից հետո դրանց մեծ մասն օգտագործվում էր նաև ուղղակի իմաստով՝ որպես կնիք, անկախ նրանից, թե ում էր պատկանում՝ նախարարի՞ն, թե՞ ազատին:<sup>187</sup> Հայկական միջնա-

<sup>180</sup> Л. Левина, А. Никитин, *նշվ. աշխ.*, էջ 57:  
<sup>181</sup> В. Лебединский, Л. Кириченко, *Книга о камне*, М., 1989, с. 66.  
<sup>182</sup> К. Колобова, *О награждении пантикапейца золотым кольцом*. СА, 1958, XXVIII, с. 193-197.

<sup>183</sup> М. Максимова, 1950, с. 238-239:  
<sup>184</sup> М. Лордкипанидзе, *Геммы Государственного музея Грузии*, т. 2, Тбилиси, 1958, с. 101.  
<sup>185</sup> Р. Фрай, *Наследие Ирана*, М., 1982, с. 202-203, 296-297.  
<sup>186</sup> Հ եր ո ղ ն ս ու, I, 195:  
<sup>187</sup> А. Калантарян, *Раннесредневековые буллы Двина*, Ер., 1982, с. 10.

դարյան աղբյուրներում հիշատակվում են արքունական<sup>188</sup> և սովորական կնիքներ, որոնք, ըստ Ա. Քալանթարյանի, հավանաբար եղել են անճնական կնիքներ, հետևաբար հայ նախարարներն ու բարձր հոգևորականությունը տարբեր մատանիներ ունենալու իրավունք ունեին:<sup>189</sup> Կնիքների կիրառության մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Ղազար Փարպեցին: Սասանյան արքունիքին հղվող հայերի պատասխանի տակ. «...*իշխանան Միմեաց Վասակաւ և ամենայն տանուտեքամբքն և սեպհօք՝ հաստատէին զերդումն և որոց մատանեաւ չև ևս էր կնքեալ զաւետարանս՝ կնքէին*»:<sup>190</sup> Հազկերտ 2-րդին ուղղված նամակի տակ նախ իրենց կնիքները դրեցին «...*նախ մատանեաւ իշխանին Միմեաց Վասակայ և ապա մատանեօք ամենայն տանուտեացն հայոց և աւագ սեպհացն...*»<sup>191</sup> Միջնադարյան հայ պատմիչների մոտ պահպանվել են վկայություններ կնիք-մատանիների պատկերագրության վերաբերյալ, ուր առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում վարազի պատկերով արքայական կնիքները: Ստեփանոս Օրբելյանը, պատմելով Միսական տոհմի մասին՝ ի թիվս նրանց ստացած այլ պարզևներին, նշում է նաև վարազագիր մատանի կրելու արտոնության մասին. «Եվ այնքան եղան, որ մինչև անգամ արտոնվեց նրանց... վարազագիր մատանի դնել...»:<sup>192</sup> Իսկ վարազի պատկերը պարսից Սասանյան թագավորների կնիքի նշանն էր և նույնախի կնիք կարող էին կրել միայն հատուկ արտոնության դեպքում:

Հետազոտողների կարծիքներն այս հարցում տարբեր են: Ըստ Ա. Քալանթարյանի՝ արքայական կնիքներից մեկն անպայման վարազի պատկերով էր:<sup>193</sup> Ա. Բիվարի կարծիքով,

ըստ պատկերի բովանդակության կամ թեմատիկայի, դժվար է որոշել այս կամ այն նպատակով կնիքի օգտագործված լինելը, և վարազի պատկեր կարող էին ունենալ նաև արքունական դիվանի կնիքները:<sup>194</sup>

Կնիքները, դրանք կրողների սոցիալական որոշակի աստիճանի հավաստումն են, և անկախ նրանից իրենց նշանակությամբ օգտագործվել են, թե ոչ, անպայման կապ ունեն նաև անհատի ճաշակի և գեղագիտական ընկալումների հետ:

Շիրակի անտիկ դամբարանադաշտերի պեղումներով հայտնաբերվեց երկու մանյակ, երկուսն էլ Բենիամինից: Առաջինը, որ գտնվեց ավերված դամբարանից, 6 մմ տրամագծով, կտրվածքում կլոր, հաստ բրոնզալարից է: Մանյակը քիչ ձվածիր է (երկ.՝ 21մմ, լայն.՝ 17, 5մմ), զանգակաձև լայնացող ծայրերն ավարտվում են ուղիղ հատումով (տախտակ XVI, նկ. 1): Երկրորդ մանյակը (թիվ 183 դամբ.) ձևով առաջինի կրկնությունն է (տախտակ XVI, նկ.2)՝ չափերի աննշան տարբերությամբ (տրամ.՝ 21մմ, սեղմված մասում՝ 17մմ, կտրվածքում կլոր է՝ 5մմ): Մանյակների գլխիկները զանգակաձև լայնանում են և ավարտվում ուղիղ կտրվածքով: Երկրորդ մանյակը ծայրից մինչև իրանի կեսը պարտված է պարկազործք հյուսվածքի 3մմ լայնությամբ ժապավենով: Մանյակի այս ծայրի զարդանախշի միայն կեսն է ժապավենից ազատ: Եզրից 5մմ ներս, 2մմ երկարությամբ թեք գծերով ցանցկեն նախշ է արված՝ երկու ծայրերը սահմանափակելով մեկական խորակոս շրջագծով: Աստիճանաբար նեղացող բրոնզալարի մակերեսը ցանցկեն նախշից հետո բաժանված է երկու մասի, և յուրաքանչյուրը հիմք է հավասարասրուն եռանկյան համար: Եռանկյունու գագաթից սկսվում են իրար ետևից շարված տասը արևանախշեր. շրջան՝ մեջը կետ (տրամ.՝ 2մմ): Ծարքի ուղիղ ընթացքը խաթարված է իններորդ ու տասներորդ արևանախշերը կողքկողքի լինելու պատճառով: Երկու եռան-

<sup>188</sup> Մ. Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, Պատմություն Աղվանից աշխարհի (թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի), Եր., 1969, էջ 59:

<sup>189</sup> А. К а л а н т а р я н, նշվ. աշխ., էջ 11:

<sup>190</sup> Ղ. Փ ա ր պ ե ց ի, Հայոց պատմություն, Եր., 1982, էջ 129:

<sup>191</sup> Նույն տեղում, էջ 132:

<sup>192</sup> Մ տ. Օ Ր Բ Ե Լ Ե Ա Ն, Մյունիքի պատմություն (թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Արրահանյանի), Եր., 1986, Գ:

<sup>193</sup> А. К а л а н т а р я н, նշվ. աշխ., էջ 11:

<sup>194</sup> A. D. H. B i v a r, Stamp Seals, II: The Sasanian Dynasty, Catalogue of the Western Asiatic Seals in the British Museum, London, 1969, p. 29.

կյունիներից սկսվող արևանախաչերն էլ ունեն շարքի իներտորդի և տասներորդի նույն շեղումը: Արևանախաչերի դասավորության նման կրկնությունն անպայման որոշակի իմաստ ունի: Նախազարդ եռանկյունիների միջև արված են մանր կետանախաչեր, որոնք սկզբում ուղիղ գծով են շարված, ապա քիչ ալիքաձև, այնուհետև իրարից հեռու` բույլերով: Այսպիսին է մանյակի ժապավենից ազատ մասի պատկերանախաչը: Մյուս ծայրի նախաչերը կրկնվում են աննշան շեղումներով և չափերի տարբերությամբ: Մանյակի ոճավորված օձապատկերները և պարույրաձև-օձազալար վերադիր ժապավենի փաթաթանը կրկնակի պահպանակի դեր են կատարում: Օձի, որպես նախազարդման գլխավոր թեմայի, մանրամասներ են նաև մանյակի ցանցկեն նախաչերը, որ կրկնվում են նաև նույն դամբարանից գտնված ապարանջանների գլխիկներին: Մանյակները զուգահեռներ ունեն Սինգեչաուրում,<sup>195</sup> հայտնի են Կուլխիդայի թաղումներից, որտեղ առանց ձևափոխման պահպանվել են երկար ժամանակ,<sup>196</sup> բնորոշ են նաև Աղվանքին:<sup>197</sup> Նշված հուշարձաններում այսօրինակ մանյակները թվագրվում են մ. թ. ա. 1-ին դարով: Հայաստանում նման անզարդ մանյակ հայտնի է Գեղարդիից:<sup>198</sup> Բենիամինի գտածոները նույնպես թվագրվում են մ. թ. ա. 1-ին դարով, և թվագրմանը չեն հակասում դամբարանից հայտնաբերված մյուս նյութերը:

Չարդերի մի առանձին խումբ են կազմում ապարանջանները: Շիրակի անտիկ հուշարձաններից ապարանջաններ հայտնի են միայն Բենիամինից և Շիրակավանից:<sup>199</sup>

Օձագլուխ ապարանջան գտնվեց Բենիամինի թիվ 183 դամբարանից (տախտակ XVI, նկ. 3): Կտրվածքում շրջանաձև, հաստ բրոնզալարից պատրաստված (տրամ.՝ 6, 5սմ, լարի հաստ.՝ 2, 5մմ) ապարանջանը թվագրվում է մ.թ.

ա. 1-ին դարով: Թիվ 28 կարասային թաղումից գտնված ապարանջանը պատրաստված է մի կողմում տափակ, մյուսում` ուռուցիկ բրոնզալարից: Ունի քիչ ձվաձիր տեսք (տրամ.՝ 5, 5սմ, լարի հաստ.՝ 3մմ): Ապարանջանի ծայրերը քիչ տափակեցված են և բաց (տախտակ XVI, նկ. 4): Վերջինիս հետ գտնվեցին մ. թ. առաջին դարերի ուլունքներ: Թիվ 105 դամբարանից գտնվեց մեկ այլ ապարանջան, նույնպես օձագլուխ, իրանը քիչ ձվաձև, ծայրերը բաց և իրարից հեռու: Օձի պատկերն այստեղ սկսվում է գլխի հստակ պատկերով և ավարտվում պռչով: Իրանի վրա մարմնի կծկումներն արտահայտող ելուստներ են (տախտակ XVI, նկ. 5): Թիվ 209 դամբարանից գտնված երկու ապարանջանները նույնպես օձագլուխ են (տախտակ XVI, նկ. 6, 7): Այս ապարանջաններն ունեն համեմատաբար բարակ ծայրեր, իսկ օձի պատկերը պակաս հստակ է: Վերջինս թերևս մաշվածության հետևանք է: Թիվ 28, 105 և 209 դամբարաններից գտնված ապարանջանները վերաբերում են մ. թ. 1-ին դարին:

Հայկական լեռնաշխարհում օձագլուխ ապարանջանները տարածված էին առաջին հազարամյակի սկզբից մինչև միջնադար:<sup>200</sup> Ունենալով տեղական և խորը արմատներ` օձագլուխ ապարանջանները աքեմենյան ժամանակաշրջանում համապատասխան փոփոխություններով վերածնվում են և գոյատևում մինչև մ. թ. առաջին դարեր:

Զննարկված ձևի մի տարատեսակն են ներճկված իրանով ապարանջանները: Ենթադրվում է, որ վերջիններս պատրաստվել են Աքեմենյան պետության տարբեր կենտրոններում և որոշակի մարզերում, որոնցից մեկն էլ Հայաստանն էր:<sup>201</sup> Օձագլուխ, ներճկված իրանով ապարանջաններ գտնվեցին Բենիամինի 177 (տախտակ XVII, նկ. 1) և 183 դամբարաններից (տախտակ XVII, նկ. 2, 3): Թիվ 183 դամբարանի երկու գտածոներն էլ բարակ բրոնզալարից, իրանը քիչ ներճկված օղակներ են: Գլուխները լայնացող են, ներսից տափակ, դրսից` ուռուցիկ,

<sup>195</sup> Археология СССР, Древнейшие государства Кавказа и Средней Азии, том- 8, М., 1985. рl. LVII 8.

<sup>196</sup> Г. Ш а м б а, Ахаччарку- Древний могильник Нагорной Абхазии, Сухуми, 1970, с. 62.

<sup>197</sup> Археология СССР, том- 8, նշվ. աշխ., էջ 100:

<sup>198</sup> Ժ. Խ ա չ ա ն ը յ ա ն, 1981, էջ 75:

<sup>199</sup> Ф. Т е р - М а р т и р о с о в, 1980, с. 425:

<sup>200</sup> Н. А к о п я н, նշվ. աշխ., էջ 18:

<sup>201</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 90:

կտրվածքն ուղիղ, ծայրերը խորակոս շրջագծով երիզված: Օձի աչքերը պատկերված են կետերով, մարմինը՝ գլխից դեպի իրանը թեք գծերի համաչափ եղևնաձև հատումներով: Երկու ապարանջաններն էլ մույն ձևով են պատրաստված, միայն չափերի աննշան տարբերություն ունեն: Առաջինն ունի 6,5սմ տրամագիծ, ծայրերի կտրվածքի տրամագիծը 0,5սմ է: Երկրորդի չափերը համապատասխանաբար 6,5 և 0,7սմ են: Ներձկված իրանով երկրորդ ապարանջանը քիչ ավելի փոքր է, տրամագիծը 6սմ է, գլխիկի կտրվածքում՝ 0, 4սմ: Ապարանջանների գլխիկները թեև քայքայված են, բայց տեսանելի են օձերի աչքերը, ինչպես նաև իրանի վրա բազմաճիտի մեջ թեք գծերի եղևնաձև նախշերը: Ներձկված, օձագլուխ ապարանջաններ հայտնի են Մինգեչաուրի կարասային թաղումներից և թվագրվում են մ.թ.ա. 2-1-ին դարերով:<sup>202</sup> Ապարանջանների այս տեսակը Վրաստանում տարածված էր աքեմենյան և հելլենիստական ժամանակաշրջանում:<sup>203</sup> Ներձկված ապարանջաններ հայտնի են նաև Կազբեկից:<sup>204</sup> Հայաստանում ևս հաճախակի են հանդիպում: Գտնվել են Գառնիից,<sup>205</sup> ամենավաղ օրինակները հայտնի են Ջրառատից և թվագրվում են մ.թ.ա. 5 - մ.թ.ա. 4-րդ դարերով:<sup>206</sup> Հայտնի են նաև Օշականից:<sup>207</sup> Բենիամինի այսօրինակ ապարանջանները վերաբերում են մ. թ. ա. 1-մ. թ. 1-ին դարերին:

Ապարանջաններից վերջինը (թիվ 183 դամբ.) շնորհիվ հաստությանը բրոնզալարից է, որի ծայրերն ամեն կողմից չորսական գալարաձև ոլորումով փոխադարձաբար իրար են ազուցված: Ծարժական փականը հնարավորություն է տալիս փաթույթը ետ և առաջ շարժել՝ մեծացնելով կամ փոքրացնելով ապարանջանը: Իրա-

նը զարդարված է բարակ բրոնզալարից հյուսկեն ժապավենի ոլորումով: Թելերը մասամբ անջատված են և պոկված (տախտակ XVII, նկ. 4): Նույն դամբարանից գտնված ներձկված մյուս երկու ապարանջանները ևս մույն չափերն ունեն՝ տրամ.՝ 6,5սմ: Ծարժական փականով ապարանջանները լայն տարածում են ունեցել պարթևական պետության տարածքում: Արևմտյան գրականության մեջ այս տեսակը բնորոշվում է որպես պարթևամիջագետքյան:<sup>208</sup> Մրանց բնորոշ են պարույրների միջև զուգահեռ ձգվող երկու լարեր, որոնք կարծես ամրացնում են ապարանջանը: Գալարները կամ 2-3 են, կամ բազմաթեղ: Արևելահրանական տիպն ավելի զանգվածեղ է և սկզբնապես կազմվել է լարով փաթաթված միջուկից: Ապարանջանների այս տեսակը հանդիպում է Աշուրում, Բաբելոնում:<sup>209</sup> Պարույրաձև ոլորուն ծայրերով, շարժական փականով ապարանջանների բրոնզյա և արծաթյա օրինակներ գտնվել են Դուրա-Եվրոպոսում:<sup>210</sup> Միջագետքյան գտածոները թվագրվում են մ. թ. ա. 3-2-րդ դարերի առաջին կեսով: Նման ապարանջաններ գտնվել են նաև Բակտրիայում:<sup>211</sup> Հայտնի են Հյուսիսային Բակտրիայի Արուկտատի դամբարանադաշտից:<sup>212</sup> Ապարանջանի այս տեսակը (կտրվածքում եռանկյունի կամ քառակող մետաղալարից, ողորկ իրանով, որի վրա պարույրն է արված) լայն տարածում է ունեցել նախկին ԽՍՀՄ-ի հարավարևմտյան մասում<sup>213</sup> և Հունգարիայում:<sup>214</sup> Չորսական պարույրով նման ապարանջաններ հայտ-

<sup>202</sup> С. К а з и е в, Альбом кувшинных погребений Мингечаура, Баку, 1960, с. 25.  
<sup>203</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 89:  
<sup>204</sup> П. У в а р о в а, Могильники Северного Кавказа, М., 1900, рис. 142, 148.  
<sup>205</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 89:  
<sup>206</sup> А. М н а ц а к а н я н, Г. Т и р а ц я н, Новые данные о материальной культуре древней Армении, ИАН Арм. ССР н. 8, 1961, табл. 2.  
<sup>207</sup> Տ. Ե ս ա յ ան, Ա. Կ ա լ ա ն տ ա ռ յ ան, նշվ. աշխ., տախտակ XLI<sub>2,3</sub>, XLII<sub>9,10</sub>, XLIV<sub>3,15,18</sub>, XLVII<sub>7,9,10</sub>.

<sup>208</sup> N. P o n z i, Jewellery and Small Objects from Tell Nahur North Mesopotamia, Mesopotamia, 5, 1968, p. 41.  
<sup>209</sup> Tochio Sono and Shinj i Fukai, Dailaman III, Tokyo, 1968. Tochio Sono and Shinj i Fukai, 1937, p. 6.  
<sup>210</sup> Т о л л Н. Р., The Necropolis, The excavations at Dura-Europos, Preliminary Report of the Ninth season of work 1935-1936, New Haven, London, 1946, p. 19.  
<sup>211</sup> Б. Л и т в и н о в с к и й, А. С е д о в, Культы и ритуалы Кушанской Бактрии, Погребальный обряд, М., 1984, с. 51-53.  
<sup>212</sup> А. М а н д е л ь ш т а м, Памятники качественков Кушанского времени в Северной Бактрии. Л., 1975, табл. XVII/4,5.  
<sup>213</sup> Археология СССР, Античные государства Северного Причерноморья, том, 5, М., 1984, табл. CLXVI<sup>29</sup>.  
<sup>214</sup> М. Р а р д у с з, Denkmaler der Sarmatenzeit Ungarna, Bd.III, Budapest, 1950, pl. XLII<sub>3,4</sub>, LXVII<sub>1</sub>, LVIII<sub>1,2</sub>, LXXII<sub>1,2</sub>.

նի են Արևմտյան Ուկրաինայից, գտնվել են Դոլինյանի գյուղի մոտ, սկյութական բնակավայրի մշակութային շերտի մեջ բացված թաղումներից:<sup>215</sup> Կովկասում նման գտածոները բավականին շատ են, հանդիպում են Արևելյան և Արևմտյան Վրաստանում, Դաղստանում:<sup>216</sup> Հայաստանում այսպիսի ապարանջան (մի կողմում վեց, մյուսում՝ ութ պարույրով), գտնվել է Օշականի թիվ 64 դամբարանից:<sup>217</sup> Օշականի թիվ 5 դամբարանից գտնված մեկ այլ ապարանջանի ոլորուն պարույրն իրանի կես մասից ավելին է զբաղեցնում, իսկ իրար մեջ շարժվող մասերը քիչ են. մի կողմում մեկ, մյուսում՝ չորս պարույր: Օշականի ապարանջանները թվագրվում են մ. թ. ա. 1-ին- մ.թ. 1-ին դարերով:<sup>218</sup> Նույն ժամանակաշրջանով է թվագրվում նաև Բենիամինի դամբարանադաշտից գտնված նմանատիպ ապարանջանը:

Թիվ 183 դամբարանից գտնված այս ապարանջանը, ինչպես նաև մյուս զարդերը, ոսկեգոծ են: Ոսկեգոծ զարդեր գտնվել են նաև Բենիամինի այլ դամբարաններից:

Մոտավորապես մ.թ.ա. 3-րդ դարում լայն տարածում է ստանում բրոնզյա և արծաթյա իրերի ոսկեգոծումը: Դա կատարվում էր իրը ոսկու և սնդիկի լուծույթով պատելով: Մյուս ձևը բարակ թիթեղով պատելն էր:<sup>219</sup> Բենիամինի թիվ 183 դամբարանից գտնված մանյակը, մատանին, ականջօղերն ու ապարանջանները, ինչպես նաև թիվ 177 և 195 դամբարաններից գտնված զարդերը, պատրաստվել են բրոնզալարը ոսկու լուծույթով պատելով:

Զարդերի մեջ բավականին մեծ թիվ են կազմում ուլունքները: Գտնվել են Բենիամինից, Վարդգեսից, Անուշավանից: Գտածոների գերակշիռ մասը ապակուց է և ապակու մածուկից:

Վերջիններիս մեջ առանձին խումբ են կազմում կարմրավուն, գլանաձև հարթ մակերեսով ուլունքները: Մածուկից ուլունքները ծակվել են սուր գործիքով, որի տրամագծով էլ պայմանավորվել է անցքի չափը: Մուտքի անցքը ստացվել է ավելի լայն, քան ելքի անցքը, որն անկանոն է, եզրերը՝ դեպի դուրս (Բենիամինի թիվ 28 և թիվ 105 դամբ., տախտակ XVII, նկ. 5 և տախտակ XVII, նկ. 6): Կարասային թաղումներից գտնված ապակու մածուկից ուլունքները 8-10մմ երկարություն ունեն և մի կողմում աննշան լայն են: Երկրորդ խմբի ուլունքները գլանաձև են և կարճ, թեք գծերով զարդարված և գտնվել են Բենիամինի թիվ 28 և 105 կարասային թաղումներից: Ապակու մածուկից ուլունքներն ամենալայն տարածում ունեցող զարդերն են և հայտնի են Հայաստանի տարբեր հուշարձաններից. Դվին,<sup>220</sup> Գառնի,<sup>221</sup> Օշական:<sup>222</sup> Ուլունքների այս տեսակը բնորոշ է նաև Ադրբեջանի տարածքին<sup>223</sup> Վրաստանին:<sup>224</sup> Հյուսիսային Մերձսևծովյան շրջանի հելլենիստական դամբարաններից նման ուլունքների բազմաթիվ օրինակներ են հայտնի:<sup>225</sup> Բենիամինի այսօրինակ ուլունքները թվագրվում են մ. թ. 1-2-րդ դարերով: Մածուկից ուլունքների մեջ կան փոքր երկկոնիկ ձևեր:

Տարբեր ժողովուրդների մշակույթներում հազարամյակների պատմություն ունի ուլունքաշարից ապարանջան-թևազարդը: Բենիամինում մանկական թաղումներից հայտնաբերված նման մի զարդ կազմված է կարմիր, դեղին, կապույտ, փիրուզագույն ապակու մածուկից ուլունքներից:

Գտնվեցին նաև ապակյա ուլունքներ: Մրանք կլորավուն են (Բենիամին՝ թիվ 126, տախտակ

<sup>215</sup> Г. Смирнова, Могильник типа Поянешты-Лукашевка у с. Долиняны на Буковине (раскопки 1977-1978гг.), Советская археология, 3, 1981, с. 195, рис. 3/1,2.

<sup>216</sup> П. Уварова, նշվ. աշխ., նկ. 5, 6, աղ. СХХV/2. Н. Хоштария, Археологические исследования Уреки, Материалы по археологии Грузии, вып. I, Тбилиси, 1955, с. 66, рис.13.

<sup>217</sup> Ст. Есаян, А. Каландарян, նշվ. աշխ., աղ. XLIV<sub>17</sub>.

<sup>218</sup> Նույն տեղում, էջ 65:

<sup>219</sup> С. Казиев, 1960, с. 71:

<sup>220</sup> Գ. Քնչարյան, 1991, էջ 54:

<sup>221</sup> Ж. Хачатрян, նշվ. աշխ., էջ 109-112:

<sup>222</sup> Ст. Есаян, А. Каландарян, նշվ. աշխ., էջ 63: Ст. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении (III тыс. до н. э. - I тыс. до н. э.), Ер., 1976, с. 30.

<sup>223</sup> С. Казиев, 1960, աղ. XVIII:

<sup>224</sup> Б. Кутин, 1950, с. 50-51; Н. Кигурадзе, Дапнарский могильник, Тбилиси, 1976, с. 20, 55, табл. XX 3.

<sup>225</sup> Е. Алексева, Античные бусы Северного Причерноморья, САИ вып. г. I-12, М., 1975; Նույնի՝ Античные бусы Северного Причерноморья, САИ вып. г. I - 12, М., 1978; Античные Государства Северного Причерноморья. М., 1984.

XVIII, նկ. 1, Վարդգադ՝ թիվ 15, տախտակ XVIII, նկ.2), երկարավուն և գնդաձև (Բենիամին՝ թիվ 28, տախտակ XVII, նկ. 5, թիվ 105, տախտակ XVII, նկ. 6, թիվ 183, տախտակ XVIII, նկ. 3) և գալարաձև (Բենիամին՝ թիվ 59, տախտակ XIX, նկ. 1): Գտնվեցին նաև կաթիլաձև բաժանարար կամ կախիկ-ուլունքներ (Բենիամին՝ թիվ 59, 67): Սրանցից մեկն ութանիստ է: Մածուկից ուլունքների հետ գտնվեցին նաև վառ գույներով գլանաձև ուլունքներ, որոնք պատրաստվել են մետաղալարի վրա փաթաթված ապակու զանգվածը 2-10մմ երկարությամբ կտրատելով: Կան նաև գնդաձև իրանով, սեղմված վզով, լայնաբերան կճուճի տեսքով (Բենիամին, թիվ 183, տախտակ XVIII, նկ. 3), կապույտ, երկկոնիկ միստավոր (Բենիամին՝ թիվ 105, տախտակ XVII, նկ. 6) և կաթիլաձև, ողորկ մակերեսով դարչնագույն ուլունքներ (Բենիամին, թիվ 59, տախտակ XIX, նկ.1): Ապակյա երկարավուն (երկ.՝ 10մմ) մուգ կապույտ մի ուլունք (Բենիամին՝ թիվ 28) կենտրոնում ունի սպիտակ բարակ թելանախշ: Տակառաձև և երկարավուն, լայնակի բազմագույն թելանախշով ուլունքներ գտնվել են Դվինից:<sup>226</sup> Սրանք աղերսվում են Հյուսիսային Մերձսևծովյան շրջանի ուլունքների մամաօրինակ տարբերակներից:<sup>227</sup> Ապակյա ուլունքների մի մասը ենթարկվել է նաև սառը մշակման՝ հղկելով գլխիկները:

Մ.թ. առաջին դարերում շատ տարածված էին մանր ուլունքները (Բենիամին՝ թիվ 28): Մ.թ. առաջին դարերում ապակյա ուլունքների արտադրության նոր ձևեր են ի հայտ գալիս՝ պայմանավորելով նաև տարատեսակների ստեղծումը: Գլանաձև անորակ ուլունքների կտրատված մասերից պատրաստվել են սկավառակաձև ուլունքները: Սկավառակաձև երկու ուլունք գտնվեց Բենիամինի թիվ 215 դամբարանից, որոնք ոչ թե թափոնի վերամշակման արդյունք են, այլ պատրաստվել են արդեն որպես նոր տեսակ (տախտակ XIX, նկ.2): Գլանաձև ուլունքները, երկու կողմից սեղմելով, ստացել են տակառի ձև: Այսօրինակ ուլունքներ գտնվեցին

Բենիամինի թիվ 28, իսկ սարդիոնե տարբերակները՝ Բենիամինի թիվ 183 և 187 դամբարաններից: Ապակյա ուլունքների այս տարատեսակները պատրաստվել են տեղում, այդ են վկայում խոտան ուլունքի գտածոն, բնակավայրից գտնված ապակու խարամները, ինչպես նաև ուլունքների որակը: Վերջինիս վկայությունն են նաև Բենիամինի թիվ 212 դամբարանից գտնված ապակյա անհարթ և անկանոն ուլունքները (տախտակ XIX, նկ. 3): Մեր դարաշրջանի առաջին դարերին բնորոշ այս ուլունքատեսակները հանդիպում են անտիկ ժամանակաշրջանի բազմաթիվ հուշարձաններում: Հայտնի են Գառնիից,<sup>228</sup> Ուրբնիսիից,<sup>229</sup> Մինգեչաուրից<sup>230</sup> և թվագրվում են 1-2-րդ և 2-3-րդ դարերով: Մ. թ. առաջին դարերում Հայաստանում ապակեգործության մասին Ագաթանգեղոսի վկայությունը<sup>231</sup> փաստվում է նաև Բենիամինի գտածոներով: Ուլունքների մեջ առանձին խումբ են կազմում գիշերից ուլունքները, որոնք գլանաձև են, հղկված և ունեն 3-5մմ տրամագիծ և 1-6մմ երկարություն: Գիշերը, զագատը կամ սև սաթը ճահիճ, խեժային թուխ ածուխն է, որը թեթև է, լավ հղկվող և փայլուն:<sup>232</sup>

Գիշերից ուլունքներ գտնվեցին Բենիամինի թիվ 59 (տախտակ XIX, նկ. 1) և Վարդգադի ավերված դամբարանից (տախտակ XIX, նկ. 5): Նման ուլունքներ հայտնի են Դվինից:<sup>233</sup> Բենիամինի և Անուշավանի ուլունքաշարերի մեջ կան նաև սարդիոնից ուլունքներ: Այս ուլունքները մեծ մասամբ պատրաստված են քաղկեդոնի քարընտանիքի տարատեսակներից, որոնք ըստ գույների և բնական շերտապատկերների, ունեն տարբեր անվանումներ:<sup>234</sup> Կարծիք կա, որ

<sup>226</sup> Գ. Զ ո չ ա ը յ ա ն, 1991, էջ 54:  
<sup>227</sup> Ե. Ա լ Ե կ ս Ե յ ա, 1978, Կ. 40.

<sup>228</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 124:  
<sup>229</sup> Л. Ч и л а ш в и л и, Городище Урбниси, Тбилиси, 1964, Կ. 52, рис. 2.  
<sup>230</sup> Р. В а и д о в, Мингечаур в III-VIII веках, Баку, 1961, табл. XV.  
<sup>231</sup> Ա գ ա թ ա ն գ եղ ո ս, ԺԳ, 150:  
<sup>232</sup> Մ. Դ և ե ջ յ ա ն, Լոռի բերդ, II, Եր., 2006, էջ 136: В. Сейранян, Армянские самоцветы, Ер., 1987, Կ. 62-64.  
<sup>233</sup> Գ. Զ ո չ ա ը յ ա ն, 1991, նշվ. աշխ., էջ 53:  
<sup>234</sup> Քաղկեդոնը կամ քաղկեդոնաքարը, ըստ գույների, կրում է զանազան անուններ՝ եղեգնաքար, հասպիս, ոսկեզմբովիտ, սարդեղունգն, սարդիոն, Ժամանակակից հայոց լեզվի բառարան, Կ. IV, Եր., 1980, էջ 699:



սարդիոնից ուլունքների և մատանիների ներկումն ըստ երևույթին կատարվել է մաքուր մեղրով՝ հետագա թթվային կամ ջերմային մշակմամբ:<sup>235</sup> Ուլունքների մշակմանը նախորդել է ծակումը, որը կատարվել է մեկ կամ երկու կողմից՝ հաշվի առնելով ուլունքի չափը: Ուլունքների մշակումն ու փայլեցումը կատարվել են դուրզի մնան հատուկ հաստոցների վրա. մի դեպքում պտտվել է գործիքը, մյուս դեպքում՝ քարը մշակվել է պտտվող գործիքով, իսկ ծակելու համար օգտագործվել է աղեղնավոր ծակիչը:<sup>236</sup>

Բենիամինի թիվ 127, 187, 190 դամբարաններում ուլունքաշարերի մեջ սարդիոնից ուլունքները մեկական են, իսկ թիվ 183 դամբարանում (տախտակ XVIII, նկ. 3) դրանք կազմում են շարանի կեսը: Սարդիոնից ուլունքներ կան նաև Անուշավանի ուլունքաշարի մեջ (տախտակ XIX, նկ. 4) Այս ուլունքները, գնդաձև են, մակերեսն ամբողջությամբ կամ մասամբ հղկված է: Բենիամինում հանդիպում են սարդիոնե ուլունքների տակառաձև և գլանաձև տարբերակներ (թիվ 183): Մրանք ծակվել են մի կողմից, որի հետևանքով մուտքի և ելքի անցքերը տարբեր չափեր ունեն: Սարդիոնից ուլունքները գուգահեռներ ունեն Հայաստանի համաժամանակյա հուշարձաններում: Գտնվել են Դվինից,<sup>237</sup> Գառնիից:<sup>238</sup>

Ապակյա ուլունքների մեջ Բենիամինում և Անուշավանում մեկական օրինակով կան վերադիր հատիկների գոտեզարդմամբ ուլունքներ (Բենիամին՝ թիվ 183 դամբ., տախտակ XVIII, նկ.3, Անուշավան՝ տախտակ XIX, նկ.4): Մրանք պատրաստված են կաղապարման եղանակով, ունեն ոսկու բարակ թիթեղից ներդիր և շատ էին տարածված հատկապես Մերձսևծովյան շրջա-

նում:<sup>239</sup> Հայաստանում մնան ուլունքներ հայտնի են Դվինից,<sup>240</sup> Գառնիից<sup>241</sup> և թվագրվում են մ.թ.ա. 1-ին դարով: Նույն ժամանակաշրջանով են թվագրվում նաև Բենիամինի և Անուշավանի մնանօրինակ գտածոները:

Բենիամինի թիվ 183 դամբարանից գտնվեցին նաև նարնջակարմիր, երբեմն ավելի մուգ երանգներով ազաթից, տակառաձև, 4-8 մմ երկարությամբ և 2, 5-4մմ տրամագծով ուլունքներ: Այս ուլունքների անցքերը բացվել են երկու կողմից, և հաճախ փորվածքներն իրար չեն միանում: Ազաթից ուլունքների գլխիկները հղկված են, բայց ոչ փայլեցված: Մրանց հետ գտնվեց նույնպես ազաթից, կողային մեղ միստերով, տափակ մի ուլունք (տախտակ XVIII, նկ. 3): Անուշավանից գտնված ազաթից ուլունքներից մեկը բաց մոխրագույն ձվածիր է, իսկ մյուսը՝ մի անկյունը կլորացված հավասարասրուն եռանկյուն: Երկուսն էլ բաժանարարներ են (տախտակ XIX, նկ. 4): Ուլունքների մնան բազմազանությունը՝ սարդիոնի, ազաթի, ապակու և մածուկի համադրումը նույն շարանի մեջ բնորոշ է նաև Հյուսիսային Մերձսևծովյան շրջանին և ողջ Կովկասին:<sup>242</sup>

Հայտնի է, որ քարից ուլունքների արտադրության արհեստանոցները գտնվում էին Հնդկաստանում, ժամանակակից Ալլաբադը քաղաքի մոտակայքում:<sup>243</sup> Ինչպես վկայում է Ստրաբոնը, հնդկական և բաբելոնյան սարանքների քարավանային առևտուրը կատարվում էր Հայաստանի վրայով:<sup>244</sup> Ըստ Հ. Մանանդյանի՝ Բաբելոնի և Հնդկաստանի հետ առևտրի և սիրակների առևտրային մերձեցումները կատարվում էին Արտաշատի վրայով:<sup>245</sup> Մայրոտիս-Բաբելոն մայրուղու Արտաշատից Շիրակ, այնտեղից Վրաստան ու Արխազիա գնացող ճանապարհի

<sup>235</sup> Ս. Գ. և Ե. Յ. Մ. 2006, էջ 136: В. Сейранян, նշվ. աշխ., էջ 45:

<sup>236</sup> Նույն տեղում, էջ 137: Վ. Սեյրանյան, Ջարե ուլունքների պատրաստման տեխնոլոգիայի որոշ կողմերը Հին Հայաստանում, ՀՀ-ում 1989-1990թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական մատաչրջանի զեկուցումների թեզիսներ, 1991, էջ 41-42:

<sup>237</sup> Գ. Ջ. և Ե. Յ. Մ. 1991, էջ 53:

<sup>238</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 106, աղ. XXV, XXVI:

<sup>239</sup> Археология СССР, Античные государства Северного Причерноморья, - том-5 М., 1984, табл. CLVI<sub>31</sub>.

<sup>240</sup> Գ. Ջ. և Ե. Յ. Մ. 1991, էջ 54:

<sup>241</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., նկ. 46/1.

<sup>242</sup> Е. А л е к с е е в а, 1978, с. 46.

<sup>243</sup> Նույն տեղում, էջ 32:

<sup>244</sup> S t r a b o, XI, 5, 8.

<sup>245</sup> Я. М а н а н д я н, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ер., 1954, с. 59.

«ճանապարհ Աշոցաց» կամ «սյողոտայ Աշոցաց»<sup>246</sup> կոչվող հատվածը հավանաբար գործում էր նաև մ.թ. առաջին դարերում: Մ.թ.ա. 1-ին - մ.թ. I-II դ. սկզբին վերելք ապրող և առևտրական կենտրոն Բենիամինի բնակավայրը նպաստավոր դիրք ուներ առևտրական այդ ճանապարհի վրա և գտածոների մեջ ներմուծված ապրանքների առկայությունը բնական է:

Ապակյա բազմագույն ուլունքներից են աչքի ուլունքները, որոնք սովորաբար լինում են կապույտ, կարմիր և սև:<sup>247</sup> Մեր գտածոները կապույտ են և սև: Նման ուլունքներ գտնվել են Բենիամինի թիվ 59 (տախտակ XIX, նկ. 1), 183 (տախտակ XVIII, նկ. 3) դամբարաններից և Անուշավանից (տախտակ XIX, նկ. 4): Բենիամինի թիվ 183 դամբարանի գտածոն սև է և ունի քիչ սեղմված գնդի ձև: Աչքերն արված են վերադիր անկանոն շրջանաձև երկու՝ մեծ և փոքր զանգվածների ընդելուզմամբ: Ուլունքի վրա պահպանվել է նաև մի խոռոչ ևս, որը խոտանի արդյունք է: Բենիամինի թիվ 59 դամբարանից գտնված մնանատիպ ուլունքը նույնպես ապակյա է՝ սևի և մոխրագույնի խառը երանգների երկայնակի գծերով: Ուլունքի վրա պատկերված են կապույտի և մոխրագույնի համադրմամբ զույգ աչքեր և նույն երանգներով մեկ այլ՝ խոտան աչք: Անուշավանի մնանատիպ ուլունքները գնդաձև են և, ի տարբերություն մախորդների, աչքերն արված են վեց-յոթ հատ և պատկերված են սպիտակ, բարակ երիզով օղակված կապույտ շրջանակի ձևով: Եթե առաջինների վրա հայացքն անմիջապես ընկնում է աչքերին, երկրորդի դեպքում աչքերն ավելի շուտ ընկալվում են որպես մախ: Նմանօրինակ ուլունքները գալիս են առաջին հազարամյակից և հանդիպում են անտիկ աշխարհի բոլոր երկրներում:<sup>248</sup> Հայտնի են Վրաստանում Դափնարից,<sup>249</sup> Դարլագոմից<sup>250</sup> և Պարցխանակա-

նկից,<sup>251</sup> նաև Ադրբեջանից<sup>252</sup> և Հյուսիսային Մերձսևծովյան շրջանից:<sup>253</sup> Ենթադրվում է, որ աչքի ուլունքները պատրաստվել են Եգիպտոսում և Փյունիկիայում:<sup>254</sup> Ելնելով Բենիամինի աչքի ուլունքների պատրաստման որակից, հատկապես խոտան ուլունքներից, ինչպես նաև բնակավայրում գտնված ապակու խարամի բազմաթիվ կտորներից՝ դրանք տեղական արտադրության են և վերաբերում են մ. թ. ա. 1-ին դարին:

Ուլունքների մեջ կա նաև բրոնզե մի տարբերակ, որ գտնվել է Անուշավանում (տախտակ XIX, նկ. 4): Այն պատրաստված է սրտաձև կտրված բրոնզե թիթեղի ոլորումով: Ուլունքը յուրահատուկ լուծում ունի և եզակի է մեր ունեցած նյութերի մեջ:

Շիրակի անտիկ դամբարանադաշտերից ուլունքներ գտնվել են Բենիամինում, Վարդադում և Անուշավանում: Բենիամինում ազաթից, սարդիոնից, ապակու մածուկից և ապակուց ուլունքներ գտնվեցին կարասային, հիմնահողային և սալարկղային թաղումներից: Վարդադում ապակու մածուկից գույնզգույն ուլունքներ գտնվեցին սալարկղային թաղումից, իսկ դամբարանադաշտի ավերված հատվածից՝ նաև գիշերից ուլունքներ, որոնց քիչ ավելի երկարավուն ձևերն ավելի վաղ՝ 1974թ. այստեղ դիպվածաբար բացված դամբարանից:

Շիրակի անտիկ դամբարանադաշտերում ուլունքաշարերը կազմված են տարբեր գույների համադրումից և որոշ գույների առանձնացում կամ խմբավորում չկա, և ամեն շարան ունի գույների իր համադրումը: Ուլունքների կիրառությունը, կապված գույնի հետ, հետաքրքրել է ուսումնասիրողներին: Ընդունված է, որ սարդիոնի վարդագույն և դեղին երանգները բնորոշ են կանանց

<sup>246</sup> Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Երկեր, հ. Ե, Եր., 1984, էջ 161:  
<sup>247</sup> Ա. Ա վ ա գ յ ա ն, Իրանահայ մանկական հուլունքի հնայական պահպանակները (ըստ XIX-XXդդ. նյութերի), Հայ ազգաբնակչության և հնագիտության խնդիրներ, I, Երիտասարդ գիտնականների հանրապետական IX գիտաժողովի նյութեր, Եր., 2006, էջ 193:  
<sup>248</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1991, էջ 87:  
<sup>249</sup> Н. К и г у р а д з е, նշվ. աշխ., էջ 55:

<sup>250</sup> Б. К у ф т и н, 1950, табл. XIV.  
<sup>251</sup> М. И в а щ е н к о, Кувшинный могильник в Западной Грузии, СА, XIII, 1950, рис. 19.  
<sup>252</sup> С. К а з и е в, Т. Г о л у б к и н а, Об одном кувшинном погребении, ИАН Аз. ССР. N. 3, 1949, табл. IX.  
<sup>253</sup> Е. А л е к с е е в а, Классификация бус некрополя у деревни Ново - Отрадное, Поселения и могильники Керченского полуострова начала н. э. М. 1970. табл. II 18 -38.  
<sup>254</sup> Е. А л е к с е е в а, 1978, с. 46.

թաղումներին:<sup>255</sup> Մամբավրոյի դամբարանա-  
դաշտում մուգ կարմրանարնջագույն սարդի-  
նից ուլունքները գտնվել են տղամարդկանց,  
իսկ բաց վարդագույն-կարմրավուն ուլունքները՝  
կանանց թաղումներից:<sup>256</sup> Գառնիի դամբարան-  
ներից հայտնաբերված ուլունքները կազմված  
են գունային նույն համադրություններով:<sup>257</sup>

Գույների խորհրդանիշերի վերաբերյալ  
ևս տարբեր կարծիքներ կան: Ըստ Յու. Լիպսի՝  
կարմիր, սպիտակ և սև գույները մահվան  
խորհրդանիշեր են:<sup>258</sup> Ըստ Ջ. Ֆրեզերի՝ սև գույ-  
նը հոմեոպատիկ հմայության մեջ ընկալվում էր  
իբրև հմայության, կախարդանքի բաղկացուցիչ  
մաս:<sup>259</sup> Հայոց մեջ գույների ընկալումը քիչ այլ  
է: Հայտնի է, որ օրինակ կարմիրը խորհրդա-  
նշում է կրակ և արյուն:<sup>260</sup> Աչքի ուլունքների մեծ  
մասը կապույտ գույնի է, իսկ հայոց մեջ կա-  
պույտը «չար աչքից» և չար ուժերից պաշտ-  
պանող է:<sup>261</sup> Կապույտ գույնին հմայական գո-  
րություն վերագրելը բնորոշ է Հայաստանի ազ-  
գագրական գրեթե բոլոր շրջաններին: Ըստ ազ-  
գագրական նյութերի՝ երեխաներին կամ կա-  
պույտ զգեստ էին հագցնում, կամ կապույտ  
գույնի ուլունքներ և կոճակներ էին կարում հա-  
գուստների տարբեր մասերին՝ գլխարկին, զգես-  
տի քիկունքին, թևաբերաններին, ամրացնում  
էին ծամթելերին, ինչպես նաև՝ կենդանիների  
հմայական պահպանակներին:<sup>262</sup>

Գույների խորհրդանշական իմաստները  
կապվում են չարի և բարու, ուրախության և  
տխրության հետ: Ժողովրդական ծիսական  
համակարգում սև-կարմիր-սպիտակ եռյակում  
սպիտակը նշանակում է երկնային արդարու-  
թյունը, կարմիրը՝ կյանք և առողջություն, սևը՝

մահ:<sup>263</sup> Այս գույները խորհրդանշում են նաև  
տիեզերքի ուղղաձիգ եռամաս կառուցվածքը,  
որտեղ կարմիրը միջին աշխարհն է:<sup>264</sup> Թագա-  
վորի տղայի «լույս աշխարհ գալու» մասին հե-  
քիաքներում գույների խորհրդանշական նշված  
իմաստներն են կրում երեք (սև, կարմիր, սպի-  
տակ) խոյերը:<sup>265</sup> Հմայական պահպանակներն  
ունեն բնորոշ գույներ՝ կապույտ, կարմիր, սպի-  
տակ, սև, կանաչ, իսկ կնուքի և պսակի նա-  
րոտն ու կուսպանդը կարմիր են, կանաչ և սպի-  
տակ: Հարսանիքի հետ կապված ուշագրավ է  
նաև գույն-խոսք համադրությունը, որտեղ գույ-  
ները շեշտվում են բարեմաղթանքի խոսքերում.  
«բարով կանաչ-կարմիրը կապենք»:<sup>266</sup>

Շիրակի դամբարանադաշտերից գտնված  
ուլունքաշարերի քննությունը ցույց է տալիս, որ  
դրանք ավելի հաճախ կազմվել են առանց հա-  
տուկ գունային համադրության: Շարանների  
մեջ կարող են լինել բոլոր գույները, կամ՝ երկու  
գույնի համադրում: Պետված դամբարանադաշ-  
տերից մարդաբանական որոշ տվյալներ ունեն  
միայն Բենիամինի դամբարանները: Ըստ այդ  
տվյալների՝ ուլունքները գտնվել են մանկական  
(սեռի մասին տվյալներ չկան) և կանանց թա-  
ղումներից: Հստակ է, որ ուլունքները, զարդ  
լինելով հանդերձ, նաև պահպանակի դեր են  
կատարել: Բենիամինի թիվ 125 դամբարանից  
գտնված կապույտ ապակուց հուռուքից պահ-  
պանվել է տրամագծով կիսված մի մաս (տախ-  
տակ XIX, նկ. 6): Հատած կոնի ձև ունեցող  
հուռուքի (հիմքի տրամ.՝ 2, 5սմ, բարձր.՝ 2, 5սմ)  
լայն կողմի մակերեսը ողջ շրջագծով եզերված է  
կապույտ և սպիտակ ապակեթելի պարանա-  
զարդով: Դատելով պահպանված հատվածից՝  
մակերեսը խաչվող երկու սպիտակ գծերով բա-  
ժանված է եղել չորս դաշտի, յուրաքանչյուրի  
կենտրոնում ընդելուզված մեկական աչքով: Աչ-  
քի պատկերն արված է սպիտակ և կապույտ

<sup>255</sup> В. М а р к о в и н, Сердолик-камень счастья, М., 1970. с. 272.

<sup>256</sup> Г. Л е м л е й н, Техника сверления каменных бус из раскопок на Кавказе, КСИИМК вып. XVIII, 1947. с. 29.

<sup>257</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 108:

<sup>258</sup> Ю. Л и п с, Происхождение вещей, Из истории культуры человечества, М., 1954. с. 74.

<sup>259</sup> Д. Ф р е з е р, Золотая ветвь, М., 1980. с.38.

<sup>260</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 106:

<sup>261</sup> Ա. Մ վ ա գ յ ա ն, նշվ. աշխ., էջ 194:

<sup>262</sup> Ա. Ի ս ր ա յ ե լ յ ա ն, Կանացի զարդերը Վասպուրականում, Գիտություն և տեխնիկա, Եր., 1986, թիվ 7, էջ 33:

<sup>263</sup> Նույն տեղում:

<sup>264</sup> Ա. Ի ս ր ա յ ե լ յ ա ն, Ոչ իրեղեն հմայական պահպանակներ, Հայ ժողովրդի մշակույթ, XIII, Եր., 2006, էջ 81:

<sup>265</sup> Ա. Մ տ ե փ ա ն յ ա ն, Հայոց տարազանախշերի գունային համակարգը և ժողովրդական գունընկալումը, Հանդես ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2001, էջ 491-494:

<sup>266</sup> Ա. Ի ս ր ա յ ե լ յ ա ն, Օժիտի արցախեսան մի կարպետ, Հանդես ամսօրեայ, 1-12, Վիեննա, 1997, էջ 472:

շրջանների համադրմամբ, կենտրոնում՝ ուռուցիկ սև բիրով: Հուռուքի մակերեսի մեծությունը և չորս աչքերի այսպիսի տեղաբաշխումն արվել են նայողի հայացքը անպայման աչքերին հանելու համար: Եվ յուրաքանչյուր հայացք չեզոքանալու, կորցնելու էր ուժը և դուրս էր գալու հուռուքի վրա արված իրար հետ խաչվող բազմաթիվ անցքերից: Կոնաճությունը փոքրացրել է ծավալը, իսկ իրար հետ խաչվող մեծ անցքերը՝ թեթևացրել քաշը: Հուռուքը գտնվել է կմախքի ուսագլխի մոտ, հավանաբար կախված է եղել վզից: Պատրաստման տեխնիկայով, ոճական և գեղարվեստական առանձնահատկություններով այն սերտորեն առնչվում է մ. թ. ա. առաջին դարերի աչքի ուլունքների:

Բենիամինի զարդերի մեջ կա նաև մեկ հմայիլ-կախիկ, որ գտնվեց թիվ 183 դամբարանից (տախտակ XIX, նկ. 7): Կախիկը պատրաստված է պիրիտի հանքաքարից, խորանարդաձև է՝ անկյունագծով կիսված, մի անկյունում՝ միջանցիկ անցքով (նիստերը՝ 2,5x2,5սմ): Կտրված հատվածում պահպանվել է նաև մեկ այլ անցքի հետք: Կախիկը, դամբարանից գտնված հարակից այլ նյութերով, թվագրվում է մ. թ. ա. 1-ին դարով:

Զարդերի մեջ կա երկու շքասեղ Բենիամինի թիվ 126 (տախտակ XX, նկ. 1) և 142 դամբարաններից (տախտակ XX, նկ. 2) և մեկն էլ Անուշավանից (տախտակ XX, նկ. 3): Առաջինը 2մմ տրամագծով և 9սմ երկարությամբ բրոնզալարից է: Շքասեղի գլխիկը ստացվել է բրոնզալարը տափակեցնելով և օղակաձև ծալելով: Մյուս շքասեղը երկաթից է և գտնվեց կմախքի թիկունքի մասում, քայքայված է և կտրված (գլխիկը չկա): Շքասեղի ձևն աղերսվում է Գվի-նի բրոնզե շքասեղին:<sup>267</sup> Նման շքասեղեր հայտնի են Գառնիի կարասային թաղումներից<sup>268</sup> և Մինգեչաուրից:<sup>269</sup> Բենիամինի շքասեղը թվագրվում է մ. թ. 1-ին դարով: Անուշավանի շքասեղը բարակ բրոնզալարի մի ծայրում ամրացված կիսագնդաձև, բրոնզե թասիկ ունի,

որի վերադիր զարդամասը բացակայում է: Այս գտածոն ավելի նուրբ է և բարակ (երկ. 11 սմ է, գլխիկի տրամագիծը՝ 9մմ) և թվագրվում է մ. թ. ա.1-ին -մ.թ.1-ին դարերով:

Բենիամինի թիվ 40 դամբարանից գտնվեց շագանակագույնի խառը երանգներով, լավ մշակված, ձվածիր ազաթ (տախտակ XX, նկ. 4): Իրի ողորկ մակերեսը, մի կողմում ուռուցիկ լինելը ենթադրում են, որ պատրաստվել է զարդի վրա ազուցելու համար, ամենայն հավանակամությամբ՝ մատանու (երկ.՝ 2սմ, լայն.՝ 14մմ, բարձր.՝ 7մմ ):

Վերադիր զարդի մի օրինակ է Բենիամինի թիվ 98 դամբարանից գտնված ճարմանդը: Այն պատրաստված է 3մմ լայնությամբ բարակ և տափակ բրոնզալարից: Օձաձև երեք գալարով ստացվել է ճարմանդի գլխիկը, որի վրա նստել են զույգ կեռ լեզվակները (ճարմանդի երկ.՝ 2, 5սմ, լեզվակների երկ.՝ 2սմ և 1, 7սմ): Ճարմանդը (տախտակ XX, նկ. 5) թերի է, գտնվեց կմախքի կրծքի հատվածում և հավանաբար ամրացրել է հագուստը: Նման մի իր հայտնի է Օշականից:<sup>270</sup> Նույն դամբարանից գտնված մ. թ. ա.1-ին դարի ապակյա կնիքն ու ապակու մածուկից ուլունքներն օգնում են ճարմանդի թվագրմանը:

Բենիամինի թիվ 213 դամբարանից գտնվեց նաև բարակ բրոնզալարից, սուր ծայրերն իրար մոտեցված, ձվածիր իրանի վրա սուր ելուստով մի իր (տախտակ XX, նկ. 6): Փոքր ելուստի վրա հավանաբար վերադիր զարդամաս է եղել: Իրը նման է ականջօղի, սակայն ծայրերը շատ սուր են և կրելու համար հարմար չեն:

Վերադիր զարդի մի մաս գտնվեց Վարդա-դից (չինարարական աշխատանքների ժամանակ բացված դամբարան): Եզրակսով շրջանակված բրոնզյա թիթեղի կենտրոնում դրվագված իրար միացող երկու գալարները ստեղծում են խոյի գլխի ոճավորված պատկեր (տախտակ XX, նկ.7): Իրի աջ և ձախ եզրերին բացված մեկական փոքր անցքերով հավանաբար կարվել է հագուստին: Բրոնզից, շրջանաձև, քիչ ուռուցիկ գլխիկով, քայքայված մի կոճակ (տախտակ

<sup>267</sup> Գ. Ք ո չ ա թ յ ա ն, 1991, էջ 52:

<sup>268</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 97:

<sup>269</sup> С. К а з и е в, 1949, табл. XXXIX<sub>2</sub>.

<sup>270</sup> С. А. Е с а я н, А. А. К а л а н т а р я н, նշվ. աշխ., տախտ. LIII, նկ. 2:

XX, նկ. 8) և քարից, շրջանաձև, կենտրոնում միջանցիկ անցքով մեկ այլ կոճակ (տախտակ XX, նկ. 9) գտնվեցին թիվ 206 դամբարանից:

Քննարկվող անտիկ դամբարանադաշտերի գտածոների մեջ կան նաև հայելիներ: Բենիամինում այն ավերված դամբարանից է, իսկ Անուշավանում պատահական գտածո է: Եթե Բենիամինում անհայտ են դամբարանում հայելու տեղն ու դիրքը, Անուշավանում այն դրված է եղել ննջեցյալի գլխի տակ: Բենիամինի հայելին բրոնզի բարակ թիթեղից շրջան է՝ միաձույլ, փոքր, տափակ կոթով: Հայելու տրամ.՝ 9, 3սմ է կոթի երկ.՝ 2սմ. լայն.՝ 1, 3 սմ (տախտակ XX, նկ. 10): Կոթի մասը բարակ է՝ ծայրին փոքր անցքով, սկավառակի եզրերը կտրտված են: Անուշավանից գտնված հայելին նույնպես բրոնզե թիթեղից է՝ նախորդից քիչ ավելի հաստ: Հայելու եզրերը մի կողմում քիչ բարձր են և ներս հակված: Հակառակ երեսին, եզրագծով արված են համակենտրոն զույգ շրջաններ, որոնք կարելի է դիտել որպես խոշոր արևանախշեր: Հայելու եզրից քիչ ներս կոթն ամրացնելու համար արված զույգ անցքեր են: Կոթը չի պահպանվել: Անուշավանի հայելին քիչ ավելի մեծ է. տրամ.՝ 13,7սմ (տախտակ XX, նկ. 11): Բրոնզե բարակ թիթեղից, շրջանաձև, առանց զարդանախշման այս հայելիները վերաբերում են մ. թ. 1-ին դ.:

Անտիկ աշխարհում հայելիների տարածման տիրույթը շատ մեծ է: Շրջանաձև, տափակ հայելիները տարածված էին Հունաստանում հելլենիստական և վաղ հռոմեական շրջանում:<sup>271</sup> Հայելիներ գտնվել են Թուրք-Խոնեից,<sup>272</sup> լայն տարածում ունեին Չինաստանում<sup>273</sup> և օգտագործվում էին թաղման ծեսում: Տափակ, հարթ ու շրջանաձև հայելիներ հայտնի են Կերչից և թվագրվում են մ. թ. ա. 1-ին և մ. թ. 1 դարերով:<sup>274</sup> Սկյութական Նեապոլում գտնված հայելիները թվագրվում են մ. թ. ա. 3-1-ին դարերով: Նույն ժամանակաշրջանով են թվագրվում նաև Ուստ-Լաբինսկում գտնված հայելիները:<sup>275</sup> Կոտորված հայելիներ կան հայելու կտորներ գտնվել են նաև սարմատական դամբարաններից:<sup>276</sup> Հայելիներ հայտնի են Դուրա-Եվրոպոսի մ.թ.1-4-րդ դարերով թվագրվող դամբարաններից:<sup>277</sup>

Նույնիսկ հարուստ թաղումներ ունեցող դամբարանադաշտերում հայելիներ հազվադեպ են հանդիպում: Ույզարակում հայելիներ գտնվել են բացառապես միայն քրոնիկների դամբարաններից:<sup>278</sup> Իրանում Անահիտին և Միհրին նվիրված տաճարից գտնվել են հայելիներ, որոնց կոթերը կանացի ոտքեր են, գլխի փոխարեն ամրացված է հայելու սկավառակը: Ըստ Ռ.Գիրշմանի, հայելիները խորհրդանշում են Անահիտին և Միհրին:<sup>279</sup> Միջին Ասիայի տարբեր հնավայրերի պեղումներից հայտնի են հայելի ձեռքին կանացի արձանիկներ:<sup>280</sup>

Հայաստանում հայելիներ գտնվել են Արտաշատից, Վաղարշապատից,<sup>281</sup> Գառնիից,<sup>282</sup> Օշականից:<sup>283</sup> Արտաշատի հայելիները նույնպես բրոնզի թիթեղից են և անզարդ: Շրջանաձև, անկոթ հայելիները Գառնիում ավելի հաճախ հանդիպում են մ. թ. 1-3-րդ դարերի դամբարաններում:<sup>284</sup> Արտաշատի հայելիները նույնպես բրոնզի անզարդ թիթեղից են և գտնվել են խիստ քայքայված վիճակում, բացառությամբ մեկի, որն ամբողջական է և լավ պահպանված:<sup>285</sup> Օշականի հայելին նույնպես անզարդ է և խիստ

<sup>271</sup> R i c h t e r G. M. A. and Ch. Alexander, A. Greek Mirror. Ancient or Modern. AIA, n.3, 1917.  
<sup>272</sup> Б. Л и т в и н с к и й, А. С е д о в, 1984, с.46:  
<sup>273</sup> R. S v a l o v, Ancient Chiese bronze mirrota, Peiping, 1937. p. 6.  
<sup>274</sup> Ժ. Խ շ չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 87: В. Шелов, Раскопки Калиновского курганного могильника, КСИИМК, вып. 59, 1955, с. 125; Т. Арсеньева, Могильник у деревни Ново-Отрадное, ПМКП, МИА, N. 155, М., 1970. с. 143.

<sup>275</sup> Н. А н ф и м о в, Меото - сарматский могильник у станицы Усть -Лабинской, МИА N. 23. М.- Л., 1951. с. 186.  
<sup>276</sup> Т. К у з н е ц о в а, Зеркала в погребальных обрядах Сарматов, СА, 1988, N. 4, с. 52-61.  
<sup>277</sup> Т о l l N. P, նշվ. աշխ., էջ 122-123:  
<sup>278</sup> О. В и ш н е в с к а я, Культура Сакских племен низовьев Сырдырья в VII-V в. в. до н. э. Труды ХАЭЭ VIII, М., 1973, с. 85.  
<sup>279</sup> R. G i r s h m a n, Iran, Terrasses sacrees. Bard-e Nechandeh et Masdjidi Solaiman. Paris 1976. p. 117-118.  
<sup>280</sup> Б. Л и т в и н с к и й, Орудия труда и утварь из могильников Западной Ферганы, М., 1978, с. 111.  
<sup>281</sup> Ժ. Խ շ չ ա տ ր յ ա ն, 1981, էջ 85:  
<sup>282</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 97:  
<sup>283</sup> Ст. Е с а я н, А. К а л а н т а р я н, նշվ. աշխ., տախտ. XLII, նկ. 8:  
<sup>284</sup> Ժ. Խ շ չ ա տ ր յ ա ն, 1981, էջ 85:  
<sup>285</sup> Նույն տեղում, էջ 67:

քայքայված: Բենիամինում հիմնականում միջին և աղքատիկ թաղումներ են և բնական է հայելու եզակի լինելը:

Շիրակի անտիկ դամբարանադաշտերից Կարմրաքարում գտնվեցին կաթնագույն, անթափանց ապակուց երկու սրվակ: Մուգ կապույտ ապակուց երկու փոքրիկ սրվակ գտնվեց նաև Վարդքաղում (շինարարական աշխատանքների ժամանակ բացված դամբարան): Կարմրաքարի թիվ 5 դամբարանից գտնված անոթներից (տախտակ XXI, նկ. 1) առաջինն ունի տափակ նստուկ, տանձաձև իրան, երկար վիզ, ետ ճըկված և լայն ակոսված շրթերիզով բերան (բարձր.՝ 4,5սմ, իրանը՝ 2,5սմ): Անոթը, որ գտնվեց ննջեցյալի ոտքերի տակ, պատրաստված է ազատ փչման եղանակով: Շուրթը ստացվել է բերանի մոտ ապակու զանգվածը ձգելով և շրթերիզը երկտակ ծավվածքով լայնացնելով: Մյուսը (թիվ 12 դամբ.) նույնպես կաթնագույն ապակուց է, ունի լայն նստուկ, փքուն իրան, սեղմված, կարճ վիզ, անկանոն շրթերիզով լայնացող բերան (տախտակ XXI, նկ. 2): Այս անոթը քիչ ավելի մեծ է (բարձր.՝ 5, 5սմ, իրանի տրամ.՝ 4սմ) և պատրաստված է նույն եղանակով: Անոթին ձև տալուց հետո ավելորդ մասերը հեռացվել են, սակայն աշխատանքը կատարվել է անփույթ և նստուկների վրա փոքր ցցվածքներ են մնացել: Ըստ ամենայնի՝ անոթները տեղական ծագում ունեն: Երկու սրվակներն էլ կոտրված են: Եվ եթե առաջինի իրանն է քիչ թերի, ապա վերջինն ուղղակի մանր բեկորների է վերածվել: Անոթների թերի (թիվ 5 դամբ.) և փշրված լինելը (թիվ 12 դամբ.) հավանաբար ծխակարգի հետ է կապված: Կարմրաքարի ապակյա անոթները զուգահեռներ ունեն Շիրակավանում, որտեղ դրանք գտնվել են ննջեցյալի կրճքին,<sup>286</sup> և ի տարբերություն մեր գտածոների, ամբողջական են: Անոթների այս ձևը լայն տարածում ունեւր անտիկ աշխարհում: Կարմրաքարի թիվ 5 դամբարանից գտնված ապակյա անոթը զուգահեռն

ունի Արտաշատում<sup>287</sup> և կարող է թվագրվել մ. թ. 2-3-րդ դարերով: Վարդքաղից գտնված կապույտ ապակուց երկու անոթներն ունեն կոտրվում եզրերով փոքրիկ պատվանդան, բարակ, նեղ իրան և երկար վիզ, փոքր շուրթ (տախտակ XXI, նկ. 3, 4): Շուրթն իրանին է միանում լայն հիմքից ելնող և շուրթից բարձր դիրքով, բլթակավոր ունկով: Սրվակներից մեկը կոտրված է, պահպանվել է նստուկից մինչև շուրթը (բարձր.՝ 3սմ, իրանի տրամ.՝ 1, 3սմ): Պատրաստման ձևի մասին հստակ պատկերացում է տալիս թերի սրվակը: Հիմքից լայն ժապավենի մեկ ոլորումով կազմվել է իրանի մեկ երրորդ մասը, ապա իրանն ու վիզը: Վերջին, համեմատաբար լայն ոլորումով ավարտվել է անոթի շուրթը, որին ամրացվել է ունկը: Վարդքաղի գտածոները վերաբերում են մ. թ. 2-3-րդ դարերին:

Բենիամինի թիվ 40 դամբարանից գտնվեց երկաթյա լեզվակներով, կարճ և լայն իրանով (տրամ. հիմքի մոտ 2սմ, բարձր. 2սմ), բրոնզե երկու զանգակ (տախտակ XXI, նկ. 5, 6): Դամբարանը դեռևս հնում թալանվել է և դժվար է ասել զանգակները թաղման կողքին բացված ձիու պարանոցից են եղել կախված, թե՛ աճյունի հետ դրված ուղեկցող նյութերի մեջ:

Կախիկ-զանգակներ հայտնի են Հայաստանի բրոնզիդարյան հուշարձաններից և հետագա ձևափոխություններով հասնում են հելլենիստական շրջան: Չանգակները հաճախ են հանդիպում Բոսպորի և նրա շրջակայքի մ. թ. առաջին դարերի դամբարաններում:<sup>288</sup> Թաղման ծիսակարգում զանգակներ հայտնի են Թրակիայի տարածքում բացված դիակիզումներով թաղումներից, որոնք թվագրվում են մ. թ. ա. 4-3-

<sup>287</sup> Մ. Խ ա շ ա տ ր յ ա ն, 1981, էջ 165, նկ. 44 /1: Ж. Хачатрян, նշվ. աշխ., էջ 59:

<sup>288</sup> Т. А р с е н ь е в а, Некрополь римского времени у деревни Ново-Отродное. СА. п 1, 1963, с. 203; В. Гайдукевич, Некрополи некоторых боспорских городов, по материалам раскопок 1930-х годов (МИА - Материалы и исследования по археологии СССР) N. 69, М.- Л., 1959, 1948, 205; Д. Шелов, Некрополь Танаиса, МИА N. 98, М., 1961, с. 78, табл. XXXIX 5, 6; Н. Богданова, Могильник I ст. до и.э.-III ст. т. э. Бяля с. Зфбіто, Бахчисарайского району. „Археология“, XV, Киев, 1963, с. 105; И.Кругликова, Античная сельскохозяйственная усадьба близ Керчи, АИКСП, М., 1968, с. 98; Н. Анфимов, նշվ. աշխ., էջ 219:

<sup>286</sup> Փ. Թ е р - Մ а р т и р о с о в, Գ. Կ а р а х а ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 27:

րդ դարերով.<sup>289</sup> Բրոնզից զանգակները բնորոշ են նաև Կովսիդայի մ. թ. ա. 6-4-րդ դարերի թաղումներին: Գտնվել են Սուխումիզորիից:<sup>290</sup> Կուֆտինը Դարվագոմիում գտնված զանգակները համարում է զարդ-ամուլետ:<sup>291</sup> Այսօրինակ զանգակներ գտնվել են Մամթավրոյի կարասային թաղումներից:<sup>292</sup> Իսկ հելլենիստական շրջանում նույն Կովսիդայում այս զանգակները հազվադեպ են հանդիպում՝ հավանաբար ունենալով վերապրուկային բնույթ:<sup>293</sup> Չանգակները բնորոշ են Վրաստանի և Ադրբեջանի տարածքի հելլենիստական թաղումներին:

Հայաստանի համաժամանակյա հուշարձաններից զանգակներ գտնվել են Արտաշատում և Գառնիում: Արտաշատում զանգակներն ունեն կիսագնդաձև իրան, հայտնաբերվել են արևմտյան դամբարանադաշտի թիվ 59 դամբարանից և թվագրվում են 1-2-րդ դարերով:<sup>294</sup> Գառնիի զանգակներն ունեն երկարավուն իրան, արտաքուստ նախշազարդ են և թվագրվում են մ.թ.ա.1-ին դարով: Բենիամինի զանգակներն ավելի մոտ են Արտաշատի գտածոներին և թվագրվում են մ. թ. 1-2-րդ դարերով:

Բենիամինում գտնվեցին նաև բոժոժներ թիվ 40, 43, 105, կաուրի թիվ 183 (տախտակ XXI, նկ. 7) և 100 դամբարաններից (տախտակ XXI, նկ. 8): Ուլունքների հետ բոժոժ գտնվել է նաև Անուշավանից: Այս բոժոժի մի կողմի մշակված լինելը հուշում է, որ այս մասով ազուցված է եղել պատյանի մեջ և օգտագործվել է որպես կախիկ: Բոժոժները սովորական խխունջներ են, որ տարածված են նաև Հայաստանում: Իսկ կաուրին, որ բերվում էր Հնդկական օվկիանոսից և Միջերկրական ծովից, անտիկ ժամանակ

կաշրջանում օգտագործվում էր ոչ միայն որպես զարդ, այլև բուժական մոզոթյան մեջ:<sup>295</sup>

Բենիամինի դամբարանադաշտում գտնվել են նաև վեգեր (դամբ. 2, 118, 196): Գտնված բոլոր ճաներն անմշակ են (տախտակ XXI, նկ. 9): Ծանի ձևով պատրաստված կավանոթ գտնվել է Պանտիկասպեից և թվագրվում է մ.թ.ա. 4-րդ դարով: Ծաներ հայտնի են նաև Վրաստանից:<sup>296</sup> Ծան-վեգը նախ հայտնի է որպես խաղաքար:<sup>297</sup> Ծաները կամ վեգերը որպես խաղալիքներ և հմայիլներ հայտնի են Հայաստանի բրոնզիդարյան հուշարձաններից. Լորուս՝ վաղ բրոնզ,<sup>298</sup> Մեծամոր՝ միջին բրոնզ,<sup>299</sup> Լճաշեն՝ ուշ բրոնզ:<sup>300</sup> Ծաներ հայտնի են նաև Հայաստանի անտիկ հուշարձաններից: Գտնվել են Գառնիից,<sup>301</sup> Արտաշատի 1, 7, 8 բլուրների պեղումներից: Մշակված վեգեր գտնվել են մ. թ. ա. 1-ին դարի դամբարաններից, ինչպես նաև՝ շերտից:<sup>302</sup> Արտաշատից գտնվել է նաև բրոնզից ձուլածո ճան:<sup>303</sup> Առափիի դամբարանադաշտի վերգետնյա նյութերի հետ գտնվեց նաև մետաղյա լիցքով ճան: Կարծում ենք, լիցքն արված է խաղի ժամանակ անհրաժեշտ դիրք սպահովելու համար:

Բենիամինի գտածոների մեջ կա նաև ոսկրե կոթառ, որը գտնվեց թիվ 184 դամբարանից (տախտակ XXI, նկ. 10): Իրը զլանաձև է, լավ հղկված, կրակից մասամբ սևացած: Այն փոքր է (երկ.՝ 4սմ և տրամ.՝ 1սմ):

Արդուզարդի առարկաների մեջ կան նաև աղքատիկ թաղումներին բնորոշ հասարակ զարդեր: Ֆալանգներ գտնվեցին նաև թիվ 182 դամբարանից (տախտակ XXII, նկ. 1): Թիվ 195 դամբարանից գտնվեցին վզի շուրջը երկու շարքով փաթաթված մի քանի տասնյակ ֆալանգ-

<sup>289</sup> А. М е л ю к о в а, Поселение и моги́льник скифского времени у села Николаевка, М., 1975, с. 185.  
<sup>290</sup> Н. К и г у р а д з е, նշվ. աշխ., էջ 34:  
<sup>291</sup> Б. К у ф т и н, 1950, с. 46-47.  
<sup>292</sup> В. Т о л о р д а в а, Материалы по истории Иберинского царства, (автореферат канд. диссертации ), Тбилиси, 1968, с. 151.  
<sup>293</sup> Н. К и г у р а д з е, նշվ. աշխ., էջ 55:  
<sup>294</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1981, նկ. 48 / 2.

<sup>295</sup> Э. Р т в е л а д з е, Моги́льник Кушанского времени в Ялангтуш-Тепе, СА, N. 2, 1983, с. 36.  
<sup>296</sup> Ш. Д е д а б р и ш в и л и, Курган Алазанской долины (Труды Кахетинской археологической экспедиции II) Тбилиси, 1979. с. 50 табл. ХLI / 2.  
<sup>297</sup> Ն. Ե ն զ ի բ ա ռ յ ա ն, Հին Հայաստանի վեգ-հմայիլները և վեգ-խաղալիքները, ԼՀԳ, 1991, թիվ 3, էջ 170:  
<sup>298</sup> Վ. Ա վ ե տ յ ա ն, Լճաշենի 1984 - 85թ.թ. պեղումները, ԼՀԳ, 1986, թիվ 10, էջ 92:  
<sup>299</sup> Է. Խ ա ն զ ա ղ յ ա ն, 1973, էջ 21, 66:  
<sup>300</sup> Վ. Ա վ ե տ յ ա ն, նշվ. աշխ., էջ 91:  
<sup>301</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 9:  
<sup>302</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1981, էջ 58:  
<sup>303</sup> Б. А р а к е л я н, Арташат I, Основные результаты раскопок 1970-1977гг. Ер., 1982. с. 34.

ներ, որոնք անցքեր ունեն գլխիկներին և իրանի վրա (տախտակ XXII, նկ. 2): Երբեմն նույն ֆալանգի վրա արված է մի քանի անցք: Մի քանի ֆալանգների լայնքով իրար գուգահեռ խազեր են արված: Հնարավոր է, որ այս ֆալանգները հաշվարկու են եղել:<sup>304</sup> Տարբեր ժամանակաշրջանների թաղումներում հանդիպող նման նյութերը թվագրող լինել չեն կարող: Բենիամինի գտածոների մեջ քարից իրերը երկու խմբի են բաժանվում: Առաջինները, ինչպես արդեն տեսանք, աշխատանքային գործիքներ են: Քարից իրերի երկրորդ խմբում այն առարկաներն են, որոնք կիրառական նշանակություն չունեցող երկրաչափական տարբեր մարմիններ են: Կասկած չկա, որ այս իրերը դամբարաններում հայտնվել են զուտ ծիսական դերով: Թիվ 124 դամբարանից գտնվեց երկայնակի ակոսներով քառանիստ բազմանկյուն (տախտակ XXIII, նկ. 1): Իրը փոքր է (երկ.՝ 7սմ, լայն.՝ 2, 5սմ, հաստ.՝ 2սմ): Կրաքարից նման մի իր գտնվեց Բենիամինի բնակավայրից:<sup>305</sup> Թիվ 121 դամբարանում, որտեղ տղամարդու և կնոջ համատեղ իրար վրա կատարված թաղում է, առաջին կմախքի կրծքին գտնվեց սև, փայլուն, լավ հղկված մի քար (տախտակ XXIII, նկ. 3): Իրը եռանիստ բուրգ է (երկ.՝ 9սմ, հիմքի նիստերը՝ 3սմ և 4սմ): Նույն քարից սրտածև մի իր

\* Շիրակում մինչ օրս գյուղացիների միջև կաթի փոխանակման «խապ ու խասի» ժամանակ չափը նշվում է քենչի՝ բարակ ճյուղի վրա խազեր անելով (ԳԱՆ, հեղինակի գրառումներից, Ղազանչի, Մեծ Մեպասար): Նման բազմաթիվ վկայություններ կան տարբեր ազգագրական շրջաններից: Օրինակ, Դերսիմում խապի հաշվարկում կես մետրանոց, մատի հաստությամբ, չոր մի փայտ էր, որը մեջտեղից և վերից վար երկու հավասար մասի էր բաժանված: Մասերից մեկը մնում էր ստացողի, մյուսը՝ տվողի մոտ: Փոխատուն կաթը տանելու ժամանակ իր հետ վերցնում էր փայտի կեսը, կաթը չափում և հանձնում էր, սպա երկու կեսերը միացնում և դանակով նշում այնքան չափ, որքան որ տվել էր շարունակաբար: Ետ ստանալու ժամանակ նույն քեթիկները, տրված չափի համեմատությամբ, դանակով տաշում ջնջում էին: Խսալի փայտը իր խազերով հաշվառման ամենասպահով ձևն էր, որն իր գոյության և անսխալականության իրավունքը ձեռք էր բերել հազարամյակների փորձառությամբ: Գ. Հալաջյան, Դերսիմի հայերի ազգագրությունը, Հայ ազգագրություն և բանահյուսություն հ. 5, Եր., 1973. էջ 147:

<sup>305</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը (մասն I), ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածու II, Գյումրի, 1999, նկ. 9:

գտնվեց թիվ 54 դամբարանից: Սպիտակ կրաքարից, կլորացված անկյուններով, կենտրոնում միջանցիկ անցքով (տրամ.՝ 2սմ) քիչ անկանոն քառակուսի մի իր գտնվեց թիվ 184 դամբարանից (տախտակ XXIII, նկ. 4): Իրը կտորված է և անկյունագծով բաժանված երկու մասի (մոտավոր չափերն են՝ 5 x 6սմ): Նման մի իր գտնվել է Լոռի բերդից և Ս. Դևեջյանը դիտարկում է անվակ կամ սուզակ, որ հավանաբար օգտագործվել է ջուլիակության մեջ և բնորոշ է վաղ բնակատեղիներին:<sup>306</sup> Մ.թ.ա 1-ին դարի դամբարանում նման անվակի կամ սուզակի գյուտը կարող է վկայել ջուլիակության մեջ դարեր շարունակ անփոփոխ ձևով այն օգտագործելու մասին: Քարե վերջին իրը Բենիամինի թիվ 1 դամբարանում ննջեցյալի ոտքերի տակ գտնված ձուն է (տախտակ XXIII, նկ. 2):

Դրանք գտնվեցին են Բենիամինից և Վարդքաղից: Բենիամինի դամբարանադաշտի ավերված հատվածից գտնվեց Հրահատ 3-րդի (մ. թ. ա. 70-57թթ.) արծաթյա դրամ (տախտակ XXI, նկ. 11), որը կարող է վերաբերել նաև բնակավայրին, իսկ Տրայանոսի (103-111թթ.) արծաթյա դրահման<sup>307</sup> պատահական գտածո է Վարդքաղից (տախտակ XXI, նկ. 12):\* Հանգուցյալի բերանում դրամ դնելը բնորոշ է Հունաստանին: Այդ մասին վկայում են ինչպես հունական աղբյուրները (Ստրաբոն, Լուկիանոս), այնպես էլ հնագիտական պեղումներից հայտնի գտածոները (Աթենք, Օլիմպոս, Կորնթոս):<sup>308</sup> Ըստ Դ. Ռոբինսոնի՝ որպես Քարոնին վճար բերանում դրամ դնելու սովորույթը Հունաստանում սկսվում է մ.թ.ա. V դարում՝ կապված ծավալվող դրամական շրջանառության հետ, իսկ ըստ Ֆ. Բրուկի՝ մ. թ. ա. IV դարում:<sup>309</sup> Ծեսը Հայաստանում տարածվել է Հունաստանից:

Ըստ հնդեվրոպական հավատալիքների՝ հանդերձյալ աշխարհը մարգագետին էր, որտեղ արածում էին մարդկանց և զոհաբերված անա-

<sup>306</sup> Մ.Դ. և Ե. Զ. յ ա ն, 2006, էջ 209, նկ.122/1;  
<sup>307</sup> Թվագրումը՝ դրամագետ Հ. Մարգսյանի:  
 \* Հնագետ Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն ը 1989թ. դրամը գտել է կիսավեր սարկոֆագում:  
<sup>308</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 22:  
<sup>309</sup> Նույնը:



սունների հոգիները:<sup>310</sup> Հանդերձյալ աշխարհը նաև այս աշխարհի կրկնությունն էր, և հանգուցյալի պահանջները նույնը՝ ինչ ողջերինը: Մրանից հետևում է, որ դամբարանները սոցիալական կյանքի արտացոլանք են: Ինչպես ցույց տվեց Շիրակի անտիկ դամբարանադաշտերի թաղման գույքի քննությունը, ուղեկցող նյութը բազմազան է և տարաբնույթ՝ աշխատանքային գործիքներ, արդուզարդի առարկաներ, կենցաղային-կիրառական նշանակության, ինչպես նաև զուտ ծիսական իրեր: Իրերի բազմազանությամբ հանդերձ, ակնհայտ է, որ այս դամբարանները հիմնականում վերաբերում են միջին և աղքատ զանգվածին և նրանց սոցիալական վիճակի անդրադարձն են:

Այսպիսով, նյութի քննությամբ նաև փաստվում է, որ մ. թ. 1-ին դարերում արտաքին աշխարհի հետ Շիրակի ունեցած լայն կապերը՝ տարանցիկ առևտրի ճանապարհների մերձակայությունը, Բենիամինի առևտրական և ար-

տադրական կենտրոն լինելը նպաստում էին արտադրության զարգացմանը, վեջինս էլ իր հերթին հարևան երկրների հետ տնտեսական փոխառնչությունների հնարավորություններ էր ստեղծում:

Դամբարաններում հայտնաբերված իրերը ոչ միայն անառարկելի հիմք են դամբարանների թվագրման համար, այլև միաժամանակ նախշագարդման թեմաներով և ձևերով հաճախ թաղման ծեսի նորանոր մանրամասների բացահայտման աղբյուր են ու թաղման ծիսակարգի մեկնության համար լրացուցիչ կռվան:

---

<sup>310</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 823:

# Գ Լ ՈՒՆ Չ ՈՐՐ ՈՐ Գ

## Թ Ա Ղ Մ Ա Ն Ծ Ե Ս Ը

Կյանք և մահ: Երբ մարդը գիտակցել է մահվան գոյությունն ու սարսափ ապրել, հավանաբար այդ պահից էլ սկսել է մտածել նաև մահից խուսափելու կամ մահը շրջանցելու մասին: Մարդը հետևել է բնության ընթացքին և նկատել, որ մեռնում ու հարություն է առնում ողջ բնությունը. մայրամուտին հաջորդում է արևածագը, գիշերվան՝ լուսաբացը, մեռնում և նորից ծնվում են արեգակն ու լուսինը: Մարդն իրեն դիտելով բնության մի մասնիկը՝ գտել է նաև իր գոյության հարատևման, մահվան սարսափից ազատվելու բանալին՝ մահվան մեջ տեսնելով կյանքի հարատև ընթացքի անտեսանելի կեսը՝ հանդերձյալ կյանքը:<sup>311</sup>

Չընդունելով անգոյությունն ու լիակատար անեությունը, որ բերում է մահը,<sup>312</sup> մարդն իր պատկերացումներում միահյուսել է կյանքն ու մահը՝ աստիճանաբար խորացնելով և հաստատուն դարձնելով թաղման որոշակի արարողությունները: Կյանք-մահ հավերժական փոխկապվածությունն էլ ծնել է մահվան հետ կապված հավատալիքներն ու դրանց հենքի վրա աստիճանաբար ձևավորել արարողակարգերի համալիր գործողությունները՝ թաղման ծեսը: Թաղման ծեսը դիտվում է կյանքի վերջանալիության հաղթահարման որոշակի վարվելակերպ:<sup>313</sup>

Այս բոլոր բնորոշումները հանգեցնում են այն մտքին, որ թաղման ծեսը ռացիոնալ և իռա-

ցիոնալ գործողություն է՝ կապված հանգուցյալի թաղման հետ: Դրանցում արտացոլվում է մարդկության վարքի երկու հիմնական ելակետ. մեռածից ազատվելու և հանգուցյալին իր մոտ պահելու ձգտումը:<sup>314</sup>

Թաղման ծեսը բարդ երևույթ է, որտեղ արտացոլվում է մարդկային կենցաղավարությունն իր բազմաբնույթ և տարատեսակ կողմերով: Թաղման ծեսում արտահայտվում են մահացածի հանդեպ ամենատարբեր զգացումներ. սեր, հարգանք, ավստասանք, կորստի ցավ, նաև՝ երկյուղ և վախ:<sup>315</sup> Ծեսը սովորույթ է, որի նպատակն ու իմաստը ինչ-որ գաղափարի, զգացումի արտահայտությունն է՝ վերածված գործողության: Ծես հասկացությունը բնորոշելիս շատ հետազոտողներ առանձնացնում են նրա հատկանիշներից հատկապես խորհրդանշանայնությունը:<sup>316</sup> Սովորույթն ու ծեսը սերտորեն կապված են, և հաճախ շատ ծեսեր, կորցնելով խորհրդանշական իմաստը, պահպանվում են որպես սովորույթ: Այստեղից հետևում է, որ յուրաքանչյուր ծես սովորույթ է, բայց յուրաքանչյուր սովորույթ ծես չէ:<sup>317</sup>

Թաղման ծեսում արտացոլվում են հոգևորն ու նյութականը՝ հավատալիքներն ու սովորույթները, նաև կենցաղավարությունն իր բազմաբնույթ և տարատեսակ կողմերով:

<sup>311</sup> Լ. Ե գ ա ն յ ա ն, 1998, էջ 45:

<sup>312</sup> В. Т о п о р о в, М. М е й л а х, Круг, МНМ, Энциклопедия, М., 1977, с. 19.

<sup>313</sup> Բ. Շ ս ի դ ա, Հայոց թաղման ծեսը մահացածների պաշտամունքի հին քրիստոնեական հաւատալիքների շրջանակում, «Գանձասար» աստվածաբանական հանդես, 2, Եր., 1996, էջ 79:

<sup>314</sup> С. Т о к а р е в, Ранние формы религии, М., 1964, с. 398.

<sup>315</sup> Ю. С е м е н о в, Как возникло человечество, М., 1966, с. 402-403: Л. Абрамян, Первобытный праздник и мифология, Ер., 1983, с. 80.

<sup>316</sup> О. Ф р е й д е н б е р г, Поэтика сюжета и жанра, Л., 1936, с. 54.

<sup>317</sup> С. Т о к а р е в, Обычаи и обряды как объект этнографических исследований, СЭ, N. 3, 1980, с. 28.

Թաղման ծեսը համընդհանուր ձևով կարող է բնորոշվել որպես հասարակության մեռած անդամի թաղման նախապատրաստման և ընդունված կանոնների համաձայն թաղման իրականացման համալիր գործողություն: Ամեն մի հասարակություն թաղման ծեսն իրականացնում է ավանդաբար ընդունված և կանոնակարգված արարողությունների որոշակի հաջորդականությամբ՝ ելնելով հանգուցյալի ազգային, կրոնական, սոցիալական, տարիքային, սեռային և այլ հատկանիշներից: Եվ քանի որ թաղման ծեսն իրականացվում է հասարակության որոշ անդամների, և ոչ թե ողջ հասարակության կողմից, ենթադրում է նաև ծեսն իրականացնող խմբի որոշակի վերաբերմունք հանգուցյալի նկատմամբ:

Եվ քանի որ թաղման ծիսակարգում արտացոլվում է էթնիկական, սոցիալական, տարիքային և այլ խմբերի աշխարհայացքը, մտածելակերպը և դրանից բխող վարվելակերպը, այս կամ այն խմբերին բնորոշ որոշակի տարրերի բացահայտումը հնարավորություն է տալիս գտնել նաև հասարակարգի էական կողմերը բնորոշող հատկանիշները: Հանգուցյալի սոցիալական կարգավիճակը կախված է հասարակության կոնկրետ խավից պատկանելու հանգամանքից: Եվ, բնականաբար, այն արտացոլվում է նաև թաղման արարողակարգում: Իսկ դամբարանները հարուստ աղբյուր են և հնարավորություն են տալիս հետազոտել հասարակական համակարգի բազմաթիվ հարցեր. հանգուցյալների հասարակական և գույքային տարբերությունները, ինչպես նաև հանգուցյալի նկատմամբ հասարակության համապատասխան վերաբերմունքը: Հետևաբար թաղման ծեսերի տարբերությունները հստակ երևում են նաև դամբարաններում (կառուցման որակ, ուղեկցող նյութերի քանակ ու որակ, ինչպես նաև հոգեհացի առկայություն՝ աղքատիկ կամ ճոխ): Մրանք հանգուցյալի հասարակական դիրքը և սոցիալական վիճակը բնորոշող բավական ստույգ չափանիշներ են: Կառույցի որակը, որոշ ձևերում նաև շինության չափը, ուղեկցող նյութերի քանակն ու որակը, ինչպես նաև աշխատանքներին մասնակցողների քանակը ներկայացնում են հասարակության ծախսած ժամանակի և աշխատանքի հանրագումարը: Թաղման համար ծախսված աշխատանքն ու հանգուցյալի սոցիալական վիճակը փոխկապակցված են և հանգուցյալի սոցիալական վիճակի հնագիտական բնորոշման չափանիշ են: Հանգուցյալի սոցիալական կարգավիճակը կարող է կախված լինել թաղման ծիսակարգի վրա ծախսված աշխատանքի քանակից:<sup>1</sup>

Դամբարանը, որպես հնագիտական օբյեկտ, ամփոփում է թաղումը կատարելու նպատակով կանոնակարգված որոշակի գործողությունները մշակված արարողակարգային ձևերով իրականացնելու արդյունքում կուտակված նյութական մնացորդները:

Թաղման ծեսի ժամանակ կատարված արարողությունների հնարավոր ամբողջական պատկերը վերականգնելու համար անհրաժեշտ է մանրամասն վերլուծել բոլոր, նույնիսկ փոքր և աննշան թվացող մանրամասները, որ փաստված են դամբարանները պեղելիս: Նման մոտեցման դեպքում հնարավոր կլինի տեսնել հավատալիքների, սովորույթների ու պաշտամունքի արտահայտման նյութականացված մնացորդները, որոնք էլ իրենց հերթին ծեսի մեկնության բանալի են:

Ինչպես ցանկացած պատմական երևույթ, թաղման ծեսը բարդ, շարժուն համակարգ է, որտեղ առանձին հատկանիշներ գտնվում են որոշակի հարաբերությունների մեջ: Թաղման ծեսը նյութականացված է դամբարանային կառույցներում և ուղեկցող նյութերում: Եվ, թեև հստակ է մի բան, որ ողջ պատկերը վերականգնելն անհնարին է, սակայն թաղման համար ընտրված տարածքում՝ դամբարաններում և դրանց մոտ կատարված արարողություններից պահպանված նյութական մնացորդներով, գոնե մասամբ, հնարավոր է վերականգնել պատկերը: Գծվար է ասել, թե մինչև անյունը հողին հանձնելը գործողություններն ինչ հաջորդականությամբ են ի-

<sup>1</sup> Б. Геннинг, Е. Буниатян, С. Пустовалов, Н. Рыжков, Формализованно-статистические методы в археологии, Киев, 1990, с. 190.

րականացվել: Հնագիտական փաստերի և բանագիտական ու ազգագրական նյութերի համադրմամբ փորձենք հնարավորինս ներկայացնել Շիրակի անտիկ դամբարանադաշտերում իրականացված թաղման ծիսակարգը:

Հնդեվրոպական պատկերացումներում հանդերձյալ աշխարհը մարգագետին էր, որտեղ արածում էին մարդկանց և զոհաբերված անասունների հոգիները:<sup>2</sup> *Մեռյալների մարգագետինը*, ուր տեղափոխվում են մեռածների հոգիները, *ողջերի աշխարհից* անջատված է ջրով, որն անցնելուց հետո միայն հոգին կհայտնվեր հանդերձյալ աշխարհում:<sup>3</sup>

Հանդերձյալ աշխարհի մասին նույնպիսի պատկերացում կար նաև հնդիրանական ընդհանուր սովորույթներում: Ռիգվեդայում Յամայի թաղման հիմնում հանդերձյալ աշխարհը կոչվում է *gavyuti*-մարգագետին (խոշոր եղջերավոր անասունների համար):<sup>4</sup> Ավեստայում «*Անասունների հոգիներ*» աղոթքում «*անասունի հոգին*», դիմելով աստվածներին, բացականչում է «*noit moi vasta xsmat anyo-չունեն այլ հովիվ ձեզնից բացի*»:<sup>5</sup> Հնդարիների համար հանդերձյալ աշխարհը այս աշխարհի կրկնությունն էր, հանգուցյալի պահանջները նույնը՝ ինչ ողջերինը: Բոլոր արարողությունների ժամանակ հնչում էին հանգուցյալին թեթև և հաճելի լինելուն միտված աղոթքներ:

Հանդերձյալ աշխարհը մարդկանց և անասունների համար որպես մարգագետին պատկերացմանը համահունչ է նաև հունականը, որտեղ «*Մեռյալների աշխարհը*», ինչպես նաև աստվածը՝ Հադեսը, նշանակում է *smu-id* «*հանդիպում, ժամադրություն, հանդիպում նախնիների հետ*»:<sup>6</sup> Իսկ հոգիները հանդերձյալ աշխարհ տեղափոխում է մի *ծեր մարդ*՝ Քարոնը: Հին հնդկական մահվան հիմնի բանաձևը ևս նույնն է. «*pitrbhih sam-vidana-որպեսզի հանդիպեն հայ-*

*րերի հետ*»:<sup>7</sup> Հնդեվրոպացիների նման պատկերացումները վերականգնված են ոչ միայն դիցաբանական տվյալների, այլ նաև հավատալիքների և հնագույն ծեսերից պահպանված արարողությունների համադրման և վերլուծության միջոցով:

Շիրակի անտիկ դամբարանադաշտերում թաղման կառույցների տեսականու քննությամբ վերը փաստեցինք սալարկղերի առավելապես արևելք-արևմուտք կողմնորոշումը, թեև հանդիպում են նաև այլ կողմնորոշմամբ թաղումներ: Թաղումների արևելք-արևմուտք կողմնորոշման վերաբերյալ տարբեր տեսակետներ կան: Ըստ հին հնդկական ավանդույթի, մարդկանց գիտակցության մեջ արևելքը կապվում էր լույսի, ջերմության, կյանքի, երջանկության և փառքի հետ, իսկ արևմուտքը՝ համապատասխանաբար մթի ու ցրտի, վերջալույսի և մահվան, հարավը՝ մահվան աստված Յամայի:<sup>8</sup> Դամբարաններում արևելք-արևմուտք կողմնորոշմամբ թաղումները՝ գլուխն արևմուտք, վկայում են, որ հնդեվրոպական պատկերացումներում մեռյալների աշխարհը գտնվում էր արևմուտքում: Այս իսկ պատճառով էլ հարավը համարվում էր ոչ բարենպաստ և դրանից ելնելով է, որ դիակիզման խարույկի վրա ննջեցյալին դնում էին գլուխը դեպի հարավ դիրքով:<sup>9</sup> Ըստ որոշ հետազոտողների՝ արևելք կողմնորոշումը բնորոշ է թաղման հունական ծեսին,<sup>10</sup> և այդ իսկ պատճառով հունական աշխարհի հետ շփում ունեցող ժողովուրդների մոտ ծեսը համարում են հունական ազդեցության արդյունք: Մակայն կարծիք կա նաև, որ հույների համար թաղումների արևելք - արևմուտք կողմնորոշումը պարտադիր չէր:<sup>11</sup> Իրարամերժ այս կարծիքներից զատ, կա նաև մեկ այլ տեսակետ ևս: Ըստ Արևելյան Դրիմի սկյութական հուշարձանների ուսումնասիրության արդյունքների, թաղումների արևելք

<sup>2</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 823:  
<sup>3</sup> Նույն տեղում, էջ 824:  
<sup>4</sup> Նույնը:  
<sup>5</sup> Р. П а н д е й, Древнеиндийские домашние обряды, М., 1982, с.190-219:  
<sup>6</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 824:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 823:  
<sup>8</sup> П. Г р и н ц е р, Яма, МНМ, Энциклопедия, т. 2. М., 1992, с. 683.  
<sup>9</sup> Р. П а н д е й, նշվ. աշխ., էջ 61-62:  
<sup>10</sup> И. К о з у б, Погребальный обряд ольвийского некрополя V-VI вв. до н.э., ЗООИД т. I, 1960, с. 75.  
<sup>11</sup> Е. К а с т а н а я н, Грунтовые некрополи боспорских городов V - IV в. в. до н. э. и местные их особенности, МИА, 1959, N. 69, с. 266.

կողմնորոշումը պայմանավորված է նրանով, որ հանգուցյալները թաղվել են դեմքով դեպի բնակավայրը:<sup>12</sup> Հայաստանում թաղումների արևելք-արևմուտք կողմնորոշումը փաստված է շատ ավելի վաղ շրջանի հուշարձաններում: Ըստ Լոռի Բերդի միջինբրոնզիդարյան դամբարաններում կատարված դիաթաղումների (արևելք-արևմուտք, գլուխները՝ արևմտյան կողմում) ուսումնասիրության արդյունքների՝ Հայկական լեռնաշխարհի ցեղերի պատկերացմամբ մեռյալների աշխարհը գտնվում էր արևմուտքում:<sup>13</sup> Արևելք-արևմուտք կողմնորոշմամբ թաղումները, ի թիվս այլ ուղղություններով թաղումների, հայտնի են Շիրակի մ.թ.ա. 8-7-րդ դարերի մի քանի դամբարանադաշտերից: 2008թ. Ագատան, Քեթի և Շիրակական գյուղերում դիպվածաբար բացված սալարկղային թաղումներում կմախքներն ունեին արևելք-արևմուտք կողմնորոշում:<sup>14</sup>

Դեռևս նախնադարյան մարդու կողմից արևի կենարար ուժի գիտակցումը չէր կարող չհանգեցնել արևի պաշտամունքի: Մահն ընդունելով կյանքի շարունակելիություն և ապա՝ վերածնունդ՝ թաղումներն ուղղվել են արևելք: Մահ և վերածնունդ հարատև ընթացքն ապահովում էր արևը: Արևելք ուղղված դին արևից էր ստանալու վերածնվելու ուժը: Եվ անկախ այն բանից, թե աճյունը դեմքով դեպի արևն է կամ՝ դեպի բնակավայրը, նպատակը վերադարձն է, վերածնունդ՝ արևի ուժով:

Նախորդ գլուխներում ներկայացրեցինք ինչպես թաղման կառույցների տեսակներն, այնպես էլ աճյունին տրված տարբեր դիրքերը: Եվ տեսանք, որ տարբեր են ինչպես իրանի (ուղիղ, մեջքի վրա, աջ կամ ձախ կողքին պառկած), այնպես էլ գլխի (աջ, ձախ կամ ուղիղ), ձեռքերի (իրանի երկարությամբ, կրծքին կամ կզակի տակ միացած և այլն) և ոտքերի (ուղիղ, ծնկները ծավված, ոտնաթաթերն ուղիղ կամ ծավված և այլն) դիրքերը: Քանի որ թաղման ողջ

ընթացքը ծիսականացված է, ուրեմն պատահական չեն նաև աճյունի այս կամ այն մասերին տրված դիրքերը:

Թաղման ծեսն, ի տարբերություն կյանքի տարբեր փուլերին ծառայող ծեսերի, առավել քան պահպանողական է: Հայաստանի անտիկ դամբարանադաշտերում թեև հիմնականում պահպանվում է թաղումների արևելք-արևմուտք կողմնորոշումը, բայց հանդիպում են նաև հարավ-հյուսիս կամ հյուսիս-հարավ կողմնորոշմամբ թաղումներ: Շիրակում ևս պահպանվում է առավելապես արևելք-արևմուտք, կողմնորոշումը և հանգուցյալի դեմքն ուղղված է եղել դեպի արևը: *Արևը հանգել* կամ *արևը թաղեմ* բառակապակցությունները նույնն են և ունեն մահվան իմաստ: Մայր մտնող արևը և մեռած մարդը դիտվել են համագոր և հավասար վիճակի մեջ: Հանգուցյալի ուղին դեպի այն աշխարհ համադրվել է մայրամուտի հետ: Տարբեր ժողովուրդների մոտ, այդ թվում նաև հայերիս, ընդունված է հանգուցյալին հանձնել հողին մինչև մայրամուտ: Մայրամուտի հետ մարդուն թաղելով՝ ոչ միայն լուսավորում էին հանգուցյալի անցանելիք ուղին, այլ նաև ակնկալում վերստին ծնվելը: Թաղման հետ կապված բոլոր արարողությունները կեսօրին կամ մինչև մայրամուտ կատարելը նույն հենքն ունեն: Իսկ թաղման հաջորդ օրը կատարվող ծիսակարգը՝ էգնահողը արարողակարգի իմաստի լեզվական փաստումն է:<sup>\*</sup>

Բենիամինի մանկական երկու թաղումներում (թիվ 23 ծածկասալի վրա և թիվ 80՝ կմախքի կրծքին) գտնված ձիթածրագները ծիսական որոշակի դեր են կատարել, որի մեկնությանն օգնում է ազգագրական նյութը: Ըստ հայոց մի հավատալիքի՝ սովորաբար հանգուցյալներն այցելում էին մայրամուտից հետո, հատկապես կիրակնամուտին, որովհետև այդ պահին հարազատները նրանց դիմավորելու համար պատրաստություններ էին տեսնում՝ վառած էին պահում ճրագը ու խունկ էին ծխում:<sup>15</sup> Մայրամու-

<sup>12</sup> А. М е л ю к о в а, Поселение и могильник скифского времени у села Николаевка, М., 1975, с. 144.

<sup>13</sup> Մ. Դ և Ե ջ յ ա ն, 2006, էջ 105:

<sup>14</sup> Նյութերը հրատարակված չեն:

<sup>\*</sup> Էգնահող բառը կազմված է *այգ* և *հող* արմատներից, առաջին բաղադրիչում այ երկբարբառի այգ-էգ ձևափոխությամբ:

<sup>15</sup> Մտ. Լ ի ս ի ց յ ա ն, 1969, էջ 294:

տից հետո հանգուցյալի այցելությունն ինքնին ենթադրում է, որ արևի լույսը ցերեկը միայն ողջերի համար է, իսկ հանգուցյալներն այլևս պատկանում են խավարին: Հայոց մեջ սովորույթ կար մեռած երեխայի ամեն մի ձեռքի մեջ երեք անգամ վառած, ապա հանգցրած և կրկին վառած մի մոմ դնել, մյուս աշխարհում իր ծնողների ճանապարհը լուսավորելու և արքայություն առաջնորդելու համար:<sup>16</sup> Նույն ծիսակարգի մերօրյա օրինակներ են դագաղի չորս անկյուններում, ինչպես նաև հողաթմբի վրա հանգուցյալին նվիրված տարբեր արարողությունների ժամանակ մոմեր վառելու, հանգուցյալի տան լույսերը յոթ օր վառված պահելու սովորույթները: Իսկ հանգուցյալին նաև *լուսահողի* բնորոշում տալն արդեն ենթադրում է ոչ միայն հայերի պատկերացմամբ մարմնից բաժանված հոգու *լուսագունդ*,<sup>17</sup> այսինքն լուսեղեն լինելը, այլ նաև իհարկե լույսի ուղեկցությամբ տեղափոխվելը: Հայոց մեջ հոգին նյութեղեն էր ըմբռնվում:

Հանգուցյալի ուղին լուսավորելու համար Գերմանիայում թաղման թափորի մեջ, վառվող մարխը թափահարող մի պառավ էր գնում դագաղի հետևից և մերթնդները գոռում էր. «*Գնա այնտեղ, դու այստեղ ոչինչ չունես.....*»:<sup>18</sup>

Այս ամենը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ հարազատի կորուստը ողբալով, այնուամենայնիվ ամեն ինչ արվում էր հանգուցյալին իր նոր տեղը հասցնելու համար, որ ըստ ժողովրդական պատկերացման գտնվում էր «*գետնի օխտը դաթը*»:<sup>19</sup>

Հնագիտական փաստերին ազգագրական նյութի համադրումը լրացնում է այն, ինչն ավերել է ժամանակը: Ծեսը հավանաբար ծագել է մեռնող արևի հետ այն աշխարհ ճանապարհելու գաղափարից: Այսինքն, մերօրյա թաղման արարողակարգում հանգուցյալին մայրամու-

տից առաջ թաղելը թույլ է տալիս ենթադրել, որ նույնը եղել է նաև քննարկվող ժամանակաշրջանում:

Ինչպես կոտեսները թաղման ծեսի վերլուծությամբ, ամեն ինչ արվում էր ոչ միայն հանգուցյալի վերադարձը կանխելու, այլ նաև՝ հոգուն սիրաշահելու համար: Այսինքն, կորստի ցավն ու մեռածի հոգուց ակնկալվող վախն ու երկյուղը հավասարազոր զգացումներ էին:

### Գանգերի արհեստական ձևափոխություններ:

Ըստ Բենիամինի դամբարանադաշտի մարդաբանական նյութի՝ 2-4-րդ դարերի թաղումներում հանդիպում են գանգերի ձևափոխություններ: Երևույթը փաստված է նաև համաժամանակյա Շիրակավանում,<sup>20</sup> Վարդբաղում<sup>21</sup> և Կարմրաքարում:<sup>22</sup> Ըստ մարդաբան Ա. Խուդավերդյանի՝ գանգերի արհեստական ձևափոխությունները հետևանք են մոնղոլիդ հատկանիշներով խառնածնության, և այդ հատկանիշների առկայությունն ու դրանց համահարաբերակցական ցուցիչի կտրուկ փոփոխությունը խոսում են այլ էթնիկական փոքր տարրերի մեխանիկական ներթափանցման մասին:<sup>23</sup> Գանգերի արհեստական ձևափոխությունները հաստատում են, որ էթնիկ խմբի բնակեցման նախկին տարածքը Միջին Ասիան է:<sup>24</sup> Ֆ. Տեր-Մարտիրոսովը երևույթը կապում է Շիրակում Կամսարականների հայտնվելու հետ:<sup>25</sup>

Կամսարականները Տրդատ Գ-ի ժամանակ են գալիս Հայաստան և. «...*Կամսար մկրտի իրայովքն հանդերձ ի ձեռն մեծին Գրիգորի... տայ նմա ժառանգութիւն զմեծ դաստակերտն Արտաշիսի... և զգաւառն Շիրակ...*»: Սակայն. «*Այլ նա ոչ աւելի քաւեալ քան զեօթն աւուրս*

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 212:

<sup>17</sup> Մ. Արեղյան, 1975, էջ 17:

<sup>18</sup> Ա. Գոլան, նշվ. աշխ., էջ 45:

<sup>19</sup> Շիրակում մարդուն մահ ցանկանալու անեծք է «գետնի օխտը դաթն անցնիս» արտահայտությունը, որ շեշտվում է ոչ միայն հանդերձյալ աշխարհի տեղը՝ յոթերորդ շերտում, այլ բացահայտում է յոթ թվի խորհրդանշական կապը նաև անդրաշխարհի հետ:

<sup>20</sup> Փ. Тер-Мартirosов, Г. Караханян, 1998, էջ 29:

<sup>21</sup> А. Худавердян, Атлас палеопатологических находок на территории Армении, Ер., 2005, с. 94.

<sup>22</sup> Նույնը:

<sup>23</sup> А.Худавердян, Антропологический состав Бениаминского могильника, СՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. I, Գյումրի, 1998, էջ 42:

<sup>24</sup> А. Худавердян, Болезни и патологические нарушения на скелетах из погребений античного некрополя Бениамин, Медицинская наука Армении, т. XXXVII, № 1-2, Ер., 1997, с.155.

<sup>25</sup> Փ. Тер-Мартirosов, 1993, с. 71:

*յետ մկրտութեան, վախճանի»:* Կամսարի մահից հետո «*որպէս ազգականի իւրում և մտերիմ հարազատի»* տրված պարզևներին նրա ավագ որդուն՝ Արշավիրին «*գիօնքն փոխանակ ծնողին սահմանելով, ազգ զնա սերէ յանուն հօրն, և կարգէ ի թիւ նախարարութեանց»* Տրդատը դեռ ուրիշ պարզևներ էլ է ավելացնում. «*..միայն զի ի մտաց նորա հեռացուցէ զյիշատակ բնիկ աշխարհին, որ Պահլաւն կոչի, որպէս զի անվրդով զհավատսն պահիցէ»:*<sup>26</sup> Վերջին արտահայտության տակ պիտի հասկանալ նախ նրանց բնիկ հավատից հեռացնելը: Իսկ «*զի անվրդով զհավատսն պահիցէ»*՝ քրիստոնեություն ընդունելու համար նվերներով շահագրգռելն արդեն կասկածի տակ է դնում Կամսարի կամավոր մտությունը: Գուցեն պարտադրված հավատափոխությունն էլ դարձել է Կամսարի հանկարծահաս մահվան պատճառ:

Կամսարականների իրենց ավանդույթներին հավատարիմ մնալն անշուշտ արտահայտվելու էր նաև ներթնիկ ամուսնությունները պահպանելով: Եվ հնագիտական նյութը փաստում է, որ զանգերի նշված ձևափոխությունները էթնիկ զանգվածի հայացման արդյունքում այլևս չեն նկատվում:

Բենիամինի թաղումներում փաստված է նաև երեխաների զանգերի արհեստական ձևափոխություն. զանգի վերճակատային մասում պարագծով 2-3սմ լայնությամբ սեղմված է:

Պատմական աղբյուրներում բազմաթիվ են տարբեր ցեղերի կամ տոհմերի անունների ծագման մասին առասպելաբանված պատումները: Խորենացին բերում է նմանատիպ զրույց Դիմաքսյան տոհմանվան առաջացման մասին (Դիմակիսյան):<sup>27</sup> Իսկ Կամսարի անվան ծագման մասին Խորենացին հաղորդում է հետևյալը. - «*Այս Կամսար ահագին քաջութեամբ նահատակեալ առ հարբն ի պատերազմունս, ի շահատակելն իւրում հարկանի լումեննէ սակերբ զգլուխն. և վերացուցեալ մասն ինչ յոսկերէ սկաւառակին, բժշկեալ, ի դեղոց, պակաս գորով բողբոթին զազաթանն՝ անուանեցաւ Կամսար*

*այնր աղագա»:*<sup>28</sup> Պլինիոս Ավագը «գլխատներ» (kefalo-tomos) է կոչում սարապարների թրակիական ցեղը,<sup>29</sup> որոնց Ստրաբոնը տեղադրում է Շիրակի մերձակայքում:<sup>30</sup> Ըստ Գ. Ջահուկյանի kefalo-tomos-ը իրանական sarapara բառի հունարեն թարգմանությունն է:<sup>31</sup> Ս. Պետրոսյանը ցեղանունը բացատրում է «գլուխը հատածներ» և համեմատում Իրանից Հայաստան ներգաղթած Կամսարականների նախարարական անվան հետ՝ վերջինս ստուգաբանելով «*kama-sara-սակավագլուխ, քչագլուխ»:*<sup>32</sup> Իսկ Ն. Ադոնցը չի բացառում, որ Կամսարականները Մարաստան գաղթած սարապարների հետնորդները լինեն, որոնք վերադարձել են իրենց բնակության նախկին վայրերը:<sup>33</sup>

Կարծում ենք, մանկական զանգերի ձևափոխությունները հավատալիքների հենքի վրա ձևավորված և գեղագիտական որոշակի չափանիշներից ելնող, մշտապես զանգի այդ հատվածն օղակող գլխակապ կամ գլխանոց կրելու հետևանք է: \* Իսկ գեղագիտական այդ չափանիշները կարող էին խարսխվել նաև Կամսարականների kefalo-tomos լինելու առասպելաբանության վրա:

*Մարդկային զոհաբերության հետքեր:* Բենիամինի թիվ 217 հիմնահողային թաղումը բացվեց 20սմ հաստությամբ մոխրաշերտով ծածկված տափանված հատակի տակ: Կմախքի

<sup>28</sup> Մ. Խ ո ռ ե ն ա գ ի, Բ, ձ: 1

<sup>29</sup> Տ. Գ ա լ ա լ յ ա ն, Ալանական տեղանունների առնչությունը հայկական լեռնաշխարհի ցեղերին, Հայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ, I, Եր., 2006, էջ 67:

<sup>30</sup> S t r a b o, 11,14:

<sup>31</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 645:

<sup>32</sup> Ս. Պ ե տ ը ն ս յ ա ն, Հացագիտության մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, ՊԲՀ, 1981, թիվ 3, էջ 187:

<sup>33</sup> Ն. Ա դ ո ն ց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 472:

\* Այսօր էլ հայոց գյուղերում պահպանված է նորածնի գլուխը մինչև աչքերը հասնող գլխակապով կապելու սովորույթը: Եռանկյունաձև կտրված գլխաշորն ամուր կապվում է՝ երկար ծայրերը մեկ կամ երկու անգամ գլուխն օղակելուց հետո ճակատին ամուր հանգույց անելով: Աչքերը կապվում են երեխային չարքերից հեռու պահելու համար: Իհարկե այս դեպքում զանգի ձևափոխություն չի առաջանում, քանի որ նորածնին ամեն օր, լողացնելիս ինչպես մարմնի մյուս մասերը, այնպես էլ գլուխը որոշակի ձևով մերսվում է:

<sup>26</sup> Մ. Խ ո ռ ե ն ա գ ի, Բ, դ:

<sup>27</sup> Նույն տեղում, Ա, խ: 1:

դիրքը (ծնկաչոք նստած, ոտքերը ետ ծաված, ոտնաթաթերը բնդիուս մոտեցած կոնքին, ձեռքերն՝ անվույթ ընկած կողքի) և թաղման ծեսի կանոնակարգի բացակայությունը (քարակույտի վրա և քարերով ծածկված) ենթադրում են, որ մարդը զոհաբերվել և թողնվել է տեղում: Բնակավայրի այս հատվածը, ելնելով հայտնաբերված կառույցներից, ինչպես նաև տորածև խարիսխ-զոհասեղանների և պաշտամունքային բնույթի բազմաթիվ գտածոներից, ծիսապաշտամունքային բնույթ է ունեցել: Իսկ որ զոհաբերությունը կարող էր նաև տեղում թողնվել, վկայում է Հերոդոտոսը. «Չոհվելիք մարդկանց գլուխները զինով ցողելուց հետո, նրանց մորթում են մի անոթի վրա...: Չոհաբերություններն ավարտելուց հետո նրանք հեռանում են»:<sup>34</sup>

Տարածքը, որտեղ բացվեց այս թաղումը, գտնվում է բնակավայրի ծայրարևելյան հատվածում, ուր մ. թ. ա. 1-ին դարին վերաբերող, մի գծով կատարված կարասային, հիմնահողային և սալարկղի մեջ կատարված կարասային թաղումներն են. թիվ 183 (ըստ մարդաբանական տվյալների՝ 10-15 տարեկան աղջիկ), ինչպես նաև այս դամբարանի արևելյան պատից շարունակվող և գետաքարերով շարված ձվածիրի մեջ, նստած դիրքով թիվ 184 մանկական թաղումը: Թիվ 183-ը դամբարանադաշտի ամենահարուստ թաղումն է (մանյակ, ականջօղեր, ապարանջաններ, մատանի, ուլունքներ և այլն), իսկ կից թաղման ուղեկցող նյութերը շատ աղքատիկ են (կրակի հետքերով ոչխարի ֆալանգներ և ոսկրե կոթառ, նաև կրաքարից, թերի մի իր): Սոցիալական տարբեր բևեռների վրա գտնվող երեխաներին թաղելիս նույն կողասալն օգտագործելը ենթադրում է ոչ միայն թաղումների համաժամանակյա լինելը, այլ նաև կասկածի տակ դնում թիվ 184 դամբարանում թաղված երեխայի բնական մահը: Պաշտամունքային շինության պատերի մոտ հնարավոր է թաղվել է տաճարի քրմուհին, ում զոհաբերվել է կից դամբարանում թաղված տաճարական ստրուկը: Իսկ որ տաճարական ստրուկներ կային, վկայում է Ստրաբոնը. «Հայերն Անա-

հիտ աստվածուհուն նվիրում էին բազմաթիվ ստրուկներ՝ կին և տղամարդ, և մեծանները լիքն էին տաճարական ստրուկներով»:<sup>35</sup>

Նշված թաղումից ոչ հեռու բացվեցին նաև սալարկղային երկու այլ թաղումներ, որոնք ուղեկցվել են ձիերի զոհաբերությամբ: Թիվ 8 սալարկղի ինչպես կողասալերից մեկը, այնպես էլ ծածկասալի քարերից մեկը երկանքաքարեր են: Դամբարանի կողքին բացվեց քարաշար շրջանի մեջ առնված կրակի մնացորդների հաստ շերտի վրա դրված ձիերի երկու զանգ՝ ծածկված երկու մասի բաժանված դուրգի անիվով: Մեկ այլ, առաջինից ոչ հեռու, թիվ 23 կողքին բացվեց զոհաբերված ձիու ամբողջական կմախք, իսկ դամբարանի ծածկասալի վրա գտնվեց ձիթաճրագ: Երկու դամբարանները միավորվում են նաև նրանով, որ երկուսում էլ թաղված են 3-5 տարեկան երեխաներ, և երկու դամբարաններում էլ ուղեկցող նյութ չկա: Այս դամբարաններում նյութի բացակայությունը (ելնելով զոհաբերությունների ճոխությունից) չի կարող սոցիալական հենք ունենալ: Ձիերի զոհաբերությունները կարող էին անդրաշխարհի տիրակալին մատուցված զոհաբերություն լինել՝ ուղեկցված մարդկային զոհաբերությամբ:

Մանկասպանության ծես փաստվել է Գեղարքունիքի մ.թ.ա. II-I հազարամյակի խմբային թաղումներում:<sup>36</sup> Մարդկային զոհաբերության օրինակներ հայտնի են նաև Շիրակավանի մ.թ.ա. 8-7-րդ դարերով թվագրվող դամբարանադաշտի պեղումներից: Այստեղ թիվ 1 դամբարանում երեխայի զանգին կիպ բացվեց մեկ այլ՝ երեխայի զանգ:<sup>37</sup> Մանկական երեք և մի անհատական զոհաբերություն փաստվել է Հողմիկում:<sup>38</sup> Ծիսակարգը հայտնի է դեռևս մարդկության պատմության վաղ շրջանից: Այսպես էր

<sup>35</sup> Կ. Մե լի ք - Փ ա շ ա յ ա ն, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Եր., 1963, էջ 119:

<sup>36</sup> Ա. Փ ի լի պ ո ս յ ա ն, Ռ. Մ կ ր տ չ յ ա ն, Մանկասպանությունը Գեղարքունիքի մ.թ.ա. II-I հազարամյակի խմբային թաղումներում, Ընտանիքի հետազոտման խնդիրները, Հանրապետական գիտաժողովի նյութեր նվիրված է. Կարապետյանի հիշատակին, Եր., 2001, էջ 100-105:

<sup>37</sup> Նյութերը հրատարակված չեն:

<sup>38</sup> Նյութը մեզ է տրամադրել Հ. Հակոբյանը, ինչի համար շնորհակալություն ենք հայտնում:

<sup>34</sup> Հ ե բ ո դ ո տ ո ս, IV, 62:



Պաղեստինում, Փյունիկիայում և Կարթագենում. Մոլոքին զոհաբերում էին հայտնի ընտանիքների երեխաներին:<sup>39</sup> Ինչպես դիցաբանական Միմոտավոսը, որ ուներ մարդու մարմին և ցլի գլուխ, խժռում էր հանցագործներին, այնպես էլ փյունիկյան Մոլոք աստվածը, որ պատկերվում էր ցլի գլխով և պահանջում էր մարդկային զոհաբերություններ, հուշում են մի ժամանակ եղած մարդկային զոհաբերության մասին:<sup>40</sup> Մինչև մ.թ. 2-րդ դար Լիկեա լեռան վրա ամենազեղեցիկ աղջկան զոհաբերում էին գայլի մորթի հագած սև մարդու տեսքով, մեռածների աշխարհը ներկայացնող Լիկաս հրեշիս:<sup>41</sup> Հունական դիցաբանության մեջ մարդու զոհաբերության հետքեր պահպանվել են Արտեմիսի պատամունքում. Տավրոպոլոս Ա-ի տոնակատարության ժամանակ տղամարդիկ թեթևակի կրտրում էին իրենց կոկորդի մաշկը: Ենթադրվում է, որ Տավրիկյան Իֆիգենիայի մասին առասպելը և դրանում նկարագրված այն տեսարանը, երբ փորձում են Օրեստեսին զոհաբերել, ստեղծված են դասական շրջանում՝ մարդկային զոհաբերության սովորույթը բացատրելու համար:<sup>42</sup> Մարդու զոհաբերության մասին վկայում է նաև Մ. Խորենացին՝ նկարագրելով Արտաշեսի թաղումը. «...եթե որչափ ամբոխությունը մեռան ի մահուանն Արտաշեսի, սիրելի կանայք և հարճք և մտերիմ ծառայք... Եւ շուրջ զգերեզմանան լինէին կամատր մահունք...»:<sup>43</sup>

Հայտնի է, որ զոհաբերում էին ճանաչված ընտանիքների զավակներին, ոչ թե նրա համար, որ վերջիններս էին այդ ցանկանում, այլ որ հասարակությունն էր դա պահանջում: Իսկ պահանջի հիմքում հասարակության մեջ տվյալ ընտանիքի առաջնային դերն էր, դրանով էլ գուցե աստվածայինին նրանց մոտ լինելը:

Չոհաբերության յուրօրինակ ձև էր կույս աղջիկներին տաճարներին նվիրաբերելը՝ սրբազան պոռնկության տալը, որի մասին վկայում է

Ստրաբոնը. «...ժողովրդի ամենանշանավոր մարդիկ իրենց կույս աղջիկներին նվիրաբերում էին աստվածուհուն, և նրանք ըստ օրինի երկար ժամանակ պոռնկանում են աստվածուհու համար, որից հետո ամուսնանում են, և ոչ ոք անվայել չի համարում կենակցել նրանց հետ»:<sup>44</sup>

Մինչև XIX դ. ամբողջ գերդաստանը պատասխանատու էր իր անդամներից մեկի կատարած ոճրագործության համար, և որպես մասնավոր դեպքեր, պահպանվում էր սպանվածի հարազատների կամ ազգականների ձեռքով մարդասպանից կամ նրա ազգականներից արյան վրեժ լուծելը: Տյառնընդառաջի կաթնապուրի մոխիրը համբարձմանը արտում շաղ տալը ցանքսերին կենդանի մարդուն զոհաբերելուն փոխարինած հնայական արարողություն է:<sup>45</sup> Մարդու զոհաբերության ծեսի արձագանքներ պահպանվել են հայոց բանահյուսական նյութերում. ինչպես օրինակ, շինության, բերդի կամ կամուրջի պատի շարվածքի մեջ երիտասարդ աղջկան ողջ-ողջ թաղելու մասին գրույցները:<sup>46</sup>

Բենիամինի թիվ 131 դամբարանում, որը արևելք-արևմուտք կողմնորոշմամբ սալարկղային թաղում է, գտնվեց մեկ այլ կմախքի դաստակ: Ըստ մարդաբանական տվյալների՝ դամբարանում թաղվել է 50-60տարեկան տղամարդ: Ակնհայտ է, որ դամբարանում, աճյունը ծածկող հողից 10սմ բարձր գտնված մեկ այլ դաստակը զոհաբերության վկայություն է: Չեռքի զոհաբերություն փաստվել է Հյուսիսային Կովկասում, որտեղ դամբարանի ծածկասալի վրա գտնվել են մարդու ձեռքի ոսկորներ:<sup>47</sup>

Շատ ժողովուրդների մոտ ընդունված էր կտրել թշնամու ձեռքը: Սկյութները «...կտրում էին զոհաբերված մարդկանց աջ ուսերը ձեռքերի հետ...»:<sup>48</sup> Աջ ձեռքը կտրելու սովորույթ կար նաև օսեթների մոտ<sup>49</sup> և այն խորհրդանշել է թշնամու այլևս անվտանգ լինելը: Ըստ ազգա-

<sup>39</sup> И. Ш и ф м а н, Молох, МНМ, Энциклопедия, т. 2, М., 1992, с. 169.

<sup>40</sup> Դիցաբանական բառարան, Եր., 1985, էջ 159:

<sup>41</sup> F. J. D ö l g e r, Die Sonne der Gerechtigkeit und der Schwarze. München, 1918, էջ 69:

<sup>42</sup> Դիցաբանական բառարան, Եր., 1985, էջ 89:

<sup>43</sup> Մ. Խ ո ռ ե ն ա յ ի, Բ, կ:

<sup>44</sup> Strabo, XI, 14, 16.

<sup>45</sup> Ե. Լ ա լ ա յ ա ն, Երկեր, հ. 1, Եր., 1983, էջ 289:

<sup>46</sup> Ա. Ղ ա ն ա լ ա յ ա ն, Ավանդապատում, Եր., 1969, էջ 209, թիվ 571/ա, բ, էջ 211, թիվ 572:

<sup>47</sup> А. Г о л а н, նշվ. աշխ., էջ 154:

<sup>48</sup> Հ ե թ ն ղ ն տ ն ս, IV, 62:

<sup>49</sup> Ж. Д ю м е з и л ь, Осетинский эпос и мифология (Перевод с французского. Под редакцией и с послесловием В. Абаева), М. 1976, с.44-45.

գրական նյութերի՝ խևադրների մոտ, ինչպես նաև Դադաստանում սպանված թշնամու աջ ձեռքը կտրելու և իր դռանն ամրացնելու սովորույթ կար, որը թշնամու ուժին տիրանալու կամ նրան հետագա գործողություններից զրկելու իմաստ ուներ:<sup>50</sup>

Չեռքի մոզական ուժի հնագույն վկայությունները պալեոլիթում են: Քարանձավների պատերին արված նկարներում ձեռքերի նկարները հաճախ համադրված են կենդանիների պատկերների հետ:<sup>51</sup> Ենթադրվում է, որ հնագույն որսորդը թողել է իր ձեռքի հետքը՝ մոզական ուժով որս կատարելու համար:<sup>52</sup> Չաթալ-Հյույուկի տաճարներում ձեռքերի բնական չափերի հետքերի հետ միաժամանակ կան նաև դաստակների անհատական բնույթից զուրկ նկարներ, որոնք հավանաբար ունեցել են խորհրդանշական իմաստ:<sup>53</sup> Մարդու ձեռքը խորհրդանշել է ոչ միայն մարդուն, այլ նաև՝ նրա ուժն ու իշխանությունը, և ինքնահաստատման համար չէ, որ նախնադարյան մարդը թողել է իր ձեռքի հետքը: Դիցաբանական մտածողության մեջ բնականն ու գերբնականը կարող էին միահյուսվել և ձեռքի ֆիզիկական ուժը կարող էր վերաճել մոզականի: Չեռքի մոզական ուժի հետ կապված հավատալիքները տարբեր են, կապված են չարը խափանելու գործողությունների,<sup>\*</sup> ինչպես նաև հարսանեկան<sup>\*</sup> ու թաղման ծիսա-

կարգերի հետ: Թաղման ծեսի հետ կապվում է գերեզմանոցից վերադառնալիս ձեռքերը լվանալու սովորույթը: Չեռքը, որպես մոզական ուժի կրող, կարող էր վնասել ողջերին և շփածին մոգությամբ հանգուցյալի վիճակը փոխանցել ողջերին: Ծեռքերը լվանալը միտված էր հանգուցյալի հետ փոխազդեցության կապերը խզելուն:<sup>\*</sup>

Ծածկասալերի և կողասալերի յուրահատկություններ: Բենիամինի թիվ 6 դամբարանի գույգ կողասալերը (հյուսիսային և հարավային) փորվածքներ ունեն: Լավ մշակված կողասալի վրա՝ դամբարանի ներսից, կմախքի կոնքի ուղղությամբ արված են 15սմ տրամագծով փորվածքներ: Աջ կողմում փորվածքի խորությունը 12սմ է, ձախում՝ 9սմ: Նման փորվածքներ կան Առափիում բացված սալարկղերի (թիվ 11) վրա, որտեղ դամբարանի հյուսիսային կողասալը միջանցիկ անցք ունի. 13սմ տրամագծով և 24սմ խորությամբ անցքը փորված է կողասալի արևմտյան մասում և համապատասխանում է զանգի հատվածին (տախտակ V, նկ.1, 2): Բենիամինի որոշ սալարկղերի ծածկասալերի վրա միջանցիկ անցքեր են փորված (թիվ 172, 176): Կան դամբարաններ, որտեղ օգտագործվել են նախապես այլ նպատակի ծառայած և անցք ունեցող քարեր (թիվ 8՝ ծածկասալը և կողասալը երկանքի քարեր են, թիվ 107 կողասալի եզրին միջանցիկ անցք կա): Երևույթը բնորոշ է Շիրակի մի քանի հուշարձաններին և հանդիպում է նաև սարկոֆագային թաղումներում (Առափի՝ թիվ 11, Վարդաթալ՝ թիվ 2, 3): Կողասալերի մնան մշակումներ հայտնի են նաև Շիրակավանից,<sup>54</sup> և Ջրածորից:<sup>55</sup>

<sup>50</sup> В. Бардвелдзе, Г. Читага, Грузинский народный орнамент, кн. 1, Хевсурский орнамент, Тбилиси, 1939, с. 52.

<sup>51</sup> А.С. Толяр, О „гипотезе руки“, как традиционном объяснении происхождения палеолитического искусства. В кн: Первобытное искусство, т. 2, Новосибирск, 1976, с. 15: А. Голан, նշվ. աշխ., էջ 154:

<sup>52</sup> А. П. Окладников, Утро искусства. Ленинград, 1967, с. 64; А. Голан, նշվ. աշխ., էջ 155:

<sup>53</sup> J. Meillegret, Catal-Hüyük. L. 1967, p. 83, t. 41-44. А. Голан, նշվ. աշխ., էջ 154:

\* Չեռքի մոզական ուժի հետ կապված հավատալիքներից է ռուսների մոտ ծնվել երեք մատների *кукуш* անունը կրող կոմբինացիան, որն ունեցել է չար ոգիներին, չար աչքն ու հիվանդությունները խափանելու, հեռացնելու իմաստ: Г. Чурсин, Амулеты и талисманы кавказских народов, М., 1929, с. 8; А. Голан, նշվ. աշխ., էջ 154:

\* Հնդկաստանում հարսանիքի ժամանակ, որպես նոր ընտանիքին երջանկության մաղթանք, տան պատերին կարմիր ներկով ձեռքերի հետքերը թողնելու, իսկ հայոց հարսանեկան ծեսում հարսի ձեռքերը հինալով ներկելու սովորույթների հիմքում մոզական գործողություններ են:

Նորահարսի կան նորափեսայի ձեռքը չամուսնացածների գլխին դնելու մերօրյա սովորույթի իմաստը նմանակման մոգությամբ երջանկությունը մյուսներին փոխանցելն է:

\* Այստեղից էլ հավանաբար ծնվել է *ձեռքերը լվանալ* արտահայտությունը՝ *հեռու մնալ, չխառնվել, չմիջամտել* իմաստով:

<sup>54</sup> Ф. Тер-Мартirosов, Г. Караханян, նշվ. աշխ., էջ 27:

<sup>55</sup> Հ. Հակոբյան, Ռ. Վարդանյան, Վ. Ջինջիրջյան, Ախուրյան գետի վերին հոսանքում կատարված հնագիտական պեղումների նախնական արդյունքները (Ջրածոր և Հողմիկ գյուղերի տարածք), Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Եր., 1993, էջ 106-117, աղ. СХVI-СХХХIV:

Ծածկասալերի և կողասալերի վրա փորված անցքերի համապատասխանությունը կմախքի տարրեր մասերի հետ ունի այսպիսի պատկեր. Բենիամին՝ որովայնի և ձախ կոնքի ուղղությամբ (թիվ 8 դամբ.), կոնքերի ուղղությամբ՝ (թիվ 6 դամբ.), կրծքավանդակի մասում՝ (թիվ 172, թիվ 176 դամբ.): Առափիի (թիվ 11) և Վարդքաղի (թիվ 2, 3) դամբարաններում անցքերը համապատասխանում են կրծքավանդակների հատվածին:

Հայաստանում անցքերով ծածկասալեր գտնվել են տարբեր ժամանակաշրջանների հուշարձաններում: Նման ծածկասալեր փաստված են Շամիրամի ուշբրոնզիդարյան դամբարանադաշտում:<sup>56</sup> Միջանցիկ անցք ունեն Շիրակավանի մ.թ.ա. 9-8-րդ դարերով թվագրվող դամբարանի հյուսիսային պատը, ինչպես նաև Արգիշթիսիսիլիում բացված, մ.թ.ա. 8-րդ դարով թվագրվող ուրարտական դամբարանի պատը:<sup>57</sup> Երկու դեպքում էլ անցքերը միջանցիկ են և բացված են պատի ստորին մասում: Ծածկասալի վրա անցք ունեցող, անտիկ ժամանակաշրջանի սալարկղային թաղում հայտնի է Շիրակավանից:<sup>58</sup> Անցքով ծածկասալեր գտնվել են Ջրածորում, ինչպես պեղավայրում, այնպես էլ՝ պեղավայրից քիչ հեռու:<sup>59</sup>

Քանի որ թաղման ծեսը կապված է հավատալիքների հետ, ուրեմն ծեսի նույնիսկ փոքր տարրերի փոփոխությունն անպայման կատարվել է գաղափարական որոշակի մղումով: Թեև շատ չեն ծածկասալերի և կողասալերի նման ձևերը, սակայն ծիսակարգն ակնհայտ է:

Դամբարանների կողասալերի և ծածկասալերի վրա անցքերի առկայությունը ուսումնասիրողների կողմից տարբեր ձևով է մեկնաբանվում: Դամբարանի ծածկասալի վրա արված անցքը կամ անցքերը կարելի է դիտել որ-

պես կուռքի կամ հուշասյան (ստելայի) ամրացման բուն:

Հայտնի է, որ դեռևս միջին բրոնզի ժամանակաշրջանում դամբարանաբլուրի գագաթին դնում էին մոտ 50սմ բարձրությամբ քար, որ անդրշիրիմյան աշխարհի հետ հաղորդակցման միջոց էր և հետագա դարաշրջաններում լայն տարածում ստացած հուշասյան (ստելայի) նախատիպը:<sup>60</sup> Ժամանակի պատկերացումներում ստելան ընկալվում էր որպես դեպի երկինք տանող ճանապարհ:<sup>61</sup> Ինչպես կենաց ծառը, այնպես էլ ստելան, կարող էր ընկալվել որպես հանգուցյալին վերածնության տանող ճանապարհի ուղեմիջ:

Ֆ. Տեր-Մարտիրոսովի կարծիքով Շիրակավանի անտիկ դամբարանադաշտում ծածկասալի վրա արված մեծ տրամաչափի անցքը և կարող էր ծառայել ֆալսոսի ամրացման համար:<sup>62</sup> Բենիամինում և Վարդքաղում դամբարանների ծածկասալերի համեմատ անցքերը նախ շատ փոքր են (6-10սմ), բացի այդ կան նաև ակոսներ, որոնք հուշասյան կամ ֆալսոսի տեղադրման դեպքում անհիմաստ են դառնում:

Ըստ անդրշիրիմյան աշխարհի մասին պատկերացումների՝ անցքերն արված են հոգին դուրս գալու և մտնելու հնարավորության համար,<sup>63</sup> այսինքն՝ ծածկասալերի վրայի անցքերը հոգու հետ հաղորդակցման միջոց են:<sup>64</sup>

Բենիամինի սալարկղային թաղումներում հիմնականում օգտագործվել են բնակավայրի քարերը, հատկապես՝ հատակի սալաքարերը: Բացառված չէ, որ ծածկասալերի անցքերը կարող էին նախապես այլ նպատակի համար արվել, սակայն այս դեպքում անհասկանալի է դառնում իր նշանակությունը կորցրած և ավեր-

<sup>56</sup> Մտ. Ե ս ա յ ա ն, Հայաստանի հնագիտություն, Եր., 1992, էջ 262:

<sup>57</sup> Մ ա ր ա ի ր ո ս յ ա ն, Ռ. Թ ո թ ո ս յ ա ն, Արգիշթիսիսիլիի սարկոֆագը, ՊԲՀ, թիվ 3, 1986, էջ 227:

<sup>58</sup> Փ. Եր-Մարտիրոսով, Գ. Կարահանյան, նշվ. աշխ., էջ 27:

<sup>59</sup> Հ. Հ ա կ ո թ յ ա ն, Ռ. Վ ա թ ո ղ ա ն յ ա ն, Վ. Ջ ի ն ջ ի թ յ ա ն, նշվ. աշխ., էջ 107:

<sup>60</sup> М. С т е б л и н - К а м е н с к и й, Комментарии в кн. „Старшая Эдда,, Древнеисландские песни о богах и героях. М.-Л. 1963, с. 216.

<sup>61</sup> Э. Ц е р е н, Лунный бог, М., 1976, с. 138: М. Eliade, Le mythe de l'eternelle retour archetypes et repetition. Paris, 1949. p.169.

<sup>62</sup> Փ. Եր-Մարտիրոսով, Գ. Կարահանյան, նշվ. աշխ., էջ 27:

<sup>63</sup> Մտ. Ե ս ա յ ա ն, 1992, էջ 262:

<sup>64</sup> А. С и м о н я н, Культура эпохи средней бронзы северных районов Армянского Нагорья, Автореф.диссертации на соиск. уч.степени канд. ист. наук. Л., 1984, с. 21.

ված բնակավայրում բազմաթիվ քարերի մեջ սրանց ընտրությունը: Կարելի էր ենթադրել նաև, թե անցքերն արվել են քարերը հեշտությամբ տեղափոխելու համար, այս դեպքում անհիմաստ են դառնում ակոսածև փորվածքները: Այն, որ անցքերն արվել են հատուկ նպատակով, հաստատում են նաև որպես ծածկասալ և կողասալ օգտագործված երկանքաքարերը, որոնք հավելյալ աշխատանք պահանջող ձևափոխության են ենթարկվել՝ ծածկասալի կամ կողասալի մյուս քարերի հետ ուղիղ շարվածք ապահովելու համար:

Ծիսական հեղումները հնում օգտագործվում էին վերածնության պաշտամունքի հետ կապված ծեսերում: Հույների մոտ գոհաբերության և հեղման համար օգտագործում էին հատուկ գոհասեղաններ՝ գոհաբերված կենդանու արյան հոսքի համար արված անցքով: Չոհասեղան-էսխարը լավ հայտնի է Բոսպորի կուրգաններից:<sup>65</sup>

Ծածկասալերի վրա արված անցքերի և ակոսների ծիսական դերի մեկնաբանմանն օգնում են ազգագրական տվյալները: Չանգեզուրում բռնի մահով մահացածների, կայծակահար եղածների գերեզմանների վրա կային փոսիկներ, որտեղից ջուր էին վերցնում, նրանով վախեցածներին բուժելու համար: Հիվանդի վախն ու հիվանդությունը փոխանցվում էր թաղվածին: Ծեսը կատարվում էր նաև վախկոտությանը աչքի ընկած մարդու գերեզմանի վրա շինված փոսիկից հիվանդի վրա ջուր լցնելով:<sup>66</sup> Փոսիկ ունեին նաև նահատակի կամ սրբի անուն վաստակածների գերեզմանները, և այստեղ նույն ծիսակարգն էր կատարվում:<sup>67</sup>

Բերված օրինակները վկայում են, որ ոչ բոլոր գերեզմանների վրա էին արվում փոսիկներ, և ողջերի ցավերն ու հիվանդությունները

մեռածին հանձնելը, դրանով նաև մեռածի հետ հաղորդակցվելը կատարվում էր ոչ բոլոր թաղումների մոտ:

Հնագիտական և ազգագրական նյութերի համադրումը ցույց է տալիս, որ ծածկասալերի անցքերը գոհասեղանի դեր են կատարել և արվել են ողջերի ցավերն ու հիվանդությունները ծիսական հեղումներով մեռածներին փոխանցելու համար: Իսկ որ մեռածներին վերագրվում էր նման կարողություն, վկայում են ծեսերից պահպանված վերապրուկները, ինչպես օրինակ՝ հանգուցյալի հետ հիվանդ մարդու շորերից կամ իրերից դնելը (որ ցավն ու հիվանդությունը տանի), կամ երբ թուղթուզիրը անշրջելի դարձնելու համար այն թաղում են գերեզմանում:<sup>68</sup>

Բենիամին գյուղի 19-րդ դարի գերեզմանոցում ուղղանկյուն սալից մի տապանաքարի վրա պահպանվել է թասիկածև փորվածք, իսկ մեկ ուրիշի վրա՝ բավականին խորը, եռանկյունածև տաշվածք-ակոս: Նույնախիսի փոսիկավոր տապանաքարեր կան նաև Կառնուտի 19-րդ դարի գերեզմանոցում: Նշված բոլոր գերեզմանոցներում փորվածքներն արված են տապանաքարի արևմտյան հատվածում և համապատասխանում են գանգի հատվածին:

Հետաքրքրական է Մարմաշենի վանքային համալիրից հյուսիս, բլրի վրա գտնվող միջնադարյան գերեզմանոցում այսօրինակ փորվածքի մեկ այլ տարբերակը: Տապանաքարերից մեկի արևմտյան կողմում արված է 25սմ տրամագծով և 4սմ խորությամբ, երկշարք, աջ կեռվող ճառագայթների մեջ առնված մի փոսիկ: Շրջանածև փոսն ու ճառագայթները տարբեր հարթությունների վրա են: Փոսիկի մեջ կրակի հետքեր են: Արևը, որ կյանքի և հավերժության խորհրդանիշ է, տապանաքարի վրա, այն էլ ոտքերի մոտ պատկերելը, խորհրդանշել է հանգուցյալի մահվան հետ նաև նրա արևի հանգելը (*արևը մեռնի, այսինքն՝ կյանքը մեռնի կամ արևը թաղեն, այսինքն՝ կյանքը թաղեն*): Թաղումը դեմքով դեպի արևը, ոտքերի տակ՝ արև: Արևի պատկերի կենտրոնում՝ փոսի մեջ, վառվել է կրակը: Ակներև է հին ծեսի վերապրուկային

<sup>65</sup> Е. К а с т а н а я н, Обряд тризны в боспорских курганах, СА XIV, 1950, с.124.

<sup>66</sup> Ստ., Լ ի ս ի ղ յ ա ն, 1969, էջ 288:

<sup>67</sup> Հիվանդը կռամում է բռնությամբ սպանվածի կամ առանց հաղորդության մեռածի գերեզմանի վրա, այդ պահին հիվանդի մեջքին ջուր են լցնում, այնպես որ գերեզմանի վրա փորված փոսը ջրով լցվի և ապա հիվանդը խմում է այն: Երբեմն ջուրը ամանի մեջ ամբողջ գիշեր թողնում են գերեզմանի վրա, իսկ հիվանդը հաջորդ օրը խմում ջուրը և ջարդում ամանը: Մ. Արեղյան, 1975, էջ 20:

<sup>68</sup> ԴԱՆ, հեղինակի գրառումներից, Գյումրի:

ձևը: Բերված բոլոր ուշ օրինակներում անցքերը միջանցիկ չեն և դատելով նրանցից վերջինի մեջ կրակի հետքերից, օգտագործվել են խունկ ծխելու համար: Ակներև է, որ հնագույն ծեսի վերածնակվորում է կատարվել: Պահպանվել է ձևը՝ փոխարինված թաղման ծիսակարգի մեկ այլ արարողակարգով:

**Հոգեհաց:** Հոգեհացի մնացորդներ փաստված են Հայաստանի հելլենիստական և անտիկ ժամանակաշրջանի տարբեր դամբարանադաշտերում՝ Արտաշատ,<sup>69</sup> Վարդգադ,<sup>70</sup> Կարճաղբյուր,<sup>71</sup> Շիրակավան,<sup>72</sup> Գառնի,<sup>73</sup> և այլն: Շիրակի անտիկ դամբարանադաշտերում հոգեհացի հետքերը շատ չեն: Կարմրաքարում, Վարդգադում և Առափիում պեղումները սկսվել են արդեն մասամբ ավերված դամբարանադաշտերում, և հոգեհացի հետքերի բացակայությունը կարող է ինչ-որ չափով նաև դրա հետևանք լինել: Բենիամինում մ.թ. 2-4-րդ դարերի թաղումները նստած են մ.թ.ա.1-մ.թ. 1-ին դարերի բնակավայրի վրա, և հաճախ անհնար է տարբերակել հոգեհացի խարույկի և բնակավայրի հրդեհի հետքերը: Ելնելով վերոհիշյալից՝ որոշ վերապահումով ենք վերաբերում Բենիամինի թաղումների կողքին գտնված կրակի մնացորդներին և խեցեղենի բեկորներին: Իսկ սալարկղային թաղումներում (թիվ 157, 209...) գտնված ուղեկցող կավանոթների կամ կմախքի այս ու այն հատվածում դրված կավանոթների բեկորների վրա օրգանական մնացորդների առկայությունն արդեն ենթադրում է հոգեհացի արարողակարգ: Այսպես, Բենիամինի սալարկղային թաղումներից թիվ 181 դամբարանում՝ զանգի տակ գտնվեց տափաշի բեկոր, իսկ թիվ 67 դամբարանում, որ-

տեղ հանգուցյալի վրա հող չի լցվել, կմախքի կրծքին գտնվեց խեցի, թիվ 158 դամբարանում՝ զանգի աջ կողմում անոթի շուրթ՝ վրան վառված փայտի կտորներ և օրգանական մնացորդներ: Հոգեհացի արարողակարգը շարունակվել է նաև դամբարանի մոտ՝ մնջեցյալին հողին հանձնելուց հետո և, ըստ ծիսակարգի, կոտրած ամանների բեկորները պահ են տրվել հողին: Կան սալարկղային թաղումներ, որտեղ ծածկասալերն ամրացնող քարերի մեջ անոթների բեկորներ են (թիվ 157, 164, 181): Անշուշտ հոգեհացի հետ են կապվում նաև թիվ 133 դամբարանի կողքին, թիվ 216 դամբարանի ծածկասալն ամրացնող քարերի մեջ գտնված աղորիքը և թիվ 141 դամբարանի մոտ գտնված սյան խարիսխը, որոնց ծիսական դերը փաստված է նաև Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձաններում: Բենիամինում հոգեհացի մնացորդներ պահպանվել են նաև կարասային թաղումների մոտ (թիվ 105՝ մուր, թիվ 17, 28, 39՝ մոխրաշերտ): Նույն պատկերն է նաև Վարդգադում (թիվ 18՝ մոխրաշերտ): Հոգեհացի կրակին հանձնված անոթներն ունեն բերանքսիվայր դիրք: Հոգեհացի մնացորդների քննությունը ցույց է տալիս. բացի այն, որ մնջեցյալի հետ դրվել է իր բաժինը (դամբարաններում հայտնաբերված ամանների մեջ պահպանվել են օրգանական մնացորդներ), հոգեհացից օգտվել են նաև թաղման մասնակիցները (դամբարանի մոտ կրակի, ոսկորների, կոտրված անոթների առկայությունը դրա վկայությունն է (Բենիամին, թիվ 17, 28, 157, 237...): Իսկ թե ինչ հաջորդականությամբ է կատարվել, իհարկե անհնար է վերականգնել: Շիրակի դամբարաններում հայտնաբերված ուղեկցող փոքրաթիվ անոթներն ունեն բերանքսիվայր դիրք (Բենիամին, թիվ 127, 183, 209) կամ բերանը փակված է մեկ այլ ամանով (Բենիամին, թիվ 183): Եթե ամաններն իրար վրա շարելը սովորական երևույթ է տարբեր ժամանակաշրջաններով թվագրվող այն թաղումների համար, որտեղ անոթների քանակն անցնում է մի քանի տասնյակից, և կարելի է ենթադրել, որ դա արվել է նաև սահմանափակ տարածքում բոլոր իրերը տեղավորելու

<sup>69</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1981, էջ 47:

<sup>70</sup> Լ. Ե զ ա ն յ ա ն, Կրակը Դրասխանակերտի անտիկ դամբարանադաշտի թաղման ծիսակարգում, Հին Հայաստանի մշակույթին նվիրված 11-րդ գիտական նստաշրջան, զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 1998, էջ 22:

<sup>71</sup> Ի. Կ ա ռ ա պ ե տ յ ա ն, Կարճաղբյուրի պեղումները, Հայաստանի Հանրապետությունում 1989-1990թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Չեկուցումների թեզներ, Եր., 1991, էջ 81:

<sup>72</sup> Փ. Դ ե ռ - Մ ա ռ տիրոսով, Գ. Կ ա ռ ա խ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 18-19:

<sup>73</sup> Ջ. Խ ա չ ա տրյան, նշվ. աշխ., էջ 23:

համար, ապա Շիրակի անտիկ թաղումներում ուղեկցող նյութերը սակավաթիվ են, և քանի որ թաղման ողջ ընթացքի յուրաքանչյուր մանրամասն անպայման ծիսականացված է, ամանների բերանները փակելը ենթադրում է որոշակի նպատակ: Լոռի բերդի միջինբրոնզի-դարյան դամբարաններում կավանոթները քարե հղկված կափարիչներով ծածկված լինելը, ըստ Ս. Դևեջյանի, ևս անպայման ծեսի մասին են վկայում:<sup>74</sup>

Անոթների բերանները փակելու ծես հայտնի է խեթական տեքստերից: Խեթերի մոտ կարասը (պիֆոսը) ամեն մի աստվածության պաշտամունքի կարևոր տարրերից էր:<sup>75</sup> Կար Ամպրոպի աստծուն մատուցվող զոհաբերություններով ուղեկցվող անոթների բերանը բացելու և փակելու արարողություն: Առաջինը կատարվում էր գարնանային տոների ժամանակ, իսկ երկրորդը՝ աշնանը: Ըստ խեթական տեքստերի՝ բացելը կարող էր խորհրդանշել ծննդյան, իսկ փակելը՝ անձրևների եղանակը:<sup>76</sup> Ինչպես հատիկի համար էր ծեսը խորհրդանշում ծլելու կամ մեռնելու ժամանակը, այնպես էլ դամբարաններում դրված անոթների բերանները փակելը պիտի խորհրդանշեր կյանքի ավարտը: Գուցե նաև մույն գաղափարն է դրված բոլոր թաղումներն այս կամ այն ձևով ծածկելու մեջ:

Բենիամինի դամբարանադաշտում հոգեհացի հետքեր պահպանվել են մինչև մ.թ. 3-րդ դար և ավելի ուշ թաղումներում չի նկատվում: Նույնպիսի պատկեր է նաև Արտաշատում և ժամանակագրական մույն հատվածն է ընդգրկում:<sup>77</sup> Կարելի էր ենթադրել, թե առաջին դարերում քրիստոնեական հավատքի տարածումն իր հետ բերել էր նաև նոր ծես, ըստ որի էլ հոգեհացի արարողակարգ չի կատարվել, և ուղեկցող նյութերն էլ կամ շատ քիչ են, կամ իսպառ բացակայում են: Իհարկե, սկզբնական շրջանում նոր կրոնն առանձին ժողովրդականություն չէր վայելում, և ազնվականության մի մասը ժո-

ղովրդական զանգվածների հետ պայքարում էր հանուն իր նախնիների հավատքի:<sup>78</sup> Խորենացին իր դժգոհությունն է հայտնում. «...կամ թե բնութիւն ունելով զբարձրայօնութիւն և զկամակորութիւն՝ ընդդիմանան կամաց թագաւորին յաղագս կրօնից քրիստոսականաց, զհետ երթալով կամաց կանանց և հարճից...»:<sup>79</sup> Իսկ մյուս կողմից էլ հոգեհացի բացակայությունը մ.թ. առաջին դարերի Հայաստանի տնտեսական վիճակի արտացոլումն է: Այսինքն, դամբարաններում ուղեկցող նյութերի բացակայությունը կարող էր պայմանավորված լինել թե՛ մեկով, թե՛ մյուսով:

Կրակը թաղման ծեսում: Հոգեհացի ծիսակարգի տարրերից մեկը կրակն է: Բենիամինի դամբարանադաշտում այն փաստված է մոխրաշերտի (թիվ 8, 39, 105, 125, 217 դամբ.), փայտածխի (թիվ 8, 83, 84, 90 դամբ.) ձևով, որոնց մեջ նաև վառված ճյուղերի (թիվ 132 դամբ.): Բենիամինի որոշ թաղումների (թիվ 8, 9, 17, 23, 28, 39...) ուղեկցող անոթների մի կողմում ևս կրակի հետքեր են:

Թաղման ծեսի նյութականացված մնացորդները հնարավորություն են տալիս վերականգնել մեկ արարողակարգ ևս. երբ աճյունը դեռ չէր ծածկվել հողով, հոգեհացի կրակից վառված փայտի կտորները դրվել են դամբարանի մեջ՝ աճյունի տարբեր մասերում: Փայտածխի կտորները գտնվեցին մարմնի այս կամ այն մասում. գլխի տակ (Բենիամին, թիվ 158, 159, 181 դամբ.), աջ ականջի մոտ (Բենիամին, թիվ 92 դամբ.), ոտքերի մոտ (Բենիամին, թիվ 118, 132, 169 դամբ.), կրծքին (Բենիամին, թիվ 122 դամբ.), որովայնին (Բենիամին, թիվ 104 դամբ.), թիկունքի հատվածում (Բենիամին, թիվ 125, 132 դամբ.), ձեռքերի մեջ (Բենիամին, թիվ 16 դամբ.): Կան թաղումներ, որտեղ փայտածխի կտորներ գտնվեցին կմախքի տարբեր մասերում միաժամանակ (Բենիամին, թիվ 132՝ ոտքերի տակ, ողնաշարի տակ, ոտքերի միջև): Փայտածխի կտորներ գտնվեցին և կարասա-

<sup>74</sup> Ս. Դևեջյան, 2006, էջ 103:

<sup>75</sup> В. А р д з и н б а, Ритуалы и мифы Древней Анатолии, М., 1982, с. 172.

<sup>76</sup> Նույն տեղում, էջ 25-26:

<sup>77</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1981, էջ 53:

<sup>78</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Եր., 1984, էջ 76:

<sup>79</sup> Մ. Խ ո ռ Ե ն ա գ ի, Գ, դր:

յին, սալարկղային և հիմնահողային թաղումներում: Բենիամինի թիվ 20, 21, 54, 56, 71, 97 դամբարաններում վառված փայտի կտորները ուղղակի շաղ են տրված և այս դեպքում կարող էին ննջեցյալի վրա լցված հողի մեջ լինել: Ածուխի մեկ կամ մի քանի կտորներ, ինչպես նաև մոխիր, գտնվել են Արտաշատի դամբարանադաշտից:<sup>80</sup> Ածուխի մանր կտորներ գտնվել են նաև Խերտոնեսում՝ մանկական դամբարանից:<sup>81</sup>

Հնդեվրոպական ժողովուրդների հավատալիքներում առանձին տեղ էր հատկացված կրակին և մաքրագործող կրակի պաշտամունքն անհիշելի ժամանակներից գոյություն է ունեցել տարբեր ժողովուրդների մոտ: Կրակի, որպես ֆիզիկական երևույթի, լույս, ջերմություն, կյանք ապահովելու, միաժամանակ նաև հրո ճարակ դարձնելու, մոխրացնելու հատկություններն են ընկած դիցաբանական ընկալումներում վերջինիս հատկացված դերում՝ այն կապելով և՛ կյանքի, և՛ մահվան հետ: Ըստ այդմ էլ՝ հնդեվրոպական թաղման ծեսում կրակը կապվում է վերածնության հետ՝ կյանք-մահ-վերածնունդ շրջափուլի մեջ:<sup>82</sup> Կրակը ծիսական դեր ուներ ոչ միայն թաղման ծեսում նաև ոչ հնդեվրոպական ժողովուրդների մոտ:\*

<sup>80</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1981, էջ 42:

<sup>81</sup> Е. Б у н и а т я н, В. З у б а р ь, Новый участок детских погребений позднеантичного некрополя Херсонеса, СА, N. 4, 1991, с. 230.

<sup>82</sup> Լ. Ե զ ա ն յ ա ն, Պաշտամունքային շարժական օջախներ միջնադարյան Հայկաձորից, ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածու, XI, Գյումրի, 2008, էջ 101:

\* Մոնղոլների մոտ հանգուցյալների հարազատներին և բուրդին, ուվեր գտնվում են նրա հետ շփման մեջ ենթակա են կրակով մաքրման: Иоанн де Плано Карпини, История монголов. СПб., 1911. с. 12; Իսկ օրինակ, Ամուր գետի և Սախալին կղզու արևմտյան ափամերձ շրջանի ժողովուրդների մոտ խիստ պահպանվում էին բոլոր արգելքները և դրա հետ կապված նաև կրակի հետ վարվելու կարգը: Օջախը մաքրվում էր առավոտյան, քանի որ երեկոյան մոխիրը դուրս տանելի արգելված էր համարվում և ենթադրվում էր, որ եթե դա արվեր երեկոյան, ապա տանը մեկը կմեռներ: Ոչ միայն նոր տան մեջ առաջին օջախը և մտնը վառում էր տան ավագը, այլ նաև օջախներն ու մտնը նոր տան մեջ կարող էին վառել միայն նույն տոհմի անդամները: Ч. Таксами, Селения, жильные и хозяйственные постройки нивхов Амура и западного побережья Сахалина (середина XIX начало-XX в.)- „Труды Института этнографии им Н. Миклухо-Маклая“, М.-Л., 1961, т. 64. с. 161.

Հնդեվրոպացիների թաղման արարողակարգում հանգուցյալներին կրակի վրա այրելու ծիսակարգը անշուշտ ունենալու էր որոշակի ծիսական բովանդակություն ի տարբերություն հողի մեջ թաղելու պարզ ձևի: Այդպիսի խորհրդանշական իմաստ տալիս էր կրակը: Հետագայում հնդեվրոպական մի քանի սովորույթներում, հատկապես՝ հնդիրանական, այն դարձավ պաշտամունքի հիմնական առարկա: Դա պայմանավորված էր կրակի մաքրող հատկությամբ: Մշտապես վարակիչ հիվանդությունների մահացու հետևանքներին ենթակա ժողովուրդների համար կրակը հատկապես ժանտախտից ազատվելու լավագույն միջոց էր:<sup>84</sup>

Կրակի մաքրագործող ծիսահմայական գործողությունների հիմքում ընկած է շփածին մոգությունը, որի սկզբունքներն են՝ նմանը ծնունդ է նմանին և իրերը, որոնք մի անգամ շփման մեջ են եղել իրար հետ, անմիջական կապի խզումից հետո էլ շարունակում են տարածության մեջ փոխներգործել:<sup>85</sup> Կրակն այրում էր, մաքրում և վերացնում բոլոր կապերը: Կրակն իր մեջ կրում էր վերածնունդի էությունը:<sup>86</sup> Կրակը ոչ միայն մաքրագործում էր մարդուն,<sup>87</sup> այլ վերածնունդ և ապահովում նրա մուտքը դրախտ:<sup>88</sup> Հոգեհացի կրակին զոհաբերված կենդանիների ոսկորները հանձնելը նույն նպատակն ուներ:

Դամբարանի մոտ օջախ վառելը և զոհի միսն եփելը արդեն իսկ դամբարանի տարածքը դարձնում էր պաշտամունքային:<sup>89</sup> Իսկ հոգեհացի համար վառված օջախը, կրակին դրված ամանը և եփած միսը մեկ ամբողջական համա-

<sup>84</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 831:

<sup>85</sup> Л. Б о л д ы р е в а, Н. С о т и н а, Магия и квантовая механика, Наука и религия, 1990, N. 5, с. 5.

<sup>86</sup> Л. А к и м о в а, Об отношении геометрического стиля к обряду кремации в кн: Исследования в области балто-славянской духовной культуры. Погребальный обряд, М., 1990г. с. 231.

<sup>87</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 831:

<sup>88</sup> В. П е т р у х и н, Погребения знати викингов (по данным археологических и литературных памятников), Скандинавский сборник 21, Таллин, 1976. с. 155.

<sup>89</sup> Մ. Գ և ե ջ յ ա ն, 2006, էջ 99:

լիր են, և չպետք է դրանք դիտել մեկը մյուսից առանձին:<sup>90</sup>

Վերը նշեցինք, որ բացի հոգեհացի կրակից, կրակի հետքերն ածուխի տեսքով հայտնաբերվել են նաև դամբարանում՝ կմախքի տարրեր հատվածներում: Հայոց մեջ ածուխը դիտվել է չար ոգիներից պաշտպանվելու միջոց և մանկահասակ երեխային դուրս տանելիս ասփի մեջ ածուխ էին դնում:<sup>91</sup> Չարը կալել կապելու համար փոխ տրվող կաթի մեջ ևս ածուխ էր գցվում:<sup>92</sup> Ածուխն օգտագործում էին ծննդկանին շրջապատող չարքերին վանելու համար:<sup>93</sup> Կրակը կարելի է մարել միայն մոխիրով ծածկելով, իսկ որոշ ժողովուրդների մոտ ոճրագործություն է համարվել կրակը փչելով կամ ջրով հանգցնելը:<sup>94</sup> Ըստ ուսումնասիրողների՝ ածուխը կրակով չար ոգիներին վանելու, գերեզմանը նրանից զերծ պահելու միջոց է<sup>95</sup> և կապվում է նախնիների պաշտամունքի հետ՝ որպես կապ մահացածի և ընտանեկան օջախի միջև:<sup>96</sup> Նույն այդ հավատալիքի արդյունք է մինչ օրս հայոց և այլոց մեջ մոմը մատների սեղմումով հանգցնելու սովորույթը: Չուզահեռաբար սուրբ է համարվել նաև մոխիրը, և տաճարների կամ սրբազան օջախների մոխիրը չէր թափվում, այլ կուտակվում էր հատուկ դրա համար հատկացված տեղում: Ժողովրդական ավանդության մեջ մոխրի պաշտամունքի մասին վկայում է Ս. Կարապետի և Կաղ դևի մասին գրույցը. «Ս. Կարապետ (տարբերակ՝ Լուսավորիչը) ժողվեց դիվան լըցեց գնդան:/ Կաղ դևն եկավ, ասաց. յաման/

<sup>90</sup> E. B. A n t o n o v a, Первые святилища Армянского Нагорья, Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского Нагорья и сопредельных областей (сбор докладов) Ер. 1990, с. 53.

<sup>91</sup> Ստ. Լիսիցյան, 1969, էջ 59:

<sup>92</sup> Նույն տեղում, էջ 303:

<sup>93</sup> Տատմերը ածուխը ձեռքին պտտվում էր ծննդկանի շուրջը, չարքերի մուտքը արգելելու համար օղակ էր գծում, որով ներքին տարածություն էր ստեղծվում և անվերջ ու անսկիզբ շրջանով փակում էր չարի ճանապարհը: Ստ. Լիսիցյան, 1969, էջ 301:

<sup>94</sup> Մ. Արեղյան, 1975, էջ 58:

<sup>95</sup> В. З е л е н ч у к, Очерки молдавской народной обрядности, Кишинев, 1959, с. 38 ; Г. Забойко, Верования и обычаи великоруссов Владимирской губернии, ЭО 3-4, М., 1914, с. 97. И. Харузина, К вопросу о почитании огня, ЭО, 3-4, М., 1907. с. 159.

<sup>96</sup> И. Х а р у з и н а, նշվ. աշխ., էջ 59:

Ջիս մի դներ զընդան/ Ես կեղնիմ Սուրբ Կարապետու փոշեհան,/ Տանիմ, թափեմ Փրեբաբման/, Մինչև օր Քրիստոս գա դատաստան», դեր դառնում է վանքի փոշեհանը:<sup>97</sup> Կաղ դևի տակ ծպտված է հեթանոսական տաճարի կրակը պահպանող ծառայողը կամ քուրմը, որի դև անունը հին հավատքից նորին անցնելիս հնի ժխտման վկայություն է: Բացի այն, որ գրույցի մեջ ակնհայտ են ինչպես մոխրի պաշտամունքի տարրերը, դրսևորվում է Սուրբ Կարապետի վանքի կապը ստորերկրայքի հետ (գետնի տակով վանքի մոխիրը տանելը) կապը, միաժամանակ նաև, յաման բառի տակ ծպտում կա, և այստեղ պիտի տեսնել նաև Աման -յաման կրակի հնագույն աստվածությանը կամ նրա արքանյակներից մեկին:

Ըստ ազգագրական վկայությունների, թաղման արարողակարգի ժամանակ կանայք կարող էին պատառոտել իրենց հագուստները, մոխիր ցանել գլխներին և ճանկեղ դեմքերը:<sup>98</sup> Հնագիտական փաստերին զուգահեռ հոգևոր մշակույթի յուրատեսակ պահեստարանը ոչ միայն ազգագրական նյութն է, շատ հաճախ նաև՝ հայերենը:Թաղման ծեսի տարրերի խտապատկեր է առօրյա խոսակցականում օգտագործվող հետևյալ արտահայտությունը. «Բուռ մի հող, բուռ մի փոշի», որ Աշոցքում արտահայտում է մարդու մեռնելու ցանկությունը:<sup>99</sup> Հայերի կողմից մոխրի պաշտամունքի վկայություն է Ազաթանգեղոսի տված բնորոշումը. «...ի մոխրապաշտութեան նախնեաց մերոց»:<sup>100</sup> Կրակի և մոխրի պաշտամունքի մասին է վկայում նաև հետևյալը. Տեառնընդառաջին, երբ քահանայի կողմից օրհնված խաբույկն այրվում վերջանում էր, տակավին վառվող սուրբ մոխրից կպցնում էին իրենց մոմերը և վառած տանում էին տուն:<sup>101</sup>

<sup>97</sup> Մ. Հ ա ր ո թ յ ո յ ան, Մշո Սուրբ Կարապետ եկեղեցու պաշտամունքային նախահիմքերը, Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր., 2001, էջ 23, Գարեգին Սրվանձալյանց, Երկեր, հ. 1, Եր., 1978, էջ 75:

<sup>98</sup> Վ. Բ դ ո յ ան, Հայ ազգագրություն (համառոտ ակնարկ), Եր., 1973, էջ 198:

<sup>99</sup> ԳԱՆ, հեղինակի գրառումներից, Աշոցք, գ. Դազանչի:

<sup>100</sup> Ս. Ա թ ա թ ա ն գ և ղ ո ս, 89:

<sup>101</sup> Մ. Ա թ ե ղ յ ան, 1975, էջ 63:



Թաղման ժամանակ կրակի օգտագործումը նպատակամղված էր ողջերի և մեռածների միջև այդ կապերի և՛ շեշտմանը, և՛ խզմանը: Գուցե և նույն ծիսահմայական գործողության արդյունքում է ձևավորվել «գլխին մոխիր ցանելը»<sup>102</sup> արտահայտությունը, որը ծիսական համալիր գործողության խտացում է: Ըստ ամենայնի, հարազատների գլխին մոխիր ցանելը (թաղման կրակի մոխիրը) հանգուցյալին, ինչպես նաև հարազատներին մաքրագործելու, նաև հանգուցյալի և ողջերի միջև բոլոր կապերը վերացնելու մի գործողություն է եղել: Թաղման մեթոդայա ծեսում գերեզմանի հողից հարազատների ծոցը գաղտնաբար մի պտղունց լցնելը բերված ծիսակարգի համարժեքն է: Այժմ արդեն չգիտակցվող ծիսահմայական գործողությունը նույնպես միտված է եղել փոխազդեցության կապերը կտրելուն և դրանով՝ հանգուցյալից սպասվող վտանգը կանխելուն: Անշուշտ այստեղ հողն ու մոխիրը, որպես ծիսահմայական գործողության իրականացման միջոց, նույնանում են: Գերեզմանի մեջ մի բուռ հող գցելու մեթոդայա արարողությունը ևս հանգուցյալին իր բաժինը տալու և նրա հետ կապերը խզելու մի գործողություն է:

Մեծ պահքի չարչարանաց շաբաթվա տունին հանգուցյալների գերեզմաններին անպայման ձիթածրագ վառելը,<sup>103</sup> երեկոյան մոմ վառելը, ինչպես նաև խունկ ծխելը, կրակի մաքրագործող գործության հետ կապված հավատալիքների դրսևորումներն են:

Շիրակի անտիկ դամբարաններում և թաղման տարածքում վառված փայտի կտորների առկայությունը վկայությունն է մի ծեսի, որի արձագանքները պահպանվում էին հայոց սովորություններում: Այն սենյակում, ուր հանգուցյալն էր, կրակ չէր վառվում, և որոշ վայրերում դիավազման ջուրը տաքացնելու համար կրակը վառվում էր բաց երկնքի տակ և այդ կրակը վառելու համար օջախի կրակը չէին օգտագործում, որպեսզի օջախը չպղծեն, այլ կայծքարով

և պողպատով նոր կրակ էին ստանում:<sup>104</sup> Քանի որ դիավազման համար արված կրակը պիղծ էր և վնասակար, այրվող փայտի կտորներն էլ հանգուցյալի նման մահաբեր էին դառնում, կիսայրված փայտի կտորները տնից հեռու էին շարտում:<sup>105</sup> Այսինքն՝ նույնպիսի վտանգ կարող էին ներկայացնել նաև հոգեհացի կրակի մնացորդները: Հետևաբար՝ այդ վտանգը կանխելու նպատակով էլ վառված փայտի կտորները դրվել են հանգուցյալի հետ:

Կրակի հետ կապված արարողակարգերի քննությունը ցույց է տալիս, որ դամբարանի մեջ, ինչպես նաև աճյունի տարբեր մասերում դրված փայտածխի կտորներն ունեին դամբարանները կրակով մաքրագործելու և ողջերին հասցվող վտանգը կանխելու նպատակ: Իսկ հոգեհացի կրակին հանձնված ամանները հանգուցյալին իր բաժինը տալու և դրանով հանգուցյալի հետ փոխազդեցության կապերը կտրելուն միտված գործողություն են:

Նույն սկզբունքից ելնելով էլ՝ հանգուցյալին հողին են հանձնել ողջ հանդերձանքով՝ հետը դնելով նաև իր օգտագործած իրերը: Հանգուցյալի ունեցած գեներով և արդուզարդի առարկաներով թաղելու մասին վկայում է Խորենացին. «...և որպիսի շուք բազմադիմս արարին առ ի պատիւ դիոյն, քաղաքականաց կարգօր և ոչ որպէս գրարբարոսս: Դագաղը էին ասէ, ոսկեղէնք, գահոյքն և անկողինքն բեհեզեայ. և պատմունանն որ զմարմնովն՝ ոսկեթել, թագ կապեալ ի գլուխն, և զէնն ոսկւով առաջի եղեալ...»:<sup>106</sup>

Դամբարանը ներփակ տարածություն է, որ տարանջատում է երկու՝ այս և այն աշխարհները: Ըստ այդմ էլ՝ դամբարանի ներսում կատարվողը միայն հանգուցյալի համար է, դրսինը՝ հանգուցյալի, նրա հարազատների ու մերձավորների վերջին հարաբերությունը: Դամբարանի կողքին կատարված գործողությունները հանգուցյալին հասանելիքն է, միաժամանակ կրակի մաքրագործմամբ հանգուցյալի և ողջերի

<sup>102</sup> Արտահայտությունն օգտագործվում է մեծ վիշտ ունեցող մարդուն բնորոշելիս, երբ դժբախտությունը կապվում է մերձավորի մահվան հետ:  
<sup>103</sup> Մտ. Լ ի ս ի ց յ ա ն, 1969, էջ 280:

<sup>104</sup> Մ. Ա թ է դ յ ա ն, 1975, էջ 62:  
<sup>105</sup> Նույնը:  
<sup>106</sup> Մ. Խ ո ռ է ն ա ց ի, Բ, կ:

միջև եղած կապերի խզումը: Հանգուցյալին իր բաժինը հատկացնելու կարևորությամբ է պայմանավորված հոգեհացի արարողակարգը: Բենիամինի դամբարաններում փայտածխի կտորների առկայությունը հենց այս գործությամբ էլ պայմանավորված է: Կրակի, այս դեպքում ածուխի մաքրագործող հատկությունն էլ օգտագործվել է նաև դամբարանը չար ոգիներից հեռու պահելու համար:

**Կենդանիների զոհաբերություն:** Թաղման արարողությունների հետ կապված զոհաբերությունները, ըստ Շիրակի անտիկ դամբարանադաշտերում փաստված նյութական մնացորդների, բաժանվում են երկու խմբի: Առաջինում դամբարանի կողքին, հոգեհացի կրակի մեջ պահպանված մնացորդներն են, իսկ երկրորդում՝ դամբարանի մեջ՝ հանգուցյալի հետ դրվածները: Եթե առաջինում խոշոր և մանր եղջերավոր անասունների (ոչխար, կով, վարազ) ոսկորներ են, ապա երկրորդում՝ շան և ձիու: Առաջինները հանգուցյալի և նրա հարազատների վերջին խնջույքի համար են, իսկ երկրորդները՝ միայն հանգուցյալի: Վերջիններին վերապահված է հանգուցյալին հանդերձյալ աշխարհի ուղեկցելու դերը:

Չոհաբերված կենդանիները ձուռն էին տարբեր աստվածներին և հանգուցյալի հոգուն:<sup>107</sup> Ճոխ զոհաբերությունն ակնկալում էր բարեհաճ վերաբերմունք այն աշխարհում: Թաղման ծեսի ժամանակ մանր եղջերավոր անասունների՝ ոչխարի, խոյի զոհաբերության սովորույթ կար հոմերոսյան շրջանի Հունաստանում:<sup>108</sup> Հելլենիստական Հայաստանում ևս կատարվում էին տարբեր կենդանիների զոհաբերություններ, և՛ ոչ միայն թաղման ժամանակ: Խորենացու վկայությամբ. «...Տիզրանայ արքայի Հայոց պատուեալ զգերեզման եղբորն իւրոյ Մաժանայ քրմապետի Բազնացն աւանի...բազին ի վերայ գերեզմանին շինեալ, զի ի զոհիցն ամենայն անցատրք վայելեացեն»:<sup>109</sup>

<sup>107</sup> О. Гернни, Хетты. (По следам изучения культуры Востока), М., 1987, с. 147.

<sup>108</sup> Հ ն մ ե բ ո ս, Իլիական, Եր., 1987, էջ 416:

<sup>109</sup> Մ. Խ ո ռ ե ն ա ճ ի, Բ, կգ:

Թաղման ժամանակ ընտանի կենդանիների զոհաբերումն անշուշտ գալիս է հնդեվրոպական այն պատկերացումներից, որ անդրշիրիմյան աշխարհը արոտավայր է, որտեղ արածում են մարդկանց և զոհաբերված կենդանիների հոգիները: Ըստ Վ. Իվանովի, մարգագետնում ողջակիզված կենդանիների կողքին գտնվող մեռածի հոգու մասին պատկերացումները, որ խեթական ծեսի հնագույն տարր են, ծագել են հնդեվրոպացիների վաղ անասնապահական շրջանի կրոնական հայացքներից:<sup>110</sup>

Չոհաբերված կենդանիներից յուրաքանչյուրը կապվում է որևէ հավատալիքի և պաշտամունքի հետ: Հնդեվրոպական հավատալիքներում վարազը կամ վայրի խոզն ուներ պաշտամունքային նշանակություն:<sup>111</sup> Խեթական սովորույթներում սուրբ կենդանիների շարքում հիշատակվում է նաև վայրի վարազը:<sup>112</sup> Վարազը ծիսական կարևոր կենդանի էր միքենյան Հունաստանում, որի վկայությունն են զինվորների սաղավարտների վրա մարտական նշանի՝ «Վարազի գլխի» նկարագրությունը հոմերոսյան և հինգերմանական էպոսներում: Այդ նշանը հայտնի է նաև միքենյան, հռոմեական և հինգերմանական հնագիտական հուշարձաններից:<sup>113</sup> Ծիսակարգում խոզի (կամ վայրի վարազի՝ կինճի) զոհաբերությունը հետազոտողները կապում են պտղաբերության պաշտամունքի հետ: Հին իսլանդական ավանդություններում վարազը համարվում էր պտղաբերության աստվածուհու՝ Ֆրեյայի կենդանին:<sup>114</sup> Նույն ավանդություններում վարազի հնամենի անվանման մեջ կան *իշխան* և *աստված* իմաստները:<sup>115</sup> Մեռնող և հարություն առնող հին արևելյան մի շարք աստվածություններ դիցաբանական վա-

<sup>110</sup> Вяч. И в а н о в, Реконструкция структуры символики и семантики индоевропейского погребального обряда. Исследования в области балто-славянской духовной культуры. Погребальный обряд. М., 1990. с. 5.

<sup>111</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 514:

<sup>112</sup> В. А р д з и н б а, նշվ. աշխ., էջ 30.

<sup>113</sup> МНМ, Энциклопедия, т. 1, М., 1991, стр. 232.

<sup>114</sup> М. С т е б л и н - К а м е н с к и й, նշվ. աշխ., էջ 165:

<sup>115</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 516:

րազի գոհն են դառնում:<sup>116</sup> Հայ դիցաբանության մեջ վարազը մեռնող և հարություն առնող Արայի հակառակորդն էր:<sup>117</sup> Պատահական չէ, որ միջնադարում վարազագիր մատանի կրելու իրավունքը վերապահված էր միայն թագավորին, և այդ մատանիով էր կնքվում մահվան դատավճիռը:<sup>118</sup>

Թաղման ծեսի առանցքն անշուշտ գոհաբերությունն է աստվածներից, որ նպատակ ունի նրանցից ողորմածություն և բարեհաճություն ակնկալել հանգուցյալի (որ գուցե և առաջնային էր) և նաև ծեսն իրականացնողների նկատմամբ: Ըստ խեթական ծիսակարգի գոհ էին մատուցում միայն առաջնեկը. առաջին հատիկը, թխած առաջին հացը, ծնված առաջին գառը կամ այլ կենդանի: Խեթական աղբյուրներում ասվում է, որ թագավորը Արիննայում ծես է կատարում և նոր բերքից գոհաբերում է հաց, մեղր, գինի, իսկ թագուհին Թախուրայայում Արևի և Մեցուլլա աստվածուհու համար ծես է կատարում՝ մատուցելով առաջնեկներին, որոնց կարելի էր ուտել:<sup>119</sup> Ըստ մովսեսական օրենքների՝ նույնպես պետք է գոհաբերել բոլոր առաջին ծնունդների արուններին:<sup>120</sup>

Թաղման ծիսակարգում կենդանիների գոհաբերության արձագանքները պահպանվել են մինչև օրս: Սբ. Խաչի մեռելոցին պարտադիր է ուլ (անցյալ դարի 60-ական թվականներից՝ գառ) մորթելը (այսինքն՝ գոհաբերելը) և փռում խորովելը:

Թաղման ծիսակարգը շարունակվել է նաև հանգուցյալին հողին հանձնելուց հետո: Այսինքն, արարողությունների մի մասը կատարվել է երբ դամբարանը դեռ բաց էր, իսկ մյուս մասը՝ դամբարանը փակելուց հետո: Վերջինիս մասին վկայում են ծածկասալերի վրա հայտ-

նաբերված նյութերը: Բենիամին (թիվ 9, 39, 105, 125) հոգեհացի կրակի մեջ և ծածկասալերի և կողասալերի քարերի հետ (թիվ 157,164) գտնվեցին գավաթների, տափաշշերի բեկորներ, որոնք կարող էին կոտրվել հոգեհացի արարողակարգի վերջնական փուլում՝ դամբարանը փակելուց և հողով ծածկելուց հետո: Նշենք, որ թաղման ծեսի այս արարողակարգը ավելի վաղ ժամանակաշրջանի հուշարձաններից փաստված է Շիրակավանում: 2008թ. այստեղ ջրագծի համար փորված խրամատի մեջ բացված սալարկղային երկու դամբարանում, հանգուցյալի աճյունի հետ դրված իրերից զատ, անոթներ գտնվեցին նաև ծածկասալերի վրա:<sup>121</sup> Վերջիններս անշուշտ վկայում են դամբարանը ծածկելուց հետո կատարված արարողակարգի մասին: Արդյոք այն կատարվել է անմիջապես թաղումից հետո, թե թաղմանը հաջորդող օրերին, դժվար է ասել: Եթե արարողակարգը կատարվել է թաղումից հետո մեկ այլ ծիսակարգի ժամանակ, ուրեմն պիտի ենթադրել, որ դամբարանը ծածկասալով փակելով, թաղման օրվա արարողակարգն ավարտված է համարվել: Շիրակավանի մ.թ.ա. 8-7-րդ դարերով թվագրվող դամբարաններում փաստվածը ենթադրում է, որ նախ ծածկասալը հողով չի ծածկվել, և վերջինս ոչ թե կափարիչի, այլ տապանաքարի դեր է ունեցել: Բացի այդ, հանգուցյալի հիշատակին նվիրված որոշակի օրերի ևս հոգեհացի արարողակարգ է կատարվել:

Հնագիտական նյութին զուգահեռ ունենք նաև Խորենացու վերոբերյալ վկայությունը. «*զի ի գոհիցն ամենայն անցառորք վայելեսցեն*»,<sup>122</sup> որը ևս հաստատում է, թե հոգեհաց տրվել է ոչ միայն թաղման ժամանակ: Բերված օրինակների մերօրյա վկայությունն է հանգուցյալի հիշատակին նվիրված օրերին (եզնահող, յոթ, քառասունք և այլն) գերեզմանի վրա հոգեհացի ուտելիքից բաժին թողնելու սովորույթը:

**Հացի գոհաբերությունը:** Բենիամինի սալարկղային մի քանի դամբարաններում (թիվ 54, 56,

<sup>116</sup> А. М н а ц а к а н я н, Мотив вепря в армянской мифологии и искусстве, II международный симпозиум по армянскому искусству. Ер., 1978. с., 4.

<sup>117</sup> Ա. Մ ա տ ի կ յ ա ն, Արայ Գեղեցիկ, Վիեննա, 1930, էջ 224-238:

<sup>118</sup> Մ ա. Օ թ թ է լ յ ա ն, Մյունիքի պատմություն (թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Աբրահամյանի), Եր., 1986, Գ, 72:

<sup>119</sup> В. А р а з и н б а, նշվ. աշխ., էջ 72, ծանոթագր. 64:

<sup>120</sup> Աստվածաշունչ, Հին Կտակարան, Օրինաց, 2, 15:

<sup>121</sup> Լ. Եզանյանի պեղումներ, նյութերը հրատարակված չեն:  
<sup>122</sup> Մ. Խ ո ռ ե ն ա ց ի, Բ, կգ:

71, 92) գտնվեց նաև հացահատիկ: Կարասային և հիմնահողային մի քանի թաղումներում վառված հացահատիկի առկայությունն, ավելի հավանական է, վերաբերում է բնակավայրին: Մի քանի դամբարանների կողքին կամ ուղեկցող իրերի հետ գտնվեցին նաև աշխատանքային գործիքներ, որոնք նույնպես կապվում են հացահատիկի հետ: Բենիամինի թիվ 133 դամբարանի կողքին, թիվ 216 դամբարանի ծածկասալն ամրացնող քարերի մեջ գտնվեցին աղորիքներ:

Բենիամինի թիվ 174, 216 դամբարանների մոտ ևս գտնվեցին աղորիքներ: Երկանքաքարեր են Բենիամինի թիվ 8 դամբարանի կողասալերի ու ծածկասալերի մեկական քարերը, թիվ 171 դամբարանի ծածկասալի վրա գտնվեց փոքրիկ սանդ, թիվ 39 կարասային թաղման նյութերի մեջ կա նաև ծեծիչ: Օրինակ՝ Արտաշատում աղորիքները դամբարանադաշտ են բերվել հացահատիկ աղալու «...կամ էլ ունեցել են հանգուցյալին ուղեկցող առարկաների զուտ ծիսական նշանակություն»:<sup>123</sup> Բենիամինում ևս աղորիքները նույնպես դամբարանադաշտ են բերվել ծիսական նպատակով և կապվում են հացի զոհաբերության հետ:

Հացի զոհաբերության ծիսակարգը շատ հին է: Այս իմաստով բացառություն չէ Հայաստանը, որտեղ դեռևս բրոնզիդարյան թաղման արարողակարգում իր տեղն ունեն գարու ու ցորենի զոհաբերությունը:<sup>124</sup> Հացահատիկը, որպես մեռնող և հարություն առնող բույս, ունի իր ծիսական բովանդակությունը և կապվում է մեռնող և հարություն առնող աստվածությունների պաշտամունքի հետ:<sup>125</sup>

Խեթական տեքստերում, ի թիվս զոհաբերվող այլ ուտեստեղենի, հիշատակվում է նաև հացը:<sup>126</sup> Հին Արևելքում սովորություն կար հա-

ցահատիկ թողնել դամբարանում:<sup>127</sup> Ըստ հին հույների՝ գարու զոհաբերությունը կապված էր այն աշխարհի ու մեռյալների հետ և արտահայտվում էր հանգուցյալի գերեզմանի մեջ այլուր ցանելով, որը կատարվում էր ի թիվս այլ հեղումների:<sup>128</sup> Հացաբույսեր էին դրվում վիկինգների թաղման մակույկներում:<sup>129</sup>

Թաղման արարողությունների ժամանակ խեթական ծեսում զոհաբերվել են տարբեր հացեր. լուսնակերպ, մարդակերպ, կենդանակերպ, որոնք նաև տարբեր համերի էին. թթխմորով, քաղցրացրած, պանրով, յուղով, ինչպես նաև՝ տարբեր գույների. կարմիր, սպիտակ, սև և այլն:<sup>130</sup> Ըստ այդմ էլ հացի յուրաքանչյուր տեսակ, ծիսական միևնույն իմաստի կրողը լինելով, անշուշտ ունենալու էր ինչ-որ նրբերանգային տարբերություն:

Մեզանում թխած առաջին հացը միշտ ճամփորդին է համարվել, ընդունված է նաև լավաշը որպես մատաղ բաժանելը: Երկու դեպքում էլ հացի զոհաբերության արձագանքներ կան: Անշուշտ նույն իմաստն ունեն թաղման ծիսակարգի հետ կապված *հոգեհաց* կամ *հաց տալ* արտահայտությունները: Երկու դեպքում էլ հիմքը հացն է: Հայոց ազգագրական նյութը նույնպես բազմաթիվ սովորույթներ է վկայում՝ կապված թաղման ծիսակարգում հացի օգտագործման հետ: Դրանցից մեկը թաղման ժամանակ հանգուցյալի կրծքին հաց դնելն է:<sup>131</sup> Չանգեզուրում ննջեցյալի կրծքին և բերանի մոտ հաց դնելը մոգական նշանակություն ունեն և արվում էր *քաշկերին* հեռացնելու համար:<sup>132</sup> Շիրակում միայն Սբ Խաչի մեռելոցին պատրաստվող ճաշը կոչվում է *քաշկա* և անպայման մատուցվում է ոչխարի մսի հետ: Անունը համահունչ է *քաշկ* -ին, որն էլ հնարավոր է

<sup>123</sup> Ժ. Խ ա չ ա տ ը յ ա ն, 1981, էջ 53:

<sup>124</sup> Աշխ. Ք ա լ ա ն թ ա ը, Հին Վաղարշապատի պեղումները, Եր., 1935, էջ 43: С. Деvedжян, 1981, նշվ. աշխ., էջ 39:

<sup>125</sup> Է. Խ ա ն գ ա ղ յ ա ն, 1973, էջ 140: В. Петрухин, Погребения знати викингов (по данным археологических и литературных памятников), Скандинавский сборник 21, Таллин, 1976. с. 160: С. Деvedжян, 1981, էջ 39:

<sup>126</sup> В. А р д з и н б а, նշվ. աշխ., էջ 133:

<sup>127</sup> Գ. Թ ու մ ա ն յ ա ն, Ուշբրոնզեդարյան թաղման ծեսը հայկական լեռնաշխարհի հյուսիս - արևելքում (ըստ հնագիտական տվյալների), թեկնածուական ատենախոսություն, 1997, էջ 143:

<sup>128</sup> Հ ո մ եր ո ս, նշվ. աշխ., էջ 512:

В. П е т р у х и н, նշվ. աշխ., էջ 160:

<sup>130</sup> В. А р д з и н б а, նշվ. աշխ., էջ 65-67:

<sup>131</sup> Ստ. Լ ի ս ի գ յ ա ն, 1969, էջ 334:

<sup>132</sup> Նույն տեղում, էջ 291:

քաջ(ք) բառի աղավաղումն է:<sup>133</sup> Քաջ, քաջք, ըստ Հայկազյան բառարանի, *ցնորք, ոգի, դև, ճին, խեյալ*,<sup>134</sup> իսկ *քաշկէն (հեղիսա), հաց ինչ, մանավանդ զարեհաց, նկանակ զարեղեն*:<sup>135</sup>

Ըստ ժողովրդական հավատալիքների՝ քաջքերը մարդկային ծագում ունեն և բնակվում են սարերի, ժայռերի ու քարերի վրա, քարանձավներում ու ժայռերի ճեղքերում ունեն իրենց տաճարները:<sup>136</sup> Քարանձավներում բնակվելը շեշտում է անդրաշխարհի հետ կապը: Քաջքերն են շղթայում Արտավազդին. «...Չքեզ կայցին քաջք, Տարցին յԱզատն ի վեր ի Մասիս, Անդ կայցես եւ զոյս մի տեսցես»<sup>137</sup> Այսինքն՝ հոգեհացի այս ճաշատեսակը ողջերին պաշտպանվելու նպատակով անդրաշխարհի ոգիներին՝ քաջք-քաջքերին արվող զոհաբերությունն է:

Հացի զոհաբերության ծեսի արձագանքներ են Աշոցքի գյուղերում մինչ օրս հանգուցյալի հիշատակի բոլոր օրերին հոգեհացին անպայման ձավարով շիլա մատուցելը: Հացի զոհաբերության վկայությունն է նաև հետևյալը: Մինչև անցյալ դարի 60-ական թվականները Շիրակում պահպանվում էր թաղման հաջորդ օրը՝ էգնահողին, մեռելտուն տարվող ուտեստեղենի պարտադիր ուղեկիցը՝ բրինձը, որը ցորենի (նաև՝ ձավարի, կորկոտի) նորօրյա փոխարինողն է: Հավանաբար հացի զոհաբերության հետ է կապվում նաև հետևյալը: Երբ հանգուցյալին երագում հաճախ են տեսնում, առավոտ վաղ, առանց որևէ մեկի ներկայության և առանց ետ նայելու, ուսի վրայով մի կտոր հաց են նետում՝ ասելով, «*առ քո բաժինն ու զնա*»: Գործողությունն իր մեջ ունի մեռածից վախենալու, զգուշանալու միտում և միաժամանակ նրանից ազատվելու ցանկություն, ինչպես նաև ծեսի կատարման գաղտնիություն: Համալիր գործողության բուն նպատակը հացի զոհաբերությանը մեռածին իր բաժինը հատկացնելն է:

<sup>133</sup> Լ. Ե գ ա ն յ ա ն, Գայլի զոհաբերության վաղբրոնգի-դարյան ծեսի գաղտնագիրը հայոց «գեկկապի» աղոթքներում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. XII, Գյումրի, 2010, էջ 75:

<sup>134</sup> ՆԲՀԼ Եր, 1981, էջ, 981:

<sup>135</sup> Նույնը:

<sup>136</sup> Մ. Ա ք ե ղ յ ա ն, 1975, էջ 86:

<sup>137</sup> Մ. Խ ո թ ե ն ա ց ի, Բ, կա:

**Ծիսական հեղում:** Հոգեհացի արարողակարգի ժամանակ կատարված ծիսական հեղումների մասին վկայում են թաղումների կողքին, հոգեհացի մնացորդների հետ հայտնաբերված գավաթների բեկորները:

Բենիամինի որոշ թաղումների (թիվ 8, 9, 17, 23, 28, 39...) ուղեկցող անոթների մի կողմում կրակի հետքեր են: Պիտի ենթադրել, որ հոգեհացի արարողակարգի ժամանակ գավաթների պարունակությունը հեղել են՝ ամանները պառկած դիրքով թողնելով կրակի մեջ: Կրակի հետքեր կան նաև Կառնուտի գավաթի մի կողմում: Բենիամինի 138 և 209 թաղման կարասների վրա, միայն մի կողմում՝ շուրթից նստուկ, կրակի հետքեր կան, որը ենթադրում է, թե այս անոթները մույնպես պառկած դիրքով եղել են կրակի մեջ: Կառնուտի գտածոները ևս բոլորը թերի են, որը ցույց է տալիս, թե անոթները կոտրվել են թաղման արարողակարգի ժամանակ: Անշուշտ անհնար է ասել հեղումը կատարվել է, երբ դամբարանը դեռ բաց էր, թե՛ աճյունը հողին հանձնելուց և ծածկասալով փակելուց հետո: Թեև թաղման ծեսը մույնպես ենթակա է փոփոխությունների, սակայն նկատի առնելով և՛ ազգագրական վկայությունները, և՛ թաղման մեթոդյա արարողություններում ավանդական ծեսի շատ տարրերի պահպանումը, կարելի է ենթադրել, որ հեղումը դամբարանի մոտ կատարված արարողություններից վերջինն է եղել:

Թաղման խեթական ծիսակարգում ընդունված էր կենդանիների, զինու, զարեջրի, հացի և մրգերի զոհաբերությունից հետո կոտրել բոլոր անոթները:<sup>138</sup> Ծիսակարգը հայտնի է Մերձսևծովյան շրջանից,<sup>139</sup> Ադրբեջանից:<sup>140</sup> Արտաշատի դամբարանադաշտում ևս հոգեհացի բոլոր անոթները կոտրվել և նետվել են կրակի մեջ:<sup>141</sup>

Կարելի էր ենթադրել, թե գավաթների պարունակությունը դատարկելուց (ըմպելու՞ց) հետո վերջիններս պառկած դիրքով դնելը կարող էր ուղղակի հանգուցյալի վիճակին բերելու խորհուրդ ունենալ. այսինքն՝ ինչպես մարդու

<sup>138</sup> H. O t t e n, Hethitische totenrituale, Berlin, 1958 p. 13-16.

<sup>139</sup> Е. К а с т а н а я н, նշվ. աշխ., էջ 128:

<sup>140</sup> С. К а з и е в, 1949, с. 9: С. Казиев, 1960, с. 20:

<sup>141</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 47:

կյանքն է ավարտվել, այնպես էլ՝ անոթն էր դատարկվում: Կարծում ենք, ավելի հավանական է, որ կարող էր նաև փոխազդեցության բոլոր կապերը կտրելուն միտված գործողություն լինել: Հեղման անոթները պատկած դիրքով կրակի մեջ թողնելու վերապրուկ է թաղման մերօրյա ծիսակարգում մինչև քառասունք հոգեհացի սեղանին բաժակները բերանքսիվայր դնելու սովորույթը:<sup>142</sup> Ըստ հայոց հավատալիքների, քանի որ մինչև քառասունք հոգին թափառում է այս և այն աշխարհների միջև, ուրեմն կարող էր նաև վնասել ողջերին: Ազգագրական սովորույթներում բազմաթիվ միջոցներ էին կիրառվում հանգուցյալի հոգուն մոլորեցնելու և վերադարձը կանխելու համար: Հոգեհացի ժամանակ օգտագործված անոթները թողել են հենց հոգեհացի կրակի մեջ՝ մաքրագործող կրակի շփումով փոխազդեցության կապերը վերացնելու և հոգու վերադարձը կանխելու համար:

Իսկ *մեռյալների մարգագետինը*, որտեղ ըստ հնդեվրոպական հավատալիքների, տեղափոխվում են մեռածների հոգիները, *ողջերի աշխարհից* անջատված է ջրով, որն անցնելուց հետո միայն հոգին կհայտնվեր հանդերձյալ աշխարհում:<sup>143</sup> Հեղումը կատարվել է որպես մոգական գործողություն՝ հոգու անցանելիք ճանապարհի ընթացքը հեշտացնելու և գուցեն արագացնելու նպատակով: Թաղման մերօրյա ծեսում գերեզմանին խմիչք հեղելը հնագույն այս ծեսի արձագանքն է:

***Շունը թաղման ծիսակարգում:*** Բենիամինի դամբարանադաշտում թաղման ձևերի և ծիսակարգի բազմազանության մեջ առանձնանում են մի քանի թաղումներ, որոնք ուղեկցվում են շների զոհաբերությամբ:<sup>144</sup> Շունը թաղման ուղեկից է թիվ 40, 123, 194 դամբարաններում: Թիվ 123-ը կարասային թաղում է երրորդ տե-

ղամասում բացված քարաշար պատերով հսկա ամբարի բերանին: Մանկական թաղումը կատարվել է բերանքսիվայր դիրքով դրված կարասի բեկորների տակ: Կոնսիսի կողքին գտնվեցին շան գանգ և երկատված ծնոտի հակադիր դրված երկու մասերը: Թաղումը բացվեց բնակավայրի այս հատվածի մ. թ. ա. 1-ին դար թվագրվող շերտում: Թիվ 194-ը մ. թ. ա. 1-ին դարի կենցաղային հորի մեջ բացված հիմնահողային թաղում է: Թաղումը կատարվել է բնակավայրի կենսագործունեության ժամանակ: Այս թաղմանը քիչ վերապահումով պիտի մոտենալ, քանի որ թաղման կողքին գտնված ոսկորները կարող են նաև ծիսակարգի հետ բոլորովին կապ չունենալ և վերաբերել բնակավայրին:

Շան զոհաբերության ուղեկցությամբ երկու թաղում էլ բացվեց մ. թ. ա. 1-ին դարի շերտում: Բենիամինի մ. թ. ա. 1-ին դարի մոնումենտալ կառույցի սենյակներից մեկի շենի տակ բացվեց շան զոհաբերություն:<sup>145</sup> Շների զոհաբերություն բացվեց նաև Արեզնադեմում՝ սալարկղային թաղման կողքին՝ մեկ այլ սալարկղի մեջ (տախտակ VI, նկ. 1):<sup>146</sup>

Շան զոհաբերության ուղեկցությամբ թաղման առավել հետաքրքրական օրինակ է թիվ 40 դամբարանը: Հյուսիս-հարավ կողմնորոշմամբ կարասային թաղումը կատարվել է մոնումենտալ կառույցի նույն միջանցքի վրա բացվող սենյակներից ամենամեծի կենտրոնում: Պահպանվել են հորիզոնական դիրքով դրված կարասի մի քանի բեկորներ: Թաղումն ուղեկցվել է շների և ձիու զոհաբերությամբ: Կարասի մի մեծ բեկորի վրա գտնվեց ձիու երկատված գլխի մի կեսը, իսկ մյուսը՝ 60սմ հեռու: Թաղումն առնված է 3մ տրամագծով խոշոր քարերի երկշար շարվածքով շրջանի մեջ, որի տակ ամփոփված են զոհաբերված շները: Ջոհաբերված է չորս շուն, որոնցից երկուսն ամբողջական են, երկուսն՝ իրանից երկու մասի բաժանված: Դամբարանը 4-րդ դարում կողոպտվել է: Այդ են

<sup>142</sup> Լենինականում մինչև անցյալ դարի 60-ական թվականները պահպանվում էր հանգուցյալի հագուստները՝ շորերը և կոշիկները պատռելու սովորույթը: Իսկ վերջին տարիներին կոտրում են նաև տապանաքարերի վրա դրվող ծաղիկները: ԴԱՆ, հեղինակի գրառումներից (Գյումրի):

<sup>143</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 824:

<sup>144</sup> Լ. Ե գ ա ն յ ա ն, 1998, էջ 44-56:

<sup>145</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Դրասխանակերտի մ. թ. ա. 1-ին դարի մոնումենտալ կառույցի գործառության մասին, ՇՊՄԺ հանրապետական 2-րդ գիտաժողով, զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 19:

<sup>146</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Լ. Ե գ ա ն յ ա ն, 1991, էջ 84-86:

վկայում սենյակի տարբեր մասերից գտնված, 4-րդ դարով թվագրվող սանրաքաշ խեցիները, թաղման կարասի և ուղեկից այլ կավանդների բեկորները, որոնցից մի քանիսն էլ հայտնվել են վերին շերտում: Թաղման ուղեկից տարատեսակ նյութերի բեկորներն ու ամբողջական իրերը գտնվեցին ցաքուցրիվ վիճակում: Հնարավոր է, ձիու գանգի ոսկորների իրարից հեռու գտնվելը ոչ թե ծիսակարգի, այլ դամբարանը թալանելիս կատարած ավերածության հետևանք է: Փաստորեն անխաթար են մնացել միայն շրջանաձև շարվածքի տակ ամփոփված շների կմախքները: Թաղմանն ուղեկցող նյութերով դամբարանը թվագրվում է մ. թ. 1-2-րդ դարերով:

Ֆ. Տեր-Մարտիրոսովը նշված թաղումը թվագրում է մ. թ. 2-րդ դարով,<sup>147</sup> իսկ Հ. Խաչատրյանն այս կառույցի դամբարան լինելը կասկածի տակ է առնում, քանի որ. «քարերի մի քանի շարքով կրմնեխի շրջագիծն ավելի շուտ կարող էր լինել շրջանաձև հարթակի կամ կոնաձև ինչ-որ շինվածքի հիմնասայտ»:<sup>148</sup>

Թիվ 40 դամբարանի ձևն ու արարողակարգը ենթադրում են, թե հանգուցյալը կարող էր լինել կարևոր մի անձ, ում ունեցած հասարակական դիրքն էլ իրավունք է վերապահել առանձնացված տարածքի հատկացման և զոհաբերություններով հարուստ ծիսակարգով թաղման:

Բենիամինի դամբարանադաշտում շան զոհաբերությունները փաստված են կարասային (թիվ 40) և հիմնահողային (թիվ 234) թաղումներում: Բենիամինում շների զոհաբերությամբ թաղումների քննությունը ցույց է տալիս, որ զոհաբերությունները կատարված են հետևյալ ձևերով. ա.) ամբողջական կմախքով (թիվ 40 դամբ.), բ.) միայն գլուխը (թիվ 234), գ.) խառը՝ մասնատված և ամբողջական շներ (թիվ 40 դամբ.):

Հայտնի է, որ շունը զգում է իր տիրոջ կամ ընտանիքի անդամի մոտալուտ մահը և սկսում է արտասովոր ձայնով կաղկանձել: Մարդը կա-

րող էր դա նկատել դեռևս պղնձեքարի դարաշրջանում, երբ շունն արդեն ընտանի էր: Եվ նախնադարյան մարդու կրոնական պատկերացումների մեջ շունը չէր կարող չունենալ իր տեղը: Շան պաշտամունքի և զոհաբերության սովորույթները ծագում են այդ կենդանուն բնության կողմից տրված յուրահատուկ զգայնության և նախնադարյան մարդու պարզունակ կրոնական պատկերացումների շաղախից:

Հայաստանում շան զոհաբերության սովորույթ գոյություն է ունեցել դեռևս պղնձիքարի դարաշրջանում: Նախիջևանի Մոխրաբլուրի թիվ 41 դամբարանում գտնվել է շան կմախք, իսկ թիվ 12 դամբարանում՝ շան գանգ:<sup>149</sup> Շան ոսկորներ են գտնվել Լճաշենի առաջին դամբարանադաշտի 2-րդ մեծ դամբարանաբլուրում,<sup>150</sup> Խոջալիի թիվ 5 փոքր դամբարանադաշտում:<sup>151</sup> Շան զոհաբերություն է բացվել նաև Արթիկի՝ մ. թ. ա. 14-13-րդ դարերի դամբարանադաշտի թիվ 100 դամբարանում: Այստեղ թասի մեջ գտնվել է կենդանու գանգ, ենթադրվում է՝ շան:<sup>152</sup> Բերված օրինակները Հայաստանում շան զոհաբերության հնագիտական ամենավաղ դրսևորումներն են:

Շունն անդրշիրիմյան թագավորության խորհրդանիշ է շատ ժողովուրդների մոտ. շուններ, եգիպտացիներ, հույներ և այլք:<sup>153</sup> Տարբեր ժողովուրդների թաղման ծիսակարգում շան զոհաբերության բազմաթիվ փաստեր կան: Ծիսական անոթների մեջ թաղված շան կամ շների գլուխներ, ինչպես նաև շների ամբողջական կմախքներ հայտնի են Բակտրիայի և Սոգդի 1-ին հազարամյակով թվագրվող թաղումներից:<sup>154</sup>

<sup>149</sup> О. А б и б у л л а е в, Энеолит и бронза на территории Нахичеванской АССР, Баку, 1982, с. 46, 49.

<sup>150</sup> А. М н а ц а к а н я н, Раскопки курганов на побережье озера Севан в 1955г. (предварительное сообщение ) СА. 1957, N. 2, с. 146-153.

<sup>151</sup> К. К у ш н а р е в а, Севано - узерлинская культура периода средней бронзы на территории Сев. Кавказа В кн: „Культурное наследие Востока,, Проблемы, поиски, суждения, Л., 1985, с. 110.

<sup>152</sup> Т. Х а ч а т р я н, 1979, էջ 34:

<sup>153</sup> Ն. Կ ո լ ի ն, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Եր., 1979, էջ 156-244:

<sup>154</sup> Б. Л и т в и н с к и й, А. С е д о в, նշվ. աշխ. էջ 161-162:

<sup>147</sup> Փ. Թ е р - М а р т и р о с о в, 1993, էջ 71:

<sup>148</sup> Հ. Խ ա չ ա տ Ր Յ Ա Ն, Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. II, Գյումրի, 1999, էջ 57:

Այս թաղումներում շունը ծիսական զոհաբերության կենդանի է և զոհաբերվել ու թաղվել է առանձին: Նույն ժամանակաշրջանում շների զոհաբերություն կատարվում էր նաև Լյուդիայի մայրաքաղաք Սարդեսում:<sup>155</sup> Երկատված շների զոհաբերություն փաստված է սկանդինավցիների թաղման ծեսում: Վիկինգների թաղման նավակներում գտնվել են շան մեկ կամ մի քանի կմախքներ, որոնք հաճախ անգլուխ են:<sup>156</sup> Իսկ խեթական մույնատիպ ծիսակարգում ընդունված էր շան ձագերի զոհաբերությունը:<sup>157</sup> Կատեսակետ, ըստ որի շան զոհաբերման ծիսական արարողության հիմքում ընկած էր այդ կենդանու՝ աստվածների խորհրդանիշներ լինելու պատկերացումը:<sup>158</sup> Օրինակ՝ խեթական «կիլան» ծեսի մասնակիցները կրկնօրինակում էին կենդանիների վարքի ձևերը և այսպես կոչված «շնային մարդիկ» արարողության ժամանակ ոռնում էին:<sup>159</sup> Կենդանիները աստվածների խորհրդանիշեր լինելու պատկերացումն էր ընկած նաև խեթական մեկ այլ ծիսակարգի հիմքում: Այժի մագով պատված, կավե շնակերպ արձանիկը յուղով օծվում էր, ապա՝ կտրվում: Ծեսը կատարվում էր երեք անգամ անեծք կրկնելուց հետո, և այդ շան ոգին այլևս չէր վնասի:<sup>160</sup>

Շան պաշտամունքային դերի մեկ այլ դրսևորումն է ներքին տոնախմբության ժամանակ գայլի մորթի և դիմակ կրելը: Ծեսի հիմքում ընկած է ներքին՝ գայլից սերված լինելու պատկերացումը: Ըստ Հերոդոտոսի, յուրաքանչյուր ներ, տարին մեկ անգամ փոխակերպվում է գայլի, հետո վերստին ստանում է իր նախկին կերպարանքը:<sup>161</sup>

Ինչպես վկայում են տարբեր աղբյուրները, և ցույց է տալիս հնագիտական նյութը, շան

կամ շների առանձին զոհաբերությունների ծեսը բովանդակային նրբերանգներ ունի: Բենիամինի դամբարանադաշտում հայտնաբերված առանձին թաղված շների կմախքների և շեմի տակ թաղված շան զոհաբերության ծիսական բովանդակության մեկնության համար հետաքրքրական նյութ է հետևյալ բանավոր ավանդությունը: Ընտանիքում անհաշտ և մշտապես լարված վիճակը հաճախ բնորոշվում է հարցականով արտահայտվող «շեմի տակ շան գլուխ կա թաղուկ» վախ-մտահոգությամբ:<sup>162</sup> Հարցականը միաժամանակ արտահայտում է նախ վախ, ապա՝ իրականացված ծիսական գործողություն, դրա գաղտնիությունը և այդ գործողության հետևանքը: Եվ այստեղ շունը ծիսահմայական գործողության կրողն է: Շան զոհաբերության և թաղման ծիսական մույն սովորույթի հետ է առնչվում տարբեր լեզուներում, հայերենում մույնպես, «*ահա թե որտեղ է թաղված շան գլուխը*» արտահայտությունը, որը թեպետև փոխաբերական իմաստ է ստացել, սակայն իր մեջ պարունակում է շան զոհաբերության բուն իմաստը: Բերված օրինակները, լինելով մույն արտահայտության հնչերանգային տարբերակները, նաև իմաստային տարբերություն ունեն: Շան, որպես ծիսահմայական գործողության կրողի, մեկ այլ դրսևորումն է թուղթուգրի կամ կապ անելու ու կապ քանդելու հմայության ժամանակ սպիտակ և սև (այստեղ՝ չար և բարի) շների կղանքի օգտագործումը:<sup>163</sup> Այս դեպքում կարևոր է շան գույնը. սևով կապ է արվում, սպիտակով՝ քանդվում: Սևի և սպիտակի հակադրությունը բնորոշում է ոչ միայն չարն ու բարին, այլև՝ այս ու այն աշխարհները: Իսկ ըստ հնդեվրոպական ավանդությունների, անդրաշխարհը մեկ երկնային (դրական), մեկ ստորերկրյա (բացասական) գծեր ունի: Սպիտակ շան կերպարը հայկական ավանդություններում բազմիցս է հանդիպում: Սպիտակ շունն է Արտաշեսի հորը՝ Սանատրուկին և նրա դայակին ազատում:<sup>164</sup> Սանատրուկի որդի Արտաշեսը սև

<sup>155</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 592:

<sup>156</sup> Б. Л и т в и н с к и й, А. С е д о в, նշվ. աշխ., էջ 163-164:

<sup>157</sup> Т. В. Г а м к р е л и д з е, Вяч. В с. И в а н о в, նշվ. աշխ., էջ 591:

<sup>158</sup> В. А р д з и н б а, նշվ. աշխ., էջ 34:

<sup>159</sup> Նույնը:

<sup>160</sup> R. C a p l i c e, The Akkadian namburbi textes; an introduction Undana publications. Los Angeles, 1974. p. 17.

<sup>161</sup> Հ ե թ ն դ ն ո ն u, IV, 105:

<sup>162</sup> ԳԱՆ, հեղինակի գրառումներից, Աշոցք, գ. Սեպասար:

<sup>163</sup> ԳԱՆ, հեղինակի գրառումներից, Գյումրի:

<sup>164</sup> Մ. Խ ն ր ե ն ա գ ի, Բ, 14:



ծիսավոր է, իսկ վերջինիս որդի Արտավազդին կապանքներից ազատվելուն օգնում են սև և սպիտակ շները:<sup>165</sup> Սևի և սպիտակի հաջորդականությունը բարոյ և չարի անընդհատ պայքարի դրսևորումն է: Հունաստանում շան ձագ էին զոհաբերում Ենիալին, որը նույն Արեսն է:<sup>166</sup> Իսկ հունական դիցարանում Արեսը ռազմի աստվածն է, շունն էլ, որպես ռազմի դաշտի անխուսափելի այցելու, նրա նվիրական կենդանին: Շունը հունական մեկ այլ աստվածուհու՝ Հեկաթեի մշտական ուղեկիցն է, մասն` աստվածուհուն զոհաբերվող կենդանի: Հեկաթեն խավարի ու լուսնի աստվածուհին է:<sup>167</sup> Ահ ու սարսափ տարածելով՝ նա թափառում էր այս ու այն աշխարհներում հանգիստ չգտած մեռելների հոգիների հետ: Հեկաթեն մնում էր գերեզմանոցում, և նրան զոհաբերում էին շուն և ուտելիք: Ինչպես տեսնում ենք, հունական առասպելաբանության մեջ նույնպես շունը երկակի բնույթ ունի, նա մեռելների մշտական այցելուն է և զոհաբերվող կենդանի: Այն, որ շան հետ կապված ծիսական հավատալիքները սերված են հնդեվրոպական ակունքից, հավաստում են մաս և հին հնդկական և իրանական ավանդությունները: Հին հնդիկների մոտ մահվան տիրակալ Յամայի պատգամաբերները երկու զույգ աչքեր ունեցող, Շյամա և Շարալա անուններով շներն են, որոնք կոչվում են կյանքի առևանգիչներ: Շների բնորոշումն արդեն իր մեջ պարունակում է այս ու այն աշխարհների միջև միջնորդի և ուղեկցի գաղափարը: Այդ զույգ շները հսկում են վերին երկնքում բնակվող Յամայի ուղին: Իսկ Յաման մեռածների հոգիների հետ մտած է խնջույքի: Նա իր ուղեկից շների միջոցով փնտրում և մահվան թագավորություն է տանում նրանց, ովքեր պատկանելու են իրեն:<sup>168</sup> Եվ քանի որ կյանքի առևանգիչները բնակվում են վերին երկնքում և մեռելներին տանելու հա-

մար իջնում են երկիր, ուրեմն կապ ունեն երկրի և երկնքի հետ:

Իրանական առասպելաբանության մեջ շունը հոգիների պահապան է և հոգեառ: Երկրային շները պաշտպանում, իսկ երկնային շները հսկում են Չինվաթի կամուրջը և սպասում այդ կամուրջով մեռածի հոգին տանելուն: Առասպելաբանական այս հիմքով է պայմանավորված սագդիդի (շնադիտում) արարողությունը զրադաշտականների մոտ, երբ կերակուրը համապատասխան ծեսով տրվում էր շանը՝ հանդերձյալ աշխարհում գտնվող հանգուցյալների գաղտնակերպ ներկայացուցչին:<sup>169</sup> Ստրաբոնի վկայությամբ սոգդիացիք և բակտրիացիք գառամյալներին և հիվանդներին զգում էին գերեզմանափոր կոչված շներին՝ հոշոտելու:<sup>170</sup> Նույն հավատալիքի մեկ այլ դրսևորումն է դիակը գազաններին հանձնելու սովորույթը պարսիկների մոտ:<sup>171</sup> Շան պաշտամունքային բնույթի վկայությունն է մաս այն, որ իրանական ցեղերի մոտ շունը ձուլված էր Աիրումազդային և համարվում էր սրբազան կենդանի:<sup>172</sup> Եգիպտոսում շունը սրբազան դամբարանում թաղելը նույն երևույթի մեկ այլ դրսևորումն է:<sup>173</sup>

Շան զոհաբերությունը վերածնության գաղափարի հետ էր կապված:<sup>174</sup> Շունը հոգիների ուղեկից է և հոգիների պահապան: Վերջինով էլ պայմանավորված՝ շանը վերագրվում էր պահպանական մշանակություն և մաքրագործող գործություն (շան հայացքը փախցնում էր դևերին): Շունը կապ ունի երկնքի (Արամազդ, Հեկաթե) և երկրի հետ (գերեզմանափորներ, կյանքի առևանգիչներ):

Հայ ժողովրդի առասպելաբանական պատկերացումներում շունն, իբրև մահվան թագավորության պահապան և հոգիների ուղեկից, ունի

<sup>165</sup> Մ. Խոբեցիցի, Բ, կա:

<sup>166</sup> Ն. Արևիկյան, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 264:

<sup>167</sup> А. Тахо-Годи, Геката, МНМ, Энциклопедия, т.1, М., 1991, с. 269; В. Миллер, Значение собаки в мифологических верованиях, М., 1876, с. 12-13.

<sup>168</sup> Ригведа, Избранные гимны, М., 1972, с. 353-356; Մ. Հարությունյան, Մի դրվագ հայ առասպելաբանությունից, ՊԲՀ, 1989, թիվ 1, էջ 158-159:

<sup>169</sup> Մ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 159:

<sup>170</sup> Strabo, XI, 9:

<sup>171</sup> Հերոդոտոս, I, 140:

<sup>172</sup> Նույն տեղում, I, 85-87:

<sup>173</sup> Նույն տեղում, II, 67:

<sup>174</sup> Ст. Есаен, նշվ. աշխ., էջ 242: Մ. Հարությունյան, 1989, էջ 166: Նույնի՝ Գայի հնագույն պաշտամունքի արտացոլումները հայոց «գեկապի» աղոթքներում, Հայաստանի Հանրապետությունում 1993-1995թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական մատաչքան, գեկուցումների հիմնադրույթներ, Եր., 1996, էջ 44-46:

տարբեր դրսևորումներ: Մի դեպքում այն շնակերպ հոգեառն է, մյուս դեպքում Մասիսի վիհերում բանտարկված Արտավազդի շղթաները կրծող շներն են. «...եթե արգելեալ կայ յայրի միում, կապեալ երկաթի շղթայիս, և երկու շունք հանպազ կրծելով զշղթայսն՝ ջանալ ելանել և առնել վախճան աշխարհի...»,<sup>175</sup> կամ Արային հարություն տվող արալեզները. «լեզուլ զվէրս նորա, և կենդանասցի»:<sup>176</sup>

Ղևոնդ Ալիշանի բնորոշմամբ՝ «շունը այլևայլ կերպարանօք և անվանք պատուած և պաշտուած էր յերկրի և յերկինս և ի դժոխս Կերբեր անուամբ»:<sup>177</sup> Անդրաշխարհի հետ կապն իրականացնում էր «հոգեառն, ոգի մի Առնակ կոչված...առաքեն Առնակ չար ի տուն յորում է և պահանջեն զհոգի նորա ի նմանէ»:<sup>178</sup> Հայոց մեջ Առնակի, որպես շնագայլի և չար հոգեառի հետ է կապվում պարսավանքի խոսքերում առնակավոր մակդիրի հաճախակի կիրառումը (առնակավոր շուն, դժոխքի առնակավորներ): Անունն ասորական ծագում ունի, նշանակում է շնագայլ:<sup>179</sup> Շների մահաբեր լինելը համառոտված է *Երեսդ առնակավոր շները լիզեն* անեծքում:<sup>180</sup>

Ինչպես վկայում են գրավոր աղբյուրները, 5-րդ դարում արալեզների պաշտամունքն ու հավատը դեռևս կենդանի էր ժողովրդի մեջ: Արալեզների մասին առաջինը հաղորդում է Խորենացին. «Եւ հրամայէ (Շամիրամը) դնել զնա (Արայի դին) ի վերնատան ապարանիցն»:<sup>181</sup> Մեկ այլ վկայություն գտնում ենք Բուզանդի մոտ. «ասէին թե վասն զի այր քաջ էր, Առէգք իջանեն և յարուցանեն զդա»:<sup>182</sup> Արալեզներն էլ, ինչպես և կյանքի առևանգիչները, իջնում են երկնքից:

Թերևս շան ծիսական այս դերի կարևորությամբ է պայմանավորված Լոռի բերդի թիվ 2 դամբարանից հայտնաբերված անոթի վրա

շան վերադիր պատկերը: Անոթը թվագրվում է երկաթի լայն տարածման ժամանակաշրջանով:<sup>183</sup> Շան պաշտամունքի հնագիտական վկայություններ են նաև Այրումից գտնված շնակերպ արձանիկները, որոնք թվագրվում են մ.թ. ա. 6-5-րդ դարերով:<sup>184</sup> Արշակունյաց դամբարանի սալերից մեկի վրա վարազի դեմ պայքարող նիզակավոր մարդու հետ պատկերված է նաև շուն: Ըստ հայոց հին հավատալիքների՝ երկնային աստվածություն դարձած հայոց նախնին՝ Հայկը, երկնքից ուղարկում է իր շների ոգիներին՝ արալեզներին, որոնք հարություն են տալիս հայրենիքի համար մարտի դաշտում ընկած հերոսներին: Հայկական աստեղային պատկերացումներում կային երկու աստղեր. Շնաստղ և Շնիկ: Երկրորդ աստղը նույնիսկ կապում են Հայկ աստվածության հետ, որից էլ, ըստ առասպելի, սերվել են հայերը:<sup>185</sup> Աստվածաշնչի թարգմանության մեջ Օրիոն համաստեղության անունը փոխարինված է Հայկի անունով:<sup>186</sup> Հայկի անունով է կոչվել նաև Մարս մոլորակը: Հայտնի է, որ Օրիոնը բնուտացի մի հսկա որսորդ էր, իսկ Մարս մոլորակը կապվել է պատերազմի աստծու հետ, և Օրիոն-Հայկը նույնացվել է պատերազմի աստծու՝ «շուն սպանողի հետ»:<sup>187</sup> Եվ Հայկի շներից սերված արալեզները հանդես են գալիս որպես նախնիների պաշտամունքի ոգեղեն մարմնավորում:<sup>188</sup> Արալեզների մասին ժողովրդական հավատալիքների գոյության (այժմ արդեն չգիտակցվող) վկայությունն է «շան խածածը շան լիզելով կըլավնա»<sup>189</sup> բանավոր ավանդությունը, որտեղ համառոտված է շան՝ մահաբերի և արալեզի բնույթը: Հայոց պարսավանքի խոսքերից են «*օռնոգ կտրե, զլիսակեր կունտ*»<sup>190</sup> և «*շան ու զիլու բաժին էղներ*» արտահայտությունները, որոնցում հա-

<sup>175</sup> Մ. Խ ո ռ ե ն ա ց ի, Բ, կա:

<sup>176</sup> Մ. Խ ո ռ ե ն ա ց ի, Ա, ժգ:

<sup>177</sup> Ղ. Ա լ ի շ ա ն, Հին հավատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 157:

<sup>178</sup> Նույն տեղում, էջ 227-228:

<sup>179</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, 1971, էջ 261:

<sup>180</sup> Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1915, Գ XXVI, էջ 55:

<sup>181</sup> Մ. Խ ո ռ ե ն ա ց ի, Ա, ժե:

<sup>182</sup> Փ. Բ ո լ զ ա ն ղ, լգ:

<sup>183</sup> С. Д е в е д ж я н, Лори-берд, Ер., 1981, с. 71.

<sup>184</sup> Tresors de l' Arménie..., էջ 165, նկ. 157:

<sup>185</sup> Վ. Բ ղ ո յ ա ն, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 475:

<sup>186</sup> Գ. Ջ ա հ ո լ կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 280:

<sup>187</sup> Ա. Պ ե տ ռ ո ս յ ա ն, «Թուխ Մանուկ», հնագույն ակունքները, Թուխ Մանուկ նստաշրջանի նյութեր, Եր., 2001, էջ 22:

<sup>188</sup> Է. Գ ա ն ի է լ յ ա ն, Հայոց դիցաբանական պատկերացումները երկնքի մասին, ՊԲՀ, 1989, թիվ 3, էջ 105:

<sup>189</sup> ՂԱՆ, հեղինակի գրառումներից, Աշոցք, գ. Գազանչի:

<sup>190</sup> Նույնը:

մառնուված է առասպելի հիմնական գաղափարը: Ընդհանուր հնդեվրոպական արմատի *kuon* հնախոսական՝ *kwon* հայերեն *շուն* ձևն է:<sup>191</sup> *Կունտո* բառի մեջ պահպանվել է *շուն* բառի հնախոսական ձևը՝ *kwon*, իսկ տ-ի հավելումը լեզվական օրինաչափություն է (ինչպես՝ սանր-սանդր): Շանը տրվող հալածանքը, լինելով հնագույն հավատալիքի իմաստակիրը (այն է՝ շունը գլխակեր, մահաբեր, սպանող) այստեղ երեխային սաստող պարսավանք է կարծեցյալ մոտալուտ դժբախտությունը կանխելու համար:

Բերված առասպելաբանական պատկերացումները հաստատում են, որ շունը հնդեվրոպական ավանդույթներում ունի երկակի դեր՝ պահապան և հոգեառ, հոգիների ուղեկից, և միշտ երկուսն են: Մեկը բնութագրվում է որպես կյանքի շուն, մյուսը՝ մահվան: Եվ ըստ այդմ էլ՝ մեկը կարող է կյանք վերադարձնել, վերակենդանացնել, մյուսը՝ սպանել: Շան՝ հոգեառի և արալեզի երկակի բնույթով էլ պայմանավորվում է թաղման ծիսակարգում նրան հատկացված դերը:

Մարդու հետ շան թաղման սովորույթը հանդիպում է անտիկ ժամանակաշրջանում: Ի տարբերություն նախորդ շրջանների, անտիկ ժամանակաշրջանում կատարվում են շան ինչպես առանձին զոհաբերություններ, այնպես էլ՝ զոհաբերություն ու թաղում մարդու հետ: Շան ուղեկցությամբ թաղումներ բացվել են Նեապոլի սկյութական թաղումներում, Մերձդնեստրի, Դրիմի, Թամանյան թերակղզու սկյութական դամբարաններում:<sup>192</sup> Հայաստանում մարդու հետ շան թաղման օրինակներ հայտնի են Շիրակավանից,<sup>193</sup> Բենիամինից<sup>194</sup> և Արեգմաղեմից:<sup>195</sup> Շիրակավանում բացված թաղումներից մեկը կարասային է: Կարասի մեջ գտնվել է շան կմախք: Մյուս երկուսը քարարկղային թաղումներ են, որոնցից մեկում շունը թաղվել է մարդու կողքին, իսկ մյուսում՝ շան գլուխը մարդու գլխի

տակ է:<sup>196</sup> Շիրակավանի թաղումները վերաբերում են մ. թ. ա. 1-մ. թ. 1-ին դարերին:

Շան զոհաբերության ավելի ուշ շրջանի օրինակներ պահպանվել են տարբեր ժողովուրդների մոտ: Այդ գործողություններում իրագործվել են ծիսական որոշակի պահպանական նպատակներ, ինչպես օրինակ կատաղած շանը երկատելու և այդ մասերի միջով շան կծած մարդուն անցկացնելը:<sup>197</sup>

Թաղման ծիսակարգի հիմքում ընկած պատկերացումների տարբերություններն որոշակի սկզբունքի են ենթարկվում, ձևավորում նոր մտածելակերպ, որի մեջ էլ բացահայտվում է այս կամ այն ծեսը: Թաղման այս ծիսակարգում հավատալիքների փոխկապակցված մի շղթա է՝ տարբերի զգալի զարգացմամբ և խորացմամբ, և յուրաքանչյուր նրբերանգ որոշակի պատկերացման արտահայտություն է և ենթադրում է որոշակի բովանդակություն:

Որպես հնդեվրոպական ակունքներից եկող պաշտամունքի արտահայտություն, թաղման ծեսում շան զոհաբերությունն ունի տեղական խորը արմատներ, սակայն Հայաստանի անտիկ հուշարձաններում հազվադեպ է հանդիպում և առավելապես բնորոշ է Շիրակին: Ուսումնասիրությունները թույլ են տալիս ենթադրելու, որ նշված ծեսի վերատին կիրարկումը կապված է այլ էթնիկական զանգվածի ներհոսքի հետ: Պարթևների հայտնվելը, տեղաբնակների հետ համաբնակեցումը և թաղման ծիսակարգում տեղի ունեցած փոփոխությունները վերաբերում են մ.թ.ա. 2-րդ դարի վերջից մինչև մ.թ.ա. 1-ին դարի կեսերին, որը փաստվում է հնագիտական և մարդաբանական տվյալներով: Եվ բնական է, որ փոքր զանգվածի կողմից իրականացված ծեսը պիտի գոյատևեր մինչև տեղացիների մեջ վերջիններիս ձուլվելը: Մ.թ. 2-րդ դարից հետո Բենիամինի դամբարանադաշտում թաղումներում շան զոհաբերության բացակայությունը դրա վկայությունն է:

<sup>191</sup> Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 51:

<sup>192</sup> Б. Литвинский й, А. Седов, նշվ. աշխ., էջ 162:

<sup>193</sup> Ф. Тер-Мартirosов, Г. Караханян, նշվ. աշխ., էջ 19:

<sup>194</sup> Լ. Եգանյան, 1998, էջ 45:

<sup>195</sup> Նույնը:

<sup>196</sup> Ф. Тер-Мартirosов, Г. Караханян, նշվ. աշխ., էջ 19:

<sup>197</sup> Ազգագրական հանդես, Ջ զիրք, 1900, էջ 51:

*Չին թաղման ծիսակարգում:* Բենիամինի դամբարանադաշտում բացվեց ևս երեք թաղում, որտեղ ծիսակարգն ուղեկցվել է ձիերի զոհաբերությամբ: Թիվ 234 դամբարանում մարդկային ցաքուցրիվ վեց գանգերի հետ գտնվեցին ձիու գանգ ու ազդոսկր: Թիվ 23 դամբարանը սալարկղային թաղում է, որի մոտ բացվեց աջ կողքին պառկած ձիու կմախք: Մյուսը՝ թիվ 8 սալարկղային թաղման կողքին բացված ձիերի զոհաբերությունն է: Դամբարանը բացվեց առաջին տեղամասում, բնակավայրի կիսավեր հատվածում պահպանված սենյակի մեջ՝ սալահատակի վրա: Դամբարանից 50-60սմ հեռավորության վրա բացվեց ձիերի զոհաբերություն: Հաստ մոխրաշերտի մեջ, հինգ անկանոն քարերից կազմված, 80սմ տրամագիծ ունեցող շրջանի մեջ երկու ձիերի գլուխներն են՝ փակված կոտրված, կոնաձև դուրզի անիվով: Դուրզը պտտվելու իր գործառույթով նույնանում է անիվի՝ արև իմաստի հետ, և ծիսական ավարտում իմաստ հաղորդում արևի խորհրդանիշ ձիերի զոհաբերությանը: Այս դամբարանի ծածկասալի վրա գտնվեց նաև ձիթածրագ: Բացի այդ, այս դամբարանի ծածկասալի և կողասալի համար օգտագործվել են նաև երկանքաքարեր: Թիվ 8 (ձիերի գլուխ) և թիվ 40 դամբարաններն (ձի և շներ) ընդհանրություն ունեն նաև կառույցի բոլորաձև լուծմամբ: Բենիամինում ձիերի ուղեկցությամբ թաղումների քննությունը ցույց է տալիս, որ զոհաբերությունները կատարված են հետևյալ ձևերով. ա. ամբողջական կմախքով (թիվ 23 դամբ.), բ. միայն գլուխը (թիվ 8 և 40 դամբ.), գ. միայն գլուխն ու ազդոսկրը (դամբ. 234): Վերջին դամբարանը դեռևս հնում ավերվել է նոր թաղումներ կատարելիս, և հնարավոր է ձիու մյուս ոսկորները ուղղակի հեռացվել են: Հնարավոր է նաև, որ դամբարանում նախապես դրված են եղել միայն գլուխն ու ազդոսկրը՝ շեշտելով այդ երկու մասերի ծիսական առանձնակի կարևորությունը: Թիվ 40 դամբարանում բացվեց նաև զոհաբերված ձիու գլուխ, որի մի կեսը գտնվեց կարասի մոտ, մյուս կեսը՝ սենյակի արևմտյան պատի տակ: Ինչպես արդեն նշել ենք դամբարանը դեռևս 4-րդ դարում

կոորդատվել է: Հնարավոր է, ձիու գանգի ոսկորների իրարից հեռու գտնվելը ոչ թե ծիսակարգի, այլ դամբարանը թալանելիս կատարած ավերածության հետևանք է:

Ինչպիսի՞ն է ձիու դերը ծիսակարգում և պաշտամունքային ի՞նչ աղերսներով են շունը և ձին համատեղվում թաղման ծեսում:

Մարդու և ձիու համատեղ թաղումներ փաստվել են Համրին Բասինում (մ.թ.ա. 2300թ.) և Թել Մաթուրում (մ.թ.ա. 2800թ.):<sup>198</sup> Օդեսայի տակ „Золотая балка“, տեղանքում կուրգանի մեջ բացված կրոմլեխում հայտնաբերվել է ձիու գլխի ծիսական թաղում:<sup>199</sup> Նմանօրինակ ծես է նաև սկյութների մոտ ձիու զոհաբերությունը, ինչպես նաև կնոջ և ձիու համատեղ թաղումը, որ բացվել է Ալթայի Թուեկտունյան կուրգանում:<sup>200</sup> Դերելիվկա հնավայրում հայտնաբերվել է ձիու գանգի և առջևի ոտքի թաղում երկու շների առջևի կեսի հետ:<sup>201</sup>

Հայկական լեռնաշխարհում ձիու զոհաբերությամբ ուղեկցվող թաղումներ կատարվել են դեռևս միջին բրոնզի ժամանակաշրջանում: Նման թաղումներ բացվել են Վերին Նավերում,<sup>202</sup> ինչպես նաև Արծվաբերդի, Երևանի, Օշականի, Սիսիանի միջինբրոնզիդարյան դամբարանադաշտերում:<sup>203</sup>

Շիրակում ձիերի զոհաբերության հնագիտական տվյալներ հայտնի են Ոսկեհասկի,<sup>204</sup> Տիրաշենի,<sup>205</sup> Ազատանի մ. թ. ա. 9-8-րդ դարերով թվագրվող դամբարաններից: Ոսկեհասկի թիվ 2 և Տիրաշենի թիվ 3 դամբարաններում

<sup>198</sup> Մ. Դևեջյան, 2006, էջ 142:

<sup>199</sup> Л. С. Клейн., Ранние индоевропейцы на Кавказе и Северопонтийских степях. в кн: Междисциплинарные исследования культурогенеза Армянского Нагорья и сопредельных областей. Ер. 1990, с.170.

<sup>200</sup> С. Р у д е н к о, Древнейшие в мире художественные ковры и ткани из оленедельных курганов Алтая, М., 1968, с. 27.

<sup>201</sup> Л. Клейн, 1990, с. 170:

<sup>202</sup> А. С и м о н я н, Могильник Верин Навер, (АО 1986г.), М., 1988, с. 148.

<sup>203</sup> Գ. Թ ո ն ի մ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 8:

<sup>204</sup> Л. П е т р о с я н, նշվ. աշխ., էջ 69, 70:

<sup>205</sup> Մ. Հ ա ղ ո ս յ ո ս յ ա ն, Տիրաշենի պեղած ծիսաարարողական նյութերը, ՀԽՍՀ ԳԱ ՀԱԻ, հանրապետական գիտական նստաշրջան 1986-1988թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները, զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 1990, էջ 38:

բացվել է զոհաբերված ձիու գլուխ՝ դրված ձվածիք, զոգավոր քարի վրա և զարդարված բրոնզե զարդերով ու լծասարքի մասերով:<sup>206</sup> Ի տարբերություն նշվածների՝ Ագատանի թիվ 1 դամբարանում թաղման ուղեկից են գույզ ձիեր:<sup>207</sup>

Ձիու զոհաբերության ուղեկցությամբ թաղումներ են բացվել նաև Շիրակի անտիկ դամբարանադաշտերում: Շիրակավանում մոխրաշերտի մեջ բացված գույզ ձիերի գլուխների հետ գտնվել են նաև ձիակերպ անոթի բեկորներ:<sup>208</sup> Ստ. Տեր-Մարգարյանի պեղումների ժամանակ զոհաբերված ձիու գլուխը պարանոցի մի մասով գտնվել է Վարդգրադի թիվ 44 դամբարանի գլխամասում:<sup>209</sup> Հայաստանի անտիկ հուշարձաններից Կարճաղբյուրում է փաստված ձիու զոհաբերություն, ուր մ.թ.ա. 6-մ. թ. ա. 4-րդ դարեր թվագրվող սալարկղային թաղման ծածկասալի վրա գտնվել են ձիու գանգի և այլ ոսկորների մնացորդներ:<sup>210</sup>

Ձիու պաշտամունքի մասին են վկայում մ. թ.ա. 13-6-րդ դարերով թվագրվող ձիերի պատկերներով զարդարված բրոնզյա գոտիները:<sup>211</sup> Հնդեվրոպացիների և հարևան ժողովուրդների մոտ պահպանվել են սպիտակ ձիու, հատկապես նրա գլխի պաշտամունքի հետքեր, պաշտամունք, որի նպատակը թագավորական իշխանությունը սրբացնելն էր, և խեթերը ձիու գլուխը թագավորի հետ դնում էին գերեզմանում:<sup>212</sup>

Ձիու զոհաբերության ծեսի վերաբերյալ բազմաթիվ տվյալներ հայտնի են գրավոր աղբյուրներից: Ռիգվեդայի հուղարկավորության հիմներից մեկում կա շան և ձիու զոհաբերության տեսարանի նկարագրություն:<sup>213</sup> Խեթական գրավոր աղբյուրներից ձիու հետ ծիսական

ամուսնության ծեսը հայտնի է *աշվամեդիա* անունով: Ըստ այս ծիսակարգի՝ թագուհին պառկում էր սպանված ձիու հետ և ծածկվում ծածկոցով:<sup>214</sup> Խեթական ծեսի նկարագրության և մարդու հետ ձիու (ձիերի) թաղման ծեսի համադրումը ցույց է տալիս, որ վերջիններս հստակ ծիսական թաղումներ են, որ հիշեցնում են աշվամեդիան: Թաղման նմանատիպ ծես կար նաև կելտերի (Հիպամիդոս) և հռոմեացիների մոտ (Էկվոս Օկտոբեր):<sup>215</sup> Նույնպիսի ծես է իռլանդացիների մոտ թագավորի ծիսական ամուսնությունը սպանված ձիու հետ:<sup>216</sup> Ձիերի զոհաբերության մանրամասն նկարագրություն կա Հոմերոսի «Իլիական»-ում. Պատրոկլեսի թաղման արարողությունը ներկայացնող հատվածում. «Փայտակոյտի վրա նետեց հսկա ուժով հանկարծակի Ահիլասի չորս նժույզներ՝ հառաչելով հոգու խորքից: Արքան ուներ ինը հատ շուն իր սեղանից կերակրված, Փողոտելով՝ նա երկուսին փայտակոյտի վրա նետեց...»:<sup>217</sup>

Տակիտոսն ու Փիլոստրատոսը ձիու զոհաբերությունը ներկայացնում են որպես պարթևական սովորույթ:<sup>218</sup> Հերոդոտոսի վկայությամբ, արևին ձիեր էին զոհաբերում մասնագետները,<sup>219</sup> և ծեսի իմաստն ամենաարագընթաց աստծուն արարածներից ամենաարագընթացին զոհաբերելն էր: Հայաստանում ձիու պաշտամունքի մասին վկայում է Քսենոփոնը՝ պատմելով գեղջավազին իր կողմից նվիրած ձին խնամելու և Հելիոսին զոհաբերելու մասին:<sup>220</sup> Ելնելով ինչպես Քսենոփոնի այս, այնպես էլ նաև Խորենացու հետևյալ վկայությունից. «Իսկ յետ այսր ամենայնի մեհեան շինեալ յԱրմաիր՝ անդրիս հաստատե արեգական և լուսնի և իւրոց

<sup>206</sup> Ս. Հ ա ղ ո թ յ ո յ ա ն, 1990, էջ 38:

<sup>207</sup> Դամբարանները բացվել են 2008թ. գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ: Լ. Եզգանյանի և Հ. Խաչատրյանի պեղումներ: Նյութերը հրատարակված չեն:

<sup>208</sup> Փ. Т е р - М а р т и р о с о в, Г. К а р а х а н я н, նշվ. աշխ., էջ 21:

<sup>209</sup> Ստ. Տ եր - Մ ա ռ գ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., էջ 94:

<sup>210</sup> И. К а р а п е т я н, Раскопки Карчахпура, (АО 1977г.) М., 1978, с. 506.

<sup>211</sup> Б. П и о т р о в с к и й, История и культура Урарту, Ер., 1944, с. 275.

<sup>212</sup> Е. К у з ь м и н а, 1977, с. 28-52:

<sup>213</sup> Р и г в е д а ..., նշվ. աշխ., էջ 10-14:

<sup>214</sup> D u m o n t, P. E. L' asvamedha. Description du sacrifice solennel du cheval dans la cuite védique d' après les texts Yajueveda blanc. («Société Belge d' Études Orientales»), Paris: P. Geuthner. 1927. p. 93.

<sup>215</sup> Նույնը:

<sup>216</sup> F. S c h r o d e r, Ein aitorischer Kronungsstritus und das indigermanische Rossopfer (Zeitschrift fur Celtisch Philologie) 1927, p. 310-312.

<sup>217</sup> Հ ո մ եր ո ս, նշվ. աշխ., էջ 423:

<sup>218</sup> P. Փ ը ա ի, նշվ. աշխ., էջ 273:

<sup>219</sup> Հ եր ո դ ո տ ո ս, Գ I, 216:

<sup>220</sup> Ք ս ե ն ֆ ո ն, Ամարասիս, թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Եր., 1970, Գ IV, 35:

նախնեաց»<sup>221</sup> և Փոքր Ասիայում և Արևմուտքում Արևի տաճարին մարտակառքեր նվիրելու սովորությանը<sup>222</sup> ենթադրվում է, որ Արմավիրի տաճարին ձիերով մարտակառքեր էին նվիրում:<sup>223</sup> Աքեմենյան տիրապետության շրջանում Արմենիայի սատրապի կողմից պարսից արքային տարեկան 20 հազար մտրուկ միհրական տոնների համար ուղարկելու մասին Ստրաբոնի հիշատակումը ձիու պաշտամունքի մեկ այլ վկայություն է:<sup>224</sup> Հայաստանում Միհրի պաշտամունքի մասին վկայում է Խոսրովի կողմից Արշակունի տոհմի հայրենական վայրերին ձիեր նվիրելը. «...գերովարտակս առնել, յեօքն քազինս մեհենիցն ուխտատր լինել պատկերաց կռոցն դիցն պաշտման: Սպիտակ ցլուք և սպիտակ նոխազոք, սպիտակ ձիովք...»<sup>225</sup> Արևի աստված Միհրի պաշտամունքը, որին մարմնավորում էր ձին, լայն տարածում ստացավ, երբ Իրանական արևի աստված Միթրայի պաշտամունքը Հռոմեական կայսրություն ներթափանցեց:

Չիու, որպես զոհաբերվող կենդանու, ծիսական ակունքներն ունեն բուն հնդեվրոպական ծագում: Հնդեվրոպացիների համար ձին մարդուն ամենամոտ կենդանին է: Եվ դա էլ նպաստել է ձիու և մարդու ծիսական մերձեցմանը, և ձին զոհաբերվող կենդանի է դարձել նաև քաղման արարողակարգում: Ռիզվեդայում ձին արդեն ծիսական կենդանիներից մեկն է, և հատուկ հիմներ են նվիրված նրա ծիսական զոհաբերությանը: Վեդայական քաղման հիմներից մեկում ձիարշավում հաղթած ձիուն նվիրված ձոնին հաջորդում է երկնային ձիերին ուղղված ձոնը:<sup>226</sup> Այստեղ զոհաբերվող կենդանու հետ նշվում են նաև վեդայական պանթեոնի աստվածների անունները՝ Միթրա, Վարունա, Ինդրա:

<sup>221</sup> Մ. Խոսրոնի ակունքներ, Բ, ք:

<sup>222</sup> Հ. Բուրայեյան, 1973, էջ 66:

<sup>223</sup> Նույն տեղում, էջ 65-66:

<sup>224</sup> Ստրաբոն. քաղեց և քարգմանեց Հր. Աճառյանը, Եր., 1940, էջ 61, Հայ ժողովրդի պատմություն, հ.1, Եր., 1971, էջ 456:

<sup>225</sup> Ազատի և զեղնու, 22:

<sup>226</sup> Т. В. Гамкрелидзе, Вяч. Иванов, 624. Էջ 549:

Հնդեվրոպական մի շարք ժողովուրդների դիցաբանության մեջ ձին տեղափոխում է արևային Աստծուն, իսկ երբեմն էլ աստղացվում է արևի հետ: Ավեստայում արևն անվանվում է «արագածի»:<sup>227</sup> «Ռիզվեդայում» Աստվածային Էտաշա ձին նկարագրվում է որպես «Արևի կառքը տանող»,<sup>228</sup> հանդես է գալիս արևի կերպարով և արևն անվանվում է ձի:<sup>229</sup> Չի և արև հասկացությունների սեմանտիկական կապի վկայություն է գերմանների և հին հույների մոտ արևին հաճախ ձի անվանելը:<sup>230</sup> Սկանդինավյանների մոտ արևն անձնավորվում էր ձիու կերպարում, կելտերի մոտ ձին համարվում էր արևի խորհրդանշան,<sup>231</sup> հին սլավոնների մոտ ևս ձին կապվում է արևի հետ,<sup>232</sup> իսկ, ըստ հին հնդկական և լիտվական դիցերի, ձին ստեղծված է արևից:<sup>233</sup>

Իրանական հավատալիքներում ձին աստվածության մարմնավորում է: Չիու պատկերին զոհեր են մատուցում, նրա պատվին վառում են ճրագ, կերակրում են հատուկ պատրաստված ուտելիքով:<sup>234</sup> «Ռիզվեդայում» աստվածներին նվիրված հիմների մեջ ներառված են «աստվածացվող ձիերին» նվիրված հիմներ:<sup>235</sup> Աստվածության մարմնավորում ձիուն զոհաբերում էին արևին: Նման ծես հայտնի էր Հին Հունաստանում<sup>236</sup> և Իրանում:<sup>237</sup>

Չիու պաշտամունքը կապվում էր նաև ջրի հետ: Ըստ հին հնդկական ավանդույթի՝ ձին

<sup>227</sup> Müller F., Contributions to the science of mythology. L. N. Y. 1897 v. 1, p. 127.

<sup>228</sup> Т. Гамкрелидзе, Вяч. Иванов, 624. Էջ 549:

<sup>229</sup> Schröder L. Arische Religion. Lpz., 1923 Bd.2, p.17.

<sup>230</sup> Mannhardt W., Die Iettischen Sonnemythen, ZE, 1875, Bd. 7, p.93.

<sup>231</sup> König M.E. P. Die Symbolik der urgeschichtlichen Menschen. „Symbolon“, Bd. 5 Basel, 1966, p. 154.

<sup>232</sup> Б. Рыбаков, Прикладное искусство и скульптура.- В кн: История культуры Древней Руси, т. 2, М.-Л., 1951, с. 400.

<sup>233</sup> Müller F. M., 624. Էջ 728:

<sup>234</sup> Н.Б. Рогова, Некоторые материалы об амулетах-украшениях населения Средней Азии в кн: Домусульманские верования и обряды в Средней Азии. М., 1978, с. 40.

<sup>235</sup> Т. Гамкрелидзе, Вяч. Иванов, 624. Էջ 548:

<sup>236</sup> Э. Тейлор, Первобытная культура, М., 1939, с. 429.

<sup>237</sup> Widengren G., Die Religionen Irans, Stuttgart, 1965, p. 41.

ծնվում էր օվկիանոսից և կապվում նաև էր նաև ջրի պաշտամունքի հետ:<sup>238</sup> Ծովից է ձին հայտնվում Ինդրային:<sup>239</sup> Միջին Ասիայի իրանական ցեղերի մոտ ևս ձիու պաշտամունքը կապվում էր ջրի և պտղաբերության հետ:<sup>240</sup>

Հնդեվրոպական դիցաբանության մեջ ձիու պաշտամունքն ունի երկակի բնույթ, կապվում է ջրի և արևի պաշտամունքի հետ: Այն արտացոլված է երկվորյակների պաշտամունքում: Հնդկաստանում նրանք կոչվում էին Աշվիններ, Հունաստանում՝ Դիոսկուրոսներ: «Ռիզվեդայում» ձիու հետ կապված են աստվածային երկվորյակները՝ Աշվինները, ովքեր մասնավորապես զբաղված էին ձիերին բուժելով:<sup>241</sup> Երկվորյակների սանսկրիտական անունը Աշվին (Aśvinau), նշանակում է ձի ունեցող կամ ձիուց սերված:

Հունական Դիոսկուրոսներին անվանում էին սպիտակ ձիեր ունեցող: Դիոսկուրոսները մեկ օր անցկացնում են ստորերկրյա թագավորությունում, մեկ օր՝ Օլիմպոսի վրա՝ աստվածների միջավայրում: Մեկ այլ առասպելի համաձայն, երբ նրանցից մեկը գտնվում էր Օլիմպոսի վրա, մյուսն իջնում էր Հադես: Դիոսկուրոսները, հատկապես Կաստորը, համարվել են ձիերի սանձահարող:<sup>242</sup> Ե՛վ հնդկական, և՛ հունական առասպելներում երկվորյակների մարտակառքերը վարում են թևավոր ձիերը:

Երկվորյակների կապը ձիերի հետ գալիս է կամ արևային աստվածության հետ կապից, կամ դժոխքի տիրակալի կերպարից: Իսկ որ ձին կապվում է դժոխքի տիրակալի հետ, վկայում են հնդեվրոպական հավատալիքները: Չին հանդերձյալ աշխարհի տիրակալի՝ Յամայի նվերն էր համարվում և նախատեսված էր երկինք ուղարկելու համար:

Հունական դիցաբանության մեջ Պոսեյդոնը՝ Քրոնոսի որդին, Չևսի և Հադեսի եղբայրը, որոնց հետ նա կիսում էր երկրի տիրակալությունը, ծովերի տիրակալն էր, պատկերվում էր ձիու վրա և նրան զոհաբերում էին կառքին լծված ձիեր:<sup>243</sup> Կնիքների վրա թևավոր ձիու պատկերի հետ կապված՝ նախորդ գլխում արդեն նշել ենք, որ Պոսեյդոնի և Մեդուզա Գորգոնի կապից օվկիանոսի ակունքներում ծնվում է կախարդական թևավոր ձին՝ Պեգասոսը:<sup>244</sup> Ենթադրվում է, որ Պեգասոսն եղել է տոտեմական աստվածություն, որին պաշտել են ձիու կերպարանքով, որից էլ գալիս է նրա Հիպպիոս մականունը:<sup>245</sup> Ջրերի ակունքներում ծնվելն արդեն իսկ խորհրդանշում է անդրաշխարհի հետ ձիու կապը:

Կենդանու երկակի բնույթի մասին վկայում են նաև հրեղեն ձիերի մասին հայոց հավատալիքները: Հրեղեն ձիերը լճերի մեջ են բնակվում, հաճախ դուրս են գալիս ջրից և մույն տեսակի այլ կենդանիների հետ խաչասերվում: Դրանցից ծնվում են ճեփ-ճեփմակ անբիծ մտրուկներ:<sup>246</sup> Հայ դիցաբանության մեջ հրեղեն ձի է Քուռկիկ Ջալալին, որին «Մասնա Ծռեր» ժողովրդական վեպի ծովածին Սանասարը ձեռք է բերում ծովից:<sup>247</sup> Ըստ հայոց հավատալիքների՝ հրեղեն ձիերն ապրում են դևերի քարանձավներում:<sup>248</sup> Իսկ հնդեվրոպական դիցաբանության մեջ ինչպես ջրի ակունքները, այնպես էլ քարանձավը կապվում են անդրաշխարհի հետ: Եվ քանի որ ձին կապվում էր անդրաշխարհի տիրակալի հետ, նրան վերագրվում էր նաև կանխագուշակելու հատկություն:<sup>249</sup> Չիու կերպարին այս հատկանիշը վերագրվել է քանի որ ըստ հավատալիքների, ձին, ինչպես և շունը, զգում է տիրոջ մոտալուտ մահը: Անդրաշխարհի հետ ձիու ունեցած կապի մասին հավատալիք-

<sup>238</sup> Р и г в е д а ... նշվ. աշխ., էջ 163:

<sup>239</sup> В. Т о п о р о в, Индра, МНМ, Энциклопедия, т. 2, М., 1991, с. 534.

<sup>240</sup> Е. К у з ь м и н а, Распространение коневодства и культа коня у ираноязычных племен Средней Азии и других народов Старого Света в кн: „Средняя Азия в древности и средневековье“, М., 1977, с. 42.

<sup>241</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 548:

<sup>242</sup> Դիցաբանական բառարան, Եր., 1985, էջ 64-65:

<sup>243</sup> А. Л о с е в, Посейдон, МНМ, Энциклопедия, т. 2, М. 1992, с. 323-324. Դիցաբանական բառարան, Եր., 1985, էջ 206-207:

<sup>244</sup> А. Т а х о - Г о д и, Пегас, МНМ, Энциклопедия, т. 2, М. 1992, с. 296.

<sup>245</sup> Նույնը:

<sup>246</sup> Մ. Ա բ ե դ յ ա ն, Երկեր, հ. Է, Եր., 1975, էջ 83:

<sup>247</sup> Նույնը:

<sup>248</sup> Նույնը:

<sup>249</sup> Х. К л и н г е р, նշվ. աշխ., էջ 111:

ներից է բխում մաս հետևյալը. երազին կարմիր ձի տեսնելը մոտալուտ մահվան նշան էր դիտվում:<sup>250</sup> Չին հանգուցյալին տեղափոխում էր հանդերձյալ աշխարհի և կենդանին ընկալվում էր հանդերձյալ աշխարհի ներկայացուցիչ: Եվ ըստ այդմ էլ ձին կապ ուներ խտոցնիկ աստվածությունների, մահվան և անդրաշխարհի տիրակալի հետ:<sup>251</sup> Կելտերը հավատում էին, որ հանգուցյալների հոգիները այն աշխարհ են գնում ձիերի վրա: Եվ ըստ այդմ էլ՝ ձին կապ ուներ խտոցնիկ աստվածությունների, մահվան և անդրաշխարհի տիրակալի հետ:<sup>252</sup> Չին հունական Հադեսի և դժոխքի բարեխնայան աստվածուհու՝ Էրեշկիզալի ատրիբուտներից էր:<sup>253</sup> Հունական մեկ այլ աստծու՝ Քարոնի ատրիբուտներից էր ոչ միայն մավակը, այլ մահ՝ ձին:<sup>254</sup> Եվ Քարոնը, փոխադրավարձ վերցնելով, Հերմես Պսիքոնոսի բերած մեռյալների հոգիները մակույկով անց էր կացնում ստորերկրյա գետով և հասցնում մինչև Հադեսի դարպասները:

Անդրաշխարհի հետ ձիու կապի մասին են վկայում հնդեվրոպական թաղման ծեսում տեղ գտած ձիերով մրցումները:<sup>255</sup> Ծեսը կատարվում էր Հունաստանում, Պրուսիայում,<sup>256</sup> Հռոմում:<sup>257</sup> Կովկասյան ազգությունների թաղումները նույնպես ավարտվում էին ձիերի մրցումներով: Օսերների և Հյուսիսային Կովկասի այլ ժողովուրդների մոտ կար ազգագրական գրականության մեջ «հանգուցյալին ձիու նվիրաբերում» բնորոշումը ստացած ծես, որը հաճախ ներկայացվում է որպես Կովկասին բնորոշ, սակայն

«Ռիզվեդայում» ձիուն նվիրված հիմնի խոսքերը համահունչ են օսետական տեքստում ձիուն ուղղված խոսքերին: Երկու դեպքում էլ ձիուն խնդրում են թռչել և հանգուցյալին բարեհաջող տեղափոխել մախնիների մոտ:<sup>258</sup>

Հայաստանի տարբեր բնակավայրերի գերեզմանոցներում պահպանված ուշ միջնադարյան ձիակերպ գերեզմանաքարերը անդրաշխարհի հետ ձիու կապի մեկ այլ դրսևորում են: Ձիակերպ տապանաքարեր հայտնի են մահվա ստանից:<sup>259</sup> Իսկ Դաղստանում և Հունաստանում,<sup>260</sup> ինչպես մահ Լիտվայում հնագույն տապանաքարերը պահպանված են ձիու զլխով:<sup>261</sup>

Ձիու պաշտամունքի և թաղման ծեսում գոհաբերության հեռավոր արձագանքները Հայաստանում պահպանվում էին մինչև XIX դար: Ասվածի վկայությունն է ազգագրական տարբեր շրջաններում ձիու՝ որպես հուղարկավորության կենդանու, հետ պահպանված արարողակարգերն են: Աղձնիքում անդրանիկ որդու հուղարկավորության ժամանակ մի ձի էին զարդարում, վրան դնում մահացածի հագուստը, ինչպես մահ զենքերը:<sup>262</sup> Նույն ծիսակարգը, քիչ այլ տարբերակով, կատարվում էր Վայոց Ձորում: Երիտասարդ ննջեցյալի ձին հակառակ կողմից թամբած, հանգուցյալի հագուստներով և զենքերով տանում էին գերեզմանոց:<sup>263</sup> Թաղման ծեսի հետ կապված մման սովորույթ հայտնի է մահ Ջավախքից: Այստեղ ձիերով մրցումներն անցկացվում էին գերեզմանոցի մոտ գտնվող «Գերեզմանի դուղ» կոչվող տարածքում, և երիտասարդների երկու խմբերի միջև համընդհանուր խրախճանիքի ժամանակ անցկացվում էին քարերով ծիսական կոիվներ, որը

<sup>250</sup> Х. К л и н г е р, Животные в античном и современном суевии. Киев, 1911, с. 107; Ю. Голендухин, Вопросы классификации и духовный мир древнего земледельца по петроглифам Саймалы-Таша, -В кн: Первобытное искусство, Новосибирск, 1971, с.172.

<sup>251</sup> L. M a l t e n, Das Pferd im Totenglauben.- Jahrbuch des Deutschen Archeologisschen Instituts, Bd. 29. В., 1914, p. 196-214.

<sup>252</sup> Նույնը:

<sup>253</sup> Х. К л и н г е р, նշվ. աշխ., էջ 109:

<sup>254</sup> Х а р о н, МНМ Энциклопедия, т. 2, 1992, с. 584.

<sup>255</sup> В. Т о п о р о в, Конные состязания на похоронах, Исследования в области балто-славянской духовной культуры. Погребальный обряд, М., 1990, с. 12-37.

<sup>256</sup> Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 6, 8, 10:

<sup>257</sup> В. М и л л е р, Русская масленица и западно-европейский карнавал, М., 1884, с. 16.

<sup>258</sup> Е. К у з ь м и н а, О семантике изображений на чертомльщской вазе. СА, 1976, N. 3, с. 72.

<sup>259</sup> А. Г о л а н, նշվ. աշխ., էջ 50:

<sup>260</sup> Նույնը:

<sup>261</sup> M. G i m b u t a s, Ancient symbolism in Lithuanian folk art. (Memoirs of the American Folklore Society, v. 49), Philadelphia, 1958, p.

<sup>262</sup> Ե. Լ ա լ ա յ ա ն, Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում, «Տեղեկագիր» ՀՄԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի, Եր., 1928, քիվ 9, էջ 116:

<sup>263</sup> Գ.Մ ր վ ա ն ձ ա յ ա ն, Մամանա, Կ.Պոլիս, 1876, էջ 114:



թաղման ծեսի ժամանակ ձիերով մրցումների արձագանք է:<sup>264</sup>

Բերված հնդեվրոպական հավատալիքների և ծեսերի համադրումը Բենիամինում փաստված ձիերի զոհաբերությունների հետ հանգեցնում է հետևյալին. Բենիամինի թիվ 8 դամբարանի կողքին երկու ձիերի զոհաբերությունը, դամբարանի կողասալի և ծածկասալի քարերի հետ երկանքաքարերի օգտագործումը, զոհաբերությունները քարաշար շրջանի մեջ առնելն ու դուրգի անիվով ծածկելը ծիսական համալիր գործողությունների մանրամասներ են, որոնց հիմքում ձիու պաշտամունքն է՝ միաձուլված երկվորյակների և արևի պաշտամունքի հետ, իսկ թաղման կողքին բացված լինելը՝ նաև անդրաշխարհի հետ ձիու կապի վկայություն: Այս դամբարանից ոչ հեռու, նույնպես սալարկղի մեջ կատարված մեկ այլ թիվ 23 թաղման կողքին բացված աջ կողքին պառկած ձիու ամբողջական կմախքը և նույն դամբարանի ծածկասալի վրա գտնված ձիթանոթազր նույնպես խորհրդանշում են արև-ձի պաշտամունքային կապը:

Շան և ձիու պաշտամունքի և ինչպես առանձին զոհաբերությունների, այնպես էլ թաղման ծեսում ունեցած դերի հնդեվրոպական հավատալիքների, հնագիտական նյութի և գրավոր աղբյուրների վկայությունների համադրումը ցույց է տալիս, որ թաղման ծեսում շունը և ձին միավորվում են միևնույն հատկանիշով. հանգուցյալին ուղեկցում և տեղափոխում են անդրաշխարհ:

Ձիու և շան զոհաբերության ծեսի մեկնության համար հետաքրքրական է հետևյալը. խեթական օրենքների տեքստերում ձիերի զոհաբերությունն արտացոլող ծեսերում օգտագործվում էր *sipont-զոհաբերություն կատարել, հեղում* բառը:<sup>265</sup> *Սպանդ-սպանել* հայերենում, ավեստ. *Spo (n)-շուն, spana-սպանություն, span-spako* հնդկերենում:<sup>266</sup> Հայերենում *սպանդ* նշանակում է *ա-*

*րեամբ պատարագումն, սպանումն զոհից*,<sup>267</sup> այսինքն՝ սպանել: Եվ, եթե կյանքի բնական ավարտը բնորոշվում է *մահ* բառով, ապա *սպանող* բռնի մահն է: *Սպանդ* բառը փոխառյալ է պարսկերենից՝ *sipand, aspand* ձևով, իսկ *asp* պահլավերենում նշանակում է *ձի*:<sup>268</sup> Այսինքն, պահլավերենում բառի ձի իմաստը պարսկերենում փոխարինվել է կենդանու զոհաբերվողի հատկանիշի առաջնայնությունից ելնելով:

*Սպանդ*-ը պարսկերենում նաև մի բույս է, որն աճում է գերեզմանոցներում (նաև՝ զոհաբերության տեղում) և օգտագործվում է հուղարկավորության ծեսում՝ հանգուցյալին ծածկելու և տերևները կրակի վրա այրելու համար:<sup>269</sup> Բույսը անունը հավանաբար ստացել է զոհաբերության տեղում աճելու պատճառով, այնուհետև նրան հատկացվել է զոհաբերությանը (հետագայում՝ նաև թաղմանը) մասնակցելու դեր: Ինչպես և խեթական ծիսակարգում, այստեղ *sipand, aspand* արմատներում միավորվել են կենդանու (ձիու) և զոհաբերության իմաստները: Գր. Ղափանցյանը սպանդ (զոհ, զոհաբերություն) բառը կապում է խեթական *sipant* -ի հետ, որը նշանակում է աստվածներին զինի, կաթ և այլնի ձոնում:<sup>270</sup>

Միջնադարյան հայ բժշկության մեջ սպանդ բույսն օգտագործվում էր ներվային և հոգեկան հիվանդությունների բուժման նպատակով:<sup>271</sup> Իրանահայերի մոտ երեխաներին հանգստացնելու միջոցներից մեկն էլ սպանդ բույսի օգտագործումն էր, և ենթադրվում է դրա կիրառումը թմրեցնող կամ հալուցիմացիոն նպատակներով:

Այսպիսով, ձի և շուն բառերը իրենց նախնական իմաստում միավորվել են, քանի որ առաջնային է դիտվել զոհաբերվող լինելը: Ունենալով նույն արմատը, որ նշանակում է սպանել, զոհաբերել, հեղել, միաժամանակ իրենց մեջ

<sup>264</sup> Э. Петросян, *նշվ. աշխ.*, էջ 53:

<sup>265</sup> Т. В. Гамкрелидзе, Вяч. Иванов, *նշվ. աշխ.*, էջ 945:

<sup>266</sup> Հ. Ա ճ ա ն յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Եր., 1977, էջ 534:

<sup>267</sup> ՆԲՀԼ, 1981, էջ 754:

<sup>268</sup> Հ. Ա ճ ա ն յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Եր., 1979, էջ 172:

<sup>269</sup> Նույնը:

<sup>270</sup> Գր. Ղ ա փ ա ն ց յ ա ն, Պատմալեզվական աշխատություններ, Եր., 1956, էջ 386:

<sup>271</sup> Амирдовлат Амасиаци, Ненужное для неучей. (перевод с армянского языка и комментарий кандидата медицинских наук С. Варданян) М., 1990, с. 534.

կրում են նաև զոհաբերվող կենդանիների անունները՝ շուն և ձի: Հայերենում էջ -ը բնիկ հայ բառ է, որ ծագում է հնիւ. ekwo-ձի բառից:<sup>272</sup> Իսկ հայերենում kw-ը դառնալը ընդունված փոփոխություն է, այնպես, ինչպես ունենք հնախոսական kwon, հայերեն՝ շուն ձևը, իսկ e-է դարձել է հաջորդ 2-ի պատճառով: Երկու կենդանիների անվան նույն արմատից ծագումը շեշտում է նաև պաշտամունքային կապը:

Բանավոր ավանդության մեջ Շիրակում գործածական է *իշու սպա* արտահայտությունը, որը նույնիմաստ է *շան լակոտ*-ին (պարսավանք, որ երբեմն նաև փաղաքշական երանգ ունի և երեխային դիմելու ձև է): Մըպա այստեղ նշանակում է ձագ, քուռակ: Մակայն տեսանք, որ հնդեվրոպական լեզուներում span, spana-սպա նշանակում է և շուն, և սպանել: Այսինքն արտահայտության մեջ էջ (որ նույնն է՝ ձի և սըպա, որ նույնն է՝ շուն) հանդես են գալիս միասին և հավանաբար լեզվի զարգացման նախնական փուլում ընկալվել են որպես ձի և շուն՝ ելնելով նրանց նախնական միասնական իմաստից (զոհաբերել, սպանել, հեղել): Բերվածին ավելանում է նաև պատմական մեկ այլ վկայություն: Խորենացին, ի թիվս այլ նախարարությունների, հիշատակում է նաև Սպանդունի տոհմը և բացառված չէ, որ Սպանդունին առաջացած լինե՞ր սպանդ-ից, սպանդանոցի կառավարիչ լինելու իմաստից: Ն. Ադունցը սակայն հնարավոր է համարում, որ սպանդ-ը Սպանդարատի կրճատ ձևից է, որ ընդունված անուն էր Կամսարականների մոտ, և, որ Սպանդունին այդ իշխանների շառավիղն է:<sup>273</sup> Գուցե Կամսարականների կրտսեր ճյուղի՝ Սպանդունիների անունը սերվում է սպանդ-ից՝ շեշտելով նաև նրանց նախնիների՝ պարթևների կապը ծիսական զոհաբերության հետ:

Թիվ 40 դամբարանում, որն ուղեկցվել է շների և ձիու զոհաբերությամբ, ի թիվս բազմաբնույթ այլ նյութերի, գտնվեցին նաև զանգակներ և բոժոժներ, որոնք առանձնակի հետա-

քրքիր են՝ կապված քննարկվող ծիսակարգի հետ: Անկասկած ծիսակարգի հետ կապ ունեն նաև դամբարանից հայտնաբերված բոժոժները, որոնք, ինչպես և զանգակները, պահպանակի դեր են կատարել: Հայտնի է, որ հայոց լեզվում հաճախ նույն իմաստն արտահայտվում է հոմանիշ բառերով և լեզվի զարգացման ընթացքում շատ բառեր, նոր իմաստ ստանալով, կորցնում են նախնականի հետ կապը: Հայերենում *զանգակ* և *բոժոժ* բառերը նախապես նշանակել են «*իբրև բժժանք, կախարդանք, հոուքք*»:<sup>274</sup> Ելնելով բառերի նախնական իմաստից՝ պիտի կարծել, որ հավանաբար դրանցով էլ պայմանավորված է թաղման արարողակարգում նրանց ծիսական դերը:

Թաղման ծեսում շան և ձիու զոհաբերության բովանդակությունն ամբողջական և ավարտուն է դարձնում ծիսատարածքը եզերող շրջանը (թիվ 8, 40 դամբ.):

Չոհաբերված ձիերով և շներով թաղումների ծիսական իմաստն ամփոփվում է ծիսակարգը ներառող շրջանի մեջ: Իսկ այլատարր բովանդակությամբ շրջանն ամենից առաջ արտահայտում է ամբողջություն, անսահմանություն, ավարտվածություն և կատարելություն: Շրջանը վերացական խորհրդանիշերից մեկն էր Եգիպտոսում և Շումերում և համադրվում էր արևին: Եվ դամբարանի շրջանաձև լինելն ինքնըստինքյան արևի պատկեր կարելի է համարել:<sup>275</sup> Սակայն կա նաև այլ տեսակետ, ըստ որի, ավելի շատ հիմքեր կան շրջանը (մինչև բրոնզի դարը նաև սկավառակը) դիտել երկնքի խորհրդանիշ:<sup>276</sup> Լեռնային երկրում, ինչպիսին նաև Հայկական լեռնաշխարհն է, երկինք մայելիս այն ընկալվում է որպես շրջան, որը չէր կարող վրիպել հների աչքից և չարտացոլվել հավատալիքներում և պաշտամունքում: Հնդեվրոպացիների համար համար երկինքն աստվածության մարմնավորում էր: Այն, որ երկնակամարը պտտվում է Բևեռային աստղի շուրջը,

<sup>272</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, 1979, էջ 117:

<sup>273</sup> Ն. Ա դ ո ն ց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 339:

<sup>274</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, 1971, էջ 448:

<sup>275</sup> J. D e c h e l e t, Archeologie celtique ou prehistorique 2, Paris, 1924, p. 414-415.

<sup>276</sup> A. Г о л а н, նշվ. աշխ., էջ 18:

նույնպես չէր կարող վրիպել հների աչքից:<sup>277</sup> Թերևս այդ պատկերացումներից և հավատալիքներից է սերում Հնդկաստանում օղակը (շրջանը) մատի շուրջը պտտելու ծեսը, որը խորհրդանշել է երկնականարի պտույտը:<sup>278</sup> Հայաստանում նման ծեսի վկայությունը կամ հեռավոր արձագանքը կարող է լինել բանալին մատի շուրջը պտտելու սովորույթը, որ պահպանվել է ցայսօր: Իսկ մատը ֆալլոսի դեր ունի և հին պաշտամունքներում աստվածուհու ամուսնու ատրիբուտ է:<sup>279</sup>

Եթե երկինքը դիտվել է շրջան, ապա երկնքի աստվածությունը, ով կյանքի և մահվան տիրակալն էր, և նրա կամքով էին մարդիկ ծնվում և մեռնում, շատ կարևոր դեր է ունեցել թաղման ծիսակարգում:<sup>280</sup> Քանի որ շրջանն աստվածության երկրպագության խորհրդանիշ էր, ծիսական արարողության տարածքն առնչվում էր շրջանի մեջ: Դրուիդների մոտ տաճարը համարվում էր քարերով եզրագծված շրջանը: Արևելյան սլավոնների համար հեթանոսական սրբավայրերը շրջանաձև, բաց հրապարակներն էին: Քարաշար օղակով եզերված թաղումները՝ դոլմեններն ու կուրգանները տարածված են Արևմտյան Եվրոպայից մինչև Հնդկաստան, Կովկասից մինչև Սիբիր: Գերեզմանը շրջանի մեջ առնելու ծեսը «Իլիականում», Պատրոկլեսի թաղման արարողության ավարտին, Հոմերոսը նկարագրում է այսպես. «Նախ մարեցին սև գինով նրանք խարույկն ամբողջապես, /Խարույկի շուրջը գծեցին բոլորաձև մի գերեզման»:<sup>281</sup>

Բենիամինի դամբարանադաշտում, շրջանը որպես երկրաչափական խորհրդանիշ, ներառված է ծիսակարգի մեջ, որպես ծիսական գործողության կատարման տարածքը սահմանազատող կամ տարանջատող: Իսկ շրջանը, որպես երկրաչափական ձև չունենալով սկիզբ և վերջ, անվերջանալի է: Շրջանի հենց այս ներքին բովանդակությամբ էլ պայմանավորված է

թաղման ու գոհաբերության սահմանազատումը ներսի և դրսի աշխարհների միջև: Ներքինը՝ ծիսապաշտամունքայինը, խորհրդանշականը, արտաքինը՝ ծեսից դուրս աշխարհը:

### Աջի և ձախի հակադրությունը թաղման

ծեսում: Ինչպես տեսանք նյութի քննության ժամանակ, Շիրակի անտիկ դամբարանադաշտերում ականջօղերը կրել են միայն աջ ականջին, իսկ մատանիները՝ ձախ ձեռքին: Բացառություն են Վարդբաղի թիվ 10 դամբարանը, որտեղ գտնվեց զույգ ականջօղը և Բենիամինի թիվ 183 դամբարանը, որտեղ բացի զանգի աջ կողմում գտնված մեկ ականջօղից, գտնվեց նաև մեկ այլ՝ զույգ ականջօղ: Իսկ Բենիամինի թիվ 141 դամբարանում մատանին գտնվեց ուսազլի մոտ: Շիրակի անտիկ թաղման ծեսում ընդունված ձևից սա միակ շեղումն է: Մատանին, որ շատ մեծ է աղջնակի համար (6-9 տարեկան), հավանաբար հարազատների վերջին նվերն է: Իսկ մարդուն նվեր արվում էր ոչ միայն կենդանության օրոք, այլ նաև թաղման արարողակարգի ժամանակ:<sup>282</sup> Եվ դրա վկայությունն է հանգուցյալի գերեզմանին ծաղիկ և պսակ դնելը հնագույն ծեսի մերօրյա դրսևորումը:

Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձաններում ականջօղը միայն աջ ականջին և մատանին միայն ձախ ձեռքին կրելու ծես չի հանդիպում: Նյութի քննության ժամանակ տեսանք, որ ականջօղը միայն աջ ականջին կրելը, ըստ նյութն ուսումնասիրող հնագետի, պայմանավորված է ականջօղի ձևով: Շիրակի գտածոներով ապացուցվում է հակառակը՝ կրելու ձևը պայմանավորված է ծեսով: Ինչպես կտեսնենք ստորև, ծեսի բովանդակությունը պայմանավորված է աջի և ձախի հակադրությամբ:

Աջի և ձախի հակադրությունը փաստված է նաև Շիրակի հիմնահողային և սալարկղային այն թաղումներում, որտեղ կմախքն ունի աջ (տղամարդիկ) կամ ձախ (կանայք) կողքին կծկված դիրք: Բենիամինի թիվ 121 (մ. թ. 1-2-րդ

<sup>277</sup> Նույնը:

<sup>278</sup> G. W i l k e. Kulturbeziehungen zwischen Indien, Orient und Europa. Lpz. 1923, p.13

<sup>279</sup> Ա. Դ օ լ ա ղ, նշվ. աշխ., էջ 10.

<sup>280</sup> Նույն տեղում, էջ 57-64:

<sup>281</sup> Հ ն մ ե ր ո ս, նշվ. աշխ., էջ 423:

<sup>282</sup> Э. С о л о м о н и к. Из истории религиозной жизни в северопонтийских городах позднеантичного времени ВДИ, 1973, N. 1, с. 60.

դարեր) և 195 (մ. թ.1-ին դար) դամբարաններում, որտեղ գույգ թաղումներ են, պահպանված է տղամարդն՝ աջ, կինը՝ ձախ դիրքը: Այս երևույթը՝ կմախքի դիրքը կախված սեռից, հանդիպում է բազմաթիվ հուշարձաններում և ընդունված է որպես Կովկասի համար խիստ բնորոշ:<sup>283</sup> Բենիամինի թիվ 23 դամբարանի մոտ գոհաբերված ձիու կմախքը բացվեց աջ կողքին պառկած դիրքով: Աջի և ձախի հակադրության սկզբունքից ելնելով՝ գոհաբերված կենդանու դիրքը կարող էր կապված լինել նրանից, թե ում ուղղված գոհաբերությունը: Ինչպես վերը տեսանք, հնդեվրոպական դիցաբանության մեջ ձիու պաշտամունքը կապվում է և՛ արևի, և՛ անդրաշխարհի հետ: Այսինքն՝ թիվ 23 թաղման կողքին բացված ձին գոհաբերություն է արևին:

Աջի և ձախի հակադրությունը փաստված է նաև Հայաստանի բրոնզիդարյան թաղման ծեսում: Հայտնի է, որ տղամարդկանց թաղում էին աջ, իսկ կանանց՝ ձախ կողքին պառկած դիրքով: Աջի և ձախի հակադրությունը նկատվում է նաև թաղման ծեսի ժամանակ իրականացված գոհաբերություններում. Լոռի բերդի թիվ 77 դամբարանում գոհաբերված կովի ուղիղ մեջտեղից կիսված իրանի ձախ մասը թողնվել է խցում, իսկ աջը մատուցվել է որպես գոհաբերություն:<sup>284</sup>

Հայաստանի համաժամանակյա անտիկ դամբարանադաշտերից ևս հայտնի են բազմաթիվ օրինակներ, երբ թաղումը կատարվել է աջ կամ ձախ կողքին կծկված դիրքով, սակայն հակադրության այս սկզբունքը չի փաստվում՝ մարդաբանական նյութը ուսումնասիրված չլինելու պատճառով: Այսպես են Արտաշատի թիվ 78 (հիմնահողային, աջ կողքին կծկված դիրքով) թաղումը, ինչպես նաև թիվ 82 դամբարանը, որտեղ մատանիները գտնվել են ձախ ձեռքին, սակայն անհայտ է հանգուցյալները կին են եղել, թե՛ տղամարդ:<sup>285</sup>

<sup>283</sup> Е. К р у п н о в, Древняя история Северного Кавказа, М., 1960, с. 244: Н. Кигурадзе, նշվ. աշխ., էջ 43:

<sup>284</sup> Մ. Դ և ե ջ յ ա ն, 2006, էջ 106:

<sup>285</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1981, էջ 28:

Մարմնի տարբեր մասերի, հատկապես առավել ակտիվ ձեռքերի և ոտքերի, աջ կողմի ավելի ակտիվ և ուժեղ, ձախի՝ ավելի պասսիվ և թույլ, գուտ ֆիզիոլոգիական հնարավորությունները հիմք են հանդիսացել տղամարդու (ուժեղ), կնոջ (թույլ) ծիսականորեն աջի (տղամարդ) և ձախի (կին) հակադրմանը:<sup>286</sup> Եվ այս հակադրությունն արտացոլված է տարբեր ժողովուրդների դիցաբանական պատկերացումներում, այս հիմքի վրա՝ նաև գոհաբերությունների տարբերությամբ ծեսերում, թաղման, հարսանեկան և այլ արարողակարգերում: Այսպես օրինակ, խեթական ծիսակարգում հակադրությունն արտահայտվում է զոհ մատուցվող աստվածությունների տարբերակիչ հատկանիշներում:<sup>287</sup> Եվ ծիսակարգում միշտ պահպանվում է աջի և ձախի հակադրությունն ու նաև հաջորդականությունը: Եվ աջի, և ձախի հատկանիշները ծիսակարգի ժամանակ հարաբերվում են միմյանց որպես բարենպաստ և անհաջող:<sup>288</sup> Անասունի աջ կոնքոսկրը համարվել է հաջողության, պտղաբերության խորհրդանիշ: Այն նվիրվել է մայր-աստվածուհուն և հավերժություն է խորհրդանշել:<sup>289</sup> Աջի և ձախի հակադրության դիցաբանական ընկալումներից ելնելով՝ կարող ենք ասել, որ Բենիամինի թիվ 234 դամբարանում գտնված ձիու ազդոսկրը ևս գոհաբերություն է մայր-աստվածուհուն:

Հակադրության նույն սկզբունքով էլ հացի գոհաբերության խեթական ծիսակարգում թագավորին տրվում էր մանգաղ, թագուհուն՝ աղորիք, որից հետևում էր, որ հնձելը տղամարդու գործ է, իսկ աղալը՝ կնոջ:<sup>290</sup> Ինչպես տարբեր ծիսակարգերի արարողությունների ընթացակարգում, այնպես էլ պաշտամունքային շենքերի ճարտարապետական լուծումներում խեթերի

<sup>286</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 785:

<sup>287</sup> В. А р д з и н б а, նշվ. աշխ., էջ 133:

<sup>288</sup> K a m m e n h u b e r, Die Hethitischen. Vorstellungen von Seele und Leibesinnerem, korb und Person, 2 teil „Zeitach Zift fur Assyriologie und Vorderasiatische Archeologie,, N.F. Bd. 23/ 57/ 1965. s. 19.

<sup>289</sup> В. А р д з и н б а, նշվ. աշխ., էջ 133,135,137:

<sup>290</sup> Н. Н о f f e r, Alimenta enta Hethaeozum Food Productionia Hititte Asia Minor. « American Oriental Series » Nev Haven, 1974, p. 29.

մոտ պահպանվում էր աջ-ձախ, տարբերակիչ և հակադիր հատկանիշների կապը: Դրա վկայությունն է տաճարում Արևի աստծուն ձախ սրբարանի և Ամպրոպի աստծուն աջ սրբարանի հատկացումը:<sup>291</sup>

Աջի և ձախի հակադրությունը բազմազան դրսևորումներ ունի նաև հունական ընկալումներում: Հակադրության նույն սկզբունքով հունրոսյան Հունաստանում աջը կամ դրան համապատասխան իրն ավելի կարևոր և պատվավոր էր համարվում. աջը՝ միզակ և ձախը՝ վահան կրող:<sup>292</sup> Հավատալիքն արտացոլվում էր նաև ճարտարապետական կառույցների մանրամասներում: Հունական տաճարները կառուցվում էին կենտ թվով աստիճաններով, որպեսզի հավատացյալները տաճար մտնելիս առաջին և վերջին քայլերը սկսեին և ավարտեին աջ ոտքով:<sup>293</sup> Նույն սկզբունքով հույների մոտ դիտվում էին արականը և իգականը: Պյութագորացիների մոտ այն վերաճում էր փիլիսոփայական հիմնական կատեգորիայի՝ աշխարհը նկարագրելով արականի և իգականի հակադրության սկզբունքով:<sup>294</sup>

Աջի և ձախի հակադրության սկզբունքով էին հին հնդկական դիցաբանական ֆրատրիաները հակադրվում իրար. կաուրավները՝ ձախ, այսինքն՝ ներքին, լուսնային, բացասական, պանդավները՝ աջ, համապատասխանաբար՝ վերին, արևային, դրական:<sup>295</sup> Աջի և ձախի հակադրությունը վերաճում է նաև վերինի և ներքինի հակադրության, որն իր արտացոլումն է գտել տարբեր ժողովուրդների հավատալիքներում և դրանից բխող տարբեր ծիսակարգերում: Եվ տարբեր աստվածությունների վերին կամ ներքին աշխարհներին պատկանելը ընկալվում էր այդ հակադրությամբ:

<sup>291</sup> K. B i t t e l, The Excavations of 1967 and 1968 « Archeology.» vol. 22, 1965, p. 22.

<sup>292</sup> J. G u i l l o n d r e, La droit et la gauche dans les poèmes homeriques en concordance avec la doctrine phthagoricienne et avec la tradition celtique. Paris, 1944. p. 6.

<sup>293</sup> Դիցաբանական բառարան, Եր., 1985, էջ 229:

<sup>294</sup> G. L o y d, Right and left in Greek philosophy „ The Journal of Hellenic Studies., vol LXXXII, 1962, p. 56-66.

<sup>295</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 483:

Հնդեվրոպական ակունքներից եկող հավատալիքներն ու ծեսերը տեղ են գտել նաև հայկական դիցաբանական ընկալումներում, տարալուծվել են բանագիտական նյութի մեջ, արտացոլվել ազգագրական տարբեր ծեսերում և արարողակարգերում: Աջի և ձախի հակադրությունը հաստատող վկայություններ կան Խորենացու, Ագաթանգեղոսի և Շիրակացու մոտ: Հայկի և Բելի մենամարտի նկարագրության մեջ Խորենացին շեշտում է Հայկի՝ «Եւ յաջմէ ջուրց հոսանաց ի բարձրատանդակում կուռ կարլ ի տեղուջ...», իսկ Բելը՝ «հեզ եւ հանդարտ ամբոխս մեծաւ ի ձախմէ ջուրցն ի վերայ ոստոյ միոյ»:<sup>296</sup> Աջն ու ձախն այստեղ հակադրվում են որպես բարի և չար: Աջ կողմը ավելի պատվավոր և կարևոր էր համարվում հայերի մոտ «...յաջակողմն գահուն մտեալ՝ խոստացելոց բարեացն հասնել...», - վկայում է Ագաթանգեղոսը:<sup>297</sup> Աշխարհի ճանաչողության, բարու և չարի ընկալումը դիտվում էր աջի և ձախի հակադրությամբ՝ «... մինչ ոչ թողին յերիտասարդաց մինչ յայն, որ զաջ և զձախ ոչ գիտեր...»:<sup>298</sup> Արական և իգական սկզբունքով են հակադրվել արեգակն ու լուսինը հայոց մեջ: «Քանի որ Արեգակին վիճակված էր ցերեկը, նրա համապատասխան նշանը արական էր», - գրում է Շիրակացին, ավելացնելով՝ «...և ծագումն արևելքից»: Նույնի վկայությունն է նաև Արճեշի 14-րդ դարի Ավետարանի պատկերազարդման մեջ, Խաչելության տեսարանում Քրիստոսից աջ՝ օղակի մեջ, թիկունքին ճառագայթներով կանացի պատկերը, որի գլխավերևում, օղակից դուրս դրված է՝ «արեգակն» և ձախ կողմում լուսնի մահիկի մեջ առնված տղամարդու պատկերը, որից ձախ գրված է. «լուսին»:<sup>299</sup>

Լուսնին բաժին է ընկել զիշերը, և ըստ այդմ էլ համաստեղության նշանը իգական է, ծագումը՝ արևմուտքից:<sup>300</sup> Արեգակ-լուսին հակադրությունը ոչ միայն արականի և իգականի հակադրություն է բովանդակում իր մեջ, այլև՝

<sup>296</sup> Մ. Խ ո ռ ե ն ա գ ի, Ժա:

<sup>297</sup> Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, 96:

<sup>298</sup> Նույն տեղում, 34:

<sup>299</sup> Հայկական մանրանկարչություն, Վասպուրական, նշվ. աշխ., նկ. 3:

<sup>300</sup> Ան. Շ ի ր ա կ ա գ ի, Եր., 1979, էջ 117:

արևելքի և արևմուտքի, ցերեկվա ու գիշերվա, լույսի և մութի: Արեգակ-լուսին զույգը ժողովրդական հեքիաթներում ներկայանում է Արեգակ՝ եղբայր, լուսին՝ քույր ձևով՝ խորհրդանշելով տղա-աղջիկ հակադրությունը: Հնդեվրոպական մի քանի հին սովորույթներում լուսինը և արևը հանդես են գալիս որպես ամուսնության կապերով միացած զույգ էակներ (լուսինը՝ ամուսին, արևը՝ կինը) կամ արյունակից հարազատներ (երկվորյակներ), որը հնարավոր է երկնային այս լուսատուների մասին ընդհանուր հնդեվրոպական պատկերացումների արտացոլումն է:<sup>301</sup>

Բերվածին ավելանում են նաև ազգագրական տարբեր ծեսերում պահպանված աջի ու ձախի խորհրդանշական իմաստներով արարողակարգերը: Հայկական ժողովրդական հավատալիքների հետ կապված գործողություններում պահպանվել են բազմաթիվ սովորույթներ, որոնք հիմնականում չարխափան նշանակություն ունեն: Աջի, որպես բարու, հաջողության, չարը խափանելու գործության իմաստակիրն է հարսանեկան ծիսակարգի մի քանի պարտադիր տարրերի իրականացումը. հարսի կոշիկը սկզբում աջ ոտքին հագցնելը, ձախ կոշիկի գողանալը, լավաշը նորապսակների աջ ուսին գցելը և այլն: Հայոց հարսանեկան մեկ այլ ծեսի ժամանակ, հարսը լվանում էր ընտանիքի բոլոր անդամների ոտքերը՝ անպայման սկսելով աջ ոտքից:<sup>302</sup>

Աջի և ձախի հակադրության բացատրության բանալիներից մեկը լեզուն է: Հնդեվրոպական լեզուներում *ձախ*-ը տարբերակված է, և դա նույնպես աջի և ձախի հակադրությանը է պայմանավորված: *Աջ* իմաստի բուն արմատը նույնն է, *t'eks [h]*, սակայն *ձախ*-ի իմաստը վերականգնել հնարավոր չէ:<sup>303</sup> Հայերենում *ձախ* ձևը նույնպես տարբերակված է և՛ *ձախ*-ի մեկնությունն անձանոթ է:<sup>304</sup> Սակայն հայերենում

ունենք ձախ իմաստն արտահայտող մեկ այլ բառ՝ *ահեակ*, որը փոխառություն է պահլավերենից և նշանակում է *չար, սատանայի զավակ, ձախորդ, անհաջող*:<sup>305</sup> Ըստ Գ. Ջահուկյանի՝ *ահեակ*-ը իրանական ծագում ունի, հայկական չէ նաև *ձախ* բառը, իսկ *աջ*-ը բնիկ հնդեվրոպական է:<sup>306</sup> *Ահեկան* և *ահեակ* բառերը գրաբարում ձախի ու ամենայն վնասակարի իմաստ են արտահայտում: Ըստ Հայկազյան բառարանի՝ այդ բառերը նշանակում են «*չար, անարգ, վատթար, վնաս, մոլորեալ*»:<sup>307</sup> Ունենք նաև *ահկի* ամիս (մայիս), որի մասին Վանական Վարդապետն ասում է. «...*ի յառնել գետոց և թուլանալ ձեան, ահ է ասեն մարդոյ ամենուրեք*»:<sup>308</sup> Ըստ Գ. Մարտոյանի *Ահկի* մեջ հասկացվել է նաև ինչ-որ չար սկիզբ կրող էություն, որի մասին ոչինչ չի ավանդվել, և որը սակայն իր հետքը թողել է ամսանվան մեջ:<sup>309</sup>

Մատանին ունենալով օղակի (շրջանի) ձև, բնականաբար մախ արտահայտել է երկրաչափական այդ ձևի խորհուրդը: Իսկ շրջանն, ինչպես տեսանք, խորհրդանշում է ամբողջություն, անսահմանություն, ավարտվածություն: Լինելով դիցաբանական խորհրդանշաններից ամենատարածվածը, շրջանն արտահայտում է բարձրագույն կատարելության գաղափարը: Շրջանը (օղակը) ստեղծում է ներփակ տարածություն՝ առանց սկզբի և առանց վերջի: Այն չարի ճանապարհը փակելու, արգելելու կարողություն և ներսի ու դրսի աշխարհները տարանջատելու, սահմանազատելու ուժ ունի:

Ըստ Ա. Գոլանի՝ օղակի (մատանու) և մատի համադրումը պատահական չէ, և քանի որ հին պաշտամունքներում երկինքը դիտվել է շրջան և համարվել է աստվածուհու խորհրդանշան, ուրեմն մատանին էլ, որպես օղակ կամ շրջան, պիտի դիտվեր իգականի խորհրդանշան, իսկ մատը որպես ֆալոսի համարժեք, աստվա-

<sup>301</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 685:  
<sup>302</sup> Ստ. Լ ի ս ի ց յ ա ն, 1969, էջ 198:  
<sup>303</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 784:  
<sup>304</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, 1971, էջ 142:

<sup>305</sup> Նույն տեղում, էջ 113:  
<sup>306</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 747:  
<sup>307</sup> Ն Բ Հ Լ, էջ 30-31:  
<sup>308</sup> Գ. Մ ա ռ տ ո յ ա ն. Հայոց անշարժ տոմարի մի շարք ամիսների վերականգնման փորձ Սիերի դռան դիցաբանական, Հին Հայաստանի մշակույթը XIII հանրապետական գիտական մատաշրջանի նյութեր, Եր., 2005, էջ 162:  
<sup>309</sup> Նույնը:

ծուխու ամուսնու ատրիբուտ էր, որտեղից էլ ծագել է ամուսնության ժամանակ մատին մատանի (օղակ) դնելը՝ մատանին և մատը դիտելով ֆալոսի և կոնիսի այլաբանություն:<sup>310</sup> Եթե շրջանը աստվածուհու խորհրդանիշ է, ուրեմն նաև՝ մոզական ուժի կրող է և չարխափան:

Հայոց ազգագրական նյութերում պահպանված սովորույթներում ևս արտացոլված են հայոց հնագույն հավատալիքները, որոնցում յուրատեսակ չարխափան դեր ունի շրջանը կամ օղակը: Օղակով (շրջան գծելով) էին փակում ծննդկանին սպառնացող չարքերի ճանապարհը: Հատակին շամփուրով գծված շրջանագիծն օղակվում էր կրկնակի պարանով կամ շրջանով, որպեսզի չարը նրա վրայով անցնել չկարողանար:<sup>311</sup> Շրջանի (օղակի) փակելու, արգելելու կարողությունը և աջի ու ձախի հակադրությունն են ընկած մատանին ձախ ձեռքին կրելու ծիսական իմաստի հիմքում:

**Ծեսի վերաձևավորում:** Շիրակի անտիկ դամբարանադաշտերում մի քանի թաղումներում արդուզարդի առարկաները գտնվեցին մնջեցյալի գանգի մեջ և բերանին: Այսպես, Բենիամինի թիվ 209 դամբարանում երկու ապարանջան գտնվեց գանգի մեջ, իսկ թիվ 213 դամբարանում գանգի մեջ գտնվեց բրոնզից ձվածիք իր: Վարդաթի թիվ 17 դամբարանում մատանին գտնվեց գանգի տակ, այսինքն՝ նախապես եղել է բերանում: Թիվ 183 դամբարանում, ի թիվս այլ ապարանջանների, որ գտնվեցին դաստակներին, մի ապարանջան գտնվեց բերանին (տրամագիծը 6, 5սմ է և հստակ է, որ չէր կարող տեղավորվել բերանում): Շիրակավանի թիվ 4 դամբարանում գանգի մեջ գտնվել է ոսկու բարակ թիթեղ, որ դրված է եղել հանգուցյալի բերանի մեջ:<sup>312</sup> Երևույթը կապվում է անտիկ ժամանակաշրջանում տարածված ծիսակարգի հետ, երբ հանգուցյալի բերանում դրամ (օրո) էին դնում՝ որպես հոգիները ստորգետնյա թագավորություն ուղեկցող Քարոնին վարձ: Հունական ծագում ունեցող այս ծեսը տարածված է եղել նաև Հա-

յաստանում: Այն փաստված է Կարմիր բլուրի պեղումների ժամանակ, երբ թիվ 1 դամբարանում հանգուցյալի բերանում գտնվել է արծաթյա դրահնա:<sup>313</sup> Դրամներ գտնվել են նաև Արտաշատում:<sup>314</sup> Ծիսակարգն առավել դիտարկելի է Գառնիի նյութերով, որտեղ արծաթյա վեց դրամ է գտնվել:<sup>315</sup> Շիրակում ծիսակարգը փաստված է Բենիամինում՝ դամբարանդաշտի ավերված հատվածից գտնված Հրահատ III-ի արծաթյա դրամով (մ. թ. ա. 70-57 թթ.) և Վարդաթում՝ սարկոֆագից գտնված Տրայանոսի դրամով (մ. թ. 103-111թթ.): Արտաշատի դամբարանադաշտում գտնված դրամներից ամենահինը մույնպես Հրահատ III-ի դրամն է, ամենանուշը՝ Շապուհ 1-ի (240-271թթ.), որը խոսում է նաև ծեսի գոյատևման ժամանակահատվածի մասին:<sup>316</sup>

Դամբարաններից գտնված դրամները ոչ միայն փաստում են ծեսը, այլ նաև վկայում տնտեսության զարգացման աստիճանը բնութագրող դրամաշրջանառության մասին: Հետևաբար, տնտեսության անկման արդյունքում դրամաշրջանառության պակասն էլ թելադրել է ծիսակարգի վերաձևավորում կատարել՝ դրամի փոխարեն Քարոնին զարդեր մատուցելով: Շիրակավանի գտածոն Ֆ. Տեր-Մարտիրոսովը իրավացիորեն դիտում է ոչ միայն դրամաշրջանառության պակասի հետևանք, այլև հին ծեսերի պահպանման լավագույն օրինակ:<sup>317</sup> Ծեսի այսօրինակ վերաձևավորումներն անշուշտ առաջին հերթին մ.թ. առաջին դարերի Հայաստանի տնտեսական ծանր վիճակի վկայությունն են: Քարոնին վարձ տալու ծեսի արձագանքները պահպանվում էին հայոց սովորույթներում: Այսպես, Նոր Բայազետում մնջեցյալի համար գերեզման փորելուց և վերջացնելուց հետո մի քանի մետաղադրամ էին նետում գերեզ-

<sup>310</sup> Ա. Գոլան, նշվ. աշխ. էջ 18:

<sup>311</sup> Մտ. Լիսիցյան, 1969, էջ 202:

<sup>312</sup> Փ. Թեր-Մարտիրոսով, 1997, շ. 73:

<sup>313</sup> А. В а й м а н, Г. Т и р а ц я н, Кармирблурский некрополь эллинистического времени. ВОН АН, 1974, N. 8, с. 63-64.

<sup>314</sup> Ժ. Խաչատրյան, 1981, էջ 9:

<sup>315</sup> Ж. Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 131:

<sup>316</sup> Ժ. Խաչատրյան, 1981, էջ 92:

<sup>317</sup> Փ. Թեր-Մարտիրոսով, 1997, շ. 73:

մանի հատակին:<sup>318</sup> Իսկ եթե գերեզման փորելիս թաղում էր բացվում, մի քանի դրամ էին նետում գերեզմանի մեջ՝ որպես նախկին հանգուցյալի տան համար վարձ:<sup>319</sup> Ծեսի վերածնալովորման ազգագրական վկայություն է թաղման պատարագից հետո նշխարքը խնկի հետ հանգուցյալի բերանին դնելը,<sup>320</sup> որ հայոց թաղման արարողություններում պահպանվում էր ընդհուպ մինչև անցյալ դարի 20-30-ական թվականները:

Հանգուցյալի հետ դրված յուրաքանչյուր իր անշուշտ ունեցել է որոշակի դեր: Եթե կենցաղային, առօրյա իրերը դամբարանում դրվել են հանդերձյալ կյանքում օգտագործելու համար, կան նաև որոշ իրեր, որոնք ակնհայտ ծիսական իմաստ ունեն:

**Հուշիք-հմայիլներ:** Աչքը առասպելական խորհրդանիշ է, կապված է մոգական ուժի հետ, որի շնորհիվ աստվածը կամ առասպելական անձն ընդունակ էր, անտեսանելի մնալով, տեսնել (հունական Հադեսը): Ըստ աստվածներ օժտված էին սարսափեցնող հայացքով, որին սովորական մահկանացուները չէին դիմանում:<sup>321</sup> Շիրակի դամբարանային նյութերում աչքի ուլունքների վրա աչքերը գույգ են: Մահվան տիրակալ Յամայի ուղեկից երկու շներն ունեին չորսական աչք:<sup>322</sup> Ըստ հավատալիքների՝ շան հայացքը փախցնում էր դևերին:

Չար աչքի մասին հավատալիքներ կան բոլոր ժողովուրդների դիցաբանական ընկալումներում: Դրանք պահպանվել են ազգագրական տարբեր ծեսերում և սովորույթներում: Հայացքի մոգական ուժի, մահաբեր հայացքի մասին առասպելական պատկերացումները զարգացում են ստանում բանահյուսության մեջ: Ուշագրավ է Խորենացու վկայությունը Երվանդի չար աչքի մասին. «Բայց ասեն զԵրուանդայ՝ ըստ հմայից դժնեալ գոլական հայեցուածով վասն որոյ ընդ այգանալ աչալրջացն սովորու-

*թիւն ունել սպասատրացն արքունի՝ վէմս որձաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ և ի հայեցուածոցն դժնութենէ ասեն պայթել որձաքար վիմացն: Բայց այս կա եղիցի սուտ և առասպել, և կամ դիւականս ինչ առ իւր ումի»:*<sup>323</sup>

Դամբարաններում բոժոժների, կաուրիների և վեգերի (ճաների) առկայությունը նույնպես պայմանավորված է նրանց ծիսական բովանդակությամբ: Միջինասիական ժողովուրդների մոտ կաուրիին վերագրվում էր չար աչքից պահպանելու գործություն:<sup>324</sup> Ազգագրական բազմաթիվ տվյալներ կան, որոնք վկայում են հայոց մեջ բոժոժներին վերագրված պահպանակի, չար աչքից պաշտպանելու գործյան մասին: Բոժոժները կրում էին ոչ միայն զգեստի վրա,<sup>325</sup> այլև ուլունքների հետ կախում էին նորածնի օրորոցին:<sup>326</sup> Բոժոժները կախում էին նաև անլիլ գառների վզից՝ չար աչքից և չար ոգիներից պահպանելու համար:<sup>327</sup> Նույն նպատակով բոժոժներով և կաուրիներով էին զարդարում նաև ձիերի ճակատկալ-ճանճաքշիկները:

Ըստ Հերոդոտոսի, «Երբ Մանեսի որդի Ասյունի օրոք Լյուդիայում սով էր, փրկության միջոցներ որոնելով հնարեցին զառ և վեգ խաղալը»:<sup>328</sup> Վեգ-հմայիլը համարվել է հաջողություն և երջանկություն բերող:<sup>329</sup> Թերևս նաև ծիսական իմաստով է պայմանավորված Պանտիկապեյից գտնված ճանի ձևով պատրաստված կավանոթի շուրթի կոտրված լինելը: Ամանը հավանաբար օգտագործվել է հեղման համար, ապա, ըստ ծիսակարգի, կոտրվել:<sup>330</sup> Այս ենթադրությունները հուշում են հայերենում փնտրել *ճանի* կամ *վեգի* նախնական իմաստը: Եվ, ինչպես ցույց է տալիս բառերի լեզվաբանական վերլուծությունը, թաղման ծիսակարգում *ճան* -ի և *վեգ*-ի առկայությունը պայմանավորված է նրանց նախնական իմաստով, որ նշա-

<sup>323</sup> Մ. Խ ո ռ ե ն ա ճ ի, Բ, իւր:

<sup>324</sup> Н. Б о р о з о в а, նշվ. աշխ. էջ 88:

<sup>325</sup> Ն, Ա վ ա զ յ ա ն, Հայկական տարագ. Եր., 1983. էջ 94:

<sup>326</sup> Գ. Մ ի թ ա յ ե լ յ ա ն, նշվ. աշխ., էջ 142:

<sup>327</sup> Նույնը:

<sup>328</sup> Հ ե ռ ո ղ ո տ ն ո ս, I, 94:

<sup>329</sup> Б. П е т е р с, Косторезное дело в античных государствах Северного Причерноморья, М., 1986, с. 81.

<sup>330</sup> Նույնը:

<sup>318</sup> Գ. Մ ի թ ա յ ե լ յ ա ն, Հայ ազգագրություն և բնահյուսություն, հ. 11, Նոր Բայազետ, 1980, էջ 147:

<sup>319</sup> Նույնը:

<sup>320</sup> Մտ. Լ ի ս ի ճ յ ա ն, 1969, էջ 208:

<sup>321</sup> В. И в а н о в, Глаз, МНА, Энциклопедия, т. 1, М., 1991, с. 306-307.

<sup>322</sup> П. Г р и н ц е р, Яма, МНМ, Энциклопедия, т. 2, М., 1992, с. 683.



նակել է *ծնվել*.\* Դամբարաններում այս իրերը դրվել են որպես վերածնության խորհրդանիշ:

**Չուն թաղման ծեսում:** Բենիամինի գտածոների մեջ կա նաև քարից ձու, որ դրված էր հանգուցյալի ոտքերի տակ: Ծեսը բնորոշ է հնդեվրոպական ժողովուրդներին: Ռուսաստանում և և Արևմտյան Եվրոպայում հանգուցյալի հետ թաղում էին ներկած ձու,<sup>332</sup> քանի որ ձուն ուղևորվում էր հանդերձյալ աշխարհի տիրակալի մոտ: Չուն թաղման արարողակարգի հետ էր կապված նաև կելտերի մոտ: Մեն Ժերմենի հնագիտական թանգարանում պահվում են մ. թ. 1-2-րդ դարերով թվագրվող, տարբեր քարերից ձվեր, որոնք գտնվել են Ֆրանսիայի տարբեր դամբարանադաշտերից:<sup>333</sup>

Հայոց մերօրյա թաղման ծեսում հանդերձյալ աշխարհի հետ ձվի կապի մի օրինակ է հանգուցյալի ոտքերի տակ թարմ ձու դնելու սովորույթը, որն, ըստ հավատալիքի, դանդաղեցնում է դիակի քայքայման ընթացքը:<sup>334</sup>

Տիեզերական ձուն առասպելական խորհրդանիշ է և շատ դիցաբանական սովորույթներում կապվում է աշխարհաստեղծման առասպելի հետ: Ավելի հաճախ են աշխարհաստեղծ ձվի երկու կեսերից ծնվելու մոտիվները, որոնց համաձայն երկինքն ու երկիրը ծնվել են ձվի

երկու կեսերից, իսկ արևը՝ դեղնուցից<sup>335</sup> Հնագույն առասպելներում աշխարհի ստեղծումը կապվում է նախաստեղծ ջրերում կամ նախաստեղծ օվկիանոսում ապրող օձի, կամ նույն այդ ջրերում ստեղծված տիեզերական ձվից դուրս եկած օձի հետ:

Անտիկ Հունաստանում ձուն և՛ հարսանիքի,<sup>336</sup> և՛ թաղման ծեսի հետ էր կապվում:<sup>337</sup> Չուն ամեն ինչի սկիզբ էր, օգտագործվում էր մաքրագործող գոհաբերություններում, և ձուն չէին ուտում:<sup>338</sup> Հին զատկական տոներում կենտրոնական առարկա էին ինչպես կարմիր,<sup>339</sup> այնպես էլ տարբեր ժողովուրդների մշակույթներին բնորոշ զարդարուն ձվերը:<sup>340</sup>

Հայոց ազգագրական նյութերը փաստում են, որ ձվին հատկացվում էր չարքերին վանող հատկություն: Այս ծեսը 19-րդ դարում հայտնի էր Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններում<sup>341</sup> և նպատականդված էր չար հայացքը ձվի վրա զցելուն: Նույն պահպանական նշանակությունն ուներ անասունների ճակատին ձու խփելը: Չուն կարևորվում է նաև հարսանեկան ծեսի հետ կապված արարողություններում. փեսային ձվածեղ կերցնելը, հարսանեկան սինիների վրա ձվածեղ դնելը և այլն:<sup>342</sup> Երեխաներին *կոխ* կոչվող հիվանդությունից բուժելու նպատակով գերեզմանի վրա ոտքերը լվանալուց հետո այնտեղ ձու և մեխ էին թաղում,<sup>343</sup> որն, անշուշտ, պահպանական նույն իմաստն ուներ: Շիրակում նորածին երեխային լողացնելիս այժմ էլ ձու են զցում տաշտի մեջ: Ակնհայտ է ծեսի վերապրուկային բնույթը:

\* *Ծնունդ* բառը հայերենում ծագում է *ծան* արմատից, *gen* հնդեվրոպական արմատից է ծագել հայերեն բնիկ *ծին* բառը: Այս արմատը նույնն է ճանաչել արմատի հետ: Հ. Աճառյան, 1971, էջ 443: *Ծին*-ը բնիկ հայ բառ է *gen* արմատից, սանսկրիտերեն *jan* (*ծնի*), տարբեր լեզուներում *gne, gno, gen, gon* և այլն: Հայերենը ծագում է *gen* ձևից: Այս արմատը նույնն է *ճանաչել* արմատի հետ: Հ. Աճառյան, 1971, էջ 457: Նույն *ճանաչել* իմաստն ունի *ծան* արմատը, որ բնիկ հայ բառ է հնախոսական *gn* տղյալ արմատից (կազմված է ծան արմատից ածանցականով): *Ճանաչել*-ի նախնական ձևն է *ճանացել*: Նախաձայն ծ-ն, ազդվելով ձ ձայնից, վերածվել է շշող ձ-ի: Հ. Աճառյան, 1971, էջ 443: Այսինքն, *ճան*-ը նույն *ճան*-ն է ծ-ն ձայնափոխությանը՝ կազմված *ճան* արմատից ձ ածանցականով, որի ազդեցությամբ հետո ծ ձայնը դարձել է ճ: Հ. Աճառյան, 1971, էջ 182: *Ծին* - ճանաչել, *ճան* - ճանաչել: Այսպիսով՝ *ճան*-ը նշանակում է *ծնվել, ծնել*:

<sup>332</sup> С. М а к с и м о в, Собрание сочинений, т. 17. СПб, 1912. с.133. Календарные обычаи и обряды в странах зарубежной Европы: Весенние праздники, М. 1977. с. 153.

<sup>333</sup> Մեն Ժերմենի հնագիտական թանգարանի ցուցադրությունում ցուցադրված ձվերը հաշվառման մատյաններում գրանցված են 28002, 25476, 65100, 65160, 65476 համարների տակ:

<sup>334</sup> ԴԱՆ, հեղինակի գրառումներից, Աշոցք, գ. Թորոս:

<sup>335</sup> В. Т о п о р о в, Яйцо мировое, МНМ, Энциклопедия, т. 2. М. 1992, с. 681.

<sup>336</sup> Е.К а г а р о в, Культ фетишей, растений и животных в Древней Греции. СПб, 1913, с. 38, 39.

<sup>337</sup> P. N i l l s o n, Das Ei im Totenkult der Alten.«Archiv für Religions Wissenschaft» XI Leipzig, 1908. p. 530-540.

<sup>338</sup> Е. К а с т а н а я н, Грунтовые некрополи боспорских городов V - IV в.в. до н. э. и местные их особенности, МИА, 1959. N. 69. с. 268.

<sup>339</sup> В. С т а с о в, Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени. С. Петербург, 1887, табл. СXXXIV, рис. 73.

<sup>340</sup> Б. Р ы б а к о в, Ремесло Древней Руси, АН СССР, 1948, с. 362, рис. 100: Ա. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 99:

<sup>341</sup> Մտ. Լ ի ս ի ղ յ ա ն, 1969, էջ 809:

<sup>342</sup> Նույն տեղում, էջ 810:

<sup>343</sup> Նույնի, 1981, էջ 50:

Նավակի ծիսական դերը: Բենիամինի թիվ 183 դամբարանն առանցքն է այն թաղումների, որոնք իրենց ձևով միավորվում են (կարասի ժապավեններով նավաձև շարվածք, մանր քարերով ձվածիր-նավաձև թաղումներ) և բացվել են դամբարանադաշտի մ. թ. ա. 1-ին դարով թվագրվող հաստվածում: Մանր քարերի ձվածիր շարվածքով նմանօրինակ թաղումներ հայտնի են Օշականի<sup>344</sup> և Կարճաղբյուրի դամբարանադաշտերից:<sup>345</sup> Այս թաղումների յուրօրինակ նավաձև կառուցվածքը ենթադրում է կապ նավակի ծիսական բովանդակության հետ:

Աշխարհի կործանման մասին առասպելաբանական պատկերացումները ծագել են վաղ շրջանում՝ արքադաշումերական լեգենդներում և աղբյուր հանդիսացել ավելի ուշ ծագած բաբելական ու աստվածաշնչյան տարբերակների համար:<sup>346</sup> Մեռյալների աշխարհը ողջերի աշխարհից բաժանված էր ջրով և այն աշխարհ կարելի է հասնել նավակով:<sup>347</sup> Այս հավատալիքների հենքի վրա էլ ձևավորվել է հին սլավոնական ծիսակարգը, ըստ որի ոչ բնական մահով մեռածներին (ինքնասպաններ, խեղդվածներ, երեխաներ) տանում էին անտառ, կամ՝ հանձնում ջրի հոսանքին:<sup>348</sup>

Աշխարհի կործանման մասին դիցաբանական պատկերացումներում նավակն ունի հոգիներին այն աշխարհ տեղափոխողի դեր: Ելնելով այդ դերից՝ նավի մասերից յուրաքանչյուրն առանձին իմաստ է ձեռք բերել:

Նավախելը մայրամուտն է՝ մահը, նավի քիթը՝ արևելքն ու վերածնությունն է խորհրդանշում, իրանը՝ կյանքի ու մահվան միջև թափառող և տատանվող՝ խորհրդանշելով հանդերձյալ աշխարհը և արևածագից մայրամուտ, այսինքն՝ կյանքի ու մահվան միջև դեգերումներ:

րը:<sup>349</sup> Իսկ կայմի փոխարեն կենաց ծառ ունեցող մակույկն այն նավն է, որ անդրշիրիմյան աշխարհ կամ երկինք է տանում:<sup>350</sup> Ջրհեղեղյան տապանը միակն է, որ իր մեջ ներառելով բոլոր կենդանիներին, հաղթահարում է կործանումն ու միաժամանակ դառնում ապագայի, վերածննդի միջոց:

Նավակների մեջ կատարված թաղումներ փաստված են վիկինգների թաղման ծիսակարգում:<sup>351</sup> Մահվան ջրերի հոսքի և իրական աշխարհի հոգու վերադարձի սյուժեներում մեռնողի հոգին կամ մայր մտնող արևը մեկնում են դժոխք մահվան նավակով և վերադառնում՝ հարության նավակով:<sup>352</sup> Հնդեվրոպական լեզուներում նավն իր երկրորդ նշանակությամբ գերեզման և մահ իմաստն ունի:<sup>353</sup> Նավի, որպես մահվան իմաստակիրի, համարժեքը հայերենում տապանն է: Նավակը բացի սոսկ ջրի վրա շարժվող միջոցից, ունի նաև նավ, «...տապանը նորոնարան մարմնոյ վախճանելոյն փայտեղեն, հողեղեն, լայնարար՝ շիրի» իմաստը:<sup>354</sup>

Նավակի և տապանի նույնացումն արտացոլված է տարբեր ժողովուրդների հավատալիքներում: Սկանդինավյան ժողովուրդների առասպելաբանության մեջ մեռելների եղունգներից պատրաստված նավով հոգիները լողում են մեռյալների թագավորության մեջ: Հավատալիքն արտացոլված է նաև թաղման ծիսակարգում:<sup>355</sup> Հունական դիցաբանության մեջ հոգիներն այն աշխարհ տեղափոխող Քարոնի ատրիբուտներից էր նաև նավակը: Նավակը, որ տեղափոխում էր մեռածների հոգիները անդրաշխարհ, լողում էր ջրի վրայով և թռչում էր երկնքով: Երկնքով թռչող նավակը և սայլը նույնացվել են, որի վկայությունը սայլի վրա կատարված թաղումներն են: Նման թաղումներ

<sup>344</sup> Ст. Е с а я н, А. К а л а н т а р я н, *նշվ. աշխ.*, էջ 59:  
<sup>345</sup> И. К а р а п е т я н, 1979, с. 523:  
<sup>346</sup> В. Н. Т о п о р о в, *Потоп*, МНМ. Энциклопедия, М., 1992, т. 2, с. 325.  
<sup>347</sup> Г. Ч а й л д, *Древнейший Восток в свете новых раскопок*, М., 1956, с. 349.  
<sup>348</sup> Д. З е л е н и н, *Очерки русской мифологии. вып. I. Умершие неестественной смертью и русалки*, Петроград, 1916.

<sup>349</sup> Н. Е р о ф е е в а, *Ладыя*. МНМ, Энциклопедия, 1982, т. II, с. 53.  
<sup>350</sup> Э. Ц е р е н, *նշվ. աշխ.*, էջ 179:  
<sup>351</sup> Б. Л и т в и н с к и й, А. С е д о в, *նշվ. աշխ.*, էջ 163-164:  
<sup>352</sup> Н. Е р о ф е е в а, *Ладыя*, МНМ, Энциклопедия, т. 2, М. 1992, с.53.  
<sup>353</sup> Т. Г а м к р е л и д з е, *Вяч. И в а н о в*, *նշվ. աշխ.*, էջ 825:  
<sup>354</sup> ՆԲՀԼ, էջ 846:  
<sup>355</sup> Б. Л и т в и н с к и й, А. С е д о в, 1984, с. 163:

հայտնի են Լճաշենից:<sup>356</sup> Հերոդոտոսի վկայությամբ՝ ինչպես քաղաքներին, այնպես էլ մնացած սկյութներին «մերձավորագույն ազգականները, դիակը սայի վրա դրած, տանում են բարեկամների մոտ...»:<sup>357</sup> Քառասուն օր այսպես ման են ածում, այնուհետև՝ թաղում:<sup>358</sup>

Նավակը, լինելով հանդերձյալ աշխարհի աստծու ատրիբուտ, ծիսական օբյեկտի նշանակություն էր ստացել: Հունաստանում Դիոնիսոսի տոնակատարությունների ժամանակ նրա պատկերը տանում էին անիվների վրա դրված նավակում, իսկ Եգիպտոսում կրոնական տոնակատարությունների ժամանակ քրմերն իրենց ուսերին տանում էին սրբազան նավակը:<sup>359</sup> Ըստ հունական հավատալիքների, Հելիոսը զիջերում էր նավակի մեջ:<sup>360</sup>

Նավակ-տապանի երկիմաստությունը հավանաբար ծագել է այն հավատալիքից, որ մարդը մեռնելուց հետո այն աշխարհ ճամփորդության է մեկնում նավակով, և գերեզման-նավակը նույնացվել է գերեզման-տապանի հետ:

Մահվան մասին հայոց դիցաբանական ընկալումների վկայությունն է մարդու ծանր, կյանքի ու մահվան միջև տարաբերվող հոգեվիճակը բնորոշող *ջրերն ընծի տարան ու բերին* արտահայտությունը,<sup>361</sup> որ նշանակում է մահու չափ ցնցվել, մահվան դուռ հասնել: Նավակ-տապանի ենթատեքստում հստակ է մեռնող մարդու ջրերի վրայով անցնելիք ուղու մասին հնդեվրոպական պատկերացումը: Հայերենում մեռածին ննջեցյալ կամ հանգուցյալ, իսկ գերեզմանոցը՝ *հանգստարան*, թաղման ծեսի մի արարողությունը *հոգեհանգիստ* բնորոշելը բացահայտում է մահվան մասին հայոց ընկալումները, այսինքն՝ ժամանակավոր քուն, հանգիստ:

Ուղեկցող իրերն իրենց ծիսական բովանդակությամբ և ծիսական դերով թաղման ծիսակարգի բարդ համակարգում առանձին տեղ են

գրադեցնում: Դամբարանում հայտնաբերված ամեն մի իր որոշակի ծիսական տարրի կրողն է: Բենիամինի թիվ 142 մանկական դամբարանից գտնվեց թռչնի կավե արձանիկ, որը գուցե ընդամենը խաղալիք է, որ դրվել է մանկահասակ երեխայի հետ: Բացառված չէ, որ արձանիկը կյանքից վաղ հեռացած աղջկա նկատմամբ քնքուշ սիրո արտահայտություն է՝ միահյուսված թռչնի երկնային կերպարին (փոքր աղջիկներին լող փաղաքշական անուն տալն ընդունված է մեզանում): Անտիկ ժամանակաշրջանի թաղումներում թռչնակերպ տարբեր անոթների և կավե արձանիկների առկայությունը պայմանավորված է թռչնի ծիսապաշտամունքային որոշակի դերով: Նույն դերով էլ Կառնուտի թռչնակերպ անոթը հայտնվել է դամբարանում: Լողացող թռչնի կերպարը որպես կանոն կապվում է Տիեզերքի ստեղծման առասպելի հետ, և նախնական ջրերի մեջ սուզվող ջրային թռչունն է, որ աշխարհի ստեղծման համար նյութ է հայթայթում:<sup>362</sup>

Ուրարտական մի գլանաձև կնիքի վրա պատկերված է քառանիվ սայլ, որի առջև և հետևի կողերից ձգված լարերը միանում են սայլի կենտրոնից բարձրացող և կենաց ծառով ավարտվող ձողին: Սայլի և կենաց ծառի միացումից ստացված եռանկյունին նավակ է:<sup>363</sup> Կենաց ծառով ավարտվող նավակի պատկերներ հանդիպում են նաև հայ մանրանկարչության մեջ: Մատենադարանի թիվ 7555ձեռագրի 100ա թերթում ոճավորված կենաց ծառի տեսք ունեցող կայմով նավի վրա պատկերված են առաքյալները, իսկ թիվ 5786 ձեռագրի 56 բ թերթի նավակը պատկերված է ոճավորված կենաց ծառի պատկերներով:<sup>364</sup> Հայկական մանրանկարչության մեջ բազմաթիվ են նավակները, որոնք ունեն լողացող թռչնի ձև:<sup>365</sup> Նկարիչներ Մարտիրոսի և որդի Գրիգորիսի «Վերջին դատաս-

<sup>356</sup> А. М н а ц а к а н я н, Раскопки курганов на побережье озера Севан в 1956г. (предварительное сообщение), СА, 1957, N2, с. 148,151.

<sup>357</sup> Հ Ե Ր Ո Պ Ո Ս, Գ IV, 71:

<sup>358</sup> Նույն տեղում, Գ IV, 73:

<sup>359</sup> А. Г о л а н, նշվ. աշխ., էջ 51:

<sup>360</sup> Նույնը:

<sup>361</sup> ԳՄՆ, հեղինակի գրառումներից, Աշոցք, գ. Վազանջի:

<sup>362</sup> А. З о л о т а р е в, Родовой строй и первобытная мифология, М.,1964, с. 278-279.

<sup>363</sup> Б. П и о т р о в с к и й, История и культура Урарту, 1944, с. 281, р. 90.

<sup>364</sup> Ա. Մ Գ Ն Ա Ն, Հայկական զարդարվեստ, Եր., 1955, էջ 102, նկ. 270, 271:

<sup>365</sup> Հայկական մանրանկարչություն, Վասպուրական, նշվ. աշխ., նկ. 33:

տան» նկարում նժարները պատկերված են նավակի ձևով:<sup>366</sup>

Գարնանը կատարվող «ծառզուլք» կոչվող հեթանոսական տոնահանդեսի ժամանակ պատրաստվում էր հատուկ նավ, վրան՝ ծառ, իսկ ծառի վրա՝ բույն: Այդ նավը թիավարվում էր ծովի վրա, այնուհետև ծառի վրա դրված բնից թոցնում էին ձվից ելնող մի թռչուն: Եվ ամբողջ արարողությունն ուղեկցվում էր երգով ու պարով:<sup>367</sup>

Երկրաչափական մարմինների ծիսական ղեկը: Քարը խտունիկ նշանակություն ունի: Դեռևս նեոլիթում դամբարանում քար էին դնում:<sup>368</sup> Հայոց ազգագրական սովորույթներում հանգուցյալի անկողնու վրա կամ ննջեցյալին վերցրած տեղում քար դնելն ու յոթ օր լացուկոծ անելը,<sup>369</sup> ըստ հավատալիքի, արվում էր, որպեսզի հանգուցյալը չմնա իր տան կարոտով, ի վիճակի չլինի վերադառնալ և կարոտից մեկնումեկին իր հետ տանել:

Երկրաչափական խորհրդանիշերը, որոնք որպես նշանների իմաստաբանություն, կերպ են առնում դիցաբանական համակարգում, ընկած են ծիսականացված առարկաների և ծիսական տարածքի հիմքում: Զննարկվող նյութերի մեջ առավել օգտագործված երկրաչափական ձևերն են եռանկյունին, ուղղանկյունը, շրջանը, ձվածիրը և խորանարդը: Կիրառական նշանակություն ունեցող իրերի քննության ժամանակ իրի երկրաչափական ձևը մոլվում է երկրորդ պլան: Գտածոների մեջ կան նաև երկրաչափական կոնկրետ ձև ունեցող իրեր, որոնք կիրառական նշանակություն չունեն, և դա հանգեցնում է ձևի իմաստաբանության որոնմանը: Եռանկյունին նյութերի զարդանախշման մեջ օգտագործվող երկրաչափական ամենատարածված ձևն է: Ինչպիսի՞ն է թաղման ծեսում երկրաչափական ձև ունեցող իրերի ծիսական բովանդակությունը:

<sup>366</sup> Նույն տեղում, նկ. 87 (Ավետարան, 1604թ., Խիզան, Չեռ. N 6093):

<sup>367</sup> Նույն տեղում, էջ 101:

<sup>368</sup> А. Р о г а ч е в, Погребение древнекаменного века на стоянке Костенки 14, СЭ. 1955, N 1, с. 30.

<sup>369</sup> Утн. Л и у и г у а н, 1969, էջ 210:

Եռանկյունու երկրաչափական պատկերի իմաստի մեկնաբանմանը մեծապես օգնում են ինչպես հնագիտական տվյալները, այնպես էլ առասպելաբանությունը:

Բենիամինի բնակավայրի բազմագործանական բնույթի մի շինության պեղումներից գտնվեցին մոտ մեկ տասնյակ եռանկյունաձև ձիթաճրագներ:<sup>370</sup> Նման ձիթաճրագներ մեկական օրինակով հայտնի են Շիրակավանից, Անիից:<sup>371</sup> Ինչպես նշված ձիթաճրագները, այնպես էլ Դվինի գունազարդ կարասներից մեկի վրա պահպանված ցլի ճակատի սեպաձև նշանները<sup>372</sup> հիշեցնում են Հայոց մայր դիցուհի Անահիտի մեհյանի սրբազան ցլերին, որոնք «դիցուհու ջահն էին խարանած երինջի ճակատին»:<sup>373</sup> Ասորական զգայական սիրո աստվածուհու՝ Աստարտեի խորհրդանիշն էր եռանկյունին՝ փորագրված նրա տաճարի մոտ գտնվող քարին, իբրև պտղաբերման խորհրդապատկեր: Սրա առջև աղջիկները անձնատուր լինելով օտարներին, իրենց անարատությունը զոհաբերում էին Աստարտեին:<sup>374</sup>

Եռանկյունու ծիսական իմաստը տարբեր ժողովուրդների դիցաբանական ընկալումներում տարբեր է: Այն խորհրդանշում է՝ մայր-հայր- երեխա,<sup>375</sup> մարմին-խելք-հոգի:<sup>376</sup> Եռանկյունին նաև պտղաբերության խորհրդանիշ է:<sup>377</sup> Հայոց մեջ ոսկուց և արծաթից եռանկյունաձև տուփը կամ պարզապես եռանկյունին, շրթայով կախվում էր նշան դրված աղջկա կրծքից՝ իբրև պտղաբերության ապահովման առհավատ-

<sup>370</sup> Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1996, էջ 19: Նույնի՝ Անահիտ աստվածուհու պաշտամունքի մի դրսևորում անտիկ Շիրակում, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. VII, Գյումրի, 2004, էջ 45:

<sup>371</sup> Ե. Մ ու շ ե ղ յ ա ն, Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ II, Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաները, Եր., 1982, տախտակ XII, 2: Հ. Խաչատրյան, 2004, էջ 44:

<sup>372</sup> Գ. Զ ո չ ա թ յ ա ն, նշվ. աշխ., էջ 42:

<sup>373</sup> Plut., Lucul., 24:

<sup>374</sup> Ա. Մ ն ա ց ա կ ա ն, 1955, էջ նկ. 572:

<sup>375</sup> J. D a n i e l o u, Les symboles chretiens primitifs. Paris, 1961.p. 38-46.

<sup>376</sup> M. G r a n e t, La pensee chinais, Paris, 1934, p. 17-24.

<sup>377</sup> Н. В и н о г р а д о в а, Символика алтарной композиции средневековой Японии В кн: „Искусство Востока и античности“, М., 1977, с. 92.

չյա:<sup>378</sup> Եռանկյունին իզական խորհրդանիշ լինելու վկայություն է «*հմա՞լ է եռանկյունու վիճակը*» երիտասարդ աղջկա բարոյական կերպարը ճշտելուն միտված հարցը:<sup>379</sup> Եռանկյունին տիրական երկրաչափական ձև է հատկապես ընտանիքի և սիրո կապերի ամրացման նպատակով արվող հմայական գործողություններում: Եռածալ են թուղթուզրի թղթերը, որոնք, ի տարբերություն գլանաձև փաթաթվածների, գործության ուժը պահպանում էին միայն որոշակի դեպքում և որոշակի ժամանակ:<sup>380</sup> Բենիամինի թիվ 121 դամբարանից գտնվեց սև քարից եռանիստ բուրգ: Իրի ողորկ ու փայլեցված մակերեսը ոչ միայն քարի տեսակով է պայմանավորված, այլ հավանաբար նաև երկարատև օգտագործմամբ: Բենիամինի թիվ 121 դամբարանից գտնված եռանիստ բուրգը, տարբեր կողմերից դիտելիս, կարելի է ընկալել և իզական, և արական սկիզբ՝ կտեխս և ֆայլոս: Հետևաբար, թաղման ծեսում իրը ծիսական այս բովանդակության կրողն է և ընտանիքի խորհրդանիշ:

Երկրաչափական խորհրդանիշերը նկարագրում են տիեզերքի կառուցվածքը նրա և՛ հորիզոնական, և՛ ուղղահայաց ասպեկտներում:<sup>381</sup> Բենիամինի թիվ 184 դամբարանից գտնվեց կրաքարից, կլորացված անկյուններով, կենտրոնում միջանցիկ անցքով քառակուսի մի իր: Հայտնի է, որ քառակուսին տարածության սահմանազատման նախնական ձևերից մեկն է, նաև տան, կառույցի հիմնական ձևերից մեկը: Քառակուսին և շրջանը միավորող իրը կարող է խորհրդանշել նաև կին (շրջան) և տղամարդ (քառակուսի)՝ միավորելով արական և իզական սկիզբները:

Շրջանն այլատարր ծագմամբ և նշանակությամբ դիցաբանական խորհրդանիշերի ամենատարածված ձևերից մեկն է, որը, որպես մարմին, կազմված է ուղիղ կորից՝ առանց սկզբի և առանց վերջի և ցանկացած կետից ուղղված է

դեպի անոտես կենտրոն: Շրջանը, որպես գնդի համապարփակ պրոյեկցիա, դիցաբանության մեջ ընդունվում է որպես իդեալական մարմին: Եվ պատահական չէ, որ գունդը դիտվում էր անսահմանի և սահմանափակման միասնություն, և աստվածների կերպարներն ընդունվում էին գնդի ձևով:<sup>382</sup> Խեթական ծիսակարգում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում «պտույտ կատարել», «շրջանի գծով շարժվել» մոզական գործողությունները, որքան «շրջանով քայլելը» որպես թագավորների (առաջնորդների) պարտադիր գործառույթ:<sup>383</sup>

Երկրաչափական կոնկրետ ձև ունեցող մեկ այլ իր գտնվել է Բենիամինի թիվ 124 դամբարանից: Իրը չեչաքարից է, քառակող, միատերը՝ երկայնակի ակոսներով: Որպես երկրաչափական մարմին, այն քառակող սեղան է՝ մեկընդմեջ լայնացող և նեղացող միատերով: Ինչպես և երկրաչափական տարբեր ձևեր ունեցող նախորդ իրերը, սա ևս պահպանակի դեր է կատարել:

**Հայելին թաղման ծեսում:** Բենիամինում և Անուշավանում գտնված հայելիները, ինչպես տեսանք նախորդ գլխում, վնասված էին:

Կտրված հայելիներ կամ հայելու կտորներ գտնվել են նաև սարմատական դամբարաններից,<sup>384</sup> և հայելին կտրվել է հանգուցյալի հոգին ազատելու համար:<sup>385</sup> Դամբարանում հայելու առկայությունը ենթադրում է, թե սարմատների համար հայելին ունեցել է մոզական նշանակություն, նաև՝ մոզական ազդեցություն: Այս պատճառով էլ հայելին կտրում էին և նոր միայն դնում հանգուցյալի հետ՝ մոզական ուժերը համապատասխանեցնելով նոր վիճակին:<sup>386</sup> Արտաշատի դամբարանադաշտերում հայելիների առկայությունը կապվում է անդրշիրիմյան

<sup>378</sup> Վ. Բ ղ ո յ ա ն, Հայկական աղանաններ, Եր., 1986, էջ 61:  
<sup>379</sup> ԴԱՆ, հեղինակի գրառումներից, Աշոցք, գ.Ղազանչի:  
<sup>380</sup> Ստ. Լ ի ս ի յ ա ն, 1981, էջ 62:  
<sup>381</sup> В. Т о п о р о в, Геометрические символы, МНМ, Энциклопедия, т. 1, М., 1991, с. 272.

<sup>382</sup> В. Т о п о р о в, М. М е й л а х, Круг, МНМ, Энциклопедия, т. 2, М., 1992, с. 18.  
<sup>383</sup> В. А р д з и н б а, նշվ. աշխ., էջ 22:  
<sup>384</sup> Т. К у з н е ц о в а, Зеркала в погребальных обрядах Сарматов, СА, 1988, N. 4, с. 52-61.  
<sup>385</sup> Նույնը:  
<sup>386</sup> А.Х а з а н о в, Религиозно-магическое понимание зеркал у сарматов, СЭ, 1964, N. 3, с. 91-94.

պատկերացումների հետ և ունի պաշտամունքային նշանակություն:<sup>387</sup>

Ազգագրական նյութերում հայելու հետ կապված հավատալիքները տարբեր են: Միքիրում հայելիները կտրում էին նպատակադրված, հատկապես ամուսնուց և հարազատներից երկար ժամանակով բաժանվելիս՝ իրար հիշելու համար:<sup>388</sup> Քանի որ հայելին ունի մոգական ուժ, ամբողջը մասի բաժանելով, հավանաբար մասն իր հետ տանում էր ամբողջի մի մասնիկը: Այսինքն, հարազատներն իրարից բաժանվելիս էլ պահպանում էին փոխադարձության կապը:

Իրանում, ինչպես նաև ռուսների և տաջիկների մոտ կա հավատալիք, որ հայելու կտրվելը նշանակում է տիրոջ մահ:<sup>389</sup> Իրանում եթե հարսանեկան հայելին կտրվեր, նշանակում էր հարսի և փեսայի մահ:<sup>390</sup> Հայելու կտրվելը չարագուշակ է համարվում նաև հայերիս մոտ: Հավանաբար հավատալիքը ծնվել է մոտ մարդու մահվան ժամանակ հայելին կտրելու սովորույթից:<sup>391</sup> Հայելին վնասելը կամ կտրելը կատարվում էր հանգուցյալի հոգին ողջերի աշխարհը չար մտադրություններով ներխուժելուց ետ պահելու համար: Քանի որ հայելին իր մեջ կրել էր հանգուցյալի պատկերը, ուրեմն հայելին վնասելով, կանխվում էր հանգուցյալի վերադարձը: Ծիսակարգը պահպանել և մեզ է հասցրել մոգական գործողության հիմնական գծերը, որոնցում հայելու մահը նախորդել է տիրոջ մահվանը: Այս ամենը խոսում է մոգության մասին, որը բնորոշվում է որպես շփածին ըստ Ֆրեզերի<sup>392</sup> կամ պարցիալ՝ ըստ այլ հետազոտողների:<sup>393</sup> Այստեղ գործողությունն ուղղված է ոչ թե անմիջապես օբյեկտին, այլ նրա փոխարինողին և նրա միջոցով արդեն հենց իրեն՝ օր-

յեկտին: Ելնելով վերոհիշյալից՝ կարելի է ենթադրել, որ հայելին նպատակամղված վնասելը կապված է թաղման ծեսի հետ և ողջերի վրա մոգական ազդեցության հետևանք է: Տիրոջ արտացոլումը կրող հայելին հավանաբար դիտվել է նաև հոգու կրող և ըստ այդմ էլ վնասվել է՝ ողջերի աշխարհի ննջեցյալի վերադարձը կանխելու համար: Թաղման մերօրյա ծիսակարգում հայելին կտրելը փոխարինվել շորով ծածկելով՝ պահպանելով ծիսական գործողության իմաստը: Հավանաբար հայելին եղել է կանացի աստվածության ատրիբուտ, բայց եղել է կապված նաև արևի հետ, քանի որ հայելին ըստ հավատալիքի, լուսավորում էր գերեզմանը:<sup>394</sup>

Գուշակության մեջ հայելին ընկալվում է որպես կյանքի և բախտի պայծառության կամ վատթարացման խորհրդանիշ:<sup>395</sup> Հայտնի է, որ բրոնզե հայելին ջրով լի ամանի մեջ դնելով, ըստ հավատալիքի, տեսնում էին երկնային արքայության դռները:<sup>396</sup> Նույնը կատարվում էր Հայաստանում պատերազմի դաշտում կամ օտարության մեջ գտնվող իրենց հարազատներին տեսնելու համար:<sup>397</sup>

Հայկական հավատալիքներում հայելուն իզական հատկանիշ և միաժամանակ պտղաբերության ուժ էր վերագրվում: Եթե ակոսահատիկի ժամանակ երեխան հայելի վերցնեք, ապա հաջորդն աղջիկ էր ծնվելու:<sup>398</sup> Հավանաբար պտղաբերության հետ է կապվում նաև պարկապուկի վրա հայելի ամրացնելու սովորույթը:

Ինչպես տեսանք, հայելուն վերագրվել են մոգական տարբեր հատկանիշներ, իսկ թաղման ծեսում՝ փոխազդեցության կապերը խզելու և մեռածների աշխարհից ողջերին սպասվող վնասները կանխելու գործություն:

*Վնասված կամ թերի իրերի ծիսական դերը:* Ինչպես հոգեհացի կրակի մեջ, այնպես էլ դամբարաններում ուղեկցող նյութերի մեջ կան

<sup>387</sup> Ժ. Խ ա չ ա ու ղ ա ն, 1981, էջ 85:

<sup>388</sup> А. М а р а к у е в, Китайские бронзы из Басандайски, Томск, 1947, с. 171.

<sup>389</sup> С. Х е д о я т, Нейрангистан (Преднеазиатский этно- сборник ) т. 1, М., 1958, с. 253.

<sup>390</sup> С. Х е д о я т, նշվ. աշխ. էջ 258:

<sup>391</sup> Б. Л и т в и н с к и й, Зеркало в верованиях древних ферганцев, СЭ, 1964, N. 3, с. 99.

<sup>392</sup> Д. Ф р е з е р, Золотая ветвь, М., 1980, с. 49-60.

<sup>393</sup> С. Т о к а р е в, Сущность и происхождение магии. Труды ИЭ, М., 1959, с. 22.

<sup>394</sup> M. Loeffler Delachaux, Le cercle, Gen, 1947, p. 313.

<sup>395</sup> ԳԱՆ, հեղինակի գրառումներից, Գյումրի:

<sup>396</sup> J. C r o u t e, Les fêtes annelment celebres a Emoui. Paris, 1886, p. 389.

<sup>397</sup> ԳԱՆ, հեղինակի գրառումներից, Աշոցք, գ. Ղազանչի:

<sup>398</sup> Ե. Լ ա լ ա յ ա ն, 1928, էջ 125:



նաև այլ իրեր, որոնք թերի են, վնասված: Կարծում ենք, միշտ չէ, որ այն կախված է հանգուցյալի սոցիալական վիճակից: Բենիամինի թիվ 183 դամբարանում գանգի վերևում դրված թասը տրամագծով կիսված է: Կիսված է նույն դամբարանից գտնված պիրիտից խորանարդաձև կախիկը, ինչպես նաև ապարանջաններից մեկը: Այս դամբարանը միակն է գտնված իրերի հարստությամբ ու բազմազանությամբ և իրերի կոտրված լինելը չի կարող սոցիալական վիճակի արտահայտություն լինել: Թաղումը կատարվել է սալարկղի մեջ դրված, կարասի իրանի 20 սմ լայնությամբ ժապավենների նավածև շարվածքի վրա: Կարասի մյուս մասերի բեկորները՝ շուրթերը, վիզը անկանոն կոտրված են, նստուկը չի պահպանվել: Այսինքն, բացի ուղեկցող իրերից, բեկորային է նաև կարասը: Անկյունագծով կիսված է նաև Բենիամինի թիվ 184 դամբարանից գտնված կրաքարե իրը: Վնասված են նաև Բենիամինի և Անուշավանի հայելիները:

Բենիամինում փշրված ամանների բեկորներ են գտնվել թիվ 9, 39, 105, 125 դամբարանների հոգեհացի կրակի մնացորդների մեջ, ինչպես նաև ծածկասալերն ու կողասալերն ամրացնող քարերի մեջ (թիվ 157, 164 դամբ):

Բրոնզիդարյան Հայաստանում դիամանատման եղանակով կատարված որոշ թաղումների նյութեր դամբարանի մեջ դրվել են նախապես կոտրելուց հետո:<sup>399</sup> Մեծամորի դամբարանների վրա նույնպես հայտնաբերվել են խեցեղենի բեկորներ:<sup>400</sup> Դամբարանում դրված իրերը միտումնավոր վնասելու սովորույթ նկատվել է Լոռի բերդում: Կավամանները նպատակադրված կերպով քարերով կոտրելու ծեսը, ըստ հետազոտողների, դիտվել է իբրև վերածննդի հավատալիքների հետ կապված երևույթ:<sup>401</sup> Նախապես կոտրված և բեկորները մասամբ դամբարանախուց նետված կավամաններ նկատ-

վել են Կապանի տարբեր դարաշրջանների դամբարաններում:<sup>402</sup>

Մերձամուրյան ցեղերի մ.թ.1-ին հազարամյակի դամբարաններում կոտրված են անոթները, զենքերը, նետասլաքների և նիզակների ծայրերն ու թևերը պոկված են, երբեմն՝ ծայրերը ծռված:<sup>403</sup>

Անտիկ ժամանակաշրջանի հուշարձաններում, այդ թվում նաև Բենիամինում, ևս պահպանվել է հոգեհացի համար բերված անոթները կոտրելու և կրակի մեջ նետելու արարողությունը: Արտաշատում այդ բեկորները որոշ դամբարաններում հասնում են մի քանի հարյուրի:<sup>404</sup>

Եգիպտացիները Օսիրիսի հարությանը նպաստելու համար նրա գերեզմանի վրա խեցանոթների բեկորներ էին շարում:<sup>405</sup> Հանգուցյալի հետ դրվող իրերը կոտրելու սովորույթ փաստված է Ռուսաստանի ծայր հյուսիսում բնակվող ժողովուրդների<sup>406</sup> և Դանիական կղզի-

<sup>399</sup> Օ. Խ ո ս կ ի կ յ ա ն, Մյունխի մ.թ.ա. IV-I հազ. քաղման ծեսի մեկնության փորձ, ԲԵՂ, 1993, թիվ 3, էջ 126-135:

<sup>403</sup> М. В о р о б ь е в, Религиозные верования чжурчженей.- „Доклады по этнографии,, Л., 1966, вып., IV. с. 64.

<sup>404</sup> Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, 1981, էջ 47:

<sup>405</sup> Э. Ц е р е н, Лунный бог, М., 1976г. с. 364.

<sup>406</sup> Այսպես էին վարվում օրինակ մանայցիները. «Թաղման ծեսի վերջում հարազատները հանգուցյալի իրերը դնում էին թարմ հողաթմբի վրա: Եթե դա տղամարդու շիրիմ է, ապա նրա հագուստները կախում են մուտակա ծառից և գետնին են դնում նրան պատկանող իրերը. դահուկները, շների սահմակները և ձկնորսական և որսորդական սարքերը: Եթե հանգուցյալը կին է, ապա ծառից կախում էին նրա հագուստն ու զարդերը, իսկ գետնին են դնում կեչու կեղևից պատրաստված աշխատանքային զանրյուղը, որի մեջ ասեղներ, թելեր, կտոր, իսկ երեխայի գերեզմանի վրա, բացի նրա հագուստներից, հիմնականում նաև խաղալիքներ են դնում: Հետաքրքրականն այն է, որ այս իրերը լինում են կոտրված վիճակում, իսկ հագուստները պատառոտված: И. Лопатин, Гольды амурские, уйсурийские и сунгарийские, Владивосток, 1922, с. 189. Մոխսցերի անմիջական հետնորդները՝ չժուրջ-ժենները, անհրաժեշտ էին համարում վերացնել իրերի նյութական թաղանթը, քանի որ «հանգուցյալի հոգին կարող էր օգտվել միայն իրերի հոգևոր էությունից»: М. Воробьев, նշվ. աշխ., էջ 64: Իսկ օրջները հանդերձյալ կյանքը պատկերացնում էին որպես հայելային, ընդ որում՝ կյանքի նեզատիվ արտացոլմամբ: Ըստ այդմ, հանդերձյալ կյանքում հայտնված ծերունիները դառնում էին երեխա, երեխաները՝ ծերունիներ, խելացիները՝ հիմար, հաջողակները՝ անհաջող, ամբողջական իր՝ կոտրված և այսպես շարունակ: Հանդերձյալ կյանքի մասին այսպիսի պատկերացման արդյունք է այն, որ օրջները հանգուցյալին թաղելով դազաղի մեջ դնում են հատուկ պատառոտված հագուստ, կոտրված ամանեղեն և ջարդված որսորդական սար-

<sup>399</sup> Օ. Խ ո ս կ ի կ յ ա ն, Դամբարանադաշտեր Միսիանի շրջանում, ԼՀԳ, 1984, թիվ 9, էջ 59:

<sup>400</sup> Է. Խ ա ո գ ա ղ յ ա ն, 1973, էջ 169:

<sup>401</sup> Մ. Դ և ե ջ յ ա ն, 2006, էջ 100: Գ. Թումանյան, 1997, էջ 17:

ների բնակիչների մոտ:<sup>407</sup> Մինչև անցյալ դարի 60-ական թվականները Լեւինականում ըստ սովորության՝ գերեզմանոցից ոչինչ տուն չէր տարվում և գերեզմանի վրա գինին հեղելուց հետո 22երն ու բաժակները քարերին խփելով կոտրում էին:<sup>408</sup>

Հանգուցյալի իրերը վնասելու պատճառը մարդկային պարզունակ հավատալիքի մեջ է: Նախնական մակարդակի վրա գտնվող ժողովուրդների պատկերացմամբ, քանի որ հանգուցյալի գույքը պիտի հետևի նրա հետ դեպի հանդերձյալ աշխարհ, որտեղ նրան պետք է գալու, և որպեսզի հայտնվի այդ աշխարհում, բոլոր իրերը պիտի լինեն մեռած, ինչպես իրենց տերը: Ըստ այդմ էլ իրերը կոտրված են և միայն նրանց հոգիները հետևելու են տիրոջը դեպի նրա նշանակման վայրը:<sup>409</sup>

Իրերը կոտրելու մոգական գործողություն էր կատարվում հիվանդին բուժելիս: Հայոց հավատալիքներում կար վախից բուժելու հետևյալ սովորույթը. հիվանդ մարդուն վաղ առավոտյան հարազատները լուռումունջ մի կուլա ջուր վերցնելով, տանում էին սուրբ ծառի մոտ: Այնտեղ լվանում էին հիվանդի ձեռքերը, ոտքերը և կուլան, խփելով ծառին, ջարդում: Այնուհետև աղոթքներ էին նրմնջում, մատաղ խոստանում, ապա հիվանդի հագուստից մի ծվեն էին կտրում և կապում մասրենու ճյուղին: Դա նշան էր, որ «հիվանդությունը հանձնում են սրբավայրին»:<sup>410</sup> Կուլայի մահը դիտվում էր հիվանդության մահ, կուլան կոտրելով կտրում էին հիվանդի և հիվանդության փոխազդեցության կա-

պը: Իսկ հագուստի ծվենը, որպես սովորական մարդու հետ շփման մեջ գտնված մի մասնիկ, հանձնելով մասրենուն, վերջինիս էին փոխանցում նաև հիվանդությունը:

Մաքրագործող ծիսահմայական գործողությունների հիմքում ընկած է շփածին մոգությունը, որի սկզբունքներն են՝ նմանը ծնում է նմանին, և իրերը, որոնք մի անգամ շփման մեջ են եղել իրար հետ, անմիջական կապի խզումից հետո էլ շարունակում են տարածության մեջ փոխներգործել:<sup>411</sup> Հանգուցյալի անկողինը յոթն անցնելուց հետո լվանալը նրա հետ վերջին կապի վերացումն է, իսկ շորերից պահում էին միայն մի կտոր, որպեսզի տան մեջ ուրիշ մեռնող չլինի: Մնացած շորերը բաժանելով՝ հանգուցյալին հեռացնում էին տնից:<sup>412</sup> Նման մի ծեսի վկայություն է նաև դիավագումից հետո օգտագործված լաթն անյունի վրա թողնելը:

Հայոց ազգագրական նյութերի և հնագիտական փաստերի համադրումը ցույց է տալիս, որ ինչպես անոթների կոտրելը, այնպես էլ շորերը վնասելը հանգուցյալի և ողջերի միջև փոխազդեցության կապերը վերացնելուն միտված մոգական գործողություններ են: Հանգուցյալի շորերը բաժանելու մերօրյա սովորույթը փոխազդեցության կապերը վերացնելու մոգական նույն գործողության վերապրուկ է:

Վերը տեսանք, որ կարասային թաղումներում կմախքներին կծկված դիրք է տրված, որը կարող էր նաև կապելու հետևանք լինել: Կմախքներին նման դիրք կարող էր տրվել նաև անոթի մեջ տեղավորելու նպատակով: Պալեոլիթյան թաղումներում կմախքի խիստ կծկված դիրքը ուսումնասիրողներին հանգեցրել այն կարծիքին, որ գոյություն ուներ հանգուցյալին կապելու ծես:<sup>413</sup> Հնագույն շրջանից եկող ծեսի հետնագույն վկայություն է Չանգեզուրի ազգագրությունից քաղված հետևյալ արարողակարգը: Դիակը պատանելուց առաջ ննջեցյալի ոտքերի բութ մատերը կապում էին իրար, որպեսզի

բնր: В. Аврорин, И. Козьминский, Представление о роцех и Вселенной, о переселении души и путешествиях шаманов, изображение на карте.- „Сб. Музея Антропологии и этнографии“, Москва-Ленинград, 1949, т. XII. с. 104.

<sup>407</sup> В. М о г и л ь н и к о в, Погребальный обряд культур III в. до н.э.-III в. н. э. в Западной части Балтийского региона. В кн.: Погребальный обряд племен Северной и Средней Европы в I тыс. до н. э.- I тыс. н.э. М., 1974, с. 204.

<sup>408</sup> Կ. Մ ե ղ բ ն յ ա ն, Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լեւինականցիների կենցաղում, (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 6), Եր., 1974, էջ 249:

<sup>409</sup> Ի. Լ օ ք ա տ ի ն, նշվ. աշխ., էջ 189:

<sup>410</sup> Ա. Ղ ա զ ի ճ ա ն, Իրանի Գարադաղ գավառի հայերի ուխտավայրերը, Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր., 2001, էջ 284:

<sup>411</sup> Л. Б о л д ы р е в а, Н. С о т и н а, Магия и квантовая механика, Наука и религия, N. 5, 1990, с. 5.

<sup>412</sup> Մտ. Լ ի ս ի գ յ ա ն, 1969, էջ 210:

<sup>413</sup> А. Г о л а н, նշվ. աշխ., էջ 45:



նա քայլել չկարողանար:<sup>414</sup> Իսկ կապելը նշանակում է սահմանափակել, արգելել շարժումը կամ տեղաշարժը: Կապելու գործողությունը կարող էր վերախմաստավորվել և դառնալ արգելանք: Հանգուցյալների ձեռքերի իրար վրա դրված դիրքը կոչվում է խաչել: Այստեղից էլ թևերը խաչելն ընկալվում է որպես մոտալուստ դժբախտության, անհաջողության նշան: Լիսիցյանը գտնում է, որ *խաչ* դարձվածն արտահայտում է արգելքի՝ *տարուի ենթարկված* իմաստ:<sup>415</sup> Հենց այս իմաստով էլ հանգուցյալի երեսին դրվող կտորը՝ վարշամակը կտրվում էր խաչաձև: Ինչպես տեսանք, թաղման ծեսի տարրերում ակնհայտ է արգելանքը (աճյունի ձեռքերը կրծքին, որովայնին, կամ ծնոտի տակ իրար միացած կամ խաչված լինելը):

Թաղման կառույցների տեսականու քննությունը ցույց տվեց, որ Շիրակի անտիկ դամբարաններում աճյունը հիմնականում ամփոփված է հողում: Իսկ որոշ թաղումներում էլ աճյունի վրա հող չի լցվել (Վարդաբաղի թիվ 10, Բենիամինի թիվ 67 սալարկղային և թիվ 105 կարասային թաղումներ): Այս տարրերությունն անպայման խարսխված է ինչ-որ հավատալիքի վրա: Մերօրյա թաղման ծեսում կա ինչպես դագաղի կափարիչը փակելու, այնպես էլ հողն անմիջապես հանգուցյալի վրա լցնելու սովորույթ: Առաջինը հավանաբար հանգուցյալի վրա հող չլցնելու ծեսի վերապրուկ է:

Հայերենում *մայր հող* և *հող հայրենի* բառակապակցությունների մեջ խտացված են ոչ միայն հողի կերակրող և սնող, այլ նաև ծնող՝ կյանք տվող իմաստները: Հողն ունի նաև *մահ* իմաստը, ինչպես օրինակ՝ *հողեն գլխիս, հողս գլխիս* կամ *հողն եկավ գլխիս*: *Հող էիր, հող դարձար* դարձվածի մեջ խտացված են այդ ընկալումները: Հողը մայր դիտելու գաղափարից էլ կարող էր ծնվել հանգուցյալի դին հողին, այսինքն մոր արգանդ վերադարձնելը, այստեղից էլ՝ դիակի և հողի միջև բաժանարար շերտ ստեղծելը՝ դիակը պատանելը, սալարկղում, կարասի մեջ կամ սարկոֆագում թաղելը: Ըստ ազ-

գագրական տվյալների՝ թաղումը դիտվում էր վերադարձ մայր հողի արգանդ:<sup>416</sup> Մայր հողին աճյունը հանձնելը ենթադրում է նաև վերստին կյանք վերադառնալ՝ վերածնվել: Հողն էր ապահովելու կյանք-մահ-վերածնունդ շրջափուլերի հարատև և անվերջանալի ընթացքը:

Աճյունը հողում ամփոփելու հիմքում ընկած են հանդերձյալ կյանքում մախնիների հոգիներին միանալու հնդեվրոպական պատկերացումները: Հունական դիցաբանական ընկալումներում *Մեռյալների աշխարհը*, ինչպես նաև աստվածը՝ Հադեսը, նշանակում է *smu-id* «*հանդիպում, ժամադրություն, հանդիպում մախնիների հետ*»:<sup>417</sup> Նույնն է նաև հնդկական մահվան հիմնի բանաձևը. «*pitrbhih sam-vidana-nyayesuqhi hanahayaten hayrenhi heta*»:<sup>418</sup> Մայր հողի գրկում հոգիներին միանալու հավատալիքից է ծնվել օտար հողում թաղվածի գերեզմանին հայրենի հողից մի բուռ շաղ տալու սովորույթը:

*Հանգուցյալների պաշտամունքը*: Թաղման հունական ծեսում մեռած հայրը աստված էր դառնում իր որդիների համար. որդին թաղման խարույկի միջից վերցնում էր հոր ոսկորը և հայտարարում, որ հանգուցյալն աստված է դարձել:<sup>419</sup> Ըստ հայոց ազգագրական տվյալների՝ ճգնավորների, նահատակների գերեզմանները սուրբ էին համարվում, նրանց հոգիները՝ գերբնական գորություն ունեցող, իսկ ննջեցյալների հոգիները մեծարվում էին գերեզմանի քարերը համբուրելով, մոմ կամ ճրագ վառելով, մատաղ անելով:<sup>420</sup> Հայոց մեջ մախնիների կամ հանգուցյալների պաշտամունքի վկայություն է հոր և մոր, կամ մեռած որևէ հարազատի գերեզմանով երդվելու սովորույթը:

Թաղման ծեսի վերլուծությունը ցույց է տալիս, որ հանգուցյալին պաշտելով հանդերձ, ամեն ինչ արվում էր նրա վերադարձը կանխելու համար: Հին Հռոմում համարում էին, որ

<sup>414</sup> Մտ. Լ ի ս ի գ յ ա ն, 1969, էջ 291:

<sup>415</sup> Նույն տեղում, էջ 307:

<sup>416</sup> Մտ. Լ ի ս ի գ յ ա ն, 1969, էջ 209:

<sup>417</sup> Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 824:

<sup>418</sup> Նույն տեղում, էջ 823:

<sup>419</sup> Е. Ш т а е р м а н, Римская мифология, МНМ, Энциклопедия, т. 2, М., 1992, с. 382.

<sup>420</sup> Մտ. Լ ի ս ի գ յ ա ն, 1969, էջ 297:

հանգուցյալները ազդեցություն ունեն ողջերի գործերի վրա, վրեժ են լուծում իրենց պատվին սահմանած ծեսերի կատարման անփութության համար: Պաշտամունքը խարսխված էր հանգուցյալներից ունեցած վախի վրա: Մահից հետո մարդը ապրողների համար դառնում էր վտանգավոր և աշխատում էին ամեն կերպ սիրաշահել նրան: Թաղման ծեսի գործողությունները միտված էին նաև դրան:

Բերենք ազգագրական մի քանի վկայություններ, որոնք խոսում են հանգուցյալի վերադարձն անցանկալի լինելու մասին: Շատ ժողովուրդներ հանգուցյալի վերադարձը կանխելու նպատակով, նրան յուրատեսակ ձևով խաբում էին՝ դիակը հանելով ոչ թե դոմից, այլ պատի վրա բացված անցքից, որը հետո փակում էին: Նման սովորույթ գոյություն ուներ նաև ռուսների մոտ: Ռուս իշխան Վլադիմիրի աճյունը դուրս բերեցին նման ձևով:<sup>421</sup> Ծեսն ընդունված էր ոչ միայն Հայաստանում, այլ նաև՝ Դանիայում, Հյուսիսային Ամերիկայի էսկիմոսների, հնդկացիների մոտ, Աֆրիկայում և այլուր:<sup>422</sup> Հայերիս մոտ կար սովորություն դիակը դուրս հանել նախ դուռը թակելով, և միայն *նաշ փետը* գետնից բարձրացնելուց հետո երեք անգամ այդ տեղերին ամուր խփելուց հետո: Նաշ-ն ըստ հայկազյան բառարանի՝ «բառ այլազգաց, այն է՝ դագաղը»:<sup>423</sup> Օտար բառի փոխառումը ենթադրում է, որ հայերեն բառի վրա արգելանք է եղել: Գիտակցելով բառի մտապատկերային համարժեքի ազդեցիկ և ներգործող ուժը մարդու ներաշխարհի վրա՝ արգելանքը է դրվել բառի վրա: Թաղման մերօրյա ծեսում դագաղը երեք անգամ պտտելը ևս հանգուցյալի վերադարձը կանխելուն միտված գործողություն է, որ այժմ չի գիտակցվում և կատարվում է զուտ սովորույթի ուժով:

Թաղման ծեսում կարևոր է յուրաքանչյուր մանրամաս: Ինչպես տեսանք, թաղման կառույցների տեսականու քննության ժամանակ, ձեռքերի դիրքերը ևս տարբեր են և հաճախ

խաչված են կրծքին կամ որովայնին: Ձեռքերի նման դիրքը յուրատեսակ արգելանք է: Խաչելն ինքնին փակելու, ավարտելու իմաստ ունի (խաչ քաշել): Թաղման մերօրյա ծեսում հավատալիք կա, որ եթե դագաղը դուրս բերելիս հանգուցյալի ձեռքերը խաչված դիրքից սահեն, ուրեմն ընտանիքից կամ հարազատներից որևէ մեկը մեռնելու է:

Թաղման ծեսի ուսումնասիրությունը կարևոր է նաև նրանով, որ հնարավորություն է տալիս վերականգնել նախնիների հոգևոր պատկերացումները, հոգու մասին նրանց ըմբռնումները: Ընդունված է այն կարծիքը, որ հավատում էին, թե մարդը շարունակում է ապրել նաև մահից հետո, այս իսկ պատճառով էլ հանգուցյալին ապահովում էին կյանքի համար անհրաժեշտ գույքով կամ իրերով: Անձնական իրերը դրվում էին հանգուցյալի հետ ոչ միայն հանդերձյալ կյանքում օգտագործելու, այլ, որ այս աշխարհում մնալով, կարող էին վնասել ողջերին: Ինչպես ցույց է տալիս թաղման ծեսի վերլուծությունը, հանգուցյալի նկատմամբ տաժած սիրո, կորստի և ցավի զգացումների հետ մարդուն պարուրում էր նաև նրանից սպասվող վտանգի վախը: Նրան սիրաշահելով՝ ամեն ինչ արվում էր բոլոր կապերը վերացնելու, նրանից ազատվելու և սպասվող վտանգները կանխելու համար: Հանգուցյալի վերադարձը կանխելուն միտված գործողություններ պահպանվել են տարբեր ժողովուրդների ազգագրական նյութերում:

Կելտերը թաղման ժամանակ հանգուցյալին ուղեկցում էին հետևյալ խոսքերով. *այստեղ քո տունն է լինելու, հեռու մի գնա*,<sup>424</sup> հույները՝ «Նայիր այնտեղ, իսկ այստեղ ուղարկիր լավը»,<sup>425</sup> իսկ գերմանացիները գոռում էին. «Այստեղ քեզ համար ոչինչ չկա»:<sup>426</sup>

Եվ ի վերջո, որպեսզի հանգուցյալը դուրս չգար, դամբարանը ծածկում էին քարերով, որտեղից էլ ծագել է տապանաքար դնելու սովորույթը: Ըստ Ստ. Լիսիցյանի՝ «Սկզբնական շրջանում գերեզմանների վրա քար զցելը ոչ թե

<sup>421</sup> А. Г о л а н, նշվ. աշխ., էջ 45:  
<sup>422</sup> Ստ. Լիսիցյան, 1969, էջ 209:  
<sup>423</sup> ՆԲՀԼ, էջ 291:

<sup>424</sup> А. Г о л а н, նշվ. աշխ., էջ 45:  
<sup>425</sup> Նույնը:  
<sup>426</sup> Նույնը:

*կատարվում էր թաղման տեղն անկորուստ պահելու, այլ քարի ծանրությամբ հանգուցյալի դուրս ելնելը դժվարացնելու նպատակով: Այս նպատակով նախնական գերեզմանները շրջապատված էին լինում քարերի օղակով»:<sup>427</sup>*

Այսպիսով՝ քննարկվող դամբարանադաշտերի թաղման ծեսի վերլուծությամբ վեր հանվեցին բազմաթիվ մանրամասներ, որոնց համադրումը հայտնի ծեսերի տարրեր տարրերի հետ

ցույց տվեց, որ անտիկ Շիրակում հիմնականում պահպանվում են Հայաստանի համաժամանակյա հուշարձաններին բնորոշ թաղման արարողակարգերն ու ծեսը, իսկ որոշ առանձնահատուկ դրսևորումներ բացահայտում են հավատալիքների ու ծեսի նոր շերտեր:

---

<sup>427</sup> Մտ. Լ. Ի ս Ի ց յ ա ն, 1969, էջ 215:

## Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ինչպես ցույց են տալիս Շիրակի անտիկ դամբարանադաշտերի՝ Բենիամինի, Առափիի, Կարմրաքարի և Վարդքաղի պեղումները, այստեղ կատարվել թաղման սալարկղային, կարասային, հիմնահողային և սարկոֆագային թաղումներ: Բոլոր հուշարձաններում առավելապես սալարկղային թաղումներ են: (Բենիամին՝ 173 սալարկղային, 28 հիմնահողային և 19 կարասային, Առափի՝ 17 սալարկղային և 1 հիմնահողային, Վարդքաղ՝ 14 սալարկղային և 5 քարարկղային, Կարմրաքար՝ 11 սալարկղային, 3 հիմնահողային են և 1 քարարկղային):\*

Դամբարանադաշտերի ուսումնասիրությանը դիտարկվում են թաղման ձևերի և ծիսակարգերի փոփոխություններն ու զարգացումները մ. թ. ա 1-ից - մ. թ. 4-5-րդ դարերն ընկած ժամանակահատվածում: Բենիամինի անտիկ բնակավայրի տարածքում, վերջինիս կենսագործունեության ժամանակ կատարված առաջին թաղումները վերաբերում են մ. թ. ա. 1-ին - մ. թ. 1-ին դարերին, իսկ պեղված ավելի ուշ շրջանի դամբարանադաշտը վերաբերում է 2-5-րդ դարերին: Առափիի և Վարդքաղի թաղումները վերաբերում են 2-4-րդ դարերին, իսկ Կարմրաքարի դամբարանադաշտը՝ 3-5-րդ դարերին: Կառնուտում շինարարական աշխատանքների ժամանակ բացված դամբարանից հայտնաբերված նյութերը վերաբերում են մ.թ.ա. 1-ին դարին: Շիրակի անտիկ դամբարանադաշտերի ամենաուշ թաղումները հասնում են մինչև 4-5-րդ դարեր: Դրանք Բենիամինի սալարկղային և Կարմրաքարի սալարկղային և սարկոֆագային թաղումներն են: Աշխարհագրորեն իրարից ոչ հեռու՝ 20կմ շառավիղով, սակայն ժամանակագրական որոշակի հաջորդականություն ունե-

ցող հուշարձանների թաղման ձևերի և ծեսերի փոփոխություններով լուսաբանվում է հասարակության սոցիալ-տնտեսական կյանքը, նյութական և հոգևոր մշակույթի զարգացումը: Ուսումնասիրության համար նպաստավոր է նաև այն հանգամանքը, որ բացված բոլոր դամբարանները հիմնականում շարքային թաղումներ են: Համալիր ուսումնասիրության արդյունքներն առավել արժանահավատ են դառնում հնավայրերից ամենախոշորի՝ Բենիամինի դամբարանադաշտի և նրան վերաբերող համաժամանակյա բնակավայրի ուսումնասիրության արդյունքների համադրմամբ: Տվյալ հանգամանքը խիստ շահեկան է, քանի որ բազմաշերտ, հսկա անտիկ բնակավայրի արդեն իսկ ուսումնասիրված մասերի ֆունկցիոնալ բովանդակության և տվյալ հատվածներում կատարված համաժամանակյա թաղումների ծիսակարգում կան բազմաթիվ տարրեր, որոնք փոխադարձաբար լրացնելով միմյանց, նպաստում են նյութական և հոգևոր մշակույթում, ինչպես նաև հասարակական կառուցվածքում տեղի ունեցած առաջընթացի փոխկապակցված տարրերի վերականգմանն ու իմաստավորմանը:

Թաղման տեսակների և ծեսերի փոփոխությունները ժամանակագրական հաջորդականության մեջ, ըստ առանձին համալիրների, բացի Շիրակին բնորոշ մի շարք յուրահատկությունների դրսևորումներից, հստակորեն ցույց են տալիս դրանց զարգացման օրինաչափությունները, ազդեցությունները և փոխազդեցությունները: Հստակ դրսևորվում է ժամանակի ընթացքում թաղման տեսակների և ծեսերի բազմաձևության անշեղ նվազում, որը մ.թ. 4-5-րդ դարերում արդեն վեր է ածվում համատարած միատիպության, ինչը ոչ միայն սոցիալական հիմք ունի, այլ նաև կարող էր բխել նոր գաղա-

\* Դամբարանների բոլոր հատկանիշների մանրամասները տե՛ս հավելված 1,2:

փարախոսության՝ քրիստոնեության պահանջներից: Քանի որ ըստ թաղման ձևերի և ուղեկցվող նյութերի դամբարանադաշտերը թվագրված են և վերաբերում են անտիկ ժամանակաշրջանի տարբեր փուլերին, դրանցում առկա թաղման ձևերը, ծեսերը և ուղեկցող նյութերը ամփոփենք ժամանակագրական հաջորդականությամբ:

Շիրակի անտիկ դամբարանադաշտերում ամենավաղ թաղումները բացվել են Բենիամինի՝ մ. թ. ա. 1-ին- մ. թ. 1-ին դարերի բնակավայրում: Դրանք սյունազարդ դահլիճի և բնակելի հատվածի սենյակների հատակների տակ, ինչպես նաև տնտեսական ամբարների ու կենցաղային հորերի մեջ կատարված հիմնահողային և կարասային թաղումներ են: Հիմնահողային թաղումները հիմնականում պահպանում են անտիկ ժամանակաշրջանին բնորոշ ձևերը: Կմախքներն ունեն աջ կամ ձախ կողքին կծկված դիրք: Կան նաև նստած դիրքով թաղումներ: Հանդիպում են հարավ-հյուսիս, հյուսիս-հարավ, ինչպես նաև նշված կողմնորոշումներից քիչ արևելք, կամ արևմուտք շեղումով թաղումներ: Կան նաև գույգ թաղումներ, որտեղ ննջեցյալները թաղվել են իրար վրա: Հիմնահողային թաղումներն ունեն որոշ յուրահատկություններ: Այսպես, Բենիամինում թաղումներ կատարվել են քարաշար պատերով, կեղծ թաղով ամբարներում, ինչպես նաև տնտեսական և կենցաղային հորերում, որոնք վերաբերում են մ. թ. ա. 1-ին դարին: Կենցաղային հորերի մեջ կատարված թաղումներում տարածամանակյա նյութերի խառնիխուռն վիճակը, ինչպես նաև կմախքների անկանոն դիրքը ենթադրում են, որ դիակներն ուղղակի նետվել են փոսերի մեջ: Այս ամենը հանգեցնում է այն ենթադրությանը, թե այսպես կարող էին թաղվել հասարակության ոչ լիիրավ անդամները կամ ստրուկները: Հիմնահողային թաղումների նշված ձևերը մ. թ. 1-ին դարից հետո այլևս չեն հանդիպում:

Մ. թ. ա. 1-ին դար թվագրվող կարասային առաջին թաղումները նույնպես բացվել են բնակելի հատվածում՝ հատակի տակ կամ հորի մեջ: Կարասային թաղումները հանդիպում են նաև մ. թ. 1-ին դարում և կրկնում են Հայաստանի և

Անդրկովկասի համաժամանակյա հուշարձաններին բնորոշ ձևերը: Թաղումները կատարվել են նախապես տնտեսության մեջ օգտագործված, երբեմն նաև վերանորոգման նպատակով արված բազմաթիվ անցքերով կարասների մեջ, ինչպես նաև կարասի բեկորների վրա: Ամբողջական կարասների մեջ թաղումը կատարվել է անոթի իրանի մի հատվածը կտրելով: Երեխաները, որպես կանոն, թաղվել են փոքր անոթների մեջ, որոնք ի տարբերություն կարասների, նստուկների վրա անցք չունեն: Կարասները նախատեսված են եղել անհատական թաղման համար և դրվել են նախապես պատրաստված փոսերի մեջ՝ ուղղահայաց կամ հորիզոնական դիրքով: Հորիզոնական դիրքով դրված կարասները հաստատուն կողմնորոշում չունեն: Սրանք հիմնականում մանկական թաղման կարասներն են: Կարասների ուղղահայաց դիրքն ապահովվել է կամ նստուկի մոտ շարված քարերով, կամ կտրված և բերանքսիվայր դիրքով մեկ այլ կարասի մեջ կանգնեցնելով: Կարասների բերանները փակվել են մեկ այլ ամանով: Բացվել են նաև մանր քարերով շարված ձվածիրի, ինչպես նաև սալարկղի մեջ կատարված կարասային թաղումներ: Կարասային թաղումներում հանդիպում են տարատեսակ տարբերակներ. ինչպես մ. թ. 1-ին դար թվագրվող շան, կամ շան և ձիու գոհաբերության ուղեկցությամբ թաղումները: Կարասային այս թաղումներից մեկը բացվել է 3մ տրամագծով քարաշար շրջանի ներսում: Շրջանի քարերի տակ բացվել են շների ամբողջական և երկատված կմախքներ, իսկ կարասի մոտ՝ ձիու գլուխ: Կարասային թաղումներում ևս կատարվել է դիադրում՝ աջ կամ ձախ կողքին կծկված դիրքով: Թաղումն ուղեկցվել է ննջեցյալին կարասի ողջ պարունակությամբ հողով ծածկելով: Սակայն կան նաև թաղումներ, երբ արարողակարգն ավարտվել է առանց աճյունը հողով ծածկելու:

Մ. թ. ա. 1-ին դարին են վերաբերում նաև Բենիամինի բնակավայրի ծայրարևելյան հատվածում մի գծով կատարված թաղումները: Սրանք կարասային, հիմնահողային, սալարկղի մեջ կատարված կարասային թաղումներ են,

ինչպես նաև ձվածիրի մեջ կատարված զույգ թաղումը: Բնակավայրի այս հատվածը, ելնելով հայտնաբերված կառույցներից, տորածն խարիսխ-գոհասեղանների և պաշտամունքային բնույթի բազմաթիվ գտածոներից, հավանաբար ծիսապաշտամունքային բնույթ է ունեցել: Եվ, հնարավոր է, շինության պատերից դուրս թաղվել են տաճարական ստրուկները:

Ժամանակը հանգեցնում է սոցիալական կառուցվածքի, հոգևոր և նյութական մշակույթի, այնուհետև նաև թաղման ձևերի ու ծեսի փոփոխության: Մ. թ. 1-ին դարից հետո հասարակության կառուցվածքային փոփոխությունների արդյունքում նշված յուրահատուկ ծեսերն աստիճանաբար վերանում են և թաղման արարողակարգերը դառնում են նույնական:

Սալարկղային առաջին թաղումները բացվել են Բենիամինում, վերաբերում են մ. թ. 2-րդ դարին, և գերակշռեց մաս կազմելով, շարունակվում են մինչև 4-5-րդ դարեր: 3-4-րդ դարերում Կարմրաքարում հայտնվում է նաև սալարկղի մեջ դրված փայտե դագաղով թաղում: Սալարկղային թաղումները բնորոշ են անտիկ Շիրակի բոլոր դամբարանադաշտերին և ամենատարածված ձևն են: Բացի մեկ կամ մի քանի քարերից կողասալերով ուղղանկյուն սալարկղերից, Բենիամինում բացվել են նաև մանր քարերից շարված ձվածիրի սալարկղեր: Սալարկղերը հիմնականում կառուցված են մշակված քարերով, իսկ Բենիամինում օգտագործել են նաև բնակավայրի քարերը: Սալարկղերը հիմնականում ունեն 2-3-ական կողասալեր, սակայն կան նաև կողասալերի քանակական այլ հարաբերակցություններ: Ծածկասալերը կամ մեկ ամբողջական քարից են կամ մի քանի քարերից և հիմնականում՝ անմշակ: Մի քանի թաղումներում ծածկասալերն ամրացված են մանր քարերի շարվածքով: Երբեմն ծածկասալերի և կողասալերի վրա արված են միջանցիկ անցքեր ու նաև անցքերից սկսվող ակոսաձև փորվածքներ: Անցքերը համապատասխանում են որովայնի, կռքերի, կրծքի կամ գանգի հատվածին: Ծածկասալերի ակոսաձև փորվածքներն արված են դամբարանի գլխամասում: Որպես ծածկասալ

կամ կողասալ օգտագործել են նաև երկանքները: Սալարկղային թաղումները հիմնականում ունեն արևելք-արևմուտք կողմնորոշում: Հանդիպում են նաև արևմուտք-արևելք և հյուսիս-հարավ կողմնորոշմամբ թաղումներ: Կմախքի դիրքն ուղիղ է՝ մեջքի վրա, ձեռքերը հիմնականում հանգչում են կրծքին, կամ որովայնին, կամ դրված են իրանի երկարությամբ: Հանդիպում են նաև նստած, ինչպես նաև կծկված դիրքով թաղումներ: Անկախ թաղման ձևից, կատարված է դիադրում, բացառությամբ երկու կենտոտաֆի: Բենիամինում բացվել է սալարկղի մեջ կատարված զույգ թաղում և մի վերաթաղում: Սալարկղային թաղումներում ևս ծիսակարգն ավարտվել է աճյունը դամբարանի ողջ պարունակությամբ հողով ծածկելով, իսկ մի քանի թաղումներում ննջեցյալի վրա հող չի լցվել: Թաղումներն երբեմն ուղեկցվել են հոգեհացով: Սալարկղերից մեկի կողքին բացվել է ձիերի գոհաբերություն: Հաստ մոխրաշերտի վրա դրված ձիերի երկատված գլուխները փակվել են դուրգի անիվով:

Մ. թ. 2-3-րդ դարից սալարկղային թաղումների կողքին հայտնվում են նաև սարկոֆագային թաղումները, որ բացվել են Կարմրաքարում և Վարդքաղում: Կան և դրսի, և ներսի կողմից մշակված ձևեր: Իսկ միայն ներսից մշակվածները հողի մեջ թաղված հսկա ժայռաբեկորներ են: Սարկոֆագների ծածկասալերը մեկ ամբողջական քարից, ուղիղ կամ կլորացված անկյուններով ուղղանկյուններ են և երբեմն ունեն միջանցիկ անցքեր ու ակոսավոր փորվածքներ: Բոլոր թաղումներն ունեն արևելք-արևմուտք կողմնորոշում: Կատարվել է դիադրում՝ կմախքի ուղիղ, մեջքի վրա դիրքով, ձեռքերը՝ կրծքին կամ որովայնին: Ծիսակարգն ավարտվել է դամբարանը հողով ծածկելով:

Եթե մ. թ. ա. առաջին դարերի թաղումներին բնորոշ էր կմախքի աջ կամ ձախ կողքին կծկված դիրքը, ապա մ.թ. առաջին դարերից սկսվում են ձեռքերը որովայնին կամ կրծքին դրված, կմախքի ուղիղ՝ մեջքի վրա դիրքով թաղումները, որոնք տիրական են դառնում 3-4-րդ դարերում: Ու դժվար է տարբերակել այս թա-

ղումները վաղ քրիստոնեական են, թե վերաբերում են անտիկ ժամանակաշրջանին, քանի որ ոչ միայն թաղման ծեսի մեջ տարբերություն չկա, այլ նաև կան ուղեկցող նյութեր: Այսինքն՝ դեռ երկար մի ժամանակահատված արդեն քրիստոնյա ժողովուրդը դեռևս թաղվում էր հեթանոսական ծեսով:

Շիրակի անտիկ դամբարանադաշտերի նյութի վերլուծությունը թույլ է տալիս մի քանի դիտարկումներ անել: Ուղեկից նյութերի մեջ կան նաև տարատեսակ կավամաններ, աշխատանքային գործիքներ, ապակյա և քարե իրեր: Թաղման արարողակարգում օգտագործված են առավելապես արդուզարդի առարկաներ. մանյակներ, ապարանջաններ, մատանիներ, ականջօղեր, ուլունքներ, կնիքներ, ճարմանդ, հմայիլներ, հայելիներ և այլն: Թաղումները կատարվել են անձնական զարդերով, ենթադրվում է, որ որոշ դեպքերում դրանք պատրաստվել են հատուկ թաղման համար: Չարդեր կրել են միայն կանայք, իսկ ուլունքներն առավելապես մանկական թաղումներում են հանդիպում: Աստիճանական զարգացման ընթացքում հոգևոր մշակույթում կատարված փոփոխությունների հետ կապված, ավելի ուշ թաղումներում ուղեկցող նյութերը նվազում են, ապա վերանում:

Թաղման ծեսը նյութականացված է դամբարանների կառուցվածքում, ինչպես նաև ուղեկցող նյութերի մեջ: Հնագիտական, ազգագրական, բանագիտական, երբեմն նաև լեզվաբանական տվյալների համադրմամբ վերլուծվել է թաղման տարբեր ձևերի, թաղման ծիսակազմի զանազան արարողակարգերի նյութականացված մնացորդների և ուղեկցող նյութերի ծիսական բովանդակությունը: Դիտարկվել են ծիսական մի քանի առանձնահատուկ դրսևորումներ՝ շների և ձիու զոհաբերությունն ու թաղումը մարդու հետ, ականջօղը աջ ականջին և մատանին ձախ ձեռքին կրելը և այլն:

Թաղման ծեսի տարբեր արարողակարգերի հիմքում ընկած են հնդեվրոպական ակունքներ հասնող հավատալիքները: Չիրի գոհաբերության ու մարդու հետ թաղման ծեսը սերում է այդ հավատալիքներից, գալիս է օջախի

և արևի պաշտամունքից: Իսկ շունն հնդեվրոպական ավանդույթներում և հոգիների պահպան է, և հոգեառ, և հոգիների ուղեկից, որով էլ պայմանավորվում է թաղման ծիսակարգում նրան հատկացվող դերը:

Թաղման ծեսի վերլուծության ժամանակ փորձ է արվել մեկնաբանել նաև թաղման ձևերի յուրահատկությունները և ուղեկցող նյութերի ծիսական դերը: Մալարկղային ու սարկոֆագային թաղումներում հանդիպող միջանցիկ անցքերով, ինչպես նաև ակոսավոր փորվածքներով ծածկասալերի և կողասալերի ծիսական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ծառայել են հեղման միջոցով ողջերի ցավերն ու հիվանդությունները մեռածներին փոխանցելուն: Իսկ կարասի լայնակի, հավասար չափերով կտրված ժապավենների և մանր քարերով շարված ձվածիրի մեջ կատարված թաղումների նավակի ձև ունենալը ենթադրում է նավակ-տապանի ենթատեքստ, կապված է հանդերձյալ աշխարհի մասին հնդեվրոպական պատկերացումների հետ:

Պեղված մոտ 300 դամբարանները հնարավորություն տվեցին բավականաչափ մանրակրկիտ հետևել թաղման ծեսին, որոշ հետևություններ անել ժամանակի հավատալիքների մասին: Թաղման ծեսի հիմքում միատիկ պատկերացումներ են: Ուղեկցելով հանգուցյալին հանդերձյալ աշխարհ նրան զինում էին իրերով, որոնցից օգտվել էր մինչև մահը, ինչպես նաև դամբարանում թողնում էին ուտելիք և ըմպելիք: Այս իսկ պատճառով էլ Շիրակի անտիկ դամբարանադաշտերում հանգուցյալի հետ հիմնականում թաղված են ոչ թե հատուկ թաղման համար պատրաստված, այլ առօրյա կյանքում օգտագործված իրեր:

Թաղման ծեսի տարբեր մանրամասների քննությունը ցույց է տալիս, որ հանգուցյալից վախենալու, նրա նկատմամբ երկյուղի և վախի զգացողությունները և դրանից բխող մեռածի վերադարձը կանխելուն միտված գործողությունները, այնպես էլ նրա նկատմամբ սերն ու պաշտամունքը և դրանցից բխող արարողակարգերը միախառնված են:

Ուղեկցող իրերը հիմնականում յուրահատուկ պահպանակի դեր են կատարել և նպատակամղված են վերածնության ապահովմանը: Կան իրեր, որոնք կուտրվել են՝ բերվելով հանգուցյալին համապատասխան վիճակի (հայելի, արդուզարդի առարկաներ, խեցեղեն): Գտածոների մեջ կան նաև երկրաչափական տարբեր ձևեր ունեցող քարե իրեր (ուղղանկյուն, եռանկյուն, քառակուսի), որոնք կիրառական-կենցաղային նշանակություն չունեն, ինչն էլ մղում է ծիսապաշտամունքային իմաստի որոնմանը: Երկրաչափական ձևերում հիմնականում միավորում են երկնային և երկրային հասկացությունները՝ երկիր, արև, տիեզերք, անսահմանություն, արական և իգական սկիզբ և այլն:

Շիրակին բնորոշ թաղման արարողակարգերից մեկը ականջողերը աջ ականջին, մատանիները ձախ ձեռքին կրելն է, որն, ըստ ուսումնասիրության արդյունքների, կապվում է աջի և ձախի հակադրությամբ արտահայտված բարու և չարի, լավի և վատի գաղափարին և նպատակամղված է բարին պահպանելուն: Այն միաժամանակ ունի նաև սոցիալական տարբերակման հիմք: Ականջողերը երկու ականջին կրելու իրավունքը, ըստ պատմական աղբյուրների, վերապահված էր ոչ բոլորին և կապված էր հասարակության մեջ ունեցած դիրքի հետ:

Ննջեցյալի բերանում դրամ դնելու հունական աշխարհից ներմուծված արարողակարգը Շիրակում իրականացվել է երկու տարբերակով: Դամբարաններից գտնվել են արծաթյա դրամներ (Տրայանոս, Հրահատ): Կան նաև թաղումներ, երբ դրամի փոխարեն հանգուցյալի բերանում զարդ է դրվել: Մ. թ. առաջին դարերում Հայաստանում դրամական շրջանառության պակասը հանգեցրել է ծեսի վերածնակվորման:

Հոգեհացի հետքերը փաստվում են խարույկի կրակի մեջ եղած մրտոված ամանների բեկորներով, ոսկորների և այլ մնացորդներով: Թաղման ուղեկից բոլոր ամանները պատկած դիրքով եղել են կրակի մեջ: Հոգեհացի ուղեկիցը կրակն է: Կրակով մաքրագործել են դամբարանները: Եվ մարմնի տարբեր մասերում դրված փայտածխի կտորներն էլ ենթադրում են մար-

մնի հիվանդ անդամի մաքրագործմամբ առողջ մարմնի վերածնունդ: Հոգեհացի արարողակարգն ըստ ամենայնի շարունակվել է դամբարանի մոտ՝ նաև ննջեցյալին հողին հանձնելուց հետո և, ըստ ծիսակարգի, կուտրած ամանների բեկորները պահ են տրվել հողին: Հոգեհացի տարբերից մեկը զոհաբերությունն է: Չոհաբերվել են մանր և խոշոր եղջերավոր կենդանիներ, նաև՝ վարազ: Վերածնությանը նպատակամղված ծիսական գործողություն է նաև հացահատիկի զոհաբերությունը: Մ. թ. 1-ին դարից հետո զոհաբերությունները նվազում են, ապա՝ վերանում:

Շիրակի թաղման ծեսում փաստված են ինչպես շների առանձին զոհաբերություններ, այնպես էլ՝ զոհաբերություն և թաղում մարդու հետ, ինչպես նաև շների և ձիու զոհաբերություն և թաղում մարդու հետ: Հնդեվրոպական ակունքներից եկող շան պաշտամունքն ու զոհաբերությունը, որ ունի տեղական խորը արմատներ, Հայաստանի անտիկ հուշարձաններում հազվադեպ է հանդիպում և առավելապես բնորոշ է Շիրակին: Մարդաբանական և հնագիտական նյութերը թույլ են տալիս ենթադրելու, որ նշված ծեսի վերստին կիրարկումը կապված է Շիրակում Կամսարականների հաստատվելու հետ:

Հայոց ավանդական մշակույթի՝ հազարավոր տարիների խորքից եկող հավատալիքների, սովորույթների և ծեսերի վրա իհարկե անդրադարձավ հելլենական մշակույթը: Ինչպես սովորաբար լինում է օտարի ներմուծման ժամանակ, առաջին հերթին այն արձագանք գտավ և կենցաղավարեց առավելապես վերնախավի և քաղաքային ազատ բնակչության մշակույթում՝ ազդելով և՛ աշխարհընկալման, և՛ կենսակերպի, և՛ ճաշակի վրա: Եվ ինքնաբերաբար նրանք դարձան հելլենականացված հայ մշակույթի առաջին կրողները:

Քննության առարկա թաղումներն, ինչպես տեսանք, հիմնականում շարքային են և ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև կա հելլենական մշակույթի ազդեցություն, սակայն հատկապես թաղման ծեսում հիմնականում պահ-



պանվում է դարերից եկող, դեռևս հնդեվրոպական ակունքներում ձևավորված ավանդականը:

Թաղման ձևերի և ծեսերի փոփոխություններով ներկայացվում է հասարակության սոցիալ-տնտեսական կյանքը, նյութական և հոգևոր մշակույթի զարգացումը: Ուղեկցող նյութերի ձևաձևական և ժամանակագրական փոփոխություններով փաստվում են նյութական մշակույթի զարգացման ընթացքն ու յուրահատկությունները:

Շիրակի անտիկ դամբարանադաշտերի ուսումնասիրության արդյունքները, թաղման կառույցների, ուղեկցող նյութերի ու ծեսի համատեքստում, լրացնում են թաղման տարբեր արտոդակարգերի, դրանց հիմքում ընկած սովորույթների ու հավատալիքների մասին մինչ այժմ եղած տվյալները:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԲԵՀ - Բանբեր Երևանի համալսարանի:  
ԼՀԳ - Լրաբեր հասարակական գիտությունների:  
ՆԲՀԼ - Նոր Բառգիրք հայկազեան լեզուի:  
ՇՊՄԺ - Շիրակի պատմամշակութային ժառանգություն:  
ՇՀՀԿ - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն:  
ՊԲՀ - Պատմա - քանասիրական հանդես:  
ՇԵԹ - Շիրակի երկրագիտական քանգարան:  
АИКСП - Античная история и культура Среднеземноморья и Причерноморья.  
АО - Археологические открытия.  
ВГМГ - Вестник государственного музея Грузии.  
ВДИ - Вестник древней истории.  
ВОН АН- Вестник общественных наук Академии наук Арм. ССР  
ИАК - Известия по археологии Кавказа.  
ИАН Аз. ССР - Известия академии наук Аз. ССР.  
ИЭ - Институт Этнографии.  
ХАЭЭ - Хорезмская археолого-этнографическая экспедиция.  
МАГК - Материалы по археологии Грузии и Кавказа.  
МИА - Материалы и исследования по археологии СССР.  
МКА - Материалы культуры Азербайджана. Баку.  
МНМ - Мифы народов мира.  
ЭВ - Эпиграфика Востока. Ленинград.  
ЭО - Этнографические открытия.  
СА - Советская археология.  
САИ - Свод археологических источников.  
СЭ - Советская этнография.  
КСИА - Краткие сообщения Института археологии Академии наук СССР.  
КСИИМК- Краткие сообщения о докладах и полевых исследованиях Института истории материальной культуры Академии наук СССР.  
ЮТАКЭ – Южно-Туркменистанская археологическая комплексная экспедиция.

ЛАРИСА ЕГАНЯН

## АНТИЧНЫЕ НЕКРОПОЛИ ШИРАКА

Физико-географическая область Ширак занимает северо-восточную часть Армянского нагорья, и северо-западную часть Республики Армения. Исторический Ширак занимал долину находящуюся на нижнем и среднем течении реки Ахурян. Ширак граничил с запада с Ванандом, на юге с Аршаруником (Ерасхадзор), на востоке с Арагацотном, Нигом, Верхним Таширом, на севере с Ашоцком.

С 1989 по 2001гг. в античных некрополях Ширака (Кармракар, Арапи, Вардбаг, Бениамин, Айкадзор) было раскопано около 300 погребений: грунтовые, карасные, погребения в каменных ящиках и в саркофагах, относящиеся к I в. до н.э.- IV-V вв. н. э. В работе использованы также случайные находки из Карнута и Саратака относящиеся к I в. до н.э.

Грунтовые погребения Бениамина ориентированы на север-юг (погр. № 10, 16, 30, 55, ...), юг-север (погр. № 436, 90, 129, ...), восток-запад (погр. № 121, 127, 177, ...), север запад-юг восток (погр. № 71), юг запад-север восток (погр. № 129), грунтовое погребение № 4 в Арапи: юг-север. Грунтовые погребения Кармракара и Анушавана ориентированы на восток-запад. Большая часть погребений (Бениамин, погр. № 40, 55, 121, ...) находятся в слое земли - скелет лежит в скорченном положении на левом или на правом боку (табл. III, рис.1). Расположение скелета в грунтовых погребениях Арапи (погр. № 4) и Кармракара (погр. № 20, 21, 22) прямое - на спине. В Шираке такие захоронения известны из раскопок Ширакавана и Вардбага. Встречаются также и отклонения от основной формы захоронения: скелет в погр. № 185 в Бениамине имеет форму сидячего на коленях, в погр. № 218 в Бениамине скелет находится на спине, а колени приподняты (табл. III, рис.2). Последний изначально имел сидячую позу, однако потом туловище откинулось назад. В погребении № 121 в Бениамине находятся два скелета друг на друге: мужской и женский. Вероятно погребение было совершено одновременно. Скелет в погребении № 217 в Бениамине находился в коленапреклонном положении.

Были также открыты детские грунтовые погребения под полом поселения. Подобные грунтовые поселения известны из Арташата, Двина и Ширакавана. В Бениамине, как и в Ширакаване, совершенные под полом поселения погребения датирующиеся к I в. до н. э. - I в. н. э. могут относиться к неполноценным членам общества. Последнее предположение может свидетельствовать о существовании рабов в Армении.

Раскопаны также погребения, совершенные в хозяйственных амбарах. Амбары - это каменные сооружения средней величины с ложным сводом (Бениамин, погр. № 79, 83, 90, 129, табл. III, рис. 3, Айкадзор, погр. № 1, 2). Из отмеченных наибольший интерес представляет погребение № 129. Оно было совершено на 12-и плитах сырого кирпича, выложенных на дне амбара диаметром в 190 см. и глубиной в 265 см. В отличие от предыдущих трех погребений на правом боку в скорченном положении, последний на левом боку. Первые три захоронения относятся к I в. до н. э., а последнее - к I в. до н. э. - I в. н. э. В Бениамине погребения в амбарах были совершены при жизнедеятельности поселения.

Погребения в каменных ящиках Ширака в основном ориентированы на восток-запад (табл.V). Исключениями являются погребения в Бениамине № 154 и кенотаф № 171 с ориентировкой север-юг. В Арапи погребение №9 ориентировано на юго-восток северо-запад, а погребение № 5 ориентировано на северо-восток юго-запад.

Погребения в каменных ящиках в основном имеют крышки из одного или двух обработанных (Бениамин, погр. № 7, 14, 15, ...) или не обработанных камней неправильной формы (Бениамин погр. № 27, 29, 74, ...). В Вардбаге крышки погребений сделаны из одного хорошо обработанного камня. Иногда боковые стороны крышки укреплены мелкими камнями (Бениамин, погр. № 25, 54, 60, 82, Вардбаг, погр. № 7, 10). Нередки случаи, когда крышки имеют также своеобразную обработку: сквозные отверстия (Бениамин, погр. № 172, 179, Вардбаг, погр. № 2, Арапи, погр. № 11), которые соответствуют головной или грудной части скелета (табл V, рис. 2). Подобные погребения известны также из других античных памятников Ширака: Ширакавана, Огмика. Таким образом обработаны и боковые камни погребений каменных ящиков (Бениамин, погр. № 6, 8). Подобные обработки боковых камней известны также из Ширакавана и Джрадзора. В Бениамине в качестве бокового камня также использовали и стену (погр. № 30, 53, 157). В качестве вариантов погребений в каменных ящиках рассматриваются малочисленные погребения, которые были совершены из сложенных в овал двух-трех рядов булыжника. Эти погребения не имеют крышек. Были обнаружены четыре подобные захоронения (Бениамин, погр. № 83, 184, 195, 209), усопший был положен на левом боку (Бениамин, погр. № 83), сидячего (Бениамин, погр. № 184) и прямо лежащего на спине (Бениамин, погр. № 195). Эти захоронения относятся к I в. до н. э. В Бениамине найдены также погребения в каменных ящиках, прилегающие к общей боковой плите (погр. № 132, 133). Известны такие же погребения из Арапи (погр. № 17, 18) и Кармракара (погр. № 28, 29). В погребениях в каменных ящиках в основном положение скелета прямое, со сложенными руками на груди или на животе, или же растянутыми по длине туловища. В этих захоронениях ритуал оканчивался засыпом землей каменных ящиков. Встречаются также погребения, которые не были засыпаны землей (Бениамин, погр. № 67). Совершались также перезахоронения (Бениамин, погр. № 33, 114, 239, 245). Был обнаружен кенотаф (Бениамин, погр. № 171, Вардбаг, погр. № 18).

В Шираке карасные погребения были обнаружены только в Бениамине. Карасы расположены вертикальном (погр. № 17, 35, 36, ... табл. III, рис. 4), полулежа (погр. № 9, 28) и в горизонтальном (погр. № 40, 43, 183) положениях. Горлышки карасов были направлены на север (погр. № 9, 28, 40, ...), на восток (погр. № 98, 150)

и на запад (погр. № 183, 190). Вертикально расположенные карасы целостны. Это в основном детские погребения и для помещения тела не было необходимости разбивать карасы (погр. № 17, 35, 36, 138, 206). Все карасы до этого были использованы в хозяйстве и даже восстановлены (погр. № 9, 36, 39, 43а, 150). В карасных погребениях использованы также обломки карасов (погр. № 43а, 183). Горлышки карасов закрывались глиняными сосудами или камнями.

Карасное погребение № 190 в овале выложено мелкими камнями. Было также найдено погребение I в. до н. э. в каменном ящике на обломках караса с ладьеобразной кладкой (погр. № 183).

